R. SC

PECTFU

that own

309-ԱՀ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ:

Յորում պարագրին քաղուածք պէսպէս գեղեցկապաճոյճ, խրատական և հոգեշահաւոր՝ բանից 'ի զանազան երևելի Անգղիացի մատենագրաց. գլխաւորաբար դիտեալ 'ի հրահանգութիւն և 'ի զբօսանս Համբակաց:

Հարազատաբար թարգմանեալ աշխատասիրութեամբ

ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԱՎԴԱԼԵԱՆՑ՝

Աշակերտին արժանապատիւ Պարոն Յարութիւնին Գալուստեան, և միոյ յանդամոյն գերապատիւ

ԻՄԱՍՏԱԽՆԴՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

'Ի լոյս ընծայեալ հրամանաւ մեծարոյ Պարոն Մ. Յ. Աղանուրեանց՝ Աթոռակալի և Միաբանի, և նպաստաւորութեամբ ծախուց Օժանդակաց Տպարանիս:

'Ի Հայրապետութեան Սրբազնակատար Տեառն Տեառն ԵՓՐԵՄԻ Կաթողիկոսին ամ Հայոց:

'Ի ԿԱԼԿԱԹԱ. 'ի 31 Յունվարի, 1821:



Պալլաս 'ի վերուստ յերկնէ իջանէ.
իմաստախնդրեանց զխնամս տանել.

Տպագրեալ յընծայեալ Տպարանի Յորդանանեան Պարոն Պօղոսի, 'ի Յովհաննիսէ Տէր Յակոբեան:

17
3573-Ա-Յ
ՀՍՍՌ ԱՅՄ
ИМ. А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3678
47
2004

# ՆԱԽԱԲԱՆ:

Թեսաւրոս հեղինակն հանճարայեղց առհմանէ զառաքինութիւն ըստ մտաց Արիստոտէլի այսպէս : Բարոյական առաքինութիւնն է ունակութիւն ինչ ընտրողական 'ի բաղձողական կարողութեան . որ տրամադրէ զմարդ 'ի գործել զհամեստ՝ ըստ թելադրելոյ խոհեմութեան: Առարկայ մատենիս այսորիկ 'ի վերոյասացեալս լայս և եթ հայի բան. վասնզի դիտումն Միաբանութեան մերոյ հայցեալ ընդ ունակութե ինքնայօժար սպասաւորութեան ազգի՝ թելադրիմք 'ի խոհեմութէ աշխատասիրել հանապազ 'ի համեստս, որոց հնար է զբօսեցուցանել զմիտս, և զունկրթացուցանել զհոգիս Հայկազուն համբակաց :

'Ի լուծալ մեր յանհամար գործս Եւրոպացի մատենագրաց, ոչ սակաւ բերկրութիւնս զգան քիմք մեր 'ի տեսանել յոգգի միում իբրև 'ի նոսա զայսքան արծարծ իմաստութեան անհնարէս ծաւալեցեալ : Այլ սակայն որքան առաւել մեծ լինէր մեր ուրախութեան զգացուած, 'ի տեսանել զհորինչն ընդի աշխարհին մերոյ ոչ ըստ բոլորին, այլ գտնեալ ըստ քառորդին առ յեալ անուշահոտութ գրականութեան և ուսումնականութեան :

Ապաքէն՝ ըստ թելադրութե ազգասիրական նախանձու մերոյ, յորմէ գրգռեցաք ձեռնամուխ լինել 'ի թարգմանութի պէսպէս այլազգական կենցաղօգուտ մատենից, կամեցաք մերս

# ՆԱԽԱԲԱՆ

խուզարկու լինիլ մանաւորաբար ՚ի զանազան գը-րենս Անգղիացի երևելի հեղինակաց, և ծաղկա-քաղ առնելով ՚ի մերս թարգմանել անտի զազգի ազգի բարոյական և խրատական բանս. որոց դի-տումն և առարկայ, կամ լաւ ևս ասել, հնչմունքն բաւական են առ ՚ի հողմահարել զմիտս այնպի-սեաց, որք յատուկ իմն անձկանօք ըղձակերութեն առ ՚ի զօրանալ ՚ի քաղցրաւէտ ցօղից առաքինութեն: Այսմին իրի և պատշաճ դատեցաք խորհրդեամբ անուանել զսա՝ ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ· իբրու այն զի՝ այնոցիկ, որք խօլադիտականն զգա-ծեալ մոլութի՝ ատող երևեսցին բարեգործու-թեանց և. առաքինական իրողութեանց, անպէտ երևի մատեանս այս արդարև, և ընդունայն ժա-մավաճառութիւն գլխովին. ըստ խոհական առա-ծի այնր փոխադացւոյ ծառային :

Յուսախաբ զմեզ ՚ի մերում գոր-ծառնութեն վարկանիցիմք, քա՛. քանզի թէև-դուզնաքեայ իմն են պարունակեալքն ՚ի սմին առ համեմատութեամբ այնահանգէտ մատենից, այլ սակայն օգուտքն, զորս ունին քաղել աստի ուշադիր ընթերցողքն, եղիցին ոչ նուազ և ապարդիւն : Հուսկ [illegible] վերջ տամք բանից մե-րոց, խոստանալով զի այսուհետև ըստ բերմանց ժամանակի յաջողեսցի մեզ ՚ի վերուստ, քան-զայս ճոխագոյն և արժանակիր աշխատասիրութիւս մեր դնել ՚ի վերայ աշտանակի, ՚ի փայլելումն Հայկազուն համբակաց :

## ՆԵՐԸՆԾԱՅՈՒՄՆ

## Արժանապատիւ Պարոն ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼՈՒՑԵԱՆ՝

Բնաշխարհակից Պատուական իմ,

Թէպէտ տուր ինձ գեղեցիկ յորդոր-
նութեամբ զատուցիկայ թղթոյս առ քեզ ուղ-
ղել վերատառութիւն: Այլ սակայն՝ մինչև ե-
ւս զծանուցմանէ սկիզբն արարեալ նորին սուր-
բայի զառ 'ի երախտագիտութենէ յառաջա-
ցեալ և 'ի ներքս յիմում շառաւիղեալ սրտի
պարտուցածս տեսանեմ յառաջադիմութիւն պա-
շտօնէին հայնուլ պշաւիղ: Ի քոյց զինչ որ-
դեօք ընդ դէջս համբաւեցայց ըստ արժա-
նոյն արժանել բարեպարգութեանց՝ տարրամիտ.
զբեզ մոյլիսաց որդեօք ներբողական եռթակայ
կացուցից զովեստից՝ շնորհիւ. և քեզ իմ որ-
դեօք զարժանավայելն հայթհայթեցից վճարել
զերախտագիտութեանն տրիտուր՝ տարակուսիմ:
Վասն զի 'ի բուրբեր Բերեան ծնեալ զա-
ւառի և 'ի բարեպաշտօն շառաւիղեալ ծնողաց
ծնող բաղմապատիկ որդւոց՝ անդուստ 'ի պա-
տանեկութեան հասակի 'ի նախախնամութենէ
յաջողեալ բարձրեալոյն 'ի Հնդկաստանեան ա-
ռաջնորդեցեր աշխարհ. և ընակութիւն 'ի Բան-

գալեանն արարեալ նահանգի՝ անդր 'ի գրագիտականս տքնեցայ պարապմունս ․ և ոչ յընդ երկար ժամանակի քաջակիրթ 'ի մարզս եղեալ գիտութեանց՝ 'ի բարձրագոյնս ամբարձար կատարելութիւնս ․ և ոչ այսչափ միայն՝ այլ և ընդ գրագիտական կատարելութեանց զառաքինութեանն կցեալ զպաշտպանուն զարդս՝ 'ի բարեպաշտական անդր պատեհապէս կայացար յունակութեան ․ ապա զինի այնորիկ յերկնային ներշնչեալ յիմաստութենէ՝ զգիտութեան կազմեալ յարդարեալ հանդերձեցեր գեղայօրէն վարժարան ․ ուրանօր և հարիւրոց հարիւրոց 'ի մերազնեայ համբակաց յընթացս քանահնգամեայ ժամանակի տաժանակիր աշխատասիրութեամբ զբարեպատեհ ուսուցանելով անձանձիր զգիտութիւնս՝ և այնուիկ նոցուն ընձեռելով հոգւոյ բարեզարդութիւն զկեանս՝ յայտնեցար յաշխարհի մեծահամբաւութեամբ որ ինչ էիր 'ի սկզբանն անդր յառաջագոյն ծնեալ:

Ապաքէն՝ և ես 'ի թիւս քոյոց արժանացայ դասիլ հոգեկանաց որդւոց մի ․ և այս ոչ ըստ լոկոյ պատահեալ ինչ դիպուածոյ՝ այլ վերին վերատեսչին պայմանադրութեամբ յիմաստս արտահանեալ 'ի բնիկ երկրէն Շիրակայ՝ անդստին 'ի Փարսեան ածայ 'ի տարաձիգ աշխարհէ՝ այսր 'ի քոյդ դաստիարակարան ․ յորում ոչ միայն լոկովք ուսումնականօք առլցեալ ներկրթութեամբ՝ այլ և քումդ բնաւոր մարդասիրական պահանջմանց հոգածականօք յամենայնի խնամարկեալ փութովք՝ զիս ընդ երախտագիտութեանն ար-

## ՁԵՌԸՆԾԱՅՈՒՄՆ

հետեւ պարտուք տեսանեմ զանձն : Այժմ իբր և իմ զմտաւ զՍողոմինկոփլիանեանն ածել ըզ-գաստիարակացն պատուասիրութեան դրուատե-լի բան՝ և զգործ փոխարինի կամեցել ըստ ար-ժանւոյն քում առնել բարերարութեան՝ զանձն իմ անձառակ զոլ խոստովանիմ . առկոյն որքան իմս դիտակութեան նուաղ ձգտին կարք՝ ոչ ահա զդանդաղկոտին ցուցանեմ յիս յինքեան զօրինակ առ 'ի գաւ յինէն քոյդ յարգաւորութեանն յայտ առնել ոէր :

Օտարազգիկայս ուրեմն հանճեաց՝ բազմերախտ իմ Պատուիրակ՝ համարիլ զմա-տեան իբրև յինէն առ քեզ երախտագիտութեն ցոյց՝ ոչ յարտաքին հայելով նորին նիւթական չնչութիւն՝ այլ զներքին նորին կարգիւնս և զիմ նկատելով մեծութիւն սիրոյ . յորմէ յորդորեալ հարկեցայ 'ի աքնութիւն կանձն իմ արկանել նո-րին թարգմանութ ան 'ի գրաբանաց գեղահիւս գործոց 'ի հոյլս իմաստասիրաց հաչտկելոց՝ Իդ-գիոլնի, Մանսոնի, Իլէրի և այլոց . և զնոյնս ահա խորին հպատակութեամբ ձօնողապէս քումդ վեհընծայեմ արժանապատուութեանդ՝ զքոյդ 'ի քոյ-ոյ անդրէն քեզ վերադարձուցանելով :

Մնամ քեզ՝

Բազմերախտ Պատուիրակ իմ

Ամենախոնարհ և շնորհապարտ աշակերտ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Համան, կամ թշուառութիւն հպարտութեան :

Արտաշէս, որ կարծի լինիլ արքայն՝ ծանուցեալ ընդ Յոյն պատմութեան անուամբ Ռամերեսայ, ամբարձեալ էր 'ի բարձրագոյն մեծութի յարքայութեան իւրում զՀաման ամադովդեանց, որ ժառանգեալ էր զհին զառաջին զատելութիւն տոհմի իւրոյ առ ազգն Հրէից : Իբրեւ նա, յորմէ գրի զնմանէ, լինիլ կարի ամբարիշտ պաշտօնեայ : Ամբարձեալ 'ի մեծութի թարց արժանաւորութե, փարեաց զիշխանութի իւր միայն առ յագեցման կրից իւրոց : Իսկ քանզի պատիւքն, զորս ունէր նա, էին արքայական, ամբարհաւաճութի նորա օր յաւուր պարարիւր այնու ծառայական պատուով, որ յատուկ է Ասիական ատենից . և ամենայն ծառայք արքային, երկիրպագանէին առաջի նորա : Ընդ մէջ այսր հրապարակական շողոքորթութեան, մի ոմն և եթ ոչ երկիր եպագ Համանայ : Այս էր Մուրթքէ հրէայն, որ գիտելով զայս Ամադովդեանց լինիլ թշնամի ժողովրդեան Աստուծոյ՝ և առաքինական սրտմտութեամբ արհամարհեալ զայն ժպրհութիւն աջողութեան , որով փքացեալ տեսանէր զնա , "ոչ երկիր եպագ , և ոչ մեծարեաց զնա": Յայսմ հայեցուածոյ անպատուուն 'ի Մուրթքէէ, Համան ," լի եղև բարկութբ, բայց ծաղր համարէր բուռն ածել զՄուրթքէէ միայն :" Անձնական քինախնդրութիւնն անբաւ էր 'ի շատացուցանել զնա : Այնպէս դժնդակ և սևագոյնէին կիրքնորա , մինչ խորհուրդ

տրար տոմարաքի առնել զընդհանուր ազգն , որում Մուրթքէ պատկանէրն Արհամարհեալ , առ ապիրատ դիտման իւրոյ , զշնորհս գիւրահաճան վէհին իւրոյ ` ընկալ զվճիռ մի , յառաքել արտաքս , զի 'ի միում աւուր ամենայն Հրէայք ընդ տէրութեամբ պարսից , սրոյ ճարակ լինիցին ; 'Ի նմին ժամու հաւաստի զաջողութեն, և կայր մտայուտ անհերքելութեն, շարունակեաց բերկրել 'ի յաջողութեն իւրում ; Հրաւիրեալ յԱրտաշէսէ յարքայական խնջոյս, զոր Եսթեր դշխոյն յարդարեալ էր , " գնաց յայնմ աւուր ցնծութբ և բերկրալի սրտիւ ": Բայց տես , որքան չնչին պատահար բաւական եղև 'ի թունաւորել զբերկրութիւն նորա : Մինչ զգնայր նա, ետես զՄուրթքէ 'ի դրունս արքային . և տեսանէր զի տակաւին զլանայր երկիրպագանել նմա . " ոչ կանգնեաց նա , և ոչ շարժեցաւ առ նորա". Թէ և քաջածանօթ էր սարսռելի յառաջադրութեանցն, զորս Համան պատրաստէր 'ի կատարել : Այլ մի տակական , որ արհամարհեաց զմեծութիւն նորին, և անգոսնեաց զհպատակութիւն , մինչ թագաւորութիւն մի համայն դողայր առաջի նորա . հոգի մի , զոր մեծագոյն արժարժ զօրութեան նորա, ոչ յաղթահարել կարէր, և ոչ խոնարհել, աղարտեաց զյաղթութիւնս նորուն : Հոգի նորա գլխովին խռովեցաւ աղմկով ցասմնականուն : Ցասումն, դառնութիւն , և անձուկ քինախնդրութեան , յարեան 'ի սրտմտութիւն : Տարժանմամբ նա զսպեաց զինքն 'ի հրապարակի . բայց մինչ եկն

՚ի տուն իւր, հարկեցաւ բացատրել զտագնապ մտաց իւրոց։ Կոչեաց նա միահամուռ զօրրե-լիս և զմերձաւորս իւր, ընդ կնոջ իւրում Օղիմպիայ։ "Պատմեաց նոցա զփառաց հարստութեան իւրոյ, և զբազմութենէ զաւակաց իւրոց, և զամենայն ընչից, յորս ամբարձեալ էր զնա Թագաւորն. և թէ որքան բարձրացուցեալ էր զնա ՚ի վերքան զիշխանս և զծառայս Թագաւորին"։ Այլ և ասաց, "Եսթեր դշխոյն ոչ ումեք տայր մտանել ընդ արքային ՚ի խնջոյս, զոր յարդարեալ էր, բայց յինէն. և դարձեալ առ վաղիւ ես հրաւիրեալ եմ առ նա ընդ Թագաւորին։" Ո՜ կնիք այսր ամենայն նախարանութեան, զինչ է լերջաբանութիւնն։ Արդ՝ այս ամենայն չէ ինձ հաճոյ, մինչ տեսանեմ զՄուրթքէ հրէայն նստեալ ՚ի դրունս արքային։" Ո՜ մնացորդ պատմութեն Համանայ, ոչ ճառեցից այժմ։ Բաւականիցէ այդ զաւրիթ վասն յոլով հրահանգութեան, բացայայտ արդարութեամբ Աստուծոյ, ՚ի փլրութիւն և ՚ի պատուհաս նորա։ Բայց մտախորհ լինելով միայն զսոսկական վիճակն, յորում արտասանութիւն զարդիս քաղեալ, ցուցանեն զնա, և զսաստիկ խռովութի մտացնորա, զոր նոքին ցուցանեն, հետապայ մտախոհութիւն ընածորմայ յանէն։ Որքան թշուառական է մոլութիւն, մինչ յանդգնոր կիրք իմն սանձանէ զայսքան տանջանս։ որքան անօգուտ է աջողութիւն, մինչ ՚ի զգաստեան նորա, ձախողութի մի միայն կարէ եղծանել զհամ՝ ամ բերկրանաց նորուն. որքան տկար է մարդկային բնութիւն, որ ՚ի չլինել

ճշմարտին, այսպէս փոյթ է յօրինել ինքեան չերևս կոյական վայս ։

ԲԼԻԸՐ

---

## Օրտօգրուլ, կամ ունայնութիւն հարստութեան։

Այն ինչ Օրտօգրուլն Պասրայու յաճախ միում շրջէր ընդ փողոցս Բաղդատու, մտախոհ լինելով զպէսպիսութեանց վաճառականութե, զորս շուկայքն բացեալ էին առ տեսանելիս իւր, և նկատելով զբազմաջան պատրաստմունս, որովք յամենայն կողմանէ պարապեալ էին ամ մարդիկ, զարթեաւ 'ի յանդորրութենէ մտախոհութե, յամբոխէ իմիք, որ արգելեալ էր զանցս նորին։ Համբարձ նա զաչս իւր, և ետես զգլխաւոր եպարքոսն, որ դարձեալ 'ի դիւանէն՝ մտանէր 'ի պալատ իւր։

Օրտօգրուլ խառնեցաւ ընդ հետևորդս. և վարկուցեալ ունիլ զպատուատանս ինչ առ եպարքոսն, թողաւ մտանել 'ի ներքս։ Նկատեալ նորա զհոյակապութիւն ապարանից՝ սքանչացաւ ընդ պարիսպս՝ ոսկեգոյն պաստառիւք զարդարեալս, և ընդ կերպարանս մնացելոց ծածկեցեալ յարկս, և արհամարհեաց զանշքութիւն փոքրիկ բնակութե իւրոյ։

" Արդարև" ասէ ի՞նքն ինքեան " պալատս այս է տեղի երջանկութեան. ուր բանոր գրգանք յաջորդին զրգանաց. և տժգոհութի և թախծանք չու-

նին ինչ մաւա։ Ո՛ որ ինչ ընութեան հագացեալ է 'ի հրձուանս մտաց, ոչ բաժանեալ է սոսա 'ի փայլելեւ։ Ո՛ ինչ յուսալ կամ խորհիլ կարիցեն մահացուք, զոր ոչեր պալատիս այսորիկ չիցէ սեփականեալ։ Ակուառանք փափկութեանց ծածկեն զսեղան նորին. ձայն դայլայլի դիւրացուցանէ զնա յանդաստանս նորին. զի չէ նա գանուշահոտութիւն անտառացն Ա՛ ափայու. և ընկողմանէ 'ի վերայ փետրոցն քաջահաւուն Գրանդեսի։ Հրամայէ նա, և հրամանք իւր կատարին. ցանկայ նա, և ցանկութիւն իւր լնանի. ամենայն զարս տեսանէ՞ն, հնազանդին նմա. և նմ որոց ունկնդիր լինի, փաղաքշեն զնա։ Ո՛րքան տարբեր է վիճակ քո, ով Ոբսոգրու, որ վըճռեալ ես յաւէժական տանջանացն անյագուրդ ըղձից. և չունիս 'ի կարի քում զզբօսանս ինչ, որ կերծուցանիցէ զքեզ 'ի մտախուզութեանց քոց։ Ասեն քեզ, թէ իմաստուն ես դու. բայց զի՞նչ շահ ընծեռէ իմաստութին 'ի չքաւորութեան։ Ոչ ոք մարդահաճէ պարզասս. և իմաստունք ոչ կարեն մարդահաճել զինքեանս։ Մարդն այն յիրաւի է ամենաթշուառ որդի թշուառութեան, որ քաղաքավարէ յիմարութեամբք և միօք իւրովք առաջի իւր. և որ ոչ ունի և ոչ մի, առ 'ի յանդուգանել զնա յինքն գովանօք և պատուաւորութիւ։ Ընդերկար խնդրեցի զերջանկութի, և ոչ գտի զայն. յայսմ վայրկենէ նկրտեցայց, ջանս եդից հարստանալ։

Յայսմիկ յամառեալ դիտաւորութեան եկեաց նա զվեց ամիսս 'ի ստենեկի իւրում, առ 'ի մտախոհ

լինիլ, թէ ոչ մարթ իցէ հարստանալ : Երբեմն յառաջադրելը խորամանկու լինիլ միում ՚ի թագաւորացն ՚ի Հնդկաստան . և երբեմն հետախուզել առ ՚ի գտանել զանդամանդս ՚ի հանքս Գողգոնդայ: Յաճախ միում չինի առ ժամս ինչ յարատեւելոյ ՚ի խորին ծփանս մտայուզութեն, անզգայաբար կալեալ եղեւ ՚ի քնոյ ՚ի վերայ աթոռոյ իւրոյ :

Տեսանէր նա յերազի, թէ դեգերէր ընդ ուրոճական երկրի միում, ՚ի յոյզ ուրումն, որ ինքեան զչիարդն ուսուցանել կարիցէ հարստանալոյ. և մինչ կանգնեալ կայր ՚ի վերայ բլրոյ միոյ՝ ասրեօք ատաճերացելոյ, յերկայս լինելով ընդ որ արդեօք երթալ ճանապարհ, յեղակարծուց հայր իւր երեւեալ կանգնէ առաջի նր : Օրտօգրուլ, ասէ ծերունին, գիտեմ զտագնապ սրտի քո. լուր հօր քում. դարձո զաչս քո առ հանդէպ եղեալ բլուրն : Հայեցաւ Օրտօգրուլ, և ետես զհեղեղատ մի, որ՚ի վայր գլորէր զքարինս.որոտաձայն խաղէր. և զյորձանս իւր շուրջ զընթերակայ տարածանէր մայրաօք: Որդ., ասէ հայր իւր, տես զհովիտն, որ ընդ մէջ է լերանց : Հայեցաւ Օրտօգրուլ, և ետես զաղբերակ մի, յորմէ փոքրիկ գետ մի ելանէր : Որդ՝ ասա ինձ, ասէ հայրն, ըղձանմագու փոյթընթաց առատաշեղոն, որ հեղանիցէ ՚ի վերայ քո զօրէն հեղեղատի բլրոյն. թէ յամրընթաց և միջասահման առատութեն, նմանեալ գետոյն, որ ելանէ յաղբերակէն : Ոչ ինձ փութով հարստանալ, ասէ Օրտօգրուլ, թող զի ոսկեայ հեղեղատն եղիցի աղաղընթաց և տապալաշեղ :

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Հայեաց շուրջ զքեւ, ասէ Հայր խուր, անգամ մի եւս: Հայեցաւ Օրտոգրուլ եւ ետես զփողրանկ հեղեղատին ցամաքեալ եւ փոշոտեալ. բայց հետեւեալ զետոյն, որ յաղբերականէն, եհաս զայն 'ի լայնագեր լիճ մի, զոր քանակութիւն յամր եւ յարատեւ պահէր յաւէտ լի: Զարթեաւ նա 'ի քնոյ, եւ 'ի մտի եդ հարստանալ լուռ ջանիւք եւ մշտակայ գործունէութեամբ: Վաճառեալ նորա զհայրենի ընչսիւր, պարապեցաւ 'ի գործ վաճառականութեան. եւ մինչ յամս քսան գնեաց զկալուածս, յորոց վերջ կերպարանեաց զտուն մի, հոյակապութեամբ հաւասար տանն եպարքոսին. յորում զամենայն զպաշտօնեայս հրաւիրեաց հեշտութեան. ակնկալեալ վայելել զամենայն զերջանկութիւն, զոր ենթադրեալ էր նորա, թէ մարթ էր հարստութեան ընծեռել: Պարապորդութիւնն կանխաւ նողկացոյց զնա յինքենէ. եւ բաղձայր համարիլ յաչս աշխարհի մեծ եւ երջանիկ: Քաղաքավար էր նա եւ առատաձիրս: Ընծեռէր նա զյոյս պարգեւատրելոյ այնոցիկ ամենեցուն, որք առաջի առնէին նմա զյոյս հաճեցուցանելոյ: Ամենայն արհեստ զվաղանութեան 'ի փորձ արկաւ. եւ ամենայն զօրութիւն շողոմական ստաբանութեանց խառնեցաւ: Օրտոգրուլ ունկն մատուցանէր շողոմողաց իւրոց առանց բերկրանաց, քանզի անատակ գտանէր զինքն հաւատալոյ նոցա: Սիրտ նորա յուշ առնէր նմա զտկարութիւն նորուն: Իմացականութիւն նորա անգոսնեաց զնա յանցաւորութիւնս նորին: Որքան Է երկար, ասաց նա խորին հառաչմամբ, վայրապար աշխատ եղէ 'ի դիզել զգանձս, որ 'ի վերջոյ

չէ ինչ պիտանի։ Մ՛ի ոք այսուհետև անձկասցէ հարստանալ, որ կարի հաւատալի է ՚ի մարդահա-ծիլ։

ՋԱՆՍԸՆ

---

Ո՛չինչ վիճակ կամ ստացուածք կարեն զանյա-գորդ միտս առնել երջանիկ։

Բռնաւորն Սիկիլիոյ՝ Դիոնէսիոս, թէ և ունէր զբազում գանձս և վայելէր զամենայն հեշտութիւնս, զորս ճոխութիւն և պետութիւն կարէին ընծայել, սակայն կարի զուրկ էր յերջանկաբար կենցաղավարելոյ։ Դամոկլէս՝ մի ՚ի շողոքորթաց նորա պատրել յայտնեցին զմտարձակս հայեցուածոց երջանկութեան, տեղի եառ առ ՚ի մարդելու-ցել զնա սակս մեծութեան, իշխանութեան, գանձուց, և արքայական մեծափառութեան նորին. և ասէր թէ, ոչ ոք յարքայից մինչև ցայսօր լեալ է առաւել հզօրագոյն և երջանկագոյն քան զԴիոնէսիոս։ Կամի՞ս դու, Դամոկլէս, ասաց բռնաւորն, առնուլ զճաշակ երջանկութեանս այսորիկ, և գիտել փորձիւ, թէ զի՞նչ են վայելչութիւնքս այսոքիկ, որոց այսքան փափագանօք ըղձակերտեսդ։ Դամոկլէս զուարթամտութեամբ հաճեցաւ ընդ հրաւէրս այս։ Բռնաւորն հրամայեաց պատրաստել զմեծածախ խնճոյս, և զոսկեկազմ զաթոռ մի գեղազարդեալ շքեղագոյն նկարուք՝ դնել վասն սիրականին իւրոյ։ Սեղանք բեռնաւորեալք ոսկեղէն և արծաթեղէն մեծագին սկաւառակօք

դատեալ էին յապարանս ։ Պատանեակք գեղեցկատեսիլք պատուիրեցան սպասաւորել լինել նմա ՚ի սեղանի ․ և մեծաւ ակնարկութեամբ և խորին հպատակութեամբ անսալ ամենայն բանից նորա ։ Անուշաւոր օծանելիք, փունջք ծաղկանց, և անուշահոտութիւնք քաղցր ցուցիչք առաւելեալ ՚ի հաճոյս նորա։ Սեղանն լցեալ էր ազգի ազգի համադամօք և գրգանօք ․ և արբեալ Դամոկլեայ հեշտութեամբ՝ համարէր զինքն լինել ՚ի մէջ գերենական էակաց։ Սակայն մինչ յայսմիկ ամենայն երջանկութեան բազմաւ՝ հեշտացուցանէր զանձն իւր, տեսանէ անդէն զշողշողիւն սուսեր մի՝ զմիոյ հերոյ և եթ յառաստաղէ անտի դէպ առ գըլուխ իւր կախեալ։ Տեսիլ այսր մօտալուտ կորստեան, վախճան ետ միանգամայն խնդութեան և զուարճութեան նորա ։ Պայծառութիւն սպասահարկուաց իւրոց, փայփայումն նկարեալ սկաւառակաց, և փափկութիւն կերակրոց ոչ ևս զօրէին զբօսեցուցանել զնա։ Սարսափէր նա առ ՚ի կարկառել զձեռս իւր ՚ի սեղանն։ Ի բաց ձգէր զամենայն փունջս անուշահոտ ծաղկանց ։ Փութայր կորզել զանձն իւր յաղէտաւոր տեղւոյ անտի ․ և անդադար թախանձէր զբռնաւորն առ ՚ի դարձուցանել զինքն ՚ի նախկին վիճակ իւր խոնարհ, չկամելով վայելել աւելի ևս յայսպիսի իմն քաղցրալի երջանկութիւն ։ Հայթհայթանօքս այսուիկ Դիոնէսիոս յայտ արար Դամոկլեայ, թէ որքան թշուառաբար կենցաղավարէր ինքն ՚ի մէջի ամենայն գանձուց իւրոց, և ՚ի սեփա-

կանոնութեն ամենայն յարգութեանց և վայելչութեանց, զորս արքայութիւն ընձեռել մարթանայր:

ԿԻԿԵՐՈՆ

---

Յաղագս անդարեխանութեան :

Կիւրոս ՚ի հասակի պատանեկուն իւրում, զոեալ յառենի հաւուն իւրոյ՝ Կամբիւսեայ, յանձն էառ յաւուր միում զպաշտօն մատռուակութե՝ ՚ի սեղանի անդ : Պարտական էր պաշտօնեին այսմիկ ճաշակել զըմպելին յառաջ քան զմատուցանել զայն առ թագաւորն : Կիւրոս թարց կատարելոյ զայս սովորութի, ամենախոհեմաբար իմն եղանակաւ մատոյց զբաժակն հօր իւրում: Թագաւորն յուշ արար նմա զզանցառուէ նորին, զոր համարէր նա ՚ի մոռացութէ յառաջ եկեալ: Բա՛ւ լիցի, պատասխանեաց Կիւրոս. երկնչէի ես ճաշակել, քանզի երկուանայի թէ լինէր թոյն ինչ ՚ի ըմպելին. վասն զի ոչ զինի երեկ ժամանակաց, ՚ի խրախճանի միում զոր յարդարեցէիր, տեսի թէ տեարքն և իշխանք տանն քո յետ արբենալոյ յայսմանէ, եղեն աղմկարար, մարտադրդիք, և ուշայեղեալ: Իսկ դու ևս, Տէր, թուէիր թէ մոռացեալ էիր զլինիլն քո թագաւոր:

ՓԱՔՍ

# ԱՆԴԻՏԱՑ ԱՆԴԷՏ

Որպէս Ֆաբրիկոսի՝ դեսպանին Հռովմայեցւոյ առ արքայն Փիւրրոս, որ կամէր կաշառել զնա վասն օգտից իւրոց, մատուցանելով զմեծ քանակութիւն դրամոյ։

Իրաւացի է ծանուցեալ է արքայի զչքաւորութիւն իմ։ Բովանդակ ստացուած իմ է տուն մի անփառունակ և փոքրիկ հաստատած ինչ կալուածոյ. յորոյ աշխատանօք իմովք ընդունիմ զպիտոյս կենաց իմոց։ Սակայն եթէ այլ իմն եղանակաւ հաճոյ է քեզ խորհել, թէ չքաւորութիւնս այս պատճառ է ինձ լինել աննշանական քաղաքի իմում, կամ զինչ և իցէ կերպիւ տրտում և ապերջանիկ կենաց վարել, խաբիս մեծապէս։ Չէք ինձ իրաւունք առ ՚ի գանգատաւոր լինել զբաղդէ. մատակարարէ նա ինձ համենայն, զոր բնութիւն պահանջէ. և եթէ թափուր եմ ՚ի ճոխութեանց, ազատ եմ և ՚ի ցանկութեանց նոցա։ Սովինք սրտաբն մարթ է ինձ ձեռնտու լինել կարօտաւորաց, յորոյ միայնակ յօգուտն փարթամք յականեն նախանձաւորուք. ռակոյն որքան և դուշնաքեայ են ստացուածք իմ, տակաւին հնար է ինձ ընծայել ինչ ՚ի պաշտպանութիւն տէրութեան, և յազգականութիւն սիրելեաց իմոց։ Ի կողմանէ պատուոյ իմոյ, թէ և այսպէս չքաւոր եմ, քաղաք իմ հաւասար կացուցանէ զիս ընդ փարթամաց. քանզի Հռովմ ոչ գիտէ զերթութիւնս մեծամեծ զօրծառնութեանց, բայց միայն զառաքինութիւն և զիմաստութիւն։ Պատուիրէ ինձ առ ՚ի պարապել ՚ի պայծառաշուք արարողութիւնս կրօնի. աւանդէ ինձ

զհաստատութիւն զօրականաց իւրոց, և արկանէ ընդ խնամատարութեամբ իւրով զամենաշահ գործառնութիւնս: Զքաւորութիւն իմ ոչ նուազեցուցանէ զազդողութիւն և զզօրութիւն խորհրդոց իմոց ՝ի ծերակուտական ժողովս: Հռովմայեցիք պատուեն զիս վասն այսր չքաւորութեան իմոյ, զոր արքայն Փիլիպպոս անարգ իմն համարի: Գիտեն նոքա զսակաւադիմի դիպուածս, զորս ունէի առ ՝ի հարստացուցանել զանձն իմ թարց պարտաւանաց. յայտնի է նոցա անշահասէր եռանդն իմ վասն բարեմասնութեան նոցա. և եթէ ունիցիմ ինչ ՝ի բողոքել փոխարինէն նոցա զառաւելուն գովուեն իւրեանց: Ապա ուրեմն զինչ յարգ ունիցին առաջի աչաց իմոց ոսկի և արծաթ քոյ: Միշտ պատրաստ առ ՝ի կատարել զհարկս, որ ՝ի վերայ իմ կայ, ունիմ զմիտս՝ ազատ յինքնանախատութէ. և սեփհական է ինձ համբաւ համեստաբարոյ:

## ՍԱԼԼՈՒՍՏ

### Յաղագս երախտագիտութեան:

Զի՞նչ ինչ առաւել հաճելի զաղումն մտաց, քան զերախտագիտութիւն: Ընկերշակի նա յայնպիսի ...իմ ներքին բարերարութէ, մինչ զի պարտականութեն բաւականապէս պարգևատրել լինի ՝ի կատարմանէն: Զի ոչ այս իբրև զկիրառութ այլ ամենայն առաքինութեանց դժուարին և տարժանակիր, այլ չհետ զայ ամա այնքան բերկ-

րութի, մինչև եթէ չիցէր հասարակ իշխանութիւն, որ յարակցէր ընդ նմա, և ոչ այս բաց և ինչ կարգեալ այնուհետև վ. սն այնորիկ, ապա մերձ մի ունէր հրճուիլ 'ի նմա վասն բնական բերկրութեան, որ նայն մատուցանէ։ Եթէ երախտագիտութի արժան է 'ի մարդոյ առ մարդ, որքան առաւել ուրեմն արժան է 'ի մարդոյ առ Արարիչ իւր։ Գերագոյն էութիւն ոչ միայն պարգևէ մեզ զայնասին բարիս, որք առաւել կանխագոյն յաղագս զան'ի ձեռանէ նորա, այլև զայնոսիկ օգուտս, որք պատճառեալ լինին մեզ յայլոց։ Ամենայն բարի, զոր վայելեմքս, ցինչև իցէ կերպիւ վիճակեալ մեզ, է պարգև նորա, որ է ածաղօք հեղինակ բարեաց, և հայր ողորմութեանց։ Եթէ երախտագիտութիւն, յորժամ 'ի կիր արկու մին առ միւսն, բնականապէս պատճառէ զհաճելագոյն զգացումս 'ի միտս երախտագէտ ան, բարձրացուցանէ զհոգին 'ի յերկրուն, յորժամ 'ի գործ դնի յայս մեծ առարկայ երախտագիտութեան՝ յայս ողորմած էութիւն, որ պարգևեալ է մեզ զամենայն ինչ, զոր ունիմք 'ի սեփականութեան մերում, և յորմէ ակն ունիմք զամենայն ընչիցս որոց վս տակաւին ունիմք զկայս։

ԱԴԴԻՍՈՆ

Գիւղահաւանութիւն բարեբնոյթ ։

Շինական ոմն քաղդէացի, ունէր գործ մի 'ի քաղաքն Բաղդատ։ Հեծեալ էր նա 'ի վերայ

իշոյ միոյ, և այծն երթայր զհետ նորա, զանգա-կին մի կախեալ զպարանոցէ նորին: Մաճառե-ցիդ զանասունս զայսոսիկ, ասէ ինքն ինքեան, երևումն երծաթի. և գրամոլս այսուիկ կարող եղէց գնել զնորոգ փակեղն մի. և զկերպասեայ պատմուճան մի պատուական· զոր ծիրանագոյն մետաքսեայ գօտեաւ կապեցից: Յայնժամ ման-կամբ բւ օրիորդքն կարի փիրողանս ժպտեսցին զինև, և ես եղէց ամենագեղեցիկն 'ի մէջ մըկելթի: Մինչ դեռ շինականն այսպէս նախամայլեէր 'ի միտ չաղյաղպայ վայելչութիւն իւր, երեք հա-րազէտ աւազակք միաբանայագործ եղեն առ 'ի մերկացուցանել զնա յայժմեան ստացուածոց նորա: Մինչ նա մեղմով զգնայր զճանապարհ իւր, մի 'ի նոցանէ 'ի բաց եհոյծ զզանգակին 'ի պարանոցէ այծուն, և անյայտաբար կապեալ զայն ընդ ձետ իշոյն, 'ի բաց տարեալ զայծ նորին: Երբ այն նստեալ 'ի վերայ իշոյն, և լուեալ զձայն զանգակին, շարունակեաց զմտախորհութիւն իւր, առանց ինչ կասկածա-նաց զկնաւէն, զոր կրեալ էր: Յետ սակաւուց դէպ եղև նմա դարձուցանել զգլուխ իւր. և շը-ուարի մեծաւ հիացմամբ և արտմութեամբ մինչ տեսանէ զայծ իւր 'ի բաց տարեալ անուի· որ էր մեծագոյն մասն հարստութեան նորին. և խանդաղատանօք բաղ-մաւ հարցանէր զայծէն իւրաքանչիւր ումեք ճա-նապարհորդի, որում հանդիպէր: Երկրորդ աւազակն ապա ակնունի խօսել ընդ նմա և ասել, թէ տեսի այժմ 'ի հեռուստ զայր մի շուտափոյթ, որ տանէր ընդ իւր զայծ մի: Շինականն իջեալ

յիշոյն շուտափութք՝ ասէ շնորհամատոյց սարականին ունիլ զէշ իւր. զի թարց կորուսանելոյ զժամանակ ըմբռնեցէ զաւազակն: Նոյնժամայն սկսաւ նա աճապարելով երթալ. և գտեալ զճանապարհն, զոր ցուցեալ էր նմա աւազակն. խոնջեալ և շնչասպառ եղեալ յետս դարձաւ 'ի տեղին, յորում եկեալ էր. ուրանօր ոչ զէշն եգիտ, և ոչ խաբեբայ ծանուցիչն, յորոյ զգուշութիւն յանձնեալ էր զնա: Մինչ տխրութեմբ յառաջ երթայր, յաղթահարեալ յամօթոյ 'ի տառապանաց, և 'ի ձախողութեց, շրջահայեցութէ նորա զարթուցաւ 'ի բարձրագոչ աշխարանաց և ողբերգութեց խղճալի առն միոյ, որ նստեալ էր առ կողմամբ վտակի իմիք: Փութեաց նա զճանապարհ իւր առ 'ի ցաւակից լինել եղկելի միում 'ի վշտակրութե. պատմեաց նմա զձախորդութեց իւրոյ, և եհարց զպատճառ սաստիկ տրտմութեն այնորիկ, որ թուէր վշտացուցանել զնա: Աւաղ, ասէ խղճալի այրն այն, կարի ողորմագին իմն ձայնիւ, մինչ նստեալ կայի աստանօր առ 'ի զովացուցանել զծարաւ իմ, արկի 'ի ջուր զատուփ մի լի ադամանդիւք, զոր պատուիրեալ էր իմ տանել առ Խալֆայն Բաղդատու. և 'ի մահ սուսերի սպառեսցի կեանք իմ, եթէ կարծիցեն զինէն կորուսանել զայսպիսի իմն գանձ մեծագին: Իսկ վասն ոչ անկանիս 'ի վտակն առ 'ի որոնել զատուփն, ասաց շինականն, զարմանալով ընդ յիմարութիւն նորա ծանօթին իւրոյ: Քանզի խոր է վտակս այս, պատասխանեաց այրն այն, և ես լուղալ

ոչ կարեմ: Այլ սակայն եթէ յանձն առնուցուս զայս գործ բարերարութեան վասն իմ; պարգեւատրեցից զքեզ երեսուն ործալթիւք: Շինականն բերկրութեամբ հաճեցաւ ընդ այն հրաւէր. և մինչ մերկանայր զհանդերձս և զկօշիկս իւր, մատոյց զպաղատանս իւր սուրբ մարգարէին, վասն նախախնամական օգնականութեան նորին; Բայց յորժամ անկաւ 'ի ջուր՝ 'ի յոյզ կեղծեալ տփոյն այնորիկ, այրն այն, որ էր մի յերից աւազակացն որք մեքենայագործ լեալ էին 'ի կողոպտել զնա, յափշտակեալ զհանդերձս նորին՝ տարաւ 'ի պաշտպանութիւն համախոհից իւրոց: Այսպէս տարաբաղդին շինականն այն, 'ի ձեռն անզգուշութեան, պարզմտութեան, և դիւրահաւանութեան, զրկեցաւ 'ի չնչին ստացուածոց իւրոց ողջոյն. և ամաչպարեաց 'ի խըրճիթ իւր ոչ այլ ինչ ծածկութիւ վասն մերկութեան իւրոյ, եթէ ոչ ցնցոտի պատմուճանաւ միով, զոր փոխ առեալ էր 'ի ճանապարհի:

ՊԷՐՍԻՎԸԼ

---

## Յարայոյց համեստաբարոյութեան ;

Սպանիացի ասպետ մի խողխողեալ զսեպուհ ումն մաւրտանիացի, փախեաւ առժամայն 'ի վրէժխնդրութենէ արդարութեան: Կարի բուռն զօրութեամբ զհետ պնդէին նորա, այլ նա պատեհ գտեալ 'ի յանկարծադէպ շրջանի իմիք 'ի ճանապարհի՝ ոստեաւ անյայտաբար ընդ որմ այգւոյ իրիք, առ 'ի գտանել

ինքեան զպաշտպանութիւն : Այգեաւէրն , որ էր մաւրատինացի եւ , պէտ եղեւ զի յայժմ մամուծէր յայգւոջանդ . եւ ապանիսցին 'ի գունդ խոնարհեալ առաջի նորա՝ խրախէկ արար զնա ըշկացութենէ իւրմէ . եւ բարացուցական իմն եղանակաւ աղաչէր զնա առ 'ի թագուցանել զինքն : Մաւրատինացին ուխնդիր եղեւ նմա զթուղթ՝ եւ առատաբարոյն խոստացաւ նմա առ 'ի օգնական լինել անձին նորա : Արա փակեալ զնա յամարանոցի իւիք , եւ եթող զնա անդանօր աւելով թէ յորժամ գիշերանայ , խնամ տարցի առ 'ի փրծուցանել զնա 'ի մատաւոր վտանգէն : Յետ քանի մի ժամուց դիմեալ որդւոյ նորա ածաւ առաջի նորա . եւ կերպագրութիւն գիմաց սպանողին ուղղապէս համաձայն էր ընդ հայեցուածոց սպանիչին , զոր յայնժամ ունէր 'ի պահեստի : Պատրուճակէր նա զերկիւղ եւ զկասկածանս , զորս զգայր 'ի սրտի իւրում . եւ առանձնացեալ 'ի սենեակ իւր՝ մնաց անդ մինչ 'ի մէջ գիշերոյ : Յետ այնորիկ թագնաւոր գնացեալ յայգին՝ եբաց զդուռն ամարանոցին , եւ այսպէս սկսաւ խօսիլ ընդ ապստամբին : Քրիստոնեայ , ասաց նա , պատանին զոր սպանեալ ես , է միայնակ որդի իմ : Յանցանք քո սաստկագունից արժանի են պատուհասից . բայց հաստատապէս երաշխաւոր եմ սրբել քեզ ըզբանս իմ վասն պահպանութեան քո . վասնորոյ եւ արհամարհ երեւի ինձ խանգարումն դառնացեալ պարտականութեան միոյ , որով պարտաւորն

ՀՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ Арм. ССР
им. А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3678
47

գեալ եմ զանձն իմ անագորոյն թշնամւոյ միում: Ած նա զսպանիացին յախոռս իւր. և ընծայեալ նմա զմի՝ ի յարագընթաց ձիոց իւրոց՝ փախիր, ասէ, մինչ խաւար գիշերոյ ծածկէ զքեզ. ձեռք քո պղծագործեալ են արեամբ. բայց արդար է Ա̃ծ, և գոհանամ զնմանէ զի հաւատ իմ է անապական, և զի յանձնեալ եմ նմա զդատաստան:

ԿԻԹ

## Ազնիւ Ֆիլիպ Սիդնի:

Պատանին Սիդնի 'ի քսան և չորս ամաց հասակի իւրում կարգեցաւ սպարապետ 'ի հասարակապետութենէն Հոլանդայեցւոց ընդդէմ Սպանիացւոց: Զօղնի յաղթահարութեան Կարթագինեայ՝ մայրաքաղաքին Թագաւորութեան, հանդեսաբորդութիւն և առաքինութիւն նորին ցուցին զարդիւնս իւրեանց 'ի հետակայ նշանաւոր և յաւէրժայիշատակ քաջագործութեան, պատմեալ 'ի նախնիս և յաջորդ պատմաբանից ընդ հանրական գովաբանութեամբ: Մինչ առանձնացեալ կայր նա 'ի բանակի իւրում, զօրագլուխք որ ընդ նմա, օրինօք մի այնքան չքնաղ պատուէին Եղեղեցին շուք, մինչ յինքն ձգել նորա զաչս և զհիացումն ամենայնի: Պատանին յաղթականն ընդոստեաւ 'ի անեղեայ իւրմէ շփոթմամբ և զարմացմամբ. և երկեւր մերկացեալ յայնմ շրջահայեցուէ մտաց Այինքնակալութէ, որք կարի հարկաւոր են 'ի սպարապետս, և որոց վասն կարի նշանաւոր էր Սիդնի: Յետ բանի միակայրկենից վերանորոգեալ զինքն եհարց զձեռակալիկ գերին, ամենաքաջք և քաղաքական ներգինն, թէ յինչ յերկրէ է, յոր ծննդենէ, և յինչպիսի առընչութենէ. և իմացեալ թէ հարսնացեալ էր նա Աերոսիբերեան արքայորդւոյ ումեք՝ Ագգուլիոս անուն, հրամայեաց իւրոյն զի ածցեն զնա և զծնողս գերուհւոյն առ ինքն: Յորժամ արքայորդին Սպանիացւոց երևեցաւ առաջի նորա, Սիդնի տարեալ զնա 'ի մի կողմն բանակին. և առ 'ի յայց փութեալ 'ի նմանէ չէօ-

կածանս, զորս ունէր դդալ վս մանկամարդ տիկնոջն, որպէս խօսիլ է նմա այսպիսի բանիւք: Մ՛եք երկոքին եմք ՚ի հասակի պատանեկութեան, որպէս խօսիլ է քեզ համարձակութեամբ: Ն՛ոքա, որք ածին առ իս զպապագայ կինքդ, հաւաստի արարին զիս ՚ի նմին ժամու, թէ անհուն խանդակաթութեամբ սիրէիր զնա. և գեղեցկութի և արժանաւորութի նորա ոչ թողլին ինձ տեղի երկբայելոյ զայնմանէ: Յայն սակս և մտախորհ եղէ թէ, եթէ ես լինէի ՚ի տեղի քո, յուսայի հանդիպիլ բարեբաղդութե. որոյ վասն և երջանիկ վարկանիմ զանձն իմ յայսմ ժամու առնել քեզ զծառայութի ինչ: Թէպէտ և դիպուածս պատերազմի արգելեալ է զիս ՚ի տէր քոյ, սակայն ցանկամ լինիլ բարեկամ քոյ: Ահա ամուսին քո, ահա զնա, և ինձ թէ եղիցիս երջանիկ: Դու քաջ հաւատասցիր, զի կեայր նա է մեզ, որպէս թէ լինէր ՚ի տան հօր և մօր իւրոյ: Բա՛ւ լիցի Շիպիոնի գնել պհեշտութի ինչ ծախուք առաքինութեան, պատուոյ, և երջանկութեան հաճոյարարոյ առն միոյ: Բա՛ւ. պահեալ եմ զնա վասն քո, առ ՚ի պարգեւել քեզ զընծայ մի՝ արժանի քեզ և ինձ: Միայնակ երախտագիտութիւն, զոր պահանջեմ ՚ի քէն վս անգին այսր պարգեւի, է՝ զի լինիցիս դու բարեկամ Հռովմայեցւոց: Ալլուկիոս կարի եռանդաւորութեամբ բաղձայր առ ՚ի առնել նմա պատասխանի ինչ. այլ սակայն արգելեալ զինքն յաստ սպարապետին՝ ողջայր բարձրաձայն. և գերեալ տիկինն ՚ի գուձս խոնարհեցաւ անդր, և այնպէս շարունակեաց մնալ մինչ ծերունի հայր նորա յաղթահա-

րեալ 'ի չզգացմանց բերկրութեան սկսաւ խօսիլ հետագայ բանիւք ։ Ո՛վ պատուական Շիպիոն. շնորհեալ է քեզ Երկինք առաւել քան զմարդկային առաքինութիւն։ Ո՛վ փառաւորեալ առաջնորդ. մեծազարմանալի պատանի. զինչ բերկրանք հաւասարել կարէ այնմ, զոր սիրտ քո արդի զգալ յայսմիկ վայրկենի, 'ի լսել զաղաչանս երախտագէտ օրիորդիս այսորիկ, վասն քաջողջութեան և յաջողութեան քոյ։ Այսպէս Շիպիոն էր զօրական մի, պատանի մի, հեթանոս մի, և առաքինութիւնք ոչ գտան անձն յարդիւնաւորութեան։ Ալլուկիոս սքանչացեալ ընդ այսպիսի մեծահոգութիւն, ընդ այսպիսի առատասրտութիւն, և ընդ այսպիսի քաղցրաբարոյութիւն անհատի ուրուք՝ վերադարձաւ յերկիր իւր, և հրատարակեաց զգովաբանութիւնս առատաբարոյ և մարդասէր յաղթականին իւրոյ. քարոզելով թէ, եկն 'ի Սպանիա պատանի դիւցազն մի, որ յաղթահարեաց զամենայն ինչ նախ զօրութ զինուց իւրոց, քան ազդեցուցէ առաքինութեան, և մեծութբ բարերարութեան իւրոյ։

ԴԱԴ

## Որդիքն Բարեպաշտք ։

'Ի միում 'ի սարսափելի բորբոքմանց լերին Էտնայ, որ յաճախակի գիպեալ էր, վտանգ ընթերակայ քաղաքաց էր անճարին մեծ ։ Ժողովուրդքն՝ սա 'ի զերծուցանել զանձինս իւրեանց 'ի մոխրալուտ հորսանէ հրդեհից և հա-

լեալ լուսոյից, որք 'ի վայր հոսին 'ի լեռնէ անտի, հարկադրեալ լինէին երթալ 'ի կայս տարակաց տեղիս: Ընդ մէջ շփոթութեան և խռովութեան այսպիսի տեսարանիս, մինչ իւրաքանչիւր ոք տանէր ընդ իւր մխիթարեալ զիւր պատուականագոյն համարէր, եղեն որք երկու Անափիաս և Ամփինոմոս անուն, 'ի մեծագոյն ճգան իւրեանց 'ի պերծուցանել զծնօղսն և զըստացուածս իւրեանց, յարկարծակի զմտաւ ածին զի հայր և մայր իւրեանց՝ երկոքին ևս ծերացեալ, անկարող էին զերծուցանել զանձինս իւրեանց փախստեամբ: Որդիական բարեպաշտութին յաղթական հանդիսացաւ 'ի վերայ այլ ամենայն մտածութեց: Ո՛ւր, ասեն զորովալից երխտաւորքն, գտցուք մեք զառաւել պատուական գանձ, եթէ ոչ 'ի նոսա որք ետուն մեզ զկեանս. և սնուցեալ. պաշտպանեցին զմեզ 'ի կեանս մեր: Ասացեալ նոցա զայս՝ մին էառ զհայր իւր յուսս իւր, և միւսն շալակեաց զմայր իւր. և խնդուք գնացին ընդ շրջապատեալ հրդեհս և ծուխս: Ամենայն, որք ականատես եղեն բարեպաշտօն և կաթոգնեալ բարուց նոցին, մեծաւ հիացմամբ զարմացան. և հանդերձ սերնդովք իւրեանց այնուհետև կոչէին զճանապարհն զայն, յորում բարեացապարտ երխտաւորքս այսոքիկ արարին զօթևան, դաշտ բարեպաշտից:

ՄԸՌՈՒՆ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԻՏ

## Բրմապետն:

Բրմապետ մի ճանապարհորդեալ Է թագաւորութեան՝ ժամանեաց ՚ի քաղաքն Իռայ, և վրիպմամբ գնաց ՚ի պալատն արքունի, կարծելով զայն լինիլ հասարակաց օթեւան մի: Ի ժամ ինչ հայեցեալ նորա շուրջանակի՝ եմուտ յերկայնածիգ սրահ մի. ուրանօր զետեղեաց զբաճկոնեթ իւր, և տարածեաց զփռոց իւր առ ՚ի հանգստիլ ՚ի վերայ նորա յետ սովորութեան արևելեան ազգաց: Զկնի սակաւուց պահապանք ոմանք տեսեալ զնա անդր՝ հարցանէին թէ զինչ բան ունէր նա անդանօր: Բրմապետն պատասխանի արար, թէ կամի յայսմ գիշերի հանգիստ առնուլ յիջևանի անդ: Պահապանքն զայրացեալ իմն եղանակաւ յուշ արարին նմա, թէ տունն այն, յորում մտեալ կայր, ոչ էր իջևան, այլ պալատ արքունի: Դէպ եղև զի ՚ի ժամ այնր կամէր թագաւորն անցանէր ՚ի սրահի անդ. և ծիծաղեալ ՚ի վերայ սխալութեանց բրմապետին՝ եհարց զնա թէ զիա՞րդ հնար էր նմա լինիլ այնպէս ագէտ, մինչ զպալատն չորոշել յիջևանէ: Տէր իմ, ասէ բրմապետն, տուր ինձ համարձակութիւն առնել վեհութեանդ քում զմի կամ զերկու հարցս: Ոյք էին յառաջագոյն բնակիչք տանս այսորիկ, եհարց բրմապետն. Նախնիք իւր, պատասխանեաց թագաւորն: Իսկ ո՞վ էր, ասաց բրմապետն, վերջինն՝ որ բնակեցաւ աստ. թագաւորն պատասխանեաց, հայր իւր: Իսկ ո՞վ է նա, ասէ բրմապետն, որ այժմ բնակի. թագաւորն պատասխանեաց թէ ինքն իսկ:

Իսկ ո՞վ, ասէ քրմապետն, բնակեսցէ աստ զկնի քո· պատասխանեաց Թագաւորն թէ որդի իւր։ Ո՛հ, Տէր, ասէ քրմապետն. տուն մի, որ այսքան յաճախակի փոփոխէ զբնակիչս իւր, և ընդունի զայսպիսի յաջորդութիւն կոչնականաց, ոչ է պալատ այլ իջեւան։

ՍՊԵԿՏԵՏԸՐ

---

## Լեառն Գլիտուն։

Յայնմ եղանակի տարւոյ, յորում պայծառութիւն երկնից, ազգի ազգի պտուղքն, որք ծածկեն զերկիր, գունաւորեալ սաղարթքն ծառոց, և համօրէն քաղցր բայց թարշամեալ զարդքն զուարթացուցչէ Աշնան, բանան զմիտս առ բարերարութիւն, և յարդարեն զնա 'ի մտախոհութիւն զգօնալի եւ 'ի գեղազուարճ և յուրախական երկրի միում, մինչ հետաքրքրութիւն ակամա տեղի տայ խոհիցն. և նստայ ես 'ի վերայ կատարոյ ժայռի միոյ՝ թըփովք ծածկեցելոյ. ուրանօր շշիւն թօթափման սաղարթից, խոխոջիւն ջրոց, և շաւիղքն բացակայ քաղաքի, դիւրացուցանէին զմիտս իմ յամենակատար յանդորրութիւն. և յանկարծակի կալեալ եղէ 'ի քնոյ, այն ինչ պաշարեալ կայի զուարճարար խոհմամբք, զորս առարկայքն, որք էին շուրջ զինև պատեալ, բնականաբար ներշնչէին։

Յայնժամ վարկանէի զիս լինել յերկայնաձիգ

և 'ի լայնածաւալ դաշտի միում. յորոյ կեդրոնին երևէր լեառն մի բարձրագոյն, քան զոր յառաջագոյն ծանուցեալ էր ինձ: Ծածկեալ էր նա բազմութ մարդոց, որք ըստ մեծի մասին էին երկրագործք. յորոց բազումք յառաջ խաղային զուարթամիտ եռանդեամբ յերեսս իւրեանց. թէ և ճանապարհն բազում ուրեք էր սառասփոր և դժուարագնաց: Նկատէի զի այնոքիկ, որք յայնժամ սկսեալ էին ելանել 'ի լեառն, ոչ հեռի կարծէին զինքեանս 'ի գագաթանէ նորա. բայց որքան յառաջանային, այնքան նորանոր լերինք 'ի վեր ելանէին. և գագաթ բարձրագոյնին, զոր յառաջ տեսանէին, երևէր ստորոտ այլոյ լերին. մինչ 'ի վերջոյ լեառն երևէր ծածկեալ յամպոց: Այն ինչ սքանչացեալ հայէի յայսոսիկ, յանկարծուստ երևեցաւ ուսուցիչ մի բարեբարոյ: Լեառն որ առաջի քո է, ասաց նա, է լեառն գիտութեան: 'Ի գագաթն նորա կառուցեալ կայ տաճար ճշմարտութեան. որոյ գլուխն 'ի վեր է քան զամպս, և առագաստ մաքրագոյն լուսոյ զօդարկէ զերեսս նորին: Հայեաց յընթացս ուխտաւորաց նորին. ընդ լեր և մտադիր: Օգնէի տեսանելոյ իմում զբազմաչանութե առարկայից, դարձուցի զաչս իմ դէպ առ բազմութիւնն, որ ելանէին ընդ առապար վերելս. և տեսի 'ի մէջ նոցա զերիտասարդ մի զուարթադէմ, հրաշեայ, եռանդնոտ, և անհեթեթ յամ շարժմամբ իւր: Անուն նորա յորջորջիւր Հանճար: Սլանայր նա զօրէն արծուի, և թևոյր զուգընկերս իւր նշմարել 'ի յետուստ նախանձա-

բեկութեամբ և զերմագախանութեամբ. սակայն յառաջադիմութիւն նորին էր անհաւասար, և ընդհատեալ ի բազմապատիկ ցնորից: Յորժամ հեշտութիւն եղանակէր ի հոգւոյն, խառնէր նա յընկերակցութեան նորին: Զուարճանայր նա ի խոտորնակ և յանփորձ ճանապարհս. և այնքան յածէր ի ճանապարհի անդ, մինչ տկարագոյն ուղեկիցք նորին բազմիցս յառաջէին քան զնա ; Տեսանէի զի Մուսայքն հայէին ի նա ապշանօք. այլ Ճշմարտութիւն մշտապէս խոժոռէր, և ի բաց դարձուցանէր զերեսս իւր ի նմանէ: Մինչ Հանճարն այսանակ ծախէր զզօրութիւն իւր ընդ ատանդական գնացս, տեսի զայր մի յոյժ տարբեր ի յեղանակօք, որ կոչիւր գործունէութիւն : Ընթանայր նա յամր և անխափան քայլիւք. աչք նորա յառեալ էին ի գագաթն լերին. և երկայնմտութեամբ տանէր ամի, որ արգել լինէին ընթացից իւրոց. մինչև զբաշխում ի նոցանէ եսես ի յետուստ իւր ; որք յառաջագոյն ծայր աւնէին զ յամրանալն և զդանդաղ ընթացիւք նորին: Սակաւք էին յիրաւի, որք ի վեր ելանէին ի լերան՝ հաստատ և անարգել ոտնափոխութք: Բանզի բայց ի դժուարութեանց ճանապարհին, խանդաղատեալ լինէին նոքա մշտապէս ի բազմախուռն ախորժակաց. կրից, և հեշտասիրութեանց դառնալ յայսկոյս կամ յանկոյս. և ի կատարել միանգամ զխախանձանս նոցա, անհնար լինէր դիմադարձել նոցուն. Թէ և բազում անգամ դառնային առ ճանապարհն, սակայն խոչնդոտք ճանա-

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆԳԷՏ

պարհին դժուարային նոցա առաւել. լեառն երև-
էր առաւել առապար և քարուտ. պտուղքն, որք
էին առողջարար և անուշահամ, թմէին անհամ
և դառնացեալ. տեսանելիք նոցուն աղտանային. և
ոտք ոչ սահէին յիւրաքանչիւր փոքրիկ խոչընդակէ:
Տեսանէի դուն ինչ զարմացմամբ, զի Առու-
ակքն, որոց պաշտօն էր ՚ի քաջալերել և ՚ի
կազդուրել զսիրտս նոցա, որք եկանէին ընդ
վերելս, եղանակէին յաճախակի յանդաստանս
հեշտութեց. և ընկերակցէին ընդ նոսա, որք պատ-
րեցեալ էին ՚ի հրապուրանաց նոցա:

Այլ սակայն ուղեկցէին ընդ նոցա զսակաւ ճա-
նապարհ. և բազում անգամ լքանէին և թո-
ղուին զնս, յորժամ ՚ի բացեայ լինէին ՚ի լեռնէ:
Յայնժամ բանաւորքն երկպատէին զշղթայս
խուրանց ՚ի մի ապերջանիկ գերեացն. և ա-
ռանց դիմակայութե առաջնորդէին զնոսա ՚ի դա-
դարս անգիտուն, կամ յօթևանս թշուառութե:
՚Ի մէջ անհամար մոլորչաց, որք ջանային
զուխտաւորս ճշմարտութե ՚ի բաց խոտորեցու-
ցանել ՚ի շաւղէն գիտութեան, կայր ոմն այնքան
սակաւ աշարկու ՚ի հայեցուածս իւր, և այնքան
անոք և մեղկ ՚ի հնարս իւր, մինչ հազիւ հաղ
փոյթ ունիլ ինձ զնմանէ, բայց միայն վա բազ-
մութենցն, զորս անդադտաթար բնակարեալ էր
նա շղթայիւք: Պղերդութին, քանզի այս էր ա-
նուն նորին, հեռի ՚ի յարուցանելոյ զհակառա-
կութի, ոչ ջանայր դարձուցանել զնոսա ՚ի ճա-
նապարհէն, այլ շառաւայր յամեցուցանելով զըն-
թացս նոցին. քանզի ոչ կարէր լռել դանդաղելով զն

՚ի շեղիլ համանեցուցանէր յամել ՚ի ճանապար-
հի: Հպատրութ նորա ունէր զզօրութիւն թըմ-
բանկան. որ խամրեցուցանէր զոյժս այնոցունց,
որք մերձենային առ նա: Այնպիսինի գերիք նո-
րին չերեւս իւրեանց ապաւէին դարձուցանէին
զէպ առ տաճարն. եւ յոյս մեծ ունէին առ ՚ի
ժամանել անդր, բայց երկիրն թուէիւր ամփել ՚ի
ներքոյ ոտից նոցին. եւ մինչ փութային կարծէին
զանդիս իւրեանց, անդէն զինքեանս առ սառոյցավ
տեսանէին լերին: Այծառայական պարզութին,
ոյ յառաջագոյն փողփողէր ՚ի դէմս նոցին, սա-
կաւ առ սակաւ փոխարկէր ՚ի մելամաղձ նուաղ-
ութիւն. որ զուանաւորեալ էր խորին խորին աղ-
ջամղջմկք, մինչդեռ անցանէին նորա զհեղեղատ
անշնչութեան. որ է նեխեալ եւ անշարժաց ջուր ինչ,
զոր հողմք ոչ պատեն, եւ խոխոջք ոչ զօրացուցա-
նեն, մինչեւ թափեսցի ՚ի մեռեալ ծով միով ու բա-
նոր շրջուցեալ անցաւորք զարթնուն ՚ի բաղխ-
մանէ եւ ՚ի միաւոռմ վայրենի թաղին ՚ի խորխո-
րատ մառացախանութեն: Յամ ապերջանիկ ըմբ-
ռոց անուն ՚ի ճանապարհէն գիտութեան, ոչ որ
կարէր դառնալ յետս, եթէ ոչ հետեւողքն Պղեր-
գութեան, Կիրեալքն ՚ի կրից եւ յախորժակաց,
մինչ զեռ բռնաւորք նոցա անզօր էին եւ ննջեալ,
Յաւէրին զերս փրկութեան զտանել ՚ի հրապու-
րանաց նոցին, այլ սակայն իշխանութիւն Պղեր-
գութեն էր յարակայ եւ աննոճաձ. եւ թէեւ եր-
բեմն դիմադարձիւր, բայց այն եւ ընդ վայր:
Զինի նկատելոյ իմոյ զայսոսիկ, դարձուցի զաչս
իմ դէպ առ զագաթ լերին. ուր անոր օդն էր

միշտ մաքուր և զուարթարար․ ուղին հովանաւորեալ էր դափնեօք և մշտադալար կանաչիւք․ և պայծառութին, որ ճառագայթս արձակէր յերեսաց գիտութեան, երևէր հեղուլ զփառս շուրջ զրախտաւորօք նորին։ Երջանիկ են, ասացի, այնոքիկ, որք յաջողին ելանել ՚ի լեռն։ Բայց մինչ զայս բան մտանէր իմ սրտմտանօք արտասանէի, տեսի զի ընկալեալ էակ մի պայծառափայլ և ճառագայթաձև։ Երջանկագոյն են, ասէ, այնոքիկ, որոց առաքինութին առաջնորդ լինի ՚ի սենեակս երջանկութեան։ Զինչ, ասացի, առաքինութիւն ինչ կոչի ՚ի քարանձաւն։ Զմտանն իմ, ասէ, է ՚ի քարանձաւն․ և լու սատոր առնեմ զլեառն։ Կարգուրեմ զհետ ... ՚ի վաստակս ձեռաց իւրոց․ և հոգին ... ՚ի խոկմունս իւր։ Խնդրեմ ես ընդ ամենայն քաղաքաց, և ելանեմ զծնկնաւորն յայրն իւրում։ Տաճար մի ունիմ յիւրաքանչիւր սրտի, որ խոստովանի զիմս զօրութի․ և նմա, որ փափագի ինձ, վաղվաղակի ներկայ գտանիմ։ Գիտութին ամբառնայցէ զքեզ յաթոռ աշխարհի․ բայց ես միայն կարող եմ առաջնորդել զքեզ յերջանկութի։ Մինչ առաքինութին այսպէս զրուցատրէր, ամբարձեալ զձեռս իմ առ նա այնպիսի ուժգնութբ, որ ՚ի բաց վտարեաց զննջումն իմ։ Խառնեցաւ ցոլքն լուսնին շուրջ զինև․ և առաւել երևէր սփռեալ էր ՚ի նկարեալ երկրի։ Փութացայ ՚ի տուն իմ, և զգիշերն ողջոյն պարապեցայ ՚ի լուռ և ՚ի մտածողութեն

ՅԿԻՆ

Փոփոխութիւն արտաքին վիճակի հակակայ է առաքինութեան:

Յաւուրս Յովրամայ՝ արքային Իսրայէլի զարդարեալ էր հոգւով մարգարէն Եղիսէ․ և այնքան հռչակաւոր էր և ազնուագոյն, և յամենայն տեղիս բարեհամբաւութիւն նորա տարածեալ, մինչև արքայն ասորեստանեայց՝ Բենհադադ, թէ և կռապաշտ, առաքեաց զոմն առ 'ի խորհուրդ առնել 'ի նմանէ վերից հիւանդութեն իւրէք, որ սպառնայր զկեանս իւր․ Հրեշտակն, զոր արքայն գիտեալ էր յղել, էր Ազայել․ որ թուէր լինել մի յարքայազանց կամ յիշխանացն ասորեստանեայ: Ընկալեալ սորա յարքայէն զպէսպէս ճոխագոյն պարգևս՝ գիտելոց առ մարգարէն․ և ընդ երևիլ առաջի նորա՝ խօսիլ սկսաւ բարձրագոյն իմն պատուոյ եղանակաւ: Յընթացս զրուցատրութեան, զոր առնէին ընդ միմեանս, Եղիսէ անքթիթ յառեալ զաչս իւր յերեսս նորա, և մարգարէական հոգւով գուշակեալ զեղեռնագործութիւն և զբռնութիւն բարուց նորին, ոչ կարաց զսպել զինքն յարտասուելոյ: Ազայել սքանչացեալ հարցանէր զպատճառ յեպակարծուստ արտասուելոյն: Մարգարէն նախագուշակ լեալ՝ բացայայտաբար յուշ արար նմա զմեղաց և զանօրէնութեանց, զորս այնուհետև առնելոց էր նա: Հոգի Ազայելայ ատէր զխորհուրդ անօրէնութեան․ և մինչչև էր բռնացեալ յախտէն փառամոլութեան և մեծութեան, զայրանայր 'ի խորհիլ չեղեռնաւոր

գործս, զորս գուշակեալ էր մարգարէն, և ջերմ-եռանդաւորութք ասէ, մի՞ թէ ծառայ քո անդան իցէ, որ զայսպիսի գործս առնիցէ: Եղիսէ այլ ոչ ևս պատասխանեաց. բայց առ 'ի ցուցանել կշռանաւոր փոփոխութիւն իւր, որ 'ի գլխաւորին նորա դիպիլ ունէր նմա, ասաց, Տէր ազդ արար ինձ, թէ եղեցես դու թագաւոր Ասորեստանեաց: 'Ի ժամանակս յինչ ամենայն, զոր գուշակեալ էր մարգարէն, կատարեցան: Եզայէլ ամբարձաւ յաթոռ արքայութեան. և զառողութին գերեաց զհոգի նորին. հարկանէր նա զորդիս իսրայէլի յամենայն սահմանս նոցին, և տառապեցուցանէր զնոսա ընդ ամենայն աւուրս արքային Յովաքու. և ամենայն գործք նորա քարոզէին զնմանէ լինիլ զոր յառաջագոյն մարգարէն գուշակեալ էր, այր ամբարիշտ, անօրէն, և արիւնահեղ: Յընթացս պատմութեանս այսորիկ առարկայ իմն երևի, որ կարի արժան է խորին մտադրութեան մերում: Տեսանեմք զայր մի ընդ վիճակ ինչ կենաց, որ ոչ կարէր խորհիլ զազգի ազգի անօրէնութեանց թարց հիացման և սարսափման. և այնքան հեռի համարէր զանձն իւր յայնպիսեաց, մինչ զի անհնար լինիլ ինքեան բնաւին 'ի գործել զնոսա: Այլ այս փոփոխութեամբ վիճակի և ապերասանութք մնաց իւրոց փոփոխեցաւ յամենայն միտս իւր. և երբ յաւել 'ի մեծութիւնս, յաւել և 'ի մեղս. մինչ 'ի վերջոյ կատարեաց զայն ամենայն անօրէնութիս, զորս երբեմն ասէր:

ԲԱԺԵԼ

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Եղծանեմք մեք զհեշտութիւն՝ կարի ըղձական լինելով զհետ նորա :

Մանուկ մի հարեալ ՚ի բազմագունութենէ թիթռան միոյ, պնդէր զհետ նորա ծաղկանէ ՚ի ծաղիկ անխոնջ ջանասիրութեամբ : Օառաջինն կամէր ըմբռնել զնա ՚ի մէջ տերևոյ վարդոյ · ապա մինչ ննջէր նա ՚ի վերայ ծաղկան միոյ, կամէր ծածկել զնա գտակաւ իւրով : Երբեմն յուսայր ապահով ունել զնա, մինչ զբօսնոյր ՚ի վերայ ոստոյ ծաղկան միոյ · և երբեմն հաւաստեաւ կամէր կալնուլ զնա, մինչ տատանէր ՚ի փունջս շուշանաց : Այլ սակայն անզօր ժժմակն տակաւին զերծ պահէր զինքն ՚ի յարձակմանց նորա : Հուսկ յետոյ տեսեալ զնա մանկանն՝ կիսով չափ թաղիլ ՚ի կակաչ մի, յառաջ մատեաւ և ուժգնութեամբ ՚ի բաց խլեալ զայն՝ ջնջեաց զողորմելի թիթեռն : Այսպէս մանուկս այս ըղձակաթութեամբ իւրով ՚ի վայելել՝ կորոյս զառարկայ վայելչութեան իւրոյ : Յայսմիկ բանէ պատանիք ուսանիցին, զի հեշտութիւն է գունաւորեալ թիթեռն մի · եթէ բարեխառնութեամբ զհետ երթիցեն նորա, հնար է նոցա զբօսանիլ ընդ նա · իսկ եթէ կարի եռանդեամբ գգուիցեն զնա, ապականեսցեն զնա յըմբռնման :

ԼԱՐԴ ԿԷՄՍ

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

### Զամբիւղաշէնն ագնուական :

Մեծատունն և ագնուական գերմանացիք յառաջ-նում նշանաւոր էին վասն սովորութեան հրա-հանգելոյ զորդիս իւրեանց ՚ի մեքենական ար-ուեստ ինչ, զի նովիմբ ունակասցին ՚ի հոգի գործունէութն, ապահով եղիցին ՚ի թշուառութեց պղերգութն, և ՚ի ժամանակի հարկաւորութն մարթասցին պաշտպանել զինքեանս և զազգա տոհմս իւրեանց: Ազդողական հաւաստութիւն իմն պիտանաւորութեան սովորութեանս այսո-րիկ երևի ՚ի հետևեալ պատմութեան: Պատանի գերմանացի մի ագնուական, արժանաւոր և բազմա-հարուստ յայտնեաց զդիտաւորութն իւր` մանկա-մարդ օրիորդի միում Պաղատանիոյ, և խնդրեց ՚ի հօրէ նորա զհաւանութիւն նր առ ՚ի ամուս-նանալ ը նմա: Ծերունին ընդ մէջ այլ ամենայն հարցաքննութեանց եհարց ցնա թէ զիարդ կամ էր նմա պահպանել զդուստր իւր: Պատա-նին զարմացեալ ընդ այսպիսի իմն հարց` ասաց թէ գոն ինձ հարստութի և ստացուածք բա-յում, և ապահով են իբրև զպատիւ ազգատոհմից իմոց: Այսրի ճշմարիտ են այսոքիկ ամենայն, պա-տասխանեց հայրն, սակայն քաջայայտ է քեզ բազ-մապատկութն պատերազմաց և ասպատակութեց, զորս կրեալ է երկիր մր մինչև ցայսօր. և նորօք ելք այսպիսի դիպուածոց որբեցեն զամենայն զստացուածս քո, և արասցեն զքեզ թշուառա-կան և անմխիթար: Առ ՚ի ոչ պահել զքեզ ընդ երկար ՚ի կասկածանս, շարունակեց ասել ծերու-

նին մեծաւ քաղաքավարութեամբ և քաղցրաբարոյու-թեամբ, գիտելով է իմ հաստատապէս ոչ ամուսնացուցանել զզօրաւոր իմ ընդ այնպիսւոյ ուժք, որ զինչ և իցեն պատուի և տուչութիւնք նորա, ոչ ունիցի զարհեստ իմն միջնակամ ինքեան սեփական որով կարող լինիցի պաշտպանել զնա եթէ աննախատեսս արկածք ինչ հանդիպեսցին ։ Պատանի այնուհետև կար ի յոյժ շարժել 'ի գիտութեան իւրում՝ ըստ եկաց տակաւին մի և յորժամ վերադարձաւ զինքն, ասաց թէ կարծէր զի երջանկութիւն իւր այնքան մեծապէս կախէր զառաջադրեալ կենակցութե անտի, մինչզի ոչինչ դժուարութիւն կամ հնազանդութիւնք՝ վայելուչ պատուոյ իւրոյ, կարող էին առ 'ի արգելել զնա 'ի ցանկալոյ 'ի կատարումն ածել զնոյն ։ Աղաչեաց գինել արդեօք ծերունին տայցէ նմա զժամանակ վեց ամսոց առ 'ի ստանալ դիտութիւն ձեռագործ արուեստի իւիք ։ Հայրն հաճեցեալ ընդ դիտաւորութիւն պատանւոյն, և ընդ խանդաղականութիւն նորա առ դուստր իւր՝ հաւանեցաւ զառաջադրութիւն նորուն ․ և երաշխաւոր կացոյց զպատիւ իւր, զի ամուսնութիւն անտարակոյս կատարեսցի, եթէ 'ի լրումն պայմանադրեալ ժամանակին յաջողակ գտանիցի նա 'ի յանձնառուն իւրում ․ Ներշնչեալ նորա 'ի գործակալէր յարկուէն և 'ի բարձրագոյն մտածողութեց հերքանիկութեն զոր յուսայր առ 'ի վայելել, չոգաւ նոյն հետայն 'ի Ֆինլանդիա, աշակերտեաց զամբիւղագործի միում, և կալաւ զամենայն հնարս նրբամտութեն և զգործունէութե, առ 'ի հմտանալ յայն արուեստ ։

Ընկալաւ փոխանակ չնաշխարհիկ գիտութեան այնր արուեստի. և յառաջ քան գիտնալ պայմանագրեալ ժամանակին վեր բազմաց՝ բերելով ընդ իւր իբրև զգաղափարս գիտութեան իւրոյ չքնաղատեսակ զամբիւղս՝ յերկիւրեալս 'ի պէտս պողոց, ծաղկանց, և աւզանագործութեանց: Ընծայեաց զնոսա մանկամբրդ ողկուզքին, որ միանգամայն լուքանչացեալ զարմացաւ ընդ գեղեցկաշինութի և կատարելութիւն արուեստականութեանն: Ոչինչ մնաց այժմ առ 'ի արգել լինել կատարման փափագանաց այնուհետև պատուանոյս այսորիկ. և ամուսնութիւն նոցա հանդիսօրէն կատարեցաւ 'ի բաւարարութիւն ամենեցուն:

Պատանին ծաղիկքս այսորիկ կեցին յաստութեան յաւուրս բազում. և յառաւօտինութեանց և 'ի քարեխառնութէ նոցա երկուք 'ի պաշտանեայց եին զպարգևս բազդի. այլ սակայն կատաղութիւք պատերազմաց էած զնոսա 'ի վերջոյ 'ի Պաղեստինէ: Ազգատոհմ, երկոցունց արատահման եղեն 'ի սեփական երկրէ իւրեանց. և սաղոստաքնոցա յափշտակեցան 'ի թշնամեաց: Անդին բացեալ լինի առաւ բան մի ազգեցական: Պատանի ազնուականն սկսաւ 'ի կիր առնուլ զարուեստ կամբխայս գործութե. և քաջահմուտ կըրթութեամբ իւրով յարուեստի անդ փութանակի եղև կառավարիչ մեծ ինչ գործատնութեան: Օրիորդն ևս պաշտպանեաց 'նա առատաբարորէն ոչ միայն ազգատոհմի իւրում, այլ քարեբարոյ ծերունւոյն և ս. այսինքն՝ աներոյ իւրում. և վայելեաց 'ի բարձրագոյն երջանկութեան սա-

տարելոյ գործունէութեամբ իւրով երջանկութեան մերձաւորաց իւրոց՝ երկպատիկ զուարճալի եղելոց նմա՝ ի ձախողութեանց անտի։

ՄԸՌՌԻ

Ծածուկն լինելոյ միշտ շատացեալ։

Իտալացի վարդապետ մի կարի նշանաւոր էր վասն երջանիկ և շատացեալ բնութեան իւրոյ։ Հանդիպեալ էր նա բազմաց բազմաց ձախողութեանց և տարաբաղդութեանց յընթացս կենաց իւրոց․ սակայն բնաւին ոչ տրտնջայր զվիճակէ իւրմէ, և ոչ դոյզն ինչ զտժգոհութեան ցուցանէր զնշան։ Մի ոմն ՝ի սրտակից բարեկամաց նորա, որ կարի յոյժ սքանչացեալ էր ընդ առաքինական բարս նորին, զոր անհնար վարկանէր ՝ի գաղափարել, յաւուր միում եհարց ցնա եթէ կա՞ր էր նմա զեկուցանել զծածուկն լինելոյ մշտապէս շատացեալ։ Այո՛, պատասխանեաց բարեբարոյ ծերունին․ հաճո՛յ է ինձ ուսուցանել զծածուկ իմ, և կարի դիւրութեամբ։ Յոչ ինչ իմիք պարունակի այն, եթէ ոչ յուղղապէս հայելն աչաց իմոց։ Բարեկամ նորա աղաչեաց զնա առ ՝ի բացատրել նմա զխորհուրդն զայն։ Այլ ի յօժարութեամբ, պատասխանեաց վարդապետն։ Յո՛ր ինչ կացութեան և իցեմ, նախ քան զամենայն հայիմ յերկինս ՝ի վեր․ և զմտաւ ածեմ թէ գլխաւոր գործ իմ աստ է ժառանգել զնա․

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Ապա՛ հայիմ յերկիր 'ի խոնարհ · և 'ի միտ ածեմ թէ յորժամ մեռանիցիմ, ժառանգեցից զտակաւ ինչ տեղի 'ի նմա: Ապա հայիմ շուրջ զաշխարհաւ, և տեսանեմ զի բազումք են անդ, որք ամենայն մասամբ նուաղ բաղդաւոր են քան զիս. Այսպէս իմանամ թէ ուր բնակի ճշմարիտ երջանկութիւն. ուր ամենայն հոգք մեր վերջանացին. և որքան սակաւ իրաւունք զոն ինձ 'ի տժգոհանալ և 'ի գանգատել:

ՄՈՌՌԻ

---

## Տեսիլ Թէոդորեայ՝ ճգնաւորին Տէնէրիֆ-ֆայ. գտեալ յայրի նորա:

Յարատևութեան որդի, ո՛վ որք և իցես, որոյ հետաքննութիւնդ առաջնորդեաց զքեզ աստ, ընթերցի՛ր զայս և իմաստուն լեր: Նա որ այժմ կարդայ զքեզ, է Թէոդորէ ճգնաւորն Տէնէրիֆֆայ, որ 'ի յիսուն և օթն երրորդի ամի առանձնականութեան իւրում եթող զայս խրատ-ականութիւն 'ի պէտս ազգի մարդկան. զի մի՛ առանձնաւոր ժամք իւր 'ի դերև ելանէին: Էի ես երբեմն, որպէս դուդ ես այժմ, սողուն մի 'ի վերայ երկրի և հայեցող մի յերկինս. սորբի զվաճառականութիւն և դիզեցի զհարստութիւն 'ի վերայ հարստութեանց. սիրէի և մեծարեալ լինէի. կցեցայ հանդերձ պատուով, և լռեալ զդայլայլիկ մարդելաւութեան. փառսմոլ էի,

և ամբարձայ 'ի մեծութի· ապերջանիկ էի, և առանձնացայ ։ Խնդրեցի առ ժամանակ զոր 'ի վերջոյ գտի տատանօք, զտեղի մի, յոր ամ հնար է անել գիւրաւ զամենայն ճշմարիտ պիտոյս և կարօտութիւ․ և ուրանօք ոչ տեսանէի զիս պարտաւորեալ առ 'ի ընդունել զօգնականութիւն մարդկան, կրելով զյիմարամտութիւն նոցա Գտի աստ զպտուղ, զբանջարս և զջուր․ և 'ի մօտ եղի ապաւել տատանօք ձեռին մահու․ որ՝ յոյս ունիմ զի յորժամ եկեսցէ 'ի վախճանի, կարի դիւրուճ հանգիցի 'ի վերայ իմ ։

Անցուցեալ եմ այժմ զքառասուն ութն ամ՝ 'ի մոռացօնս արկանելով զամենայն հոգունակութիւնս մահկանացուաց ․ և չյօժարելով բնաւին առ 'ի զհետ երթալ այլոյ իրիք, եթէ ոչ հարկաւորութեան հոգալոյ զկարևոր կերակուր ․ սակայն մինչ յաւուր միում կանգնեալ հայէի 'ի վէմն յայն, որ կայ 'ի վերայ այրի իմոյ, փափագէի ելանել 'ի նա․ և յորժամ ժամանեցի 'ի գագաթ նորա, նոյն օրինակ կամէի ելանել 'ի միւսն․ մինչ տակաւ տակաւ ըղձացայ տեսանել զգագաթ լերին․ առ որոյ ստորոտով այսքան ընդ երկար արարեալ էի իմն բնակութի։ Ջանահնար լինէի առ 'ի յաղթահարել զայս շարժուեալ խոկմանց իմոց, ոչ զի էր այն յանցաւոր, այլ զի երևէր ինչ նոր․ և ամենայն փոփոխութիւն ոչ յայտնապէս 'ի բարին, տարակուսեալ է զմիտս՝ խոհական եղեալ 'ի փորձառութ առ 'ի յուսաբեկ առնել զինքն։ Կորնչէի յանձախակի կարծելով թէ խաւէր զիս միտքիմ․

թէ անհամբերութիւն առանձնաւորութեան իմոյ յարուցեալ էր յերկրաւոր կրից. և թէ եռանդաւորութիւն իմ 'ի նկատել զարարածս բնութ, էր լոկ ծածկեալ փափագ իմն 'ի խառնիլ վերստին անգամ մի ևս 'ի տեսարանս կենաց: Արդ աղագաւ և ջանահար լինէի առ 'ի հանդարտեցուցանել զմիտս իմ 'ի նախնական կացութեան իւրում. այլ սակայն տեսանէի զի օրըստօրէ առաւելութին վարանմունք և խռովութիւն մտաց իմոց: Հանապազ կշտամբէի զիս 'ի մտի իմում վասն կարծաւութեան երջանկութեան. և 'ի վերջոյ սկսայ ասել թէ այն ոչ էր հեղգութի, եթէ ոչ զգուշաւորութիւն, որ արգել լինէր ինձ առ 'ի վեր ելանել 'ի գագաթ Տեներիֆֆայ: Աւան այսօրին յարեայ յառաջ քան զծագիլ արևու, սկսայ զճանապարհորդն իմ ընդ առապարս լերին. սակայն մինչև էր իմ յառաջ խաղացեալ, քանի ծեր էի և բեռնաւորեալ ուտելեօք, ծառազայթք արեգական սկսան ճաճանչել 'ի վերայ իմ. զառ 'ի վայրքն էին առաւել դաժանք և աւազուտ. երկիրն տաղայր 'ի ներքոյ ոտից իմոց. 'ի վախճանի նուաղեալ և խոնջեալ յաշխատութենէ ժամանեցի 'ի դաշտավայր մի փոքրիկ, որ միանգամայն շըրջապատեալ էր 'ի վիմաց, և անդաստ էր միայն յարևելեան կուսէ: Նստայ առ 'ի հանգիստ առնուլ սակաւիկ մի. հաստատապէս 'ի մտի եդեալ, թէ յորժամ վերանորոգիցեմ զզօրութիւն իմ, 'ի լրումն ածիցեմ զառաջիկայ դիտաւորութի իմ. այլ սակայն երբ միանգամ ճաշակ առի զդիւրութեան, զբազում պատճառս աներև ունէի, որոց

մերժ էր 'ի խառնմնջութենէ գոյն : Աստեղունք ծառոց տարբերալէին զՀովանի 'ի վի՛ գլխոյ իմոյ. և Հողմք դարձանայինք բուրէին 'ի սրտի իմում զՀոտ անուշից: Մինչ այսօրինակ նստեալ Հայե-Հայեցէի փոփոխակի պարտիզանս յապաղելոյ և յառաջ խաղալոյ, կալեալ եղէ յանընդդիմակաց և 'ի յանկարծահաս ծանրութե մտաց: Եդէ զգլուխ իմ յերկիր, և յանձն արարի զիս 'ի ձեռս քնոյ. յորժամ կարծէի թէ լսէի զձայն իբրև զթռչնան արծուոց. և թէ էակ մի դերագոյն քան զմարդ-կանգնէր առաջի իմ: Մինչ զմտաւ ածէի զերբէ խօսել ընդ նմա, կալաւ նա զձեռանէ իմմէ քաղցրաահեղ իմն Հայեցուածով. և եհարց զիս ահեղաբար բայց առանց սաստկութեան, Թէոդորէ, ու՞ր ե ս. թաղդ: Եղանեմ ես, պատասխանեցի, 'ի գագաթլերին առ 'ի վայելել անդանօր զլայնատարած տեսարան գործոց բնութե: Նկատեա՛ նա՛, ասաց, զտեսարանն յայն, զոր տեղիս այս յանդիման կացուցանէ քեզ. և զոր ինչ ոչ իմանայցես, յօժարամտաբար բացատրեցից քեզ: Ես եմ մի 'ի բարերարագոյն էակացն այնոցիկ, որ Հսկեմ 'ի վերայ որդւոց Հողոյ առ 'ի պաՀպանել զնոսա յայնոցիկ չարեաց, որք 'ի վերջոյ ոչ ունին յանցիլ 'ի բարի. և զորս նոքա ոչ ածեն 'ի վերայ իւրեանց յանդգնութեամբք իւրեանց: Աստ այսօրինակ Հայեաց շուրջանակի առանց ինչ երկիւղի. նկատեա՛, մտախորՀ լեր և իմաստուն: Բազմալերն իմ յայսմիկ սրախուսութե, Հայեցայ և տեսի զլեառն մի առաւել բարձրագոյն քան զՏենէրիֆֆեայն, յորոյ պատաթն ոչ զօրէին Հասանել աչք մարդկանն: Ծործոր տխրաս

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԵՏ

արարի զանձն իմ 'ի հայիլ ընդ բարձրունս նորա, դարձուցի զաչս իմ առ ստորոտ նորին, զոր դիւրաւ կարէի տեսանել· սակայն զարմացեալ էի 'ի տեսանել զայն առանց հիման, և անյայտաբար հաստատեալ յունայնութեան և 'ի մթութե: Այա-անակ կանգնեալ կայր զարհուրեալ և շփոթեալ· 'ի վերոյ էին երկիրք անքննելիք, և 'ի ներքոյ էր համակ դատարկութի: Սակայն պաշտպան իմ յանդիմանական ձայնիւ աղաղակեաց, Թէ՝ որդի, մի՛ զարհուրիր, այլ համբարձ զաչս քո վերստին. Լեառն Կեցութեան է առաջի քո, նկատեա՛ զայն և իմաստուն լեր:

Հայեցայ ապա առաւել խոհական մտադրութե, և տեսի զի ստորոտ լերին ունէր զսկսուած իւր քաղցրահայեաց, և գեղապաճուճեալ ծաղկամբք· մէջ նորա էր կարի խորաքարոտ, ընդ միջեալ 'ի ժայռից, և ընդհատեալ յառապարաց, զորս կախէին ձիւղք բեռնաւորեալ պտղովք, և յորոց միջի սկսեալ կային պալարք և այգեստանեայք: Երկիրքն, յորս գագաթն աչք իմ հազիւ զօրէին հասանել, անպտղաբեր էին գլխովին· սակայն էին անդ 'ի ծերպս ժայռից քանի մի զօրեղ մշտադալարք, որք թէպէտ ոչ կարէին զբոսեցուցանէին զտեսանելիս և զհոտոտելիս իմ, սակայն երևէին 'ի կազդուրել պաշխատանս և 'ի դիւրացուցանել զգնացս այնոցունց, որք ելանէին 'ի միջի նորա: Ապա սկսեալ իմ ի քննել ճշգրտագոյն զննողութեամբ զզանազան մասունս, տեսի կարինչ'ի հեռաւոր զբազմութի արօտաց և իգաց

գոլ ՚ի տեսարան անդր ՚ի սարոտէ լերին ։ Օտարազգին գործս նոցա ոչ կարացի ուղղապէս իմանալ. սակայն մինչ նոքա յառաջ մատչէին, տեսի զի զբօսնուին հաւաքելով զծաղիկս ընդ ներկայութ համեստաբարոյ օրիորդի միոյ, որ զգեցեալ էր զհանդերձ սպիտակ, և ոչ երևիւր առ ՚ի արգելել զնոսա խանդաղատանօք ՚ի տեղւոջ կամ յերկրի ինչ. քանզի գիտէր նա զի բովանդակ երկիրն էր մեղմագին և հաստատուն, և զի նոցա չէր ճար դիւրաւ սասանիլ և մոլորիլ անդանօր ։ Յորժամ, քանզի յաճախ դէպ լինէր, նոքա փոխանակ ծաղկան զփուշ քաղէին, Անմեղութին՝ քանզի այս էր անուն օրիորդին, ծիծաղէր զսխալումն նոցին: Երջանիկ են, սացի, այնոքիկ՝ որք են ընդ այսպիսի մեղմագոյն կառավարութ, և են ապահով և աներկեան ։ Այլ սակայն չունէի զդիպողութիւն ՚ի մտածել զերջանկութէ նոցա, քանզի տեսանէի զի Անմեղութին երթայր զհետ նոցա սակաւ ինչ ճանապարհ, և այնպէս երևէր թէ համարէր միայն զծաղկաղարդ սարոտ լերինն իբրև զնահանգ՝ ինքեան սեփական ։ Նոքա, զորս մեկուսի թողոյր յինքենէ, հազիւ ուրեմն գիտէին թէ լքեալ էին, մինչչև տեսանէին զինքեանս ՚ի ձեռս Սաման. որ էր օրիորդ մի առաւել ահեղատեսակ ՚ի հայեցուածս իւր, և առաւել խստագոյն ՚ի պատուէրանս իւր. և արգելոյր զնոսա ՚ի ճանապարհս կանոնաւորս, որք ՚ի կարծիս նոցա էին կարի անձուկ և կարի առապար։ Յաճախակի խանդաղատեալ լինէին նոքա յԱխորժակէ, ՚ի թողուլ

զայսոսիկ ճանապարհս, զոր Ուսումն ոչ կարէր ահացուցանել, թէպէտ երբեմն զարհուրեցուցանէր զնա այնպիսի երկիւղիւ, մինչ զի ներգործութիւնք ներկայութեան նորա հազիւ հազ իմացեալ լինէին: Ոմանք վերադառնային յառաջին մասն լերին, և երևէին փափագիլ ՝ի պատաղիլ ու ՝ի քաղել զծաղկունս, սակայն այլոց եւս պաշտպանեալ լինէին յԱնձեղուէ. և այնոքիկ, զորս Ուսումն ոչ կարէր յետս դարձուցանել, եկանէին ՝ի լեառն ընդ տղմուտ ճանապարհ մի, յորում երբեմն տեսեալ լինէին, և հազիւ երբեք խնամ տարեալ:

Մինչ Ուսումն առաջնորդէր զզօրս իւր ՝ի լեառն, ոչինչ էր անդ տեսանելոյ արժանի, եթէ ոչ մշտապէս խրատէր զնոսա առ ՝ի զգուշանալ յՈւնակութենէ. և յիւրաքանչիւր քայլափոխէր ցմին կամ ցմիւսն, թէ Ունակութիւն մի որոգայթէր զնոսա. թէ լինէին նոքա ընդ իշխանութեամբ Ունակութեան մինչև իմացեալ էին զվտանգ իւրեանց. և թէ նոքա, զորս Ունակութիւնն միանգամ նուաճէր, սակաւյոյս ունէին վերստանալ զազատութի իւրեանց: Կարի թախանձանօք խանդաղատէի ՝ի գիտել զպատճառ այսր զգուշաւորութեն, վերակրկնեալ այսքան յաճախակի, մինչ պաշտպան իմ եցոյց ինձ զզօրս թզկաց, որք երևէին լռելայն ՝ի գնալ առաջի նոցա, որք եկանէին ՝ի լեառն. և իւրաքանչիւր ոք հարթարդակ առնէր զճանապարհն զառաջեաւ հետևորդին իւրոյ: Տեսանէի զի յառաջագոյն ոչ էի հասու լեալ նոցա, քանզի այնքան փոքրիկ էին, մինչ ոչ դիւրաւ ընդ աչօք անկանիլ,

և յամենայն վայրկենի մերձաւորն լինէին ՚ի գոյնս իւրեանց առ առարկայս, յորոց էին շրջապատեալ: Եւ քանզի հետևողք Սամսոն ոչ երևէին իրազէտ զներկայութեանն այնոցիկ վտանգաւոր ընկերաց, կա՛մ ծաղր առնելով զփոքրահասակ կերպարանս նոցա, անճար կարծէին թէ մարդիկ ՚ի հպատակութե աճեսցին յայսպիսի անզօր թշնամեաց, լսէին նոքա առ հասարակ զխրատ զգուշաւորութեան նորա զարմացմամբ. և յորժամ տեսանէին նոքա զինքեանս յաչաց նորա հեռացեալս, բերէին ընդ նոսա արհամարհութեամբ: Եւ ոչ ես ինքնին կարէի վարկանիլ զզգուշաւորութիւնս նորա այնքան կարևոր, որքան յաճախ խրատտուութիւնք նորա երևէին լինիլ. մինչ տեսի զի իւրաքանչիւր ոք յայսոցիկ փոքրահասակ էակաց կրէր ծածկաբար զշղթայ մի ՚ի ձեռին իւրում, որով պատրաստ էր ՚ի շղթայել զայնոսիկ, զորս տեսանէր լինիլ ընդ իշխանութեամբ իւրով: Այլ սակայն այսոքիկ Սանակեանք, ընդ զգուշաւորութեամբ Սամսոն, հանդարտաբար յառաջ խաղային, և երևէին կարի սակաւ առաւելեալ ՚ի զանգուածի քանթէ ՚ի զօրութեան. քանզի թէ և մշտապէս ըղձանային նոքա յարակցիլ ընդ Ամբորժալի, սակայն յորժամ Սամսոն հեռի կացուցանէր զնոսա ՚ի հպատակութէ նորա, նոքա մեծաւ ճապաղանգութեամբ անսային. և առնէին զանձուկ ճանապարհս, յորս էին արգելեալս դիւրաճեմ և հարթարդակ:

Նկատելի էր զի դրակ նոցա ոչ էր հաստատուն, այլ մերթ անճեր և նուազիւր, բայց ոչ յարաժամ մնայր ՚ի նոյն կերպարանս. այլ և չէր ճար ինձ

առ 'ի չարտասանել զզարմացումն իմ, յորժամ տեսանէի թէ յորքան սակաւ ժամանակի նոքա ընդհանրապէս շահէին քանզի կորուսանէին զշանդուած իւրեանց: Թէպէտ յամր աճէին նոքա 'ի ճանապարհի Ուսման, այլ սակայն գիտել պարտ է զի աճէին. բայց եթէ միանգամ չարտուղէին նոքա 'ի կշռմանէ Ախորժակի, դրանք նոցա փութով հսկայական եղանէին. և այնպէս էր զօրութիւն նոցա, մինչ զի Ուսումն ցուցանէր հետևողաց իւրոց զքաջութս, որք շղթայակապ էին եղեալ 'ի նոցանէ, զորս այլ ոչ ևս կարէր ազատել 'ի գերութենէ նոցա: Ցուցանէր նոցա, բայց դոյզն ինչ ներգործութիւն. քանզի աշակերտք իւր ողջոյն երևէին յուսալ զի վեհագոյն էին գեր քան զամենազօր Ունակութիւն. և ոմանք երևէին տրտնջալ 'ի ծածուկ, թէ արգելեալ լինէին առ 'ի զհետ երթալ յաղթանակութն Ախորժակի: Այնպէս էր յաւակական հզօրք Ունակութեան, զի ոչ թողոյր զիշխանութի իւր զգացեալ լինել յառաջագոյն: Նոցա, զորս առաջնորդէր, ասէր թէ ճանապարհորդակից լինի միայն, սակայն հանապազ երկպատկէր զշղթայս իւր 'ի վերայ ընկերաց իւրոց. որք այնպէս անզօր էին, և այնպէս յանխլաբար կաշկանդեալ, մինչ չէր հնար դիւրաւ տեսանել զնա, յորժամ մտադրութիւնն պատաղեալ լինէր յայլ առարկայս: Ամենայն շղթայ աննդագոյն եղանէր, որքան սուեալ լինէր զգեցեալ. և յորժամ սևողական բարդութեամբք այնքան ծանրանային, մինչ զգացեալ լինել. կարի պիրկ էին

՚ի խորտակիլ ։

Յորժամ այսպիսի եղանակաւ Ուսումն յառաջ խաղայր յայն մասին լերին, յորում զառ ՚ի վայրն սկսաւ յառապարս փոխադրել, յանձն առար զպաշտօն իւր երկուց իշխանաց, որոց հայեցուածքն էին վեհանձնութեն ։ Ցածագոյնն ՚ի նոցանէ երեւիւր հնարաւոր յիշխել ՚ի ծերակոյտս, կամ կառավարել զաշխս, այլ սակայն ակնարկէր ՚ի գնացս միւսոյն, կարի հոգունակ մտադրութեամբ. և յայտնապէս շփոթէր և ՚ի վարանս լինէր, յորժամ զանց առնէր երբէք զակնարկութե իւրով։ Որոյն այնպէս երեւէր թէ հաճեցեալ էր ընդ հնազանդութիւն նորա, բայց այնպիսի քաղցրաբարոյութեամբ, որ յայտնի ցուցանէր թէ արժանապէս պահանջէր նա զայն. և իբրեւ այնքան անհնարին էր մեծութիւն և քաղցրաբարոյութի նորա, մինչզի նա որ ոչ մեծարէր զնա, ոչ էր պարտ հայիլ յերեսս նորա ։

Թէոդորէ, ասաց պաշտպան իմ, աներկիւղ լեր և իմաստուն. մերձեցի՛ր առ իշխանս յայսոսիկ, որոց իշխանութի ստորածեալ է ընդ ամենայն մնացեալ մասն լերին Կեցութեան ։ Օ՛ դողանի հարկանէր անձն իմ, և վստահացայ խօսիլ ընդ ստորնագոյն օրիորդին, որոյ թափանցանց և ահեղասաստ տեսանելեաց անհնար էր կարողութեան իմում յանդիման լինելով ժուժկալել ։ Ո՛վ պայծառափայլ իշխան, ասացի, կամ զինչ եւիցէ յորջորջել ՚ի անուն, որով օրինաւոր է խօսիլ ընդ քեզ, ասա ինձ, դու որ իշխեսդ աստ, զինչպիսի դաշամբ

տացես զպաշտպանութիւն քո։ Տաց ես զպաշտպանութիւն իմ, ասաց, հնազանդութեան միայն։ Անուն իմ կոչի Խոնարհութիւն, որ եմ ազնուագոյն և մեծագոյն քան զամենայն զէակս ստորին, և եթէ ընդունակ լինիցիս օրինաց իմոց, պարգևատրեցից զքեզ զորէն համայն ուխտաւորաց իմոց, առաջնորդելով զքեզ 'ի Կրօն։ Սիրտ իմ հրապուրեալ 'ի ձայնէ և 'ի հայեցուածոց նորա, ասացի թէ պատրաստ եմ հետևիլ նմա։ Յայնժամ եցոյց զիս Ամուսնոյ իւրում, որ հայէր յիս քաղցրութբ։ Խոնարհեցուցի զանձն իմ առաջի նորա, և նա ժպտեցաւ։ Յորժամ Աստուծոյ յանձն արարի զնոսա, զորոց այսքան չհետ պնդէր երջանկութեն, երևէր ակնունիլ զի երախտագէտ լինիցին նորա վասն հոգունակութն իւրոյ, կամ տրտմեցին ընդ կորուստ այնր պաշտպանութեան, զոր մինչ ցարդ մատուցեալ էր նոցա։ Սակայն կարի գեղեցիկ էր 'ի տեսանել 'ի զուարթամտութենէն, որ յարեաւ 'ի դառնալ նորա անտի, զի ներքնայութիւն նորա էր կարի յոյժ տհաճելի. և զի հրահանգէր նա զայնոսիկ, որք ոչ զգային զկարօտութ՝ հրահանգութեան։ Անձայն խնդալով ուրախանային նոքա զի այլ ոչ ևս լինիցին ենթակայ ցնորից նորա, կամ խուսափեցին 'ի խրատուց անմտութեանց նորա, այլ եղիցին այժմ միայն ընդ հրամանատրութբ Խոնարհութեն. որում ոչ զանգիտէին յանձն առնել զանձինս իւրեանց, անփոփոխ զհետ երթալով ամենայն խրատուց նորա։ Խոնարհութիւն խրատ տայր նց, յորժամ յառաջագոյն մտեալ էին ընդ հրահանգաւ

լուրով, առ ՚ի հաշիւ արկանել զինքեանս ՚ի մէջ ուխտաւորաց Կրօնի. և ասէր ինձ միայն յինքն յուսասցեն, գտանիցեն զնոյն վիճակ հեւաւորղայրու-րոց, զորս ոչ կարաց պաշտպանել յԱխորժակաց և ՚ի Կրից. և որք կալեալ յՈւնակութենէ ՚ի սահմանս Ցանկութեան, վարեալ լինէին ՚ի Հովիտս Յուսահատութեան: Արատապանութիւն նորա էր ընդունայն, քաշումք զայլ հրամանութիւն կամէին, և ոչ երկուանային զի վերականգնութեամբ նորա անվաստանք ունէին ելանել ՚ի լծոյն Կեցութեան:

Իշխանութիւն, սաստ Բանականութե, է խրատ տալ և ոչ ստիպել. յուշ եմ արարեալ ձեզ զկը-տանդ ընկերութե ձերոյ: Հանապարհն այժմ երկի հորդ և հասատ. սակայն գուն տնդ առա-պարք և խորհրդարարք, ընդ որս Կրօնի միայն է հը-նար առաջնորդել զձեզ: Հայեցէք ՚ի վեր, և երև-եսցի աչաց ձերոց մառախուղ մի ՚ի բարձրագոյն տեսանելի մասին լերին. մառախուղ մի, յորում հայեցուած իմ ՚ի յանկ ելանէ, և յոր աչք Կրօնի միայն թափանցել կարեն: Յայնկոյս նր են տա-ձարք Երջանկութե. յորս, այնոքիկ որք ելանեն ընդ առաջարս հրամանատրութեամ նորա, հանգչին յաւիտեան զկնի աշխատանաց ուղե-գնացութե իւրեանց: Ես ոչ գիտեմ զճանապարհ-գայն. յայն սակս մարթ է ինձ ածել զձեզ միայն յայլ ումն առաջնորդ: Հպարտութի երբեմն կըշ-տամբեալ է զիս վասն գծծութեան կերպարանի իմոյ. սակայն յորժամ ջանայր առաւելուլ զկշտամ-բանս իւր, կարէր միայն ցուցանել ինձ ՚ի ներքոյ

մառախղի զոյգիս Երջանկութեան · այսոքիկ ևս չքանային, յորժամ յառէի զաչս իմ ՚ի նոսա· և նոքա, զորս հաւանեցուցանէր նա երթալ առ այնս, շղթայակապ լինէին յԱնակունց և անդնդասոյզ եղանէին ՚ի Յուսահատութենէ· որ է բռնաւոր մի անագորոյն, որոյ հովիտքն են անդր քան զմթութին յաջմէ և յահեկէ· յորոյ կալանաւորուէ ոչ ոք կարէ զերծանիլ· և յորմէ ոչ կարեմ ուսուցանել զձեզ ՚ի հրաժարիլ:

Այսպէս էր եղանակ խօսից Բանականութեան առ այնոսիկ, որք խնդրէին զպաշտպանութիւն նորա: Ոմանք որք յիշէին զխրատս Ուսման, և տեսանէին զայնոսիկ առ ժամ երկրորդեալ յայլ իմն իշխանէ, զժկամակութի̄ տանէին սաստկագին վիճակի իւրեանց. և խառնէին զինքեանս ը̄ հետևողաց Կրօնի · որք որոշեալ լինէին ՚ի համակերպութենէ զնացից իւրեանց· թէպէտ բազումք ՚ի նոցանէ էին կանայք. և հանապազորդեան ջանասիրութի̄ կամէին ՚ի վեր ելանել, առանց զգուշանալոյ ՚ի տեսարանացն, որք յիւրաքանչիւր քայլի հրապուրէին զմիտս նոցա:

Այնոքիկ ամենեքեան, որք կամէին երթալ զհետ Բանականութեան կամ Կրօնի, հանապազ խանդաղատեալ լինէին թողուլ զճանապարհն, երբեմն ՚ի Կրից և երբեմն յԱխորժակաց· յորոց երկոքին ևս իրաւունս ունէին առ ՚ի պարծիլ զյաջողութենէ մեքենայագործութեանց իւրեանց· քանզի այնքան բազմութիւ̄ մարդոց ձգեալ էին ՚ի ճանապարհս զազանածածուկս, մինչ զի ամենայն ճանապարհ առա-

ուել բազմամարդ էր քան զուղիղ ճանապարհն ։ Յարձակմունք Ախորժակաց էին առաւել սաստկագոյն․ և Կրից՝ երկարատև յոյժ ։ Ախորժակքն նոյն հետայն դարձուցանէին զհետևորդս իւրեանց յուղիղ ճանապարհէն․ այլ սակայն Կիրքն նախ գնային ընդ ճանապարհ մի, որ ունէր զնոյն ընթացս ընդ ճանապարհի Բանականութեան և Կրօնի․ բայց սակաւ առ սակաւ զարտուղէին անտի, մինչ 'ի վերջոյ միանգամայն փոխէին զճանապարհ իւրեանց ։ Ախորժակքն հրապուրէին զմեղս, և Կիրքն՝ զչարութիւնս․ Յախորժակաց անտի՝ Վաւաշոտութիւնն էր հզօրագոյն յոյժ․ և 'ի Կրիցն՝ Ունայնասիրութիւնն էր բռնաւոր յոյժ ։ Յորժամ Կիրք մի և Ախորժակ մի միաւորէին զհրապուրողութիւնս իւրեանց, պա՛րտ էր երկնչել և զանգիտել 'ի բռնաւորագոյն յարձակմանէ նոցա․ և ճանապարհ Բանականութեան բարեպէս պատաղիւր 'ի գնացից մարդկան, յորժամ Կիրք մի գայր 'ի մի կողմն, և Ախորժակ մի 'ի միւսն ։ Մոլորեցուցիչքս այսոքիկ կարի յոյժ յաջողակ գըտանէին 'ի հրապուրել զհետևողս Բանականութեան, յորոց վերայ հազիւ ուրեմն դանց առնէին 'ի բռնանալ․ բայց միայն յորժամ հանդիպէին իրերաց ։ Որքա՛ն ինչ այսանակ յաղթահարէին զուխտաւորս Կրօնի․ քանզի թէպէտ և յաճախ հրապուրեալ լինէին առ ժամանակ, սակայն Կրօնն ամօրապար վերականչէր զնոսա դիտաւ իւրով Խղճմի մտաւ, յառաջ քան զաւնիլ Ունակութեան զժամանակ առ 'ի կաշկանդել զնոսա շղթայիւք ։

Բայց նոքա, որք խոստովանէին զՅանսէնէլ Յա-նսէնութեան, եթէ միանգամ լքանէին զնա, այլ ոչ ևս յետս դառնային. քանզի չունէր նա զգետ 'ի վերականգնել զնոսա, բայց միայն զհպարտութիւն. որ մշտապէս 'ի գերև հանէր զյոյս նորա, և 'ի գործ դնէր զամենայն զգիտութիւն իւր առ 'ի նպատակամատոյց լինել Կղերից. և յորժամ կատարէր զպաշտօն իւր, չէր ձեռն նմա բանանալ եթէ Յա-նսէնութիւն ընդ մեջ անկանէր: Տէրն փութա-նակի զի ամենայն վտանգ հեռացոյց Կղերին, յառաջ քայլ միայն յՅանսէնութենէ. դիւրին էր ընդդիմամարտ լինել այլ ամենայն իշխանու-թեան. և ոչ դժուարութիւն ինչ առաջի լինէր նոցա յորժամ անզգուշութեամբ հեռանային 'ի Կղերէ, առ 'ի գտանել զնա վերստին հլամա-նարութեան Կղերի Հռոմայ. եթէ ոչ էին ժամանակ առնելոյ Յանսէնութեան 'ի ձգել զշղթայս իւր յանձնոյս նոցա, և սրբելով զըմբռնութեանց ծանուցաւո-հացն յորոց էին մոլորեալ: Այդպէս չէր ար-ժան էր 'ի վերայ կացուցանել ամենայնացունէ, որք յետս դառնային յիւրաքանչիւր կամանէ Կղերի Հռոմայ, և չանային աւելորդ ինչ ներգործել, առ 'ի խորտակել զշղթայս Յանսէնութեան. սա-սանէին նոքա զԿղերն յառաջ խաղալ 'ի հեռաւոր-տեսանէին հնազանդութեամբ, և բազմային յա-ռաջելոյ ընդ նմանապէս յորժամ ամբոխեալ էին առ նա, խափանեալ լինէին յՅանսէնութենէ. և վե-հաւէին 'ի չարչարել կարգաւորութեան սիրոյ, յորմէ ոչ կարէին զերծանիլ, թէ և ատէին և ծիծաղէին զնոսին :

դքաջայայտ էր թէ Ունակութիւնք այնքան հեռի էին 'ի պարտաւորելոյ յայսոցիկ յանձնառնուլ ընդդիմամարտութեանց, մինչ զի եթէ ոչ յաղթահարեալ լինէին զլխովին, ամենայն ճակատամարտութի մեծացուցանէր զզանգուած նոցա և առաւելոյր զզօրութիւն նոցա. և Ունակութի մի ընդդիմացեալ և յաղթական եղեալ՝ կրկնապատիկ զօրաւոր էր յառաջ քան զընդդիմամարտութիւնն։ Եղանակն, յորում նոքա, որք զգուշացեալ 'ի բռնաւորութենէ նոցա՝ ջանային փախչել 'ի նմանէ, երևէր յետոյն լինել կարի սխալագոյն. Նկրտէին նոքա լուծանել զշղթայս իւրեանց մի ըստ միոջէ, և ապահովիլ սակաւ առ սակաւ մինչ յառաջ խաղալոյն. սակայն մինչչև էին զերծուցեալ զանձինս իւրեանց, Ունակութիւն արկանէր զնորանոր շղթայս 'ի վերայ փախստէից իւրոց։ Նա ոչ ոք զերծ լինէր 'ի նմանէ բաց յայնոցանէ, որք յանկարծական և սաստկագին աշխատանօք խորտակէին զշղթայս իւրեանց միանգամայն, և խոյս տային 'ի նմանէ. և յայսցանէ ևս բազումք կարի շուտափութեամբ յառաջ խաղացեալք, և արգելեալ յերկիւղից իւրեանց 'ի չկայ առնելոյ ուրանօր էին ապահովք, խոնջէին յուժգնութէ ջանից իւրեանց. և արկանէին զինքեանս վերստին 'ի ձեռս այնր իշխանին, յորմէ պարտ է գնել զազատութի սաստկաթանգագին. և որոց բռնաւորութի գոյին ինչ զգացեալ լինէր, բայց միայն յորժամ լինէր ընդդիմացեալ։

Գոյին անդամօք ոմանք, որք յորժամ տեսանէին

զի Անձնիշխան բռնաւոր ՚ի վր նոցա, զԱնձնականութիւն և զԱրօն յօգնութիւն կոչէին. երկաքանչիւրն ՚ի նոցանէ յօժարակամ հասանէր յօգնութիւն պատգամողին իւրոյ, սակայն ոչ նմանապէսի զգուշութեամբ և ոչ նոյնպիսի յաջողութեամբ։ Անձնիշխանութիւնն պարծեցեալ յիշխանութենէ իւրմէ, յանձնապահի համբաւէր խոստանալ ընդ Անձնականութեան. և ասէր նմա ՚ի լուծանել զումանս ՚ի շղթայից իւրոց, եթէ Յաջողեալն ոչ լուծանիցին։ Այսպէս ասէր, Անձնականութիւն՝ որ ոչ երբէք հաւասարի էր զյաղթութենէ իւրմէ, յանձնապահի հաւանութիւն տայր. սակայն միշտապէս տեսանէր զհաւանութիւն իւր լինել պատճառող վտանգաւորութեան. և տեսանէր զգերին հրապուրեալ յԱնձնիշխանութենէ ՚ի ծառայութիւն իւրմանէ։ Արօն ոչ ունէր մասնաւորներ ապաւինութեանց, այլ կարկառէր զձեռն իւր՝ հաւատի իւրով զյաղթութենէ իւրմէ. և եթէ զենալոյ այն, որում ընծայեաց զալ իւր, ոչ ՚ի բաց թողոյր զայն, հանապազ տանջնորդէր զնա յաղթանակօք. և զետեղէր զնա յուղիղ ճանապարհորդութիւնս Անձնականութիւն միշտապէս բերէր ՚ի հոգի իւր յորժամ տեսանէր զաղատութութիւն նորա. և յորդորէր զնա հեռանալ այնմ իշխանին, որոյ պատշաճական օժանդակն եղեան պարտաւոր վարձաներ զանձն իւր։

Յորժամ ծանապարհորդն անկաւ վի բանին ՚ի ճանապարհ Երջանկութեան, տեսանէր զի Անձնականն վերստին ողջոյնէր առաջի նորա. այլ սակայն

փոխադրեալ էր ՚ի դրան դաճաճի, և նուաճեալ անկարողացեալ էր յոյժ. բայց յորժամ Կիրքն կամ Արտմանքն, որք յառաջագոյն մատուցեալ էին նմա, մերձենային առ նա, Անհնարութիւն յանկարծակի ստանայր զկերպարան իւր, և անհնարին սաստկութ յառաջ վարէր զնա առ նոսա: Թշուառականն ՚ի միոյ կողմանէ այս օրինակ բաժանեալ, և ՚ի միւս կողմանէ հրապուրեալ և հանդերձեալ՝ կարի յաճախակի քանէր զճանապարհ Երջանկութեան. յոր հազիւ անգամ դառնայր մերձաւորին, զինի երկրորդ անգամ զարտուղելոյն յանդմանէ: Այսպէս գնայ, ով նորա իսկ և իսկ առ Կրօն՝ զօրուն Անակուն տեղի տայր. յարձակմունք նորա անզօր եղանէին և ՚ի վերջոյ ազդակցուն նորա ընդ Թշնամւոյն խաղաղեցեալ կորնչէր: Անակութիւն ապա սկսաւ ՚ի կիր առնուլ զայնոսիկ կարողութիւնս ըստ կամաց իշխանին, զոր ոչ կարէր յաղթահարել. և մինչ անէր ՚ի դըրախի և ՚ի զօրութիւն իւրում, սրբէր զառաջարս ճանապարհին առ Երջանկութիւն: Յայսմ ճանապարհէ չէր ջնար ինձ հեռացուցանել զմտադրութիւն իմ. քանզի ամենայն՝ որք զգնային ՚ի նա, երևէին զուարթագէմ և և շտապեցեալ. և որքան յառաջ խաղային, այնքան առաւել երևէր զուարթամառութիւն նոցա, և այնքան առաւել խելամուտ լինէին Իմաստութեան առաջնորդին իւրեանց: Ոմանք՝ որք ոչ էին բնաւ զարտուղեալ, այլ սոսկ ինչ ՚ի շեղ գնացեալ, ունէին զԱնակութիւն ընդ մէջ ճանապարհի իւրեանց. որ զործունէաբար օժանդակէր նոցա, և ՚ի բաց վարէր զԱրտմանս և զԿիրս,

որք ջանադիր լինէին ընդհատել և արգելել զգնացս ճանապարհին նորա։ Այնուհետև ամենայն, որք անագան էին մտեալ 'ի ճանապարհս յայսոսիկ ընդ երկար լքեալ թողեալ էին զայն, աշխատ լինէին առանց դոյզն ինչ օժանդակութեան Անականութեան, և յաճախակի ընդդէմ ջանասիրութեանց նորա։ Այսպէս յորժամ մերձ եղեն նոքա առ գագաթն, ուր նկատէին չի ատելուք կարէին գնալ առանց ինչ օգնականութեան Անականութեանն. և զի նոքա, որոց Անականութիւն էին զօրաւոր, յառաջանային դէպ առ մտախուզս սակաւ ինչ մտայուզութեամբ. և 'ի վերջոյ մնացին ընդ նոյնս յանդորրութեան և յուսատրութեան. յետ այնորիկ. այլ Կրօնի միայն տեսանել կարէին զնոսա. և թէպէտ Բանականութեան հայէր 'ի նոսա կարի մտախոյզ հետաքննութեամբ, այլ կարէր միայն ընդ աղօտ տեսանել, յորժամ ամուսին նորա բարձրագոյն զնա յեցեալ առ 'ի տալ նմա առաւել դիւրաւ տեսանել։ Բանականութիւն յայնժամ տեսանէր զի էին նոքա ապահով, այլ Կրօն տեսանէր զի էին նոքա երջանիկ։

Աւասիկ Թէոդորէ, ասաց պաշտպան իմ, դարձո զաչս քո յերկրից մթութեան, և տես զվիճակ այնոցիկ. որք յորժամ արձակեցան յԱմանէ. զոչինչ հրամանատրութեան ընդունէին բայց միայն զԲանականութեան։ Նկատեա զթափառմունս նոցա և լեր իմաստուն։

Հայեցայ ապա 'ի ճանապարհ Բանականութեան. որ խուսէր կարի ընդ երկար էր տարածեալ ը ճանապարհին Կրօնի. և Բանականութեան չէր

Ցուր գտանել զայն, բայց միայն, 'ի ձեռն խրա-
տաւանութ նորա: Սակայն յորժամ մի անգամ ու-
սանէր 'ի գտանել զայն, տեսանէր յայտնապէս զի
ուղիղ էր այն. և Ճշմարտութիւն երբեմն հրա-
պուրէր զնա ասել, Թէ ինքն ինքնին եգիտ զճա-
նապարհն, և հաւանեցուցանէր զնա մատուցանել
զինքն յառաջնորդութիւն Ուրոնի. որում կարի օգ-
տակէտ համարէր հետևիլ զկնի բազմագիտի ընդ-
ունայն քանիցս: Բնականութիւն 'ի վերջոյ բա-
րեպէս հրահանգեալ լինէր 'ի ճանապարհին. և
երևէր 'ի ցուցանել զայն դուն ինչ յաջողութ.
յորժամ խրատաբանութիւնք իւր ոչ Թիւր մեկ-
նեալ լինէին 'ի Ուրից, կամ իշխանութն իւր ոչ
'ի պարտաւորութիւն մատնիւր յԱխորժակէ: Սակայն
ոչ ունէր յայտնագանէ հնար էր նմա լինել ընդդիմա-
մարտ: Յորժամ Ուրոն ըմբռնէր զուխտաւորս
նորա, հաչիլ երբեմն դիմակալ լինէր նմա: Արգա-
յե երևէր առաւել ուժգնութ մերձիլ ընդ Ախոր-
ժակին, սակայն յաճախակի վաստակաբեկ լինէր 'ի
պատերազմի. և եԹէ ոմն յախոյենից իւրոց աջա-
կից լինէր ընդ Ունակութեան, իշխանութն
իւր խաղաղ սպառ 'ի յանգ ելանէր: Յորժամ
Ունակութ քանահնար լինէր 'ի գերութիւն վա-
րել զուխտաւորս Ուրոնի, յամի յամի զարգանայր,
և երբեմն Թոյլ տայր նոցա 'ի կերծանիլ. սա-
կայն յորժամ ըմբռնէր զապերջանիկ հետևողս
Բնականութեան, յառաջ խաղայր յամենայնի
անկրկնիւ. և մեծացուցանէր զկերպարան իւր,
և առաւելոյր զշլԹայակապս իւր առանց ընդ-
հատման և արգելման:

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Ոմանք 'ի նոցանէ, որք լքեալ էին զխրատս Բանականութե՛, մոլորեալ լինէին 'ի շշնջմանց Փառամոլութեան · որ հանապազ ցուցանէր զհոյակապ պալատս՝ շքեղապէս կառուցեալս յիւրաքանչիւր կողմանէ · բարբառէր զբերկրութիւն առատութեան, և պանծայր զապահովութե՛ իշխանութե՛ իւրոյ ։ Հաւանէին նոքա առանց ինչ դժուարութե՛ առ 'ի երթալ զհետ նորա · և Ունակութին նոյն ընդ նոյն արկանէր զշղթայս իւր 'ի վերայ նոցա · փութով իմանային նոքա զյիմարութիւն ընտրողութեան իւրեանց, այլ սակաւք 'ի նոցանէ կանային դառնալ յետս ։ Փառամոլութի՛ յառաջ վարէր զնոսա յառապարաց յառապարս, ուրանոր բազումք գլորեալ թաւալէին, և այլ ոչ ևս տեսանել լինէին վերստին։ Նոքա, որք ձերծեալ էին անտի զնի բազմատեսակ վտանգաւորութեանց, յանձնեալ լինէին 'ի ձեռս Ագահութե՛ · յորմէ և հաշուագրեալ լինէին 'ի ծառայութիւն Բռնաւորութե՛ · ուրանոր միայն առ 'ի շեղջակուտել և ժողովել ինքեանց զոսկի, մինչ բարերարք կամ ժառանգք նոցա 'ի վախճանի գահավէժ տարարեալ՝ ձգէին զնոսա յանդունդս Յուսահատութեան ։ Ոմանք ևս հրապուրեալ էին յԱնբարեխառնութենէ, առ 'ի դեգերիլ 'ի խնդիր այնոցիկ պտղոց, որք կախեալ կային զվիմաց · և ընուին զզդն ողջոյն անուշաւէտութե՛ իւրեանց ։ Տեսանէի զի Ունակութիւնն, որք սաւառնէին 'ի վե՛ սոցա, փութանակի յանձնարին կերպարան փոխադրէին · և ոչ գոյին անդ այնպիսիք, որք սակաւ ջանային առ 'ի վերադառնալ

առ Բանականութի, կամ փութով ընկղմէին յան-դունդս յայնոսիկ. որք բացեալ էին զառաջեաւ նոց: Յորժամ յառաջինն սոքա մոլորեցան 'ի ճանա-պարհէն, Բանականութի հայէր զինի նոցա խո-ժոռութեամբ եշտամբութեան. սակայն խուն ինչ յոյս պահէր առ 'ի կարող լինել պահպանել զնոսա վերստին. քանզի բաժակ արբեցութեան զայնպիսի որակութիւնս ունէր, մինչ տալ նոցա 'ի կորուսանել զուշադրութիւն իւրեանց գլխո-վին, բայց միայն յայնմ ժամանակի արբեցութե նոցա: Ո՛չ Յոյս և ո՛չ Երկիւղ մտանել կարէին յօթևանս նոցա. և Ունակութի այնպիսի միա-հեծան իշխանութե պայազատէր, մինչզի Երիցս մնայց ևս, եթէ Կրօն կացուցեալ էր զնա յապա-ւինութե նոցա, ոչ կարէր գտանել զմուտ:
Էին անդ ոմանք, որք յանցեալ էին զանցա-նելով զԲանականութեամբ, քան ոչ անսա-լով խրատուց նորա. և առանձնացեալ էին 'ի ջերմութենէ արևու և 'ի խռովութենէ ճանա-պարհին, ոչ 'ի յայգիս Անբարեխառնութե, այլ 'ի լաբիւրինթոսս Պղերգութե: Ունէին նոքա 'ի կացութեան իւրեանց զայս ինչ յատ-կութի. յորժամ հայէին 'ի ճանապարհ Բա-նականութեան, յորժամ ցանկային զի ներկայ լինիցի նա անդանօր, և յորժամ 'ի մտի դնէին առնել զդարձ իւրեանց 'ի վաղիւ: Ի սոսա՝ կարի պայծառափայլ երևէր խորա-գիտութի Ունակութեան, որ արկեալ էր 'ի վզ նոցա զանխզելի շղթայս, և յամենայն վայր-կենի մոլորեցուցանէր զնոսա 'ի ճանապարհէն,

առ որս մշտապէս կարծէին թէ հնար էր նոցա ժամանել։ Երթային նոքա ՝ի միոյ երկայնաձիգ լաբիւրինթոսէ առ միւսն, հանդերձ շղթայիւք Անակութեան՝ կախեալ զանխլաբար զնոցանէ․ մինչ՝ որքան գնային, այնքան ծաղկունքն գունաթափ լինէին, և անուշահոտութիւնքն մեղկանային․ երթային ՝ի սաստկասարսուռ գնացս իւրեանց, ոչ զբօսանաւորէին ՝ի ճանապարհի, և ոչ դառնալ կարէին յետս․ և միտք նոցա զայրացեալ էր գերբ քան զամենայն, քանզի տեսանէին զի էին յանցաւոր, այլ ոչ զուարճացեալ։ Արբեցողն սակաւիկ մի ծիծաղէր ՝ի վերայ գինւոյ իւրոյ․ Փառամոլն յաղթական հանդիսանայր ՝ի ձախողելս ախոյենին իւրոյ․ սակայն դերիւքն Ողերգութեն ոչ զլեհութեն ցուցանէին յերեսս և ոչ զաւրախութեն։ Տժգոհութի ընկղմեալ սուզանիւր ՝ի հայեցուածս նոցա․ և Տրտմութի սաւառնէր շուրջ զառաւերօք նոցա․ սակայն երթային նոքա դժկամակութ և թախծութ․ մինչ ժամն եղեն ՝ի խորս առանձնականութե, այլայլեալ միայն ՝ի մեկոնից և յայլազան ոնկոց․ ուրանօր իշխանութի Պղերգութեն ՝ի յանգ ելանէ, և յուսոաբեկ թափառականն յանձնեալ լինի ՝ի ձեռս Մելամաղձութե․ շղթայք Անակութե կարծցանն և պրկեալ լինին յաւիտեան․ և Մելամաղձութի սակաւիկ մի չարչարեալ զկալանաւորս իւր՝ յանձն առնէ ՝ի փախճանի ՝ի վիշտս անհնարութեան Յուսահատութեան։

Մինչ մտախոհ լինէի զթշուառական տեսարա-

նէս զայսմանէ, պաշտպան իմ աղաղակեաց առ իս տանելով, զմտաւ ած, Թէոդորէ, և լեր իմաստուն, և մի՛ տար Սոնակուն բռնանալ ՚ի վերայ քո: Յարեայ ՚ի քնոյ և տեսի զիս շրջապատեալ ՚ի մկնաց Տենէրիֆֆայ. Թռչունք տաճնջեան եղանակեին ՚ի ծառս, և շառաւիղք առաւօտու ցոլանային ՚ի վերայ իմ: ✳

## ՋԱՆՍԸՆ

✳ Ընդրըոըն վարդապետն յիւրում արժանահաւատ և ստուգամտ գրեալ վարս Ջանսըն վարդապետին ասէ, թէ վերջին բանաստեղծական քերթածն է ամենագեղեցիկ այլաբանուն իմն մարդկային կենաց, ընդ նմանութեամբ երկնելոյ ՚ի լեառն Կեցուն: Ջանսըն համարէր զայս ամենապատուելի ՚ի մէջ այլ ամենայն գրուածոց իւրոց:

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԵՏ

Համբաւ մեծի գաւառոյն Քրիստոնէութեան։

Ո՛չ գոյր ընդունին ՚ի մի երկրի անհատ ոք՝ այնպէս գերապանծ և մեծահամբաւ, որ զաւանօղն կրօնի մերոյ ՚Ի նա անփոփոխապէս տեսանեմք զչքաւորութիւն, զխոնարհութիւն, զյանդորրութիւն, և զկատարելութիւն իմաստութեան և զբարութեան, որք բացայայտապէս ցուցանեն զնա գոլ էակ գերագոյն։ Այլ սակայն վեհանձնութիւն նորա պարփակեալ էր բոլորովին ՚ի միտս իւր ծածկին։ Ոչ ունէր նա և ոչ մի յարտաքին փառացն այնոցիկ, որք տարորոշեն զմարդ ՚ի մեծատիրս աշխարհի։ Ոչ ունէր նա զիշխանութիւն ՚ի պետութեան․ թափուր էր բոլորովին ՚ի փարթամութէ. գիտէր յոչ ինչ աշխարհային մեծութի։ Որդի էր նա կնոջ հիւսան միոյ, և ինքն ինքնին էր հիւսն։ Այնքան չքաւոր էին դերահռչակ ծնողք նորին, մինչ մայր նորա ՚ի ժամ ծննդեան նորին ոչ կարաց գտանել զբարեգոյն օթևան քան զապաստան մի։ Եւ ինքն ինքնին էր այնքան չքաւոր և աղքատիկ, մինչ յազում անգամ չունէր ինքեան սեփական օթևան ՚ի վերայ աշխարհի։ Մարթ է մեզ առնել ՚ի ձեռն զարմացականութեան, որով զարմացեալ էին մերձաւորք նորա ՚ի լսել նմա խօսիլ ՚ի սինագոգին։ Այրս այս ուստի ընկալաւ զիրս զայսոսիկ. զի ոչ էր ընկալեալ զուսումն. զինչ իմաստութիւն է այս, որ տուեալ սմա. ոչ է սա հիւսն այն՝ որդին Մարիամայ. ոչ ընդ մեզ են եղբարք և քորք նորա։ Արդ ոչ է պարտ մեզ յայսմ վայրի զկայ առնուլ. քանզի յոչ

ինչ ուսմանէ, զոր իւր կամ այլոյ երկիր մատուցանել կարէին, զնոր էր ընդունիլ զայն գերբնական իմաստութիւն և զօրութիւն, զայն սըրբուն կենցաղավարութն, և զայն մաքրուն փորձապետութն, որք այսպէս չքնաղագանձ ցուցանեն զնա: Առաջին հետևորդք նորա էին քանի մի ձկնորսք, յորոց ոչ էսու այնքան ՚ի բացեայ էր ՚ի պատրաստելոյ զկերակուր ինչ, մինչ զի յորժամ առաքէր զնոսա ՚ի քարոզել զապաշխարութ և յապաքինել զախտաւորս, նոքա ըստ կամաց վարդապետին իւրեանց զոչինչ առին ընդ իւրեանս, բայց միայն զպատմուճան մի, զկօշիկս և զգաւազան մի: Օգնայր նա ՚ի մեծի խոնարհութն և հեզութեան, առնելով զբարի և ուսուցանելով զիմաստութիւն, և փառաւորելով զԱծ ընդ երկս ամս սկզբնաւորութեան վարդապետութն իւրոյ. և ապա որպէս ինքնին նախատես լեալ էր և նախագուշակեալ յայտնապէս, ՚ի չարչարանս խաչի վարեցաւ: Այս այն չնաշխարհիկն է, որ օրէնս ետ աշխարհի: Այս նա է, որ եղև հեղինակ առաքինութեան և երջանկութեան՝ բիւրոց բիւրոց մարդկայինս սեռի: Եւ այս այն է, զոր իմաստնագոյն և բարեգոյն մարդիկ, որք կեցին յաշխարհի, մեծարեցին իբրև զանհաս գերբնական, և փառաւորեցին իբրև զաղատիչ և փրկիչ ազգի մարդկան:

## ԲԵԱԹԹԻ

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

### Սրինգն:

Յեօթնամեայ մանկական հասակի իմում բարեկամք իմ յաւուր միում լցին զգրպան իմ կէս Պէնսովք: Ուղղակի գնայի 'ի կրպակ մի. ուրանօր կային 'ի վաճառ պէսպէս խաղալիք երեխայից. և հաճեալ 'ի քաղցրանուագ ձայն սրնգի միոյ, որ դէպ եղև ինձ 'ի ճանապարհի 'ի ձեռս այլ ուրումն երեխայի, մատուցի նմա զամ՝ զփողս իմ 'ի գին նորա: Ապա դարձ արարեալ անաի եկի 'ի տուն. և վազվազէի սուլելով զսրինգ իմ, կարի հաճեցեալ ընդ ձայն նորա, այլ խռովեալ զտունն ողջոյն: Եղբարք, քորք, և ազգականք իմ իմանալով զառևտրութիւնն զայն, զոր արարեալ էի, ասացին ինձ թէ քառապատիկ առաւել ես հատուցել քան զարժանաւորն նորա իսկ: Յայսմիկ բանէ սկսան ինձ ասել, թէ զինչպիսի գեղեցիկ իրս հնար էր ինձ գնել դրամովն այնուիկ. և նոքա այնքան սպանէին զինև վասն յիմարութեան իմոյ, մինչ սկսայ լալ 'ի մտատանջութենէ: Մտածողութիւնք իմ զառարկայէն զայնմանէ պատճառեցին ինձ առաւել զտրտմութիւն քան սրինգն զբերկրութիւն: Այլ սակայն փոքրիկ դիպուածս այս տպաւորեալ 'ի խորս յիշողականութեան իմում՝ այնուհետև պիտանացու երևեցաւ ինձ յոյժ. այնպէս զի յորժամ դէպ լինէր ինձ գնել զիր ինչ անհարկաւոր, ասէի ցիս, մի՛ տար առաւել վասն սրնգին. և այսպէս պահպանէի զդրամ իմ.

Յորժամ զարգացան միտք իմ, եկի յաշխարհ, և

նկատեցի զգործս ազգի մարդկան, կարծեմ թէ բազմաց բազմաց հանդիպեցայ, որք տուեալ ետուն վասն որդին:

Յորժամ տեսանէի զոք կարի փութամոլեալ ՚ի սէր շնորհաշխութեանց արքայից, պատարագեալ զժամանակ իւր յերթալ ՚ի յայգորութիւն, և նուիրեալ զհանգստութի՛ն, զզուարթութի՛ն, զառաքինութի՛ն, և գրեթէ զբարեկամս իւր, առ ՚ի սեփականել զայնոսիկ, ասէի ցիս, թէ այրս այս տուեալ տայ վասն որդին իւրոյ:

Յորժամ տեսանէի զայլ ոմն մոլեալ զհետ ոսկւոյ և շնորհաց ժողովրդեան, մշտապէս պարապեալ ՚ի վէճս քաղաքականս, և կցեալ ընդ խառնիխուռն ամբոխս, զանց արարեալ զգործովք իւրովք միանգամայն, և աւերեալ զնոսա այնոքիկ անհոգութեամբ և զանցառութեամբ, ասէի ցիս, սա արդարև տայ տուեալ վասն որդին իւրոյ:

Եթէ ճանաչէի զպապահ ոմն, որ անհոգ էր զամենայն տեսակաց մխիթարական կցութեանց, զամենայն բերկրութէ առնելոյ այլոց զբարերարութիւն, զամենայն արժանաւորութէ քաղաքակցաց իւրոց, և թափուր էր միանգամայն զհրճուանաց բարերարական բարեկամութեան առ ՚ի կուտակել և ժողովել միայն զհարստութի՛ն, տառապեալ այր, ասէի ցիս, դու արդարև տուեալ տաս վասն որդին քո:

Յորժամ հանդիպէի առն հեշտասիրի, որ պատարագեալ էր զամենայն զգովական զարգացումն մտաց իւրոց կամբաղձի՝ սոսկ զեղխագործական բերկրութեանց և հեշտութեանց, մոլորեալ այր, ասէի ցիս, հոգաս քեզ զննղունն փոխանակ հեշտու-

թեան. առաւել տաս վասն սրնգին քո։
Եթէ տեսանէի զոք մոլեալ զհետ ախտին խենեշութեան և պճնազարդութե , և յարեալ ՚ի սէր զարդարուն կահուց և գեղեցկատիպար կարասեաց, հատուցանելով զգինս նոցա անդր քան զկար իւր, յորոց վասն անկեալ կայր ընդ պարտուք, և աւարտեալ զընթացս կենաց իւրոց ՚ի բանտարկութե, աւաղ , ասէի ցիս , թանգ է տուեալ նա , կարի թանգ է հատուցեալ զգին սրնգի իւրոյ ։
Ի կարծս խելամուտ եղէ, զի մեծագոյն մասն ՚ի մարդկային թշուառութեանց գայ հասանէ առ նոսա սխալ գնահատութի իրացն, զորս առնուն, և տալով նոցա առաւել վասն սրնգաց իւրեանց ։

ՓՐԵՆԿԼԻՆ

---

## Արաքնէ և Մելիսսա. կամ երջանկութիւն տածելոյ զԲարի բնութիւն։

Բարի բնութի է մի ՚ի գլխաւոր մասանց առաքինութեանց ։ Նա է գործ բնութեան, և պարտի ծնանիլ ընդ մեզ. որպէս երևեցի ՚ի հետագայ բանս Սահմանեալ է ՚ի չափ բարեպատեհ. սակայն մարթէ ստանալ զայն ՚ի ձեռն արուեստի, և կատարելագործել զայն կիրառութե ։ Ամենայն առարկայ, որ հրապուրէ զերևակայութի մեր , ունի զփայլուն և զխաւար կողմն ։ Նա , որ ունակացուցանէ զինքն առ ՚ի հայել ՚ի տհաճելի կողմն, դառնացուսցէ զբնութիւն իւր , և յայնակս եղծցէ զճաշակ երջանկութեան իւրոյ, և ա-

պականեցէ հերքանկութիւն այնոցիկ ամենեցունց, որք շուրջ են զնովաւ։

Արակնէ և Մելիսսա են բարեկամք երկու. համանման են սոքա 'ի ծննդեն, 'ի քաղցրաւորութեան, յուսումնասիրութն, և 'ի կատարելութին արուեստից։ Յառաջագոյն բերէին ընդ միմեանս զնմանութիւն 'ի բնութեն ևս. սակայն իւրաքանչիւր ոք տարբեր կառավարելով զբնութիւն իւր, հակառակ և աննման են եղեալ միմեանց։ Արակնէ ունակացեալ է հայել միայն 'ի խաւար կողմն իւրաքանչիւր առարկայի։ Եթէ նորոգ գրաւորական գործ ինչ 'ի յայտ եկեսցէ՝ հազարօք հազարօք գեղեցկութք, այլ մի կամ երկու բծիւք, անցանէ նա հարևանցի զայնօքիւք ամենեքումբք, որոց հնար էր բերկրեցուցանել զնա. և զկայ առնու յայնոսիկ միայն, որք լինին զփիրտ նորա ատելութեամբ։ Եթէ ցուցանիցես նմա զպատկեր մի գերազանցօրէն նկարեալ, հայի նա 'ի մասն ինչ հանդերձից նկարուածոյն, զոր ոչ զանց արարեալ իցէ նկարչին, կամ նկատէ զձեռն մի և զմատն, որ անկատար իցէ մնացեալ։ Այգի նորա է չնաշխարհիկ յոյժ, և պահպանեալ մեծաւ չքնաղութբ և յստակութեամբ. սակայն եթէ ձեմ առնիցես ընդ նմա 'ի նոյն, խօսեսցի նա ընդ քեզ զոչնչէ, բայց միայն 'ի ձախողութեանց և 'ի մրրկաց, զծծեաց և զթրթրոց, և ասասցէ թէ զիարդ անհնար իմն է պահպանել զնա 'ի ձայնէ թօթափման տերևոց, և անկածից որդանց։ Եթէ նստիցես 'ի միում յապարանաց նորա առ 'ի վայելել զառաջիկայ բերկրալից տեսարանս անսփ, ասասցէ

նա թէ զոն անդ բազում փայտ և սակաւ ջուր·
թէ որն է կարի շոգ և կարի ախորժելին· թէ
եղանակն է կարի ջերմագին և հողմայինն· և
վերջ տայ ծառաքանութեանց իւրոց ընդ երկար
իւր պատմութեամբ զթշուառութեան կլիմային
միոյ ։ Յորժամ դարձ առնես ընդ նմա ՚ի
դասս ընկերակցաց , ակնունելով սուղ ինչ զբ-
ուարթամիտ խօսակցութեան , արկանէ նա ՚ի մէջ
ամենեցուն զխաւար արտմութեան , առնելով
զպատմութիւն վատառողջութեան իւրոյ, կամ
ճառելով զույնակի դիպուածոյ իւրեք , որ
հանդիպեալ իցէ մանկանց իւրոց ։ Այսպէս
անմտաբար լքանէ զզուարթամտութիւնս իւր ,
և զայնոցիկ ամենեցունց, որք շուրջ են զնովաւ.
և ՚ի վերջոյ ասէ թէ , չգիտեմ թէ ընդէր են
տխրեալ և լռանստեալ բարեկամք իմ։ Մե-
ղիսսա հակառակ է այսոցիկ ամենեցուն։ Ու-
նակացեալ նորա հայիլ ՚ի փայլուն կողմն առար-
կայից , պահէ յինքեան զզուարթամտութիւն
մի յարատև , զոր անսակաւ իմն երջանիկ ան-
կատարութեան զեկուցանէ ամենեցուն, որք շուրջ
են զնովաւ։ Եթէ ձախորդութիւն ինչ պա-
տահեալ իցէ նմա , զմտաւ ածէ թէ հնար է
այնմիկ լինել անբարի , և գոհանայ զանեսչուէ
Նալմիրելոյն վասն փրկութեան։ Երկրի ՚ի
միայնակեցութեան . քանզի այն դիպող ժամ
է նմա առ ՚ի ձանձրանալ զինքն · և զուարճանայ
՚ի ժամ կենդանակցութեան , քանզի ծանուցանէ
զերջանկութիւնն զայն , զոր վայելէ ՚ի սրտի։
Անզգուշոյ զխորսանդիւր ուրուք առաքինու-

ընդ թերութեանց նորա · և հնար է նմա արտահանել անտի ինչ ինչ՝ ներբողելոյ և գովելոյ արժանի ։ Ընանայ զամենայն գիրս փափագանօք զուարճանալոյ և հրահանգելոյ 'ի նմա · և յայնսակս երբեմն սխալի , որ վասն 'ի խնդիր լինի։ Ճեմեմ նմա թէ և յանզարդ ճանապարհի , և նա ցուցցէ զանհամար գեղեցկութիւնս , որք անտես էին յառաջագոյն , թէ 'ի լերինս , թէ 'ի ձորս, թէ 'ի թուփս , և թէ 'ի մայրիս · եւ և 'ի գունատեալ ծաղկունս մեկոնից և մանրախոտից ։ Այելէ յամենայն փոփոխութեան հողմոյ և եղանակի , իբրև թէ գոյին ընդ նմա արդիւնք ինչ առողջութեան և անուշութեան ։ 'Ի խօսակցութեան միջի բնաւ ոչ լուծիցես նմա կրկնաբանել զտառապանս իւր կամ զդրացեաց իւրոց · և կամ , որ չար է քան զամենայն , պատմելով զթերութիւնս և զանկատարութիւնս նոցա ։ Եթէ ինչ ինչ 'ի սխալականութեանց ծանօթից իւրեանց յիշեսցի 'ի լսելիս նորա , փոխէ նա 'ի զուարճաբանութիւն · յեղանակելով զամենագարշ ծաղրածութիւնն 'ի զուարճալի կատակաբանութիւն ։ Այսպէս Մեղիսսա զօրէն մեղուի ժողովէ զմեղր յամենայն ծաղկանէ · մինչ Արահնէ զօրէն սարդի ծծէ զթոյն յամենայն զուարթագեղ ծաղկանց ։ Մերձ բանիս այս է , զի յերկուց բնութեանց անտի՝ երբեմն կարի մերձ ընդ մերձ միահիւսեալ , մին է յաւիտեան դառնացեալ և տժգոհացեալ , իսկ միւսն յարաժամ քաղցրացեալ և զուարթացեալ·

մին զընդհանրականն արտասփռէ զաղջամուղջ․ միւսն զմշտնջենականն արտաշեղու պայծառութիւն ։

ՎՈՌԼԴ

---

Խայթոցք չքաւորութեան, հիւանդութեան և վնասուց, նուազ սուր են քան զխայթուածս յանցաւոր կրից ։

Ժողովեա զամենայն չարիս, զորս չքաւորութիւն, հիւանդութիւն, կամ վնասք կարեն պատճառել․ և տեսցես զի խայթոցք նոցա եղիցին ՚ի հեռուստ նուազ սուր քան զայնոսիկ, զորս յանցաւոր կիրքն բուսուցանեն ՚ի միջի սրտի ։ Ընդ մէջ հասարակական տառապանաց աշխարհի միտքն կարէ սեփականել զծիրս իւր, և ընծեռել զօգնականութիւն իւր․ միտքն է իրաւապէս մարդ վշտակրող, և վիշտք նորա շիջանիցին ։ Այլ սակայն այսոքիկ ախտք կրից պաշարելով ուղղակի զմիտս, յարձակին ՚ի վ՟ մարդկային բնութեան ՚ի յամուր կայանի նորա, և ՚ի բաց հատանեն զվերջին ճար նորա ։ Թւափանցանց մասունքն ՚ի նոյն կայան զզացուածոց բնութեան․ և փոխադրեն զամենայն զօրութիւս խոկմանց ՚ի գործիս չարչարանաց ։

ԲԼԷԸՐ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

## Սատակ :

Սատակ՝ ծնունդ Կարօտութեան, և մայր Առողջութեան և Դիւրութեան, բնակէր ընդ երկուց դստերաց իւրոց առ կողմամբ լերին միոյ, կարի տարակայ 'ի քաղաքէն : Բոլորովին անծանօթ էին սոքա զմեծաց · և ունէին զընկերակից ոչ առաւել բարեգոյն քան զգիւղականս և զգեղջուկս · այլ սակայն փափագելով զաշխարհահռչակութիւն առնել, թողին զընկերս և զբնակութիւնս իւրեանց, և 'ի մտի եդին առ 'ի ճանապարհորդել 'ի հեռաւորն աշխարհս: Սատակն աչալրջութեամբ երթայր զճանապարհ իւր. Առողջութիւնն ընդ աջմէ իւրմէ, որ զուարթութեամբ զրուցատրութեան իւրոյ, և երգովք մխիթարութեան և ուրախութեան մեղմացուցանէր զաշխատանս ճանապարհին · մինչ Դիւրութիւն զուարթացուցանէր զնա ընդ ահեկէ, սատարելով գնացից մեր իւրոյ, և մշտական բարեբարոյութեամբ իւրով առաւելլով զաշխուժութիւն քեռն իւրոյ :

Այսպէս ուղևորէին նոքա ընդ անտառս, ընդ քաղաքս և ընդ գիւղս, մինչ 'ի վերջոյ ժամանեցին 'ի մայրաքաղաք թագաւորութեան միոյ : 'Ի մտանել նոցա 'ի մեծափառ քաղաք անդր, մայրն երդմնեցոյց զդստերս իւր երբէք չհեռանալ յաջաց իւրոց · քանզի կամք Արամազդայ այնպէս էր առ նոսա, ասաց նա, զի բաժանումն նոցին յիրերաց պատճառեսցէ զկորուստ երից եւս :

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՍՊԵՏ

Այլ սակայն Առողջութիւնն կարի յօժարու-
մամբ պատուհասէր զհպարտ Սատանայ.
թոյլ ետ անձին իւրում ապականիլ յԱնբարե-
խառնութենէ, և ՚ի վերջոյ մեռաւ յերկունս
ծնանելոյ ՚ի Հիւանդութենէ : Կիւրութիւնն
՚ի չլինել քեռն իւրոյ, ետ զանձն իւր ՚ի հրա-
պուրանս պղերգութեան. և յետ այնորիկ ոչ
լսելի եղև և ոչ լուր ինչ զնմանէ. մինչ դեռ
Սատանայն, որ ոչ կարէր ունիլ զկայելչութիւն
ինչ թարց դստերաց իւրոց, երթայր յամե-
նայն ուրեք ՚ի խնդրել զնոսա, ՚ի վերջոյ կա-
լեալ եղև ՚ի ճանապարհի ՚ի Խոնջութենէ, և
մեռաւ ՚ի թշուառութեան :

ՎՈՌԼԴ

### Համբաւ Քրիստոսի :

Որ միանգամ ուշադրութեամբ զմտաւ ածիցէ զհամ-
բաւ օրհնեալ Տեառն մերոյ ՚ի բազմազանիկ
դիպուածոց և գործոց կենաց նորա, քանզի չիք ինչ
աշխատաւոր նկարագրութիւնք և դրուագք յօրի-
նեալ զնմանէ յաշակերտաց նորա, իսկոյն տեսանե-
լոց է զի էր նա ամենայն մասամբ առաւել զերա-
զանց, որ ծանուցեալ էր ազգի մարդկան : Ոչ թէ
մեք միայն ասիցեմք զնմանէ զայն, զոր Պիղատոս
ասեաց, և զոր ամենաչար թշնամիք նորա ոչ կա-
րեն ժխտել և ոչ ժխտեն, թէ ոչ գտանեմք զմեղս

լինչ 'ի նմա, և թէ բովանդակ ժամանակ կենաց նորա էր անօտգիւտ և անմեղ, առաւել է քան զոր ջնջեր է ոգել զայլ անձինս, որ կենդանավարեալ էին յաշխարհի : Սակայն կարի դուզնաքեայ լինի լեալ առ 'ի անցանել այսուհետև միայն զգերազանցութիւն համբաւոյ նորա։ Նա ոչ միայն հերձ էր յամենայն ազգ թերութեանց, այլ սեփականեալ էր և 'ի գործ դնէր զամենայն մտածական առաքինութի : Խոստովանեաց նա առ հայր իւր երկնաւոր զբազմաւանդն սէր, զամենաջերմ այլ բանական երկրպագութի, և եցոյց յամենայն բանս իւր զամենակատար խոնարհութի կամաց նորա, և զհպատակութի պատուիրանաց նորա։ Սիրտ նորա էր համեստափայլ, քաղցրագութ, ողորմած և կաթոգնեալ. միտ նորա պատարուն էր բարերարութ., գթասիրութ., և քաղցրութ. առ ամենայն ազգ՝ մարդկան : Մեծագոյն զբաղումն կենաց նորա էր առնել զբարի մարմնոց և հոգւոց մարդկան։ Ամենայն մտածմունք և ամենայն ժամանակք նորա հանապազ և գրեթէ անդադար յայսմ էին պատաղեալ։ Շրջագայէր նա բաշխելով զբարիս իւր ամենեցուն, որք կային զիւրև շուրջանակի, 'ի հասարակոր պէտպխաւկ եղանակս. բժշկելով զհիւանդութիս, օգնելով անկարութեց, ուղղելով զմոլորեալս, տարամերժելով զնախապաշարմունս, ծաղկեցուցանելով զճանապաշտունի, զբարեպաշտութի, զողորմածութի, զխաղաղութի և զմիաբանութի. և լցուցանելով յանձուկ սահմանս պաշտօնատարութեան իւրոյ զառաւել գործս ողորմութ. և գթութ. քան երկարածիգ

կեանք բարեբարոյ մարդոց մինչ ցարդ արտագրեալ լիցեն 'ի վերայ երկրի։ Որ էր նա ամենակատար իշխանութի 'ի վերայ կրից իւրոց. և թէ և համբերութի նորա բազմիցս սաստկապէս փորձեցաւ, սակայն ոչ երբէք յաղթահարեցաւ հոգի նորա, և ոչ անկաւ յանբարեխառնութի և 'ի չափազանցութի ինչ, թէ 'ի բանս և թէ 'ի գործս. և ոչ անգամ մի ևս զանպատշաճ խօսեցաւ ։ Համբեր գժնդակագոյն արհամարհանաց թշնամեաց իւրոց, ամենայն յանդորրամտութ, հեզաշարութ, երկայնմտութեամբ, և հպատակութեամբ. եցոյց զզարմանաքանչ արիութի ընդ մահ իւր բազմաչարչար և խայտառակ. և 'ի գլուխ ամենայնի 'ի ժամ չարչարանաց նորա 'ի վերայ խաչին խնդրեաց զթողութիւն վասն խաչահանուաց իւրոց այնու ամենագթացական աղօթիւք. Հայր, թող նց, քանզի ոչ գիտեն զինչ առնեն ։ Եւ ոչ իմաստութի նորա 'ի վայր էր քան զսրբութիւն իւր։ Վարդապետութիւնքն, զորս ուսուցանէր էին ամենաբարձր և ամենակարևոր, որք յառաջագոյն աւանդեցան ազգի մարդկան. և ամենայն մասամբ արժանի էին Աստուծոյ այնմիկ, յորմէ խոստովանէր ունիլ զնոսա, և որոյ որդի զինքենէ ասէր լինիլ ։ Արարք նորա առաւելին զամենամաքուր և զամենակատար բարոյականութի. խօսակցութիւնք նորա լի էին մեծութբ և իմաստութբ, այլ դիւրըմբռնելի և պարզ. առակաբանութիւնք նր ընձեռէին զհրահանգութս, կարի հանճարական, ընտանի և աշխարհական իմ նշանակաւ. պատկանիք

նորա առ ալեծուփս չարաչար հարցմանս՝ տրա-քեալս նմա ցուցանէին զանհամեմատ երագութի իմացականութեն, զքաղցրութիւն դատողութեն, և զխելամտութի անձնարին. պարզեալ նուաճէին միանգամայն զմեքենայս և զչարասէրութի թշնա-մեաց նորա. և տայր նմա զերծանել յամենայն որո-գայթից, զոր պատրաստէին ընդդէմ նմա։ Յայսմ համառօտ և անկատար նկարագրութ համ-բաւոյ Փիլիպին մերոյ յայտնագէ երևի, զի էր նա անդր քան զչափն ամենիմաստ և ամենայն տեսակ առաքինութեամբք զարդարեալ անձն, որ երևեցաւ յաշխարհի։

ԲԻԼԲԻ

## Կատարինէ՝ կայսրուհին Ռուսսիոյ։

Կատարինէ Ալեքսիանովնիչ էր ծնունդ Պրու-սիոյ՝ փոքրիկ քաղաքի միոյ ՚ի Լիւոնիա, և ժա-ռանգ ոչ այլ ինչ ժառանգութեան, եթէ ոչ առաքինութեանց և ժուժկալութեանց ծնողաց իւրոց։ Զանձնացեալ նորա առանօք յաշխար-հային տեսութենէ, աշխատութք ձեռաց իւրոց պահպանէր զմայր իւր, որ այժմ անկարող էր առ ՚ի պաշտպանել ինքեան։ Մինչ Կատարինէ պարապէր ՚ի մանել զթելս, ծերունի կին նստէր մերձ առ նա, և ընթեռնոյր նմա զհոգևորական բանս։ Յորժամ աշխատանք սուր յաւարտ եղա-նէին, երկոքին նոքա նստէին բերկրութք առ

կողմանէ հօրն , և վայելչինն ժուժկալ կերակուր ուրեանցն թեթևեալ տեսիլ և կերպարքն Կատարինեայ էին գաղափարք կատարելութեան , սակայն հոգունակութիւն նորա ոգւոյն երևէր նուիրեալ ՚ի գործադրումն մտաց իւրոց ։ Այր նորա ուստից նման զկարդայ , և ծերունազարդ կրօնաւոր մի լուտերական հրահանգէր զնա ՚ի սկզբունս եծպաշտութեան և կրօնի ։ Անո՛ թէն զարդարեալ էր զնա ոչ միայն պատրաստակն , այլ հաստատուն շրջանաւ խոհեմանց . ոչ միայն զօրաւոր , այլ իրաւացի իմացականութեամբ ։ Առաքինութիւնք և կատարելութիւնք նորա յորդորէին զմիտս բազմաց ՚ի շինականաց քաղաքին առ ՚ի առնել նմա զառաջադրութիւն ամուսնութեան , սակայն ոչ յաջողեցան գիտաւորութիւնք նոցա և ոչ ՚ի կատար հասին հրաւէրք նոցա . քանզի կարի խանդակաթութեամբ սիրէր նա զմայր իւր , և ոչ երբէք կամէր հեռանալ ՚ի նմանէ ։

Հնդեւտասանամեայ էր Կատարինէ յորժամ մայր նորա վճարեաց զկեանս իւր ։ Այս եթող նա զխրախճեայ բնակութիւն իւր , և չոգաւ բնակել ընդ լուտերական կրօնաւորին , յորմէ հրահանգեալ էր ՚ի մանկութենէ իւրմէ ։ Բնակէր ՚ի տան նորա իբր և զպահնորդ մանկանց նորա . ունելով միանգամայն զանտերիւր խոհեմութիւն հանդերձ զարմանալի ամփոփմամբ ։ Ծերունին այն , որ տեսանէր զնա իբրև զմի ՚ի զաւակաց իւրոց , հրահանգեալ էր զնա ՚ի զերազանց մասունս կրթութեանց կանանց , ՚ի ձեռն դաստիարակացն , որք հրահանգէին զազգա-

տունն նորա ողջոյն։ Այսպէս շարունակեաց Կլաուդինէ զանձել զմիտս իւր բարութեամբք, մինչ ծերունին զրաւեցաւ յասացս· որովհետ- ւ անձով անկեալ վերստին ՚ի չքաւորութիւն իւր տանջին։ Յայնմ ժամանակի երկիրն Միլանոյ անչքացեալ էր յոյժ ՚ի յաճախադէպ պատերազմաց, և անճեալ կայր ընդ ուղեղի իմն կացուք աւերակութեան։ Տառապանքս այսորիկ միշտ ծանր երևէին յաչս աղքատաց. սակս այնորիկ Կլաուդինէ, թէ և ունէր այսքան կատարելութիւն, սակայն կրէր զամենայն թշուառութիւնս յուսահատ աղքատութեան։ Ուտելիք քաղաքին օր ըստ օրէ թանգ և դժուարագիւտ եղեալ՝ և դուզնաքեայ մթեր նորա խոպան սպառ ծախեալ՝ ՚ի մահ եդ ՚ի վախճանի առ ՚ի երթալ ՚ի Մորիանպուրկ՝ քաղաք բազմառատ և բազմարդիւն։

Սկսաւ ապա հետիոտն երթալ զճանապարհ իւր հանդերձ անպաճոյճ սփոփ միով եդեալ ՚ի բակնեղեթ իւր։ Ունէր նա զգնալ ընդ երկիր մի թըշնամացեալ ՚ի բնութէ, և առաւել ևս ահաւոր եղեալ ՚ի Շվէտաց և ՚ի Ռուսաց. ոք՝ այն ինչ յաջողէր ումեք լինել ՚ի հարստութեան, կողոպտէին զնա խոհեմութեամբ. սակայն քաղցն ուսուցեալ էր զնա արհամարհել զվտանգ և զաշխատանս ճանապարհին։ Յերեկոյի միում, ՚ի ճանապարհորդութեան իւրում, մինչ մտեալ էր ՚ի խուղ մի առ ՚ի օթևանել անդանօր ՚ի գիշերի, անգոսնեցաւ յերկուց Շվէտ զօրականաց։ Նոսա բակոյս ածել ունէին նոքա զանգոսանս իւրեանց ՚ի բռնաբարութիւն, եթէ չիցէր սորին զօրագլխի միոյ, որ

յանկարծ անցանէր անդրէն, հասեալ ՚ի թիկունս նորա փողփողակի։

Յերկիւղ զբօսագլխին անդանօր, զօրականքն նոյն հետայն խոյս տուեալ փախեան անտի. սակայն շնորհակալութիւն Կատարինեայ հայր ուրեմն մեծագոյն էր քան զզարմացումն նորա, յորժամ ետես զպաշտպանիչ իւր լինել որդի լուտերական կրօնաւորին՝ նախնական դաստիարակին, բարեկամին և բարերարին իւրոյ։ Ողջանիկ սեստրան էր այս վասն Կատարինեայ։ Սակաւիկ գումար դրամոյ, զոր բերեալ էր ՚ի տանէ, ծախեալ աւարտեալ էր այժմ բոլորովին. հանդերձք նորա կտոր կտոր էին լեալ պարապելով ՚ի գործս առ ՚ի հաճեցուցանել զնոսա, որք պահպանէին զնա ՚ի տունս իւրեանց։ Մտան այսորիկ քաղաքացի նորա տօտատաիրա՝ մատոյց զոր ինչ կարողութիւն իւր խոստանայր, առ ՚ի գնել նմա զհանդերձս. ետ նմա զձի մի և զյանձնարարական թուղթս առ մի ՚ի հաւատարիմ բարեկամաց հօր իւրոյ՝ վերակացուին Մարիանպուրկայ։

Գեղեցկատիպ տարականն բարեպէս հիւրընկալաւ ՚ի Մարիանպուրկ։ Նա ժամայն ածունա ՚ի դերդաստան վերակացուին իբրև զպահնորդ երկոցին դստերաց նորա. և թէպէտ տասնեւթնամեայ էր, ցուցանէր զինքն հնարաւոր ՚ի դաստիարակել զսեռ իւր ոչ միայն յառաքինութե, այլ և ՚ի քաղաքավարութե։ Այնպէս էին գիտունք և գեղեցկունք նորայ մինչ աներևոյթ ՚ի սուղ ժամանակի առաջի սիրտ նմա առ ՚ի ամուսնանալ ընդ նմա. սակայն ՚ի մեծագոյն զարմացումն

տեւական ծփրոյ ոչ վայելուչ վարկաւ սա ՚ի տալ նմա զընդունելութիւն ամուսնութեան։ Ոգեւորեալ էր մասամբ իւր երախտագիտութեն, յառաջադրեալ էր լինել կին այսպիսին իւրոյ միայն, թէ և կորուսեալ էր նա զմի ՚ի լաւագոյն իւրոց և տեղեկագոյն էր եղեալ հարուածովք պատերազմի։ Սակայն այսորիկ առ ՚ի արգելլոյ զայլ հրաւէրս յայլոց, մինչ չև էր եկեալ զօրագլուխն այն ՚ի քաղաքն առ պաշտաման իւրք, մատոյց նմա զառաջադրութիւն ամուսնութեան, զոր հաւանեցաւ բերկրութ. և հարսանիք նոցա կատարեցաւ։ Սակայն ամենայն նշանք բաղդի նոցա էին զարմանալի։ Յաւուր, յորում ամուսնացան նոքա, Ռուսք սպառեալ պաշարեցին զՄարիանպուրկ։ Սպերբծանիկ զօրականն նոյն ժամայն պատուիրեցաւ անցել զպատերազմ ինչ, յորմէ այլ ոչ ևս յաւել դառնալ յետս։

՚Ի նմին իսկ ժամու քաղաքն պաշարեալ կայր անհնարին կատաղութեամբ պատերազմաց, որոց գրգռեալ արծարծեալ տարածէր ՚ի միոյ կողմանէ կամակորութ. և ՚ի միւս կողմանէ քինախնդրութ։ Յայնմ ժամանակի արդարև կարի դժնդակ էր աղմուկ պատերազմի ընդ երկուց հիւսիսայնոց ազանց. անմեղ շինականն այն, խղճիկ օրիորդն այն բազմիցս ուժանորդ եղև վիճակի զօրագլխին այնորիկ ՚ի մէջ պատերազմական հարուածոց։ Մարիանպուրկ ՚ի գերութիւն վարեցաւ ՚ի յարձակմանց ծանրատանմարտութեանց, և այնքան անհնարին էր կատաղութի յարձակողաց, մինչ ոչ միայն ծամքարք զօրաց, այլ և գրեթէ բովանդակ ակինք քաղաքին արբք, կանայք և մանկունք,

բն

զորս սրոյ ճարակ լինէին : Հուսկ յետոյ յոր- ժամ միանգամայն Թագաւորեաց յանդորրութեն կատարածութեանն այնորիկ, Կատարինէ գտաւ- Թագուցեալ 'ի մէջ Թոնրի միոյ : Մինչ ցարդ չքաւոր էր նա, այլ ազատ : Արդ ժամ էր նմա խոնարհիլ անտանելի վիճակին իւրոյ, և գիտել Թէ զինչ է լինիլ գերի: Այսպէս յայսմ աւաղելի կացութեան վարէր բարեպաշտութբ և խոնարհա- մտութբ · և Թէպէտ տարաբաղդութիք նուա- զացուցեալ էին յոյժ զաժխուժութի նորա, սակայն միխիթար էր նա և զօրաւորթամիտ : Համբաւ ար- ժանապատուութեն և խոնարհամտութեան նորա հասեալ էր յականջս արքայորդւոյն Մենչիկո- ֆայ՝ սպարապետին Ռուսիոյ : Ցանկայր նա տեսանել զնա· կարի հաճեցել էր Է կերպարանու- դիմաց նր· գնեաց զնա 'ի զօրականէն՝ 'ի տեառնէ նորա· և եդ զնա ընդ հրամանատրութեամբ քեան իւրոյ : Աստանօր Կատարինէ արժանի գտաւ պատուասիրութեն և մեծարոյութն, զորս արժանա- պատուէութի իւր պահանջէր· մինչ գեղեցկութի իւր օր ըստ օրէ առաւելեալ հասանէր 'ի ծայր կատա- րելութեան հանդերձ բարեբաղդիկ յաջողութբ : Ոչ ընդերկար մնաց Կատարինէ յայսմ կացութ, յորժամ մեծն Պետրոս այցելեալ արքայորդւոյն այնմիկ՝ դէպ եղև Կատարինեայ գնալ 'ի ներքս հանդերձ սակաւ ինչ չոր պտղովք, զորս եդ շուր- ջանակի վայելուչ իմն հայեցուածովք համեստու- Թեան : Օ ըրաւոր Թագաւորն ետես զնա խորին նկատմամբ, և հարաւ 'ի ձգողական գեղեցկութե

նօրին: Դարձաւ թագաւորն ՚ի միւսում աւուր. հրամայեաց ածել առաջի իւր զգեղեցկատիպ գերին զայն. արար նմա զբազում հարցաքննական խնդիրս. և եգիտ զգեղեցկութիւն մտաց նորա առաւել բարձրագոյն քան զգեղեցկութիւն մարմնոյ նորա: Յաւուրս պատանեկութեան իւրում հարկադրեալ էր առ ՚ի ամուսնանալ ՚ի շարժառթից շահեկանութեան. այժմ յառաջադրեաց ամուսնանալ համեմատ յօժարամտութեան իւրում. Նոյն ընդ նոյն ՚ի զննին եւ պատմուն գեղեցկատեսիլ Իփլոնացւոյն, որ ոչ էր տակաւին անցեալ զութ և տասնամեայ հասակաւ: Ձգեաց զԿատարինէ ՚ի խորս ծածկաբանութեանց, և էարկ զնա ՚ի յեղափոխութիւնս բաղդի նորա. և եգիտ զնա իսկապէս վեհանձն յամենայնի ՚ի նոսա: Ցածուն ծննդեան նորա ոչ եղև արգել դիտաւորութեան թագաւորին: Հարսանիք նորա կատարեցաւ ՚ի ծածուկ. արքայորդին առէր բազմականաց իւրոց. թէ առաքինութիւնն էր կարի վայելչագոյն իմն սանդուղ բարձրացուցանելոյ զոք յաթոռ գերակայութեան:

Աւասիկ տեսանեմք զԿատարինէ ամբարձեալ ՚ի ցածուն տղմաշէն յարդածածկ խրճթէ իմիք, առ ՚ի լինել կայսերուհի մեծագոյն և հզօրագոյն տէրութեան ՚ի վերայ աշխարհի: Առանձնաւոր թափառականն այն չքաւոր՝ շրջապատեալ է այժմ ՚ի հազարաց հազարաց, որք գտանեն զերջանկութ ՚ի քաղցրութեան նո: Նա, որ յառաջ կարօտ էր կերակրոյ, կարող է այժմ

հեղուլ զառատութիւն և զլիութիւն 'ի վերայ ամենայն ազգաց աշխարհի։ Ո՜ մանն ինչ այսր գերակայութեան պարտական էր նա բաղդաւորութեն իւրում. այլ բարեգործութեցն կարի առաւել։ Աճեցաւ նա 'ի վերջոյ մշտապէս բարձրագոյն առաքինութիւնս զայնոսիկ անփոփոխ. որք զառաջինն ամբարձին զնա յաթոռ գերագնութեն. և մինչ նշանաւոր արքայորդին՝ այր իւր աշխատ լինէր վասն նորոգութեան վարուց սորա հպատակաց իւրոց, ջանայր նա նոյն օրինակ առ 'ի ածել 'ի լաւ անդր զսեռ իւր համակ։ Փոխեաց զհանդերձանս. եմոյծ զխառն ժողովս. կարգեաց զհրաման իշխանութեն կանանց. և հուսկ ամենայնիւ, յորժամ լցեալ էր մեծապէս զպաշտամունս կայսերուհւոյ, բարեկամի, կնոջ և մօր, գրաւեաց արժանաւոր յաստի կենացս առանց աշխարհին, այլ աշխարհեալ յամենեցունց։

ԳՕԼԴՍՄԻԹ

## Սոկրատէս և Լամպրոկլէս. կամ չէ պարտ երբէք անարգել զծնողս։

Լամպրոկլէս՝ երէց որդին Սոկրատայ յանհնարին սաստկութիւն բարկութեան բրդեցաւ 'ի վերայ մօր իւրոյ։ Սոկրատէս ականատես գտեալ ամօթալի բարուց որդւոյ իւրոյ՝ ջանայր յուղղութիւն ածել զայն հետագայ մեղմօրինակ և խոհական բանիւք։ Ա՛յ ասա, որ-

դեակ , ասաց Սոկրատէս · ո՞չ է լուծեալ քո զմարդոց , որք ապերախտ կոչին ։ Ա՛յո յաձախակի , պատասխանեաց պատանին ։ Ազի՞նչ է ապերախտութիւնն , ասաց Սոկրատէս ։ Ապերախտութիւնն է , պատասխանեաց Լեանդրոս, ընդունիլ զբարերարութի և չառնել զարժանաւոր ինչ տրիտուր յորժամ զուգէ յաջող ժամանակ ։ Ապերախտութի՞ն է ուրեմն տեսակ ինչ անիրաւութեան, ասաց Սոկրատէս։ Այդպէս երևի ինձ, պատասխանեաց Լեանդրոս։ Ապա ուրեմն, ասաց Սոկրատէս, եթէ ապերախտութի՛ն է անիրաւութի իմն , ո՞չ է պարտ զի չափաւոր լինիցի առ մեծութի ընկալեալ շնորհաց ։ Լեանդրոս հաւանեցաւ զասացեալն. և Սոկրատէս այսպէս սկսաւ զհարցաբանութի իւր ։ Ոցե՞ն բարձրագոյն պարտականութի՛ք քան զոր որդիք պարտին ծնողաց իւրեանց. որք տուեալ են նոցա զկեանս, դարմանեալ են զայն և արարեալ պատուելի , պիտանի և երջանիկս. Խոստովանիմ զճշմարտութիւն ասութեան քո, պատասխանեաց Լեանդրոս. բայց ո՞ տանիլ կարէր թարց սրտմտութեան անբարեխառն վարուց այնպիսի մօր , զոր ես ունիմ ։ Զի՞նչ անյարմար ինչ է արարեալ նր̄ քեզ, ասաց Սոկրատէս ։ Լեզու մի ունի, պատասխանեաց Լեանդրոս, որում ոչ ոք 'ի մահկանացուաց կարէ տանիլ ։ Որքա՛ն առաւել, ասաց Սոկրատէս, տարեալ է նո՛ր կռուելոյ , աղաղակելոյ և անդադար լալոյ քոց 'ի ժամանակի մանկութեան քում։ Զո՞րպիսի ցաւս է զգացեալ յանդայնանիրութէ,

՚ի խաղամոլութենէ, յերեխայութենէ և ՚ի յիմարութեանց մանկութեան քո։ Զորպիսի վիշտս է զգուցեալ, զորպիսի աշխատանս և հսկողութիւնս է կրեալ յաւուրս հիւանդութեանց քոց։ Յորժամ և այլ պէսպէս հզօրեղ շարժառիթք առ որդիական պարտականութիւն և երախտագիտութիւն, աւանդեալ են յօրէնսդրաց հասարակապետութեան մերոյ։ Քանզի եթէ ոք գտանիցի զծնողս անարգու, ոչ կարէ վայելել զմեծն ինչ յուսոյ կամ պատուոյ։ Յայտ է թէ զոհն, որ յանսուրբ ձեռանէ մատուցի, ոչ երկնից եղիցի ընդունելի, և ոչ հասարակապետութեան շահաւոր. և թէ ոգի ապերախտ ոչ կարիցէ կատարել զմեծ գործ ինչ, կամ անաչառութեամբ առնել զարդարութիւն։ Արդ որդի, որդեակ իմ, եթէ մտացի իցես, զղջասցես առ Մայր առ ՚ի թողուլ զընդդէմ նմա քում յանցուցեալ զմեղս քո։ Մի տար ումեք իմանալ զանարգանս, որով բերեցար ընդ նմա. քանզի աշխարհ երգիծեալ գործեսցէ և լքցէ զքեզ սակս այսպիսի բարուց։ Եւ եթէ կարծեսցեն զքէն, թէ ապերախտութեամբ փոխատրես զբարի գործս ծնողաց քոց, զըրկեսցես անտարակոյս ՚ի բարեբարութեանց այլոց. քանզի ոչ ոք վարկցի թէ որում մի ունիս ՚ի փոխատրել զշնորհս կամ զբարեկամութիւն նորա։

ԳԷՐՈՒՎԸԼ

## Եղբարք պարտին կեալ ընդ միմեանս միաբանութեամբ:

Եղբարք երկու՝ Տիմոն և Դեմետրիոս անուն կռուեալ էին ընդ միմեանս. և Սոկրատէս՝ բարեկամ նոցա ջանայր խանդաղատանօք հաշտութիւն ածել ՚ի մէջ նոցա: Սակս այսորիկ հանդիպեալ նորա Դեմետրեայ՝ այսպէս սկսաւ խօսել ընդ նմա: Բարեկամութիւնն ոչ է ամենաքաղցր միսիթարութիւն ՚ի ձախորդութեն, և ամենամեծ առաւելութիւն բարեաց ՚ի յաջողութեան: Այո, այդպէս է, պատասխանեաց Դեմետրիոս. քանզի տխրութիւնք մեր տեղի տան, և ուրախութիւնք մեր առաւելուն բաժանորդութեամբ կարեկցութեան: Արդ ուրեմն յորոց մէջ պարտիմք խնդրել զբարեկամս, ասաց Սոկրատէս: Խնդրեսցես ՚ի մէջ առաքինեաց: Նոքա ոչ խնամ տարցին զքէն: ՚Ի մէջ այնոցիկ, որք կարի հասակաւոր կամ դեռահասակ ե՛ն քան զքեզ: Զգայուածք և վարք նոցա կարի յոյժ տարբեր եղիցին ՚ի քոյոցդ: Արդ ուրեմն ոչ գոն պարագայք ինչ յաջողակ, և տարագայք ինչ հարկաւոր ՚ի ձեւացումն բարեկամութեան: Անտարակոյս գոն, պատասխանեաց Դեմետրիոս: Չէ պարտ մեզ ՚ի համար արկանել ընդ յաջողակ պարագայս բարեկամութեան զընդերկար ծանօթութիւն, զհաստատուն մերձաւորութիւն, զնմանութիւն հասակի, և զմիութիւն սրտի: Սոկրատ-

վանիմ ես, ասաց Դեմետրիոս, զշորաւոր կարողութիւն այսոցիկ պարագայից. սակայն հնար է ոգւոյ լինել, և այլոց ևս պիտանացու գոլ, որք հարկաւոր են փոխադարձ օգնելու։ Եւ զինչ են, ասաց Սոկրատէս, հարկաւոր պարագայքն այնորիկ, որք խնդրին ՚ի Տիմոնէ։ Լքեալ է նա զարժանաւորութիւն և զպատիւ իւր, պատասխանեաց Դեմետրիոս։ Լքեա՞լ է նա զարժանաւորութիւն և զպատիւ ամ մարդկան. կրկնեաց Սոկրատէս։ Թափուր է՞ նա ՚ի բարերարութենէ, յառատաձեռնութենէ, յերախտագիտութենէ, և յայլոց կենցաղօգտական խանդակաթութեանց։ Քա՛ւ լիցի ինձ, ասաց Դեմետրիոս, դնել չայսպիսի իմն ծանր զրպարտութիւն ՚ի վերայ նորա։ Կարծեմ զի վարք նորա առ այլս է աննախատելի. և առաւել ցաւ է ինձ զի զանձն իւր միայն առնէ ենթակայ անօրինութեան իւրոյ։ Եթէ ունիցիս դու զամենագեղեցիկ ձի մի, կրկնեաց Սոկրատէս, միթէ ընդ կառավարութեամբ այլոց, այլ անսանձելի ընդ կառավարութեամբ քով, ո՞չ ջանայցես ամենայն հնարիւք առ ՚ի շահիլ զսէր նորա. և այնպիսի եղանակաւ բերել ընդ ձեռն, զի հնար իցէ սանձահարել զնա։ Կամ եթէ ունիցիս զշուն մի, կորիւն յոյժ արժանաւոր եղեալ վասն հաւատարմութեան, հսկողութեան և հոգունակութեան հօտից քոց, որ քաղցր է հովուաց քոց և խաղայ ընդ նոսա, այլ հաչէ յորժամ տեսանէ զքեզ, ջանայցես ՚ի փարատել զնա յայսմ սխալանաց բարկացեալ հայեցուածովք քո՞ բանիւք և կամ այլովք նշանօք սրտմտութեան

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՁԻՆՏ

Մանաւանդայս զհակառակն երթիցես ընդ նմա ցշաւիղ ։ Եւ օրինելուն եղբօր ոչ է առաւել եւս արժանագոյն քան զծառայութիս ձիոյ և կամ զմեծարանս շան ։ Ի՞ր ուրեմն յապաղես հայթհայթել զայնպիսի հնարս, որ լինիցի միջնորդ հաշտութեան ՚ի մէջ քո եւ Տիմոնայ ։

Մեղամուտ սրտ ինձ զայդ հնարս, պատասխանեաց Կրեմետրիոս, քանզի անծանօթ եմ այնմիկ ։ Տուր զպատասխանի քանի մի հարցմանց իմոց, ասաց Սոկրատէս ։ Եթէ կամիս զի ոքձաւոր քոյ, յորժամ առնէ զզոհ ինչ, հրաւէրեսցէ զքեզ ՚ի խնջոյս իւր, զի՞նչ պիտի ընթացս կալցիս ։ Նախապէս հրաւիրելոցեմ զնա ՚ի կոչունս իմ ։ Եւ զի՞արդ պարաւանդեսցես զնա առ ՚ի յանձն առնուլ զպաշտօնատարութի գործոց քոց, յորժամ կամիցիս առնել զճանապարհորդութիւն ինչ ՚ի տար աշխարհ ։ Պա՛րտ է ինձ յառաջագէմ լինիլ առ ՚ի առնել նմա զնոյն բարի պաշտօնատարութիւն յաններկայութեան նորա։ Եթէ խանդաղատիցես զնա ՚ի վճարել զվնաս ինչ, զոր արարեալ իցէ նորա անձին քում, զի՞արդ վարեսցիս ընդ նմա։ Զանազանց յուշ առնել նմա հայեցուածովք, բանիւք և գործովք իմովք, թէ կրեալ է իմ ՚ի նմանէ զայսպիսի վնասակարութիւն։ Եւ եթէ յօժարամիտ երեւեսցի առ ՚ի իջանիլ ՚ի կատար հաշտարարութեան, կշտամբեսցես զնա սակս անիրաւութեանն այնորիկ, զոր արարեալ իցէ նորա քեզ։ Ո՛չ պատասխանեաց Կրեմետրիոս։ Ճշմարիտ կրկնէի բնաւին զթախծանս իմ ։ Գնա՛,

տաւոց Սոկրատէս, և վարեց ընդ նոքօք բուռն այնպիսի վարուք, որով վարեալ էիր ընդ մերձաւորին քո։ Սիրելութիւն նորա է գանձ անգին և դժուարագիւտ. և չիք ինչ առաւել հաճելի և օրէն ի յաչս Այ, քան զբնակելն եղբարց միաբանութեամբ ՚ի միասին։

ՊԷՐՍԻՎԸԼ

---

Առաքինութիւն մինչ ուժգին արմատացեալ՝ ոչ է ենթակայ զօրութեան բաղդի։

Յորժամ Աղեքսանդրոս աւերապետեաց Սիդոն քաղաքին, հրամայեաց Եփեստոսի առ ՚ի պարգեւել զթագն նմա, զոր Սիդոնացիք արժանի համարեցին այնմ պատուոյ։ Եփեստոս յայնմ ժամանակի բնակեալ ընդ երկուց ազնուածին երիտասարդաց, ժառոյց նոցա զթագաւորութիւն։ Այլ սակայն նոքա ուրաստ եղեն ի նմանէ, ասելով թէ հակառակ է օրինաց քաղաքի իւրեանց առ ՚ի ամբառնալ զոք յայն պատիւ, որ չիցէ սերեալ յարքայական տոհմէ։ Ապա զարմացեալ նորա ընդ անանձնասէր հոգի նոցա, խնդրեաց ՚ի նոցանէ առ ՚ի անուանել զմի ՚ի յարքայական տոհմէ, որ զմտաւ ածիցէ թէ ընկալեալ լիցէ զթագն ՚ի ձեռաց նոցին։ Հայելով ՚ի բազումս, որք բաղձային առ ՚ի արժանանալ այսմիկ գերագոյն պատուոյ՝ ընտրեցին զԱբդողոմինոս․ որոյ առաքինական արժան-

առաքինութիւնն երևելի էր համբաւացուցեալ զնա ևս և ՚ի հովիտ չքաւորութեան :
Թէպէտ և ունէր նա յերկար առընչումն իւր ը արքայական տոհմի, այլ սակայն սաստիկ իւր ձախորդութեանց հարկեցուցեալ էր զնա ՚ի հերկել զայգի մի առ դուզնաքեայ վարձու իւրեք յարուարձանայ քաղաքին : Մինչ Աբդողոնիմոս պատրաստեալ պարապէր ՚ի մաքրել զայգին, երկոքին բարեկամք Եփեստիոնի կալեալ ՚ի ձեռս իւրեանց զզգեստ արքայութեան՝ մերձեցան առ նա, և ողջունեցին զնա թագաւոր: Ըստ արքային նմա թէ Աղեքսանդրի էր կարգեալ զնա յայն պաշտօն. և խնդրեցին ՚ի նմանէ առ ժամայն փոխանակել զգեղջկական զգեստ իւր և զգործիս հողագործութեան ընդ արքայական հանդերձս և զարդ: ՚Ի նմին իսկ ժամու զգուշացուցին նմա զի յորժամ նստիցի ՚ի վերայ աթոռոյ և ունիցի շուք մի ընդ իշխանութեամբ իւրով, ոչ ՚ի մոռացօնս արկանիցէ զնկուն վիճակն յայն, յորմէ եղև ամբարձեալ: Այսքիկ ամենայն զարացինն երևէին յաչս Աբդողոնիմայ իբրև ցնորք երևակայութեան, կամ իբրև արհամարհութիւն ինչ նախատեցեալ չքաւորութեան իւրում: Աս օնորոյ աղաչեաց զնոսա այլ ոչ ևս նեղացուցանել զինքն անխոհական ծաղուք իւրեանց, և ՚ի զտանել զայլ իմն միջոց զբօսեցուցանելոյ զինքեանս, որ տացէ ինքեան մնալ ՚ի խաղաղական վայելչութեան անզարդ բնակութեան իւրոյ : ՚Ի վերջոյ իմացուցին նմա, թէ ինքեանք հաստատուն էին

'ի յառաջադրութեան իւրեանց. և հարկադրէին զնա ողջունել զարքայական պաշտօնն, և ուղեկից լինել ընդ նոսա ի պալատն ։

Մինչչև էր սեփականեալ նորա զկառավարութիւն քաղաքին, ամէ ատելութիւն և նախանձ ստեղծին նմա թշնամիս․ որք շշնջէին տրտունջս յամենայն ուղւոյ, մինչ 'ի վերջոյ աղաղակ տրտնջանաց նոցա եհաս յականջս Աղեքսանդրի։ Հրամայեաց նա կոչել զնորոգ ընտրեալ արքայն, և եհարց զնա թէ որպիսի դիտաւորութեամբ առեալ էր նա զթագաւորութեան իւրում։ Երանի թէ, պատասխանեաց Աբդողոնիմոս, զի կարող լինիցիմ տանել, Թագի իմում զուգակշիռ համբերութեամբ․ քանզի մինչ սակաւ ունէի, զոչինչ կամէի․ ձեռք այսոքիկ տային ինձ, որ ինչ ցանկայի ։ Յայսմ պատասխանւոյ այնքան մեծազգոյն խորհեցաւ Աղեքսանդրոս զիմաստութենէ նորուն, մինչ հաստատեաց զընտրութիւնն զայն, զոր արարեալ էր. և կցեաց ի մերձակայ նահանգ մի ընդ կառավարութեամբ Սիդոնայ ։

## ԿՈԻԻՆԴՈՍ ԿՈՐԴԻՈՍ

Ամբարհաւաճ վարք ընդ սորայ արհամարհեալ ։

Սակկադրոս էր իբրև 'ի հասակի հնգետասան ամաց ։ Խնդութիւն պարզեալ էր նմա

պճնոցի բարձրամիտ, և հրահանգութիւն տածեալ էր այն հպարտութեամբ և ամբարհաւաճութեամբ: Այս ախտ բնութեան յաճախակի երևէր յամենայն գործոց նորա մեծանութեան, զոր առնէր նա ընդ ընկերակիցս իւր: Ոչ կարէր երբէք սակաւիկ մի հանդուրժել, ըստ դդիմասանութեանց այնոցունց. զորս համարէր նա իբրև պատրուակս իւր. և եթէ նորա ոչ փութանակի խնամատանէին յօժարամտութեան նորա, ՚ի գործ դնէր զամենայն հնարս մեծութեան իւրոյ. և վարէր զնոսա ամենախիստ նախատանօք: Սրախոտայր հանապազ ՚ի վերայ ծառայից հօր իւրոյ, հրամայելով սաստկաբարբառ իւր եղանակաւ առ ՚ի կատարել զպաշտօնս իւրեանց, և արհամարհելով զմեղմ անոյշ բարուց խնդրոյ: Եփրոնիմոս յաւուր միում ձեմէր ընդ նմա, յորժամ այգեպանն եբեր նմա զփունջ մի ծաղկանց. զորս պատրաստեալ էր նմա ժողովել: Յորժամ այգեպանն ետ նմա զծաղկունսն, Սակկարխոս ասաց, մի ոչ, ընչպիսի օտարոտի ծաղկունս ես ընտրեալ. և ... անձև իմ եղանակաւ հիւսեալ ես զնոսա ՚ի փնջին: Մի արհամարհեր զդա այսպիսի խստութեամբ, ասաց Եփրոնիմոս. քանզի դատմունք նորա տարբեր է յոյժ ՚ի քոյոցդ. կամ էր նմա հաճեցուցանել զկամս քոյ. և բարի դիտաւորութիւն նորա՝ քան մեծ արժանի է շնորհակալութեան և ոչ արհամարհանաց: Շնորհակալութեան արժանի՛, պատասխանեաց Սակկարխոս արհամարհ իւր եղանակաւ. հատուցաւ նա ըստ արժանւոյն վասն գործոց իւրոց, զոր պարտական է առ ՚ի կատարել չկա-

շաւորութեամբ։ Իսկ եթէ կատարէ նա զնոսա, զերծ կացուցանէ զինքն 'ի պարտականութենէ իւրմէ, պատասխանեաց Եփրոնիմոս։ Պարտականութիւն իւր ըստ իրաւանց անթերի է գտեալ 'ի կատարմանէ. վասնորոյ և չունիս դու զիրաւունս առ 'ի յանդիմանել զնա վասն կատարելոյ զպատուէրս քո. ըստ իւրում յաւագոյն գիտելն, եթէ ոչ նա ունի պահանջել 'ի հօրէ քումէ զառաւել վարձ քան զոր դաշնադիր եղև տալ նմա։ Սակայն աղքատիկ ծառայ ոմն է նա, ասաց Սակկարիսա, և հոգայ զկերակուր իւր առօրէական աշխատանօք իւրովք։ Կերակուրն այն, պատասխանեաց Եփրոնիմոս, է իրաւացի գին աշխատանաց նորա. և եթէ նա զոչինչ ընդունիցի աւելի 'ի ձեռաց քոց, հաշիւն հաւասար եղիցի 'ի մէջ ձեր։ Սակայն առատասիրտ անձն գթայ 'ի վերայ վիճակաց այնոցունց, որք հարկադրին յաշխատել յօգուտ և 'ի բերկրութիւն նորա։ Թեթևացուցանէ նա զբեռինս նոցա. բերի ընդ նոցա քաղցրութեամբ և սիրով. ջանայ յառաջացուցանել զշահ և զերջանկութիւն նոցա. և որքան հնար է՝ ծածկէ 'ի նոցանէ զծառայութիւն նոցա և զվեհութիւն իւր։ Ո՛չ դնէ նա զբարձրագոյն արժանաւորութիւն 'ի վերայ որոշման կարգի և քաղգի. և թէպէտ պարագայք իրացն պահանջեն զի լինիցին յաշխարհի փայտագործք և ջրկիրք, սակայն ոչ 'ի մոռացօնս արկանէ թէ ազգ մարդոյ հաւասար է բնութեամբ. ամենեքեան են արարածք Այ, ենթակայք բարոյական կառավարութեան իւրոյ, և համակից ժառանգք մահկանացուութեան։

## ԱՆԳՂՏԱՑ ԱՆԳԷՏ

Բարք մարդոյ յառաջացեալ յայսպիսի շարժառթից, տայ տեսանել բարում պղահանջմունս, զոր ոչ գրամ կարէ գնել, և ոչ վաստակ 'ի հատուցանել : Քաղցրաբարոյութիւն նորա կարէ միայն ընդունիլ 'ի պարգև զսէր . Բարերարութիւն նորա՝ զերախտագիտութիւն . և մտերմութիւն նորա՝ զծառայութիւն հաւատարիմ ։

ՖԷՐՄԻՎԸԼ.

## Սէր և պատիւ արժան է յաշակերտաց առ ուսուցիչս իւրեանց ։

Կուինդիլիանոս ասէ, թէ զամենայն պարտականութիւնս աշակերտաց պարունակեալ էր յայսմիկ խրատի միայն, զոր տայ նոցա. այսինքն՝ աշակերտք պարտին այնպէս սիրել զնոսա, որք ուսուցանեն զինքեանս, որպէս սիրեն զգիտութիւն, զորս ուսանին. և համարիլ զնոսա իբրև զհարս. յորոց ընդունին ոչ զկեանս մարմնոյ, այլ զայն ուսումն և հրահանգութիւն, որ է իբրև կեանք հոգւոյ : Այս խրատ սիրոյ և պատուոյ տայ նոցա աշխատասիրել գործունէաբար 'ի ժամանակի ուսումնառութեան նոցին. և պահպանէ 'ի խորս յիշողականութեան նոցա մինչև 'ի վերջ կենաց նոցին զքաղցրագին երախտագիտութիւն առ ուսուցիչս իւրեանց ։ Խրատս այս պարունակէ յինքեան զմեծ մասն այնորիկ, որ պահանջելի է յաշակերտաց ։ Հնազանդութիւն, որ պարունակի

յընթունիլն զուսմունս լրջմտութեամբ, և յածելն զնոսա 'ի կիրառութիւն, մանաւորապէս է առաքինութիւն աշակերտաց. որպէս և բարւոք ուսուցանելն է առաքինութիւն ուսուցչաց: Ոչ քանզի որպէս ոչ է բաւական հերկագործի միում 'ի սերմանել զսերմն միայն, եթէ երկիրն ոչ բացցէ զլանջս իւր առ 'ի ընդունիլ զայն, և ջերմացուցանել կամ խոնաւեցուցանել զայն յինքեան, այնպէս և ամենայն պտուղ ուսման կախեալ կայ զբարեգոյն հաղորդակցութենէ ընդ մէջ ուսուցչաց և աշակերտաց:

Երախտագիտութիւն առ այնոսիկ, որք մտերմաբար աշխատեալ են յուսումնառութեան վերում, է առաքինութիւն մի կարևոր յոյժ, և նշան բարեացապարտ առն: Կիկերոն փիլիսոփայն ասէ թէ ով որ իցէ 'ի նոցանէ, որք զգուշաւորութբ սնուցեալ են զծիրս ուսմանց, որ ոչ բերկրեսցի 'ի հոգի իւր ընդ տեսիլ ևս և ընդ յիշումն ուսուցչաց իւրոց. և ոչ հրճուութեամբ մտածեսցէ զտեղին զայն, յորում էառ զուսումն և զկրթութի: Սենեքա յորդորէ զհամբակս առ 'ի ունիլ հանապազ զմեծարանս առ ուսուցիչս իւրեանց, որոց խնամածուեն պարտական են յոյժ վասն ուղղելոյ զսխալանս իւրեանց, և վասն քաղելոյ զխրատս պտղոց և համեստութեան: Սաստութիւն և սաստկութիւն վարժապետաց երբեմն անհաճոյ երևին մեզ 'ի հասակի միում, յորում չէ հնար մեզ առ 'ի ուղղապէս դատել զպարտաւորութեանց մերոց. զոր պարտիմք նց. սակայն յորժամ երկարութիւն ամաց առնէ զմե-

ցականութիւն և զդատմունս մտաց մերոց հաւանացեալ, տեսանեմք զի յանդիմանութիւք, նախատինք և ուժգին ստուգ վարժապետաց ՝ի սանձահարել զկիրս անխոհեմ և անմիտ հասակի, ոչ խնդրեն զպժգանս և զատելութիւն, այլ պահանջեն զսէր և զ յարգութիւն մեր : Մարկոս Աւրելիոս՝ մի ՝ի յիմաստնագոյն և ՝ի գերահռաչակ կայսերացն Հռովմայ, գոհանայր զԱՅ վա երկուց իրաց ՝ի մանկութի. վասն ունելոյ զգերազանց վարժապետս, և վասն գտանելոյ զնոյնասարաս երանութիւն վասն մանկաց իւրոց :

ՌՈԼԼԻՆ

## Ընտրուն Օրիորդն :

Պատանուհի օրիորդ մի վաստակեալ ՝է խորշակահար աւուր միում ձեմելով ՝ի պարտիզի՝ նստաւ ընդ հաճոյական հովանեաւ իմիք, ուրանօր նոյն հետայն կալեալ եղև ՝ի քնոյ : Մինչ նա Թմբրեալ կայր ՝ի գիրկս քաղցր քնոյ, օրիորդք երկու երևեցան առաջի նորա : Մին ՝ի նոցանէ զգեցեալ էր խեներչօրէն զնորահրաշ վարդագոյն հանդերձս. զորոց կախեալ կային փայլուն կանաչագոյն ապարումք : Գօտի նր էր յարծաթագոյն պաստառէ՝ քարշեալ ը̄ երկիր : Գեղաշարդ հերքն նորա կախեալ էին ՝ի զանգուրս զպարանոցէ նորա. և զլխարկ նորա էր յարուեստակերտ ծաղկանց շարագեալ և ներհիւսեալ

'ի փողփողուն փետրոց: Ունէր'ի մի ձեռին զհրաւիրական թուղթ խնջոյից, և 'ի միւս ձեռին զհանդերձ ինչ զարդարուն և նորաձեւ՝ ծածկեալ բոլորովին հիւսուածովք և կապիւք շողշողուն ժապաւինաց : Ծիծաղադէմ տեսլեամբ յառաջանայր առ օրիորդն այն. և ընտանական իմն եղանակաւ սկսաւ խօսիլ ընդ նմա այսպէս : Սիրելի իմ Մեղիսսա. հոգի մի եմ ես, որ պահպանեալ եմ զքեզ յօրէ ծննդեան քոյ. և խնդամտաբար տեսեալ եմ զքեզ օր յաւուր ծաղկիլ և փթթիլ 'ի գեղեցկադիմութեան. մինչ 'ի վերջոյ եղեր ընկեր մի ինձ արժանի : Տես թէ զինչ եմ բերեալ վասն քո : Այս հրաւիրական թուղթ և նորաձեւ հանդերձ տացեն քեզ համարձակութեամբ մտանել յամենայն սրտագրաւ բերկրութիւնս պալատի իմոյ: Անցուսցես ընդ իս զաւուրս քո 'ի մշտնջենաւոր շրջանս մշտափոփոխ բերկրութեանց : Զօրէն փայլուն թիթռան ոչ ունիցիս զայլ ինչ գործ, եթէ ոչ թռչել ծաղկանէ 'ի ծաղիկ, և սփռել զգեղս քոյ զառաջեաւ սքանչացնել հայեցողաց: Ոչինչ արգելմունք, ոչինչ աշխատանք, ոչինչ տխրագին գործք գտանիլ կարեն ընդ երջանիկ տէրութիւնս իմ : Ամենայն է բերկրութիւն, վայելչութիւն և բարեվայել զբօսանք: Եկ ուրեմն սիրելի. թո՛ղ ինձ արկանել զքեւ այս հանդերձ, որ կարի յոյժ գեղեցկացուսցէ զքեզ. Եկ, եկ զկնի իմ : Մեղիսսա կարի յօժարամիտ էր առ 'ի կատարել զհրաւէրս օրիորդիս այսորիկ. սակայն մտածեաց թէ խոհական եղիցի նախ գիտել

զամուսին նորա ։ Ընկուն իմ, ասաց նա, է Ընտանութիւն ։

Յաջորդ մեծ օրիորդն յառաջ մնացեալ ։ Զգեցեալ էր նա զհանդերձս ի խառն թխա- տեսակ և ապխտակատեսակ բեհեզից ։ Ունէր ի գլուխ իւր զանպաճոյճ գլխարկ մի ։ Անձն նորա էր համակ պարզապէս և յըս- տակափայլ ։ Դէմք նորա էր ծանրահայեաց և շատացեալ․ և հայեցուած նորա էր հանդարտ և խոնարհիկ ։ Ունէր ի մի ձեռին զձող մի և զմիւսայն կախեալ կայր կողով մի ասղա- նագործութեան ․ և շուրջ զմիջով նորա պա- տեալ գոտին պճնեալ էր մկրատք, ասեղամբք, կնոջօք, և այլ սոյնպիսի գործեօք աշխատասի- րութեանց կանանց ։ Փունջ մի բանալեաց կա- խեալ էր զգօտեմբն նորա ։ Էր այսպանակ ակնյա- յտնի ընդ նմին օրիորդին այնմիկ ։ Սեղխոռա- եա այն հաջին եմ, որ միշտ էի ընկեր և բարեկամ մերոց ։ և այժմ մատուցանեմ քեզ յաջողութ- նութիւն ։ Ջանիցես յհրապուրանս, առ ի փոր- ձել զքեզ նորօք ․ որպէս գործարթնդեմ ատոյեան իմ ջանայ ունել ։ Եթէ եկեսցես զհետ իմ, կա- խեալ անցուցանելոյ զժամանակ քո ողջոյն ի յընթերցուս և ի հեշտութիւն, պարգևս յառնել փութով յիւրաքանչիւր առաւօտու, և անցուցա- նել զերեկոյն այն ի բաժանարարի զբաղմունս և պարապել ի պէտս գործոց յորոց մտեալք են գլխ- ւորքն, որոնք սաղմոսաւոր, և ամ յիշատակեն զա- խառնամս մարմնոյ և ձեռաց ։ Զօրանալ ընդհանուր- պետք են և չհեռուիլ խնճոյից պճնազարդուն ։

հաշիւ զնալ արտաքս. և հանապազ 'ի մտի բուռն ունիլ առ 'ի լինել սրբասէր, պիտանացու և աշխատասէր քան որ նախնեաք և զանգաղկոտ: Այլ սակայն փոխան այսորիկ ամենեցուն խոստանամ քեզ զգուշութիւն, զբարի կիրս, զանձնապատուութիւն և զարժանայարգութիւն ամենեցուն, որք ճանաչէին զքեզ հօրաշատուքար: Եթէ հրաւէրքս այսորիկ երկրին մասս աղաւաղերց մասցքոց նուազ հաճելի քան պախրոյեաններն իմոյ, կարի քաջ հաւատալեր զի են կարի ճշմարիտ և անկեղծ: Հատուցանել է նորա առաւել յոյժ քան զկարիքն, առ 'ի զարձել զբարութիւն: Ոչ Անառակութեան, այլ Ողջութեան և Իմաստութեան միայն է հնար առ 'ի ընծայել զայսպիսի հեշտասիրական բերկրութիւնս: Երկրական հեշտութիւնք նորա փութով նկրթեալ պարտասեալ նուաղին. և անխորագաւոր յաջորդին 'ի մեղսամոլութիւն և 'ի տաղտկութենէ: Երեսայթ նորա ոգոզեալ ծածկեալ է 'ի ծածուկս. և զոր տեսանեմք, չէ նորա իսկական կերպարան: Իսկ զի զիս էն ասացից, ոչ երևեցայց քեզ առաւել հաճելի և ցանկալի քան թէ այժմ երևիմս. այլ ընդ հակառակն սիրեսցես դու զիս յոյժ յոյժ: Եթէ այժմ տեսանես զիս լինել ծանրահայեաց, տեսցես զիս 'ի գործս իմ լինել զուարթուն, և յորժամ կատարին գործք իմ, մարթ է ինձ վայելել զամենայն անմեղ զբօսանութիւնս: Արդ՝ այժմ բաւական է զոր ասացի: Ժամ է քեզ ընտրել թէ ում որդեգր հետևեսցիս. և զայնր ընտրութենէ կախի ամենայն երջանկութիւն քո: Եթէ կամիցիս գիտել զանուն իմ, ե-

Տանտիկնութիւն:

Մեղիսսա ունկնդիր եղև նմա առաւել մտադրութեամբ քան բերկրութեամբ. և թէպէտ յերկիւղս էր և հանգիտէր յեղանակէ խօսից նորա, դարձաւ վերստին տեսանել զառաջին խօսողն: Նաեւ զնա զի տակաւին շարունակէր առ 'ի մատուցանել զընծայս իւր այնու հրապուրողական հայեցուածովք, մինչ զի անհնար էր նմա 'ի դիմադարձել նմա:

Յայնժամ աջողակ իւր դիպուածով 'ի վայր անկաւ դիմայլակն այն, որ այնպիսի արուեստակութեամբ փոխակերպեալ էր զերեսս Անառակութեան: Երբ Մեղիսսա ետես, փոխանակ քաղցրագին դիմաց պատանեկութեն և զուարթութեան, զտեսիլ իմն դալկացեալ և վատեալ հիւանդութեամբ և դառնացեալ խեղաթարյութեամբ, դարձաւ յետս երկիւղիւ և առանց ինչ դժկամակութեան ետ զձեռն իւր հարազատ և լրջամիտ ընկերին իւրոյ:

ԲԱՐԲԱԼԴ

---

Անիրաւութիւն առ ժժմունս կշտամբելոյ:

Պատանի ոմն զբօսեցուցանէր զինքն 'ի դժընդակ բերկրանս չարչարելոյ և սպանանելոյ զժըժմունս: Հերձոտէր զթևս և զսրունս նոցա, և ապա բերկրութբ նկատէր զանզօր ջանս նոցա, որովք զուն գործէին առ 'ի խոյս տալ 'ի ձեռաց

իւրոյ ։ Երբեմն ժողովէր զպտուղս 'ի նոցանէ, և սպանանէր զնոսա միանգամայն․ փառաւորեալ զանձն իւր իբրև զդիւցազն մի հռչակաւոր յաւերակութեն, զոր այսքան ախորժանօք գործէր ։ Ուսուցիչ նորա ընդունայն յանդիմանէր զնա վն խուժադուժ վարուց նր ։ Ո՛չ կարէր հաւանեցուցանել զնա զի ժժմունք զգան զցաւ և ունին զկիրս ոչ սակաւ քան զմեզ, թէ 'ի կեանս, թէ յազատութեան, և թէ 'ի վայելչութեան ։ Այլ սակայն պատանին ոչ խոնարհէր և ոչ իմանայր զնշանս տառապանաց հոգեվարութեան նոցա․ որս մշտապնդեալ ցուցանեն յերազական և 'ի բազմապատիկ շարժուածոց մարմնոց նոցա ։ Արժանապէս նր ունէր զխոշորացոյց մի․ և յաւուր միում սոսաց աշակերտին իւրոյ առ 'ի հայել ընդ նովին զամենագեղեցիկ և զզարմանաքանչ կենդանի մի ։ Նկատեա, ասէ նա, թէ զիարդ զարդարել է նա 'ի գլխոյ մինչև ցոտսն սեաւ և ոսկետակ գունովք․ և մարմին նորա համակ ընդմըտեալ է այլատեսակ մազովք ։

Գլուխ նորա պարփակէ զամենազուարթ աչս՝ շրջապատեալս սպիտակագոյն հերովք և մարմին նր բաղկանայ յերկուց մասանց, որք փաթթութիւն 'ի վերայ միմեանց ։ Ընդհանրական մարմինն ոմանց զարդեալ է փետրովք և գունովք, որք զերազանցեն զամենայն փափկութիւնս հանդերձից յաւետանս մեծամեծ արքայազանց ։ Զմայլեցեալ և զարմացեալ պատանին ընդ այն, զոր ետես՝ անհամբերութեամբ կամէր գիտել զանուն և զյատկութիւ

զարմանալիք կենդանւոյս այսորիկ ։ Յորժամ փորձառուն ՝ի բաց եհան զխոշորացոյցն յաչաց նորա, ստուարանին մերկ աչօք խուռնք հայեցաւ ՝ի նա . և ետես զի էր ողորմելի ժամանն այն, որ լեալ էր չատ ուրաց ժանտ ապերախտութեան իւրոյ։

## ՊԻՐՈՒՎԸՆ

Արդարոյ սրտմտութիւնն արհամարհեալ ։

Յաւուր միում ՝ի պարապոյ ժամանակի ամառան Աղեքսանդրոս հանդերձ քանի մի բարեկամօք իւրովք կամէր երթալ ՝ի զբօսանութիւն ։ Այլ առաւօտուն մրրկեցան երկինք, խռովեցան ամպք, և նա առ ժամս ինչ անկեալ կայր ՝ի խորին մտախոհական առարկուեալ զձանձրութիւն իւրմէ . որ ՝ի վերջոյ խափանեցաւ ՝ի զուարթ և ՝ի անոյշկան անձրևէ: Այս ձախողակութիւն յաղթահարեալ ընկճեաց զարիութիւն նորա . ցնդեցաւ նա յարատաւուս. աւաղէր զանժամանակ փոփոխութե եղանակին . և սրտմտութեամբ աղաչէր ընդ ամենայն սփոփանս և մխիթարական բանս ։
Յերեկոյին համայն ամպքն ցրուեալ չքացան. արեգակն ճառագայթէր անամպ պայծառութբ . և երեկօք բնութեան եռևէին վերանորոգեալ ՝ի զուարթութիւն գեղեցկութիւն ։ Ափրոնիմոս եած զԱղեքսանդրոս ՝ի դաշտս ։ Արդէն հանդարտեալ զիջեալ էին ամենայն խռովութիւնք կրից նորա . և պայծառութիւն օդոյն, գայլայլիկ փետրազարդ

նռնագողաց, դալարութն մարգագետնոց, և քաղցր անուշահոտութիւն, որք շնչէին շուրջանակի, դիւրացուցանէին զամենայն զայրուած սրտի նորա. և լնուին զմիտս նորա զուարթամիտ բերկրութեամբ։ Ընկալեալ զով, տալ Նեփոնիմոս յԱղեքսիանոս, զբերկրութեանցն փափուկ կանութեն զայն, որ յանկարծակի պատահեցաւ յարաշագործութեան անդր ուղխոյն։ Զմտաւ ած զհայեցուածս տեսարանին, որ շուրջ էր պատեալ զնովք յերեկեան աւուր։ Յայնժամ երկիրն շորացեալ էր իսպառ ի երկար երաշտէ. ծաղկունքն համայն ծածկեալ էին զեղարշամաւ գլուխս իւրեանց. ոչինչ քաղցր անուշահոտութիւն ուրեք. և դալարութի դաշտավայրից երևէր ուրեք այլ։ Զայս վերանորոգութիւն բնութեան յինչ պատճառէ յառաջ եկեալ խորտորմանիլ պարտիմք։ Յանձրևէն, որ տեղաց յայսմիկ առաւօտու, պատասխանեաց Աղեքսիանոս, համաստահայեաց իմն շփոթութեամբ։ Զարունա յանձնասիրութենէ և 'ի յիմարութենէ վարուց իւրոց. և բարեգոյն մտածողութիւնք իւր խոկ նախասանս եղեն նախատանաց Նեփոնիմոսի։

ՊԷՐՍԻՎԱԼ

Աշխատակամ միտքն ոչ տրտնջայ վշտաց, զորս այլք վայելեն։

Աղեքսիանոս վերանորոգեր զքանի տողս 'ի բանաստեղծութեան Պոպէրի յԵփրոնիմոս, որ բազմեալ էր 'ի վերայ աթոռոյ 'ի միում 'ի կալուածոց

իւրոց . և վայելէր զիւրական գեղեցկութիւնս բնութեա՛ն, զորս վերոյասացեալ բանաստեղծն գեղեցկագոյն նկարագրէ : Երեկոյն էր պայծառ և զուարճալի . և նկարուած երկրին երևէր զարդարել ընդ ամենայն զուարթատեսիլ հանդերձս լուսոյ և ստուերի : Եփրանիմոս ասաց, թէ այրն այն՝ որ ունի զերկնակայութի զուարթութեամբ , ունի նա և զմասնակցութիւն ընդ ամենայն իրս , զորս տեսանէն . և արդ համարեա՛ց դու զքեզ լինել տէր և վայելող լայնածաւալ տարածութեան երկրիս այսորիկ, որ շուրջ է զմեօք . և ուրախ լեր յերջանկութեն բիւրոյ բիւրոց արարածոց , որք բնականան ընդ անտառս , ՚ի մացառս և ընդ լերինս, որք երևին աչաց մերոց : Տուն, այգի և զբօսատեղիք Եւգինիոսի ձևացուցանէին զմասն տաւչինկայ տեսարանին անտի . և Ալէքսիանոս արտասանեաց կատակողական իմն ցանկութեամբ , թէ ունէր ինքն առաւել քան զերևակայական ժառանգութիւն ՚ի ստացուածս յայնոսիկ : Ո՛չ բաց քեզեա՛ ՚ի քէն զայդ ցանկութի անխելքեր , ասաց Եփրոնիմոս . քանզի եթէ ամենայցէս ՚ի խորս սրտի քում զայսպիսի մասնուցութիւնս , սիրտ քոյ վաղագոյն եղիցի կերակուր նախանձու և տժգոհութեան : Այնչեմ երախտագիտութեամբ զբարիս , զոր ընկալեալ է քո յառատապարգև ձեռանէ սեպհա՛ Աստուծոյ . եթէ հնար է քեզ , առաւելեա՛ զնոսա պատուով և համբաւով ՚ի ձեռն գործունեայ աշխատասիրութեան յայնոսիկ գործս, յորոց սակս արարեալ է զքեզ բարձրեալն . և թէպէտ բաժակ քո ոչ լցանիցի, բերկրեսցիս ՚ի մեր-

ձաւուրին քոյ լի է առատութեամբ։ Պատուա-
սիրեա զգիտութիւնս, և նախանձախնդիր լեր
առաքինութեցն Եւգինիոսի. այլ մի՛ նախանձիր
թէ նա է առաւել իմաստնագոյն, հարստագոյն
կամ զօրաւոր քան զքեզ։ Խոնարհութիւն նորա
'ի գործ դնի 'ի մարդասիրութեն, յառատաձեռնութեն
և 'ի հիւրասիրութեան։ Վեհագոյն գանձք մտաց
նորա կարգեալ են 'ի պէտս հրահանգութեան
և ուսումնառութեն մանկանց նորա, յօգնական-
ութիւն և 'ի բարութիւն բարեկամաց նորա,
'ի ծառայուն և 'ի կատարելագործութիւն երկրա-
գործութեան և ամենայն պիտևան արուեստ-
ից. և առ 'ի պաշտպան լինիլ իրաւանց աղքատին
և իշխանութեան մարդկան։ Իւր կարողութիւն
նորա յառաջադէմ լինի 'ի պատուհասել զյան-
ցաւորս, պաշտպանել անմեղաց, պարգևատրել
զբարեգործս, և 'ի շնորհել ամի վարձա-
րութիւն համահաւասար ձեռամբ։ Ոգամ
'ի ներքս հոգւոյ իմոյ զխանդակաթութեն եղ ըր
վան Եւգինիոսի. և համարիմ զանձն իմ միայ-
նակ երջանիկ 'ի բարեկամութեն նորա։

ՊԵՐՍԻՎԱԼ

Երջանկութ գտանի յուղղութեան բարուց։

Ամենքեան չհետևերթան բարւոյ. և երջանիկ
լինէին եթէ գիտէին զնորդ. մէջ երջանիկ ընդ-
քանի մի վայրկեանս, և այլ երջանիկ Ը քանի մի
ժամս, այլ եթէ կամիր լցէ երջանիկ ընդ ամե-

նայն աւուրս կենաց նոցին ։ Արդ այնորիկ կամ բարին է մշտնջենաւոր և տևողական, կամ ոչ ։ Եթէ ոչ, ուրեմն այն բարի պարտի լինիլ անցողական և փոփոխական ։ Իսկ եթէ է այսպէս, ուրեմն է տարակոյս ցածագոյն արժանաւորութեան, որ սակաւ կարէ պատշաճիլ մարդկութեն և հետազօտութեան մերում ։ Այլ սակայն՝ եթէ գուցէ լաւագոյն բարի, այսինքն՝ այնպիսի բարի, զոր մեք խնդրեմք, զորէն այլ ամենայն իրաց պարտի ածանցիլ ՚ի պատճառէ իմիք ․ և պատճառն այն կամ պարտի լինիլ արտաքին, կամ ներքին և կամ խառն ․ քանզի բաց յերից սոցա չիք այլ ինչ հնարաւոր ։ Այլ արդ՝ մշտնջենաւոր և տևողական բարին ոչ կարէ ածանցիլ յարտաքին պատճառէ ․ քանզի ամենայն ածանցեալքն յարտաքնոց՝ յեղափոխեսցին ․ որպէս և նոքա իսկ յեղափոխին ։ Այս օրինակ ևս չէ հնար նմա ածանցիլ ՚ի խառնուածոյ երկոցունց ․ քանզի մասն այն, որ է արտաքին, սակաւ տակաւ ապականեսցէ զբնութի նորին ։ Ոչինչ մնայ մեզ ուրեմն, բայց միայն պատճառն ներքին ․ զայն պատճառն կամիմ ասել, զոր հարկաւոր համարիմք յուղղութիւն բարուց յորժամ զետեղեմք զծայրագոյն բարին ՚ի միտս մեր ։

ՀԱՐՐԻՍ

## Արարչագործութիւն ։

Յընթացս ամենայն գործոց և հաւասարութեն եհաս ժամանակ մի, յորում երկիրս այս պարտէր

՚ի գոյութ ածիլ : Յորժամ պայմանագրեալ վայրկենին այն՝ նախասահմանեալն յամենայն յաւիտենից ժամանակաց, յարեաւ Ած ՚ի զօրութիւն իւր. և բանիւ միով ստեղծ զաշխարհ : Օ՜ ինչ ազնիւ և փառաւոր ժամ էր այն, յորում ՚ի չգոյէ միանգամայն ի գոյութիւն շրջեցաւ զօրաւոր գունդս այս, յորոյ վերոյ բիւրք բիւրոց կենդանեաց արդէն բնականան : Ո՛չ պատրաստական չափք պահանջեցան . ոչ ընդերկար միջոց մտախորհութեան ՚ի գործ եդաւ : Ասաց և եղեն . հրամայեաց և հաստատեցան : Երկիր էր աներևոյթ և անպատրաստ. և խաւար ՚ի վերայ անդնդոց . Հայեցաւ ամենազօրն յանշունչս խաւարային . և էջ հոգին ՚ի պէսպէս ջոկատս բնութեան : Ասաց զի եղիցի լոյս, և եղև լոյս : Ապա երևեցաւ ծով և ցամաք. Լերինք յարեան և գետք բղխեցան : Արեգակն և լուսին սկսան զընթացս իւրեանց յերկինս : Բանջարք և խոտք ծածկեցին զերկիր : Օդ, հող և ջուրք լցան ազատաշաձեալ բնակչօք իւրեանց . ՚ի վերջոյ արարաւ մարդ ըստ պատկերի Այ : Երևեցաւ նա երկթալով անմեղի կազմուածով . և զարդարչին իւրոյ ընկալաւ զօրհնութիւն իբրև ըն տերնորդ աշխարհիս այսորիկ : Հայեցաւ ամենազօրն ՚ի գործ իւր յորժամ էր եզերեալ . և բարի ասաց զայն : Մեծագոյն արարածք տեսին հիացմամբ զայս զ՚ի նորոգ գոյութիւն ածեալն աշխարհ : Աստեղք առաւօտու երգեցին միաբերան . և ամենայն որդիք Այ ցնծացին բերկրութեամբ :

ԲԱԷԸՐ

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Մարմնական տգեղութիւնք ոչ են առարկայ կատակմանց:

Դքսուհին Բուրգոնդիոյ գոլով սակաւամի, և տեսեալ զզօրական ումն 'ի յընթրիս, որոյ ատամունքն էին կարի տգեղագոյն, սկսաւ բարձրաձայն ծաղր առնել զնովաւ: Տիկին, ասաց ցնա չորեքտասաներորդ Լուի արքայն, դա է մի 'ի կարի գեղեցկագոյն արանց 'ի թագաւորութեան իմում. քանզի է հզօրագոյն և իմաստնագոյն:

ՌԱՀԻՆ

Արդարութի և աստուածասիրութի:

Աղքատիկ ումն 'ի Միլան քաղաքի ենուտ 'ի պաշտօն դռնապանութե. և յաւուր միում դիպուածով իմն եգիտ զքսակ մի, յորում կային երկերիւր կուանք: Այրն այն, որ կորուսեալ էր զդրամսն զայնոսիկ, իմացեալ 'ի ձեռն հրատարակութեն լրաթղթոց զգիւտ վերոյասացեալ քսակին եկն առ աղքատիկն այն. և այնպէս նշանակս հաւաստի արարեալ զնա թէ քսակն այն է իւրաւանդէս իւր ստացուած, աղքատիկն վերադարձոյց զայն նմա: Իբրև երկրութեամբ և շնորհակալութ դրամակորոյսն մատոյց աղքատիկ դռնապանին զքսան կուանս իբրև զպարգև. զորս նա ոչ կամեցաւ ընդունիլ: Յետ այնորիկ մատոյց զտասն, և

ապա զհինգ. բայց աղքատին տակաւին ոչ յօժա-
րէր ընդունիլ զայն: Յայնժամ բարկացեալ առն
այսորիկ՝ ասաց պայրացմամբ, եթէ զոչինչ եմ կո-
րուսեալ, ոչ է իմ կորուստ ամենևին և զոչինչ,
եթէ այսանակ տհաճեցիս ընդունիլ զայսոսիկ
իբրև զպարգև: Յայնժամ դռնապանին հաւա-
նեալ՝ եառ ՚ի նմանէ զհինգ կտաւնս. և նոյն
ժամայն բաշխեաց զնոսա աղքատաց:

ՌԱԼԻՆ

## Առաքինութիւն ՚ի խոնարհ կեանս:

Փէրրին՝ փարելի առարկայ այսորիկ պատմութե,
կորոյս զերկոսին ծնողս իւր, մինչչև էր կարող
արտասանել զանուանս նոցա. և մուծաւ յու-
սումնարան մի ողորմութե ՚ի սակս կրթութե
և ուսումնառութեան: Ի հնգետասանան ամաց
հասակի նորա երկրագործ մի կալաւ զնա ՚ի վար-
ձու առ ՚ի լինել անդէորդ ՚ի տեղւոջ միում,
ուրանոր Լուսետտա պահպանէր զխաշինս հօր
իւրոյ: Յաճախակի հանդիպէին նոքա միմեանց.
և ցանկային լինել հանապազ ՚ի միասին: Յետ
անցանելոյ հինգ ամաց, յորում զբաղում պարապս
ունէին նոքա առ ՚ի խնայէս ծանօթանալ ընդ
միմեանց, Փէրրին առաջի արար Լուսետտայ
առ ՚ի առնուլ հաւանութիւն հօր նորա ընդ
ամուսնութե նոցա. և նա շառագունեալ դիմօք
հաւանեցաւ տալ զհաւանութիւն իւր ընդ այն:
Իսկ զի Լուսետտա ՚ի միւսում առուր ունէր

երթալ 'ի քաղաքն, Փերրին պատեհ գտեալ՝ յայտնեաց զդիտաւորութիւն իւր յանձներկայութեան նորա : Ծերունին ասաց, կամի՞ս դու ամուսնանալ ընդ դստեր իմում. ունիմ զտուն մի առ 'ի ծածկել զնա, կամ զդրամս՝ որով մարթ իցէ քեզ 'ի պաշտպանել զնա : Ստացուածք Լուսեստայ ոչ վասն միոյն բաւեսցի և ոչ վասն միւսոյն : Չէ՞ հնար յառաջադրութեդ կատարել . ոչ եղեցի քեզ, Փերրին, առ 'ի գլուխ հանել զդիտաւորութի քո : Այլ սակայն, պատասխանեաց Փերրին, ունիմ զձեռս 'ի գործել . պահեալ է իմ զքսան կուսանս 'ի վարձուց իմոց . որք բաւեսցին առ 'ի հատուցանել զծախս հարսանեացն . առաւել աշխատանօք ջանասցայց պարապել 'ի գործս . և յայն սակս առաւել ևս շահեցայց : Բարւոք ես պատասխանեաց ծերունին . կարդես կարի սակաւահասակ ես . սպասեա սակաւիկ մի ևս . հարստացիր . և դուստր իմ պատրաստ է լինել քեզ , 'ի կնութիւն : Փերրին յերեկոյին սպասէր վերադարձման Լուսեստայ 'ի քաղաքէն : Հայր իմ հաճ է ընդ յառաջադրութիւն քոյ , ասաց Լուսեստա : Ո՛վ, Լուսեստա, պատասխանեաց Փերրին . զիա՞րդ ապերջանիկ եմ 'ի լինել չքաւոր : Սակայն ոչ է իմ բոլորովին յուսաբեկ եղեալ . ակն ունիմ զի կացութիւն իմ 'ի լաւ անդր փոխեսցի : Եւ քանզի ոչ վաստակէին նոքա 'ի խօսակցել ընդ միմեանս , մերձեցաւ գիշերն . և խաւարն պատեցաւ զնոքօք շուրջանակի : Փերրին կեղծեալ ընթացիւք կամէր մեկուսանալ 'ի բնակութիւն իւր . յորժամ ոտք նորա յանկարծակի

տայլթաքեցան · և նա անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր : Եգիտ նա զքսակ մի ծանրագոյն · և մերձեցեալ առ լոյս ինչ ՚ի մերձակայ տեղւոյ՝ ետես զի լի էր այն ոսկւով : Գոհանամ զՏնէ, աղաղակեաց Փերրին ձայնիւ իմն բերկրութեան · որ գթացաւ ՚ի մեզ և կատարեաց զիղձ սրտից մերոց : Հնար է հօր քումս ՚ի բաց արարել զվիշտ իւր սովու, և մեզ մարթ է լինել երջանիկ : Յերթալ նց ՚ի տուն հօրն Յուսեփայ՝ սիրտ Փերրինի հուրաւ ՚ի մտածութենէ լիք : Յայնժամ Փերրին ասաց , թէ զրամս այս ոչ է մեր իսկ ստացուած այլ պատկանի օտարականի ումեք · որ գուցէ յայսմ ժամու կոծ արարեալ ողբայ զկորուստ նորին · եկ զի երթիցուք առ քահանայն, և խորհրդածեսցուք ընդ նմա ՚ի վերայ այսր բանի · քանզի նա միշտ խանդակաթ և շնորհապարտ է եղեալ առ իս : Փերրին ետ զքսակն զայն ՚ի ձեռս քահանային ասելով՝ թէ չառաջինն կարծեր զայն լինել պարգև իմն երկնային · որում Այ կամեցաւ ՚ի բաց հերքել ՚ի մէջոյ զխոչընդական աղքատութիւն նոցա · սակայն այժմ յերկեայս է և ոչ կարէ ստուգիւ իմանալ թէ արդեօք հնար է ինքեան ունել զդրամսն զայն ըստ օրինաց : Քահանայն կարի մտադրաբար հայէր յերկրաւորն լծակիցսն յայնոսիկ · սքանչացեալ էր ընդ համեստաբարոյութիւն նոցա · որ երևէր անցանել զանցանել զխանդակաթութիւն նոցին առ միմեանս : Փերրին , ասաց քահանայն · տածեա ՚ի խորս սրտի քում զխոկմունս հայս · քանզի բարերար է Այ և օրհնեսցէ զքեզ ·

Պարտիմք ջանալ առ 'ի զտանել զտէր քսակիդ այդորիկ . որ փոխանակ հաւատարմութեան քոյ պարգեւատրեսցէ զքեզ մեծապէս : Յաւելից եւ ես զոր ինչ մարթ է ինձ ընծեռել : Ունիցիս դու զԼուսետտա : Յետ այնորիկ զգիւտ քսակին հրատարակեցաւ 'ի լրաթուղթս . եւ այդ եղեւ զայնմանէ յընթերցակաց տեղիս : Անց ժամանակ ինչ . եւ ոչ ոք երեւեցաւ 'ի խնդրել եւ 'ի պահանջել զդրամս զայն . վասն այսորիկ քահանայն տուաւ զայն առ Փերրին . եւ ասաց նմա, թէ երկոտասան հազար լիվրէքս այսուցիկ առ այժմ ոչ ունին զշահ . քաղելոց ես դու զօգուտ նոցա 'ի վերջոյ : 'Ի գործ դիր զնոսա այնպիսի եղանակաւ , զի ապահովութիւն պահպանեսցես զգումար դրամոյն վասն տեառն նորա . եթէ երբեք դէպ լիցի նմա երեւիլ : Փերրին գնեաց դրամովն այնուիկ զկալուած մի . եւ հայր Լուսետտայ ետ զհաւանութիւն իւր ընդ ամուսնութիւն նոցա : Փերրին պատսպարեցաւ 'ի պաշտօն երկրագործուն . եւ Լուսետտա պարապէր 'ի տնային գործս : Ամենաջանաւորէին նոքա կատարեալ հաւատարմութեամբ, եւ որդիք երկու առաւել եւս փարթեցին կացուցին զնոսա միմեանց :

Յերեկոյի միում Փերրին դարձեալ 'ի գործոյ իւրոյ 'ի տուն՝ ետես զերկուսին սեպուհս . որոց կառքն սայթաքեալ 'ի դարուփոս գնացից՝ արգելեալ մնային անդանօր : Դիմեաց նա յօգնականութիւն նոցա . եւ մատոյց զամենայն սէր հիւրընկալութեան եւ ասպնջականութեան, զոր փոքրիկ բնակութիւն իւր ընձեռել մարթանայր :

Տեղիս այս, ասաց մի 'ի սեպուհեաց անտի, է կարի զուարճաբեր ինձ ։ Տասն ամօք յառաջ կորուսեալ է իմ ատամնօք գերյու հազար լիվրէս ։ Փէրրին ունկնդիր եղև նմա մտադրութբ. և եհարց թէ ո՞չ ես հետախօտ եղեալ նց ։ Օտարականն պատասխանեաց, թէ չէր հնար ինձ հետազօտ լինիլ նոցա. տաճապարեալ փութայի երթալ 'ի նաւահանգիստն Օրլէնայ, առ 'ի ելանել անտի 'ի Հնդկաստան. քանզի պատրաստ էր նաւն առ 'ի պարզել զառագաստս իւր ։ Ի միւսում աւուր Փէրրին եցոյց կոչնականաց իւրոց զտուն իւր, զայգի իւր և զանդեայս իւր համայն. և ասաց նոցա թէ որքան է տարական եկամուտ կալուածոց իւրոց ։ Այսոքիկ ամենայն են ստացուածք քո, ասաց Փէրրին ցսեպուհն այն, որ կորուսեալ էր զքսակն վերոյասացեալ. դրամս այն են 'ի ձեռս իմ. և նովիմբ գնեցի զկալուածս զայս. այս կալուած է ստացուած քո ։ Մնեմի քահանայն քաղաքիս ունի ընդ իւր գիթուղթ մի. որ ապահով է արարեալ զս-տացուած քո. թէ և մեռանել էր իմ թարց տեսանելոյ զքեզ ։ Օտարականն ընթերցաւ զթուղթն զայն մտայուզութեամբ. և հայեցաւ 'ի Փէրրին, 'ի Լուսեստա և յորդիս նց ։ Ներեմ ես, աղաղակեաց նա. և զի՞նչ է զոր լսեմս ։ Օ՜ ինչպիսի առաքինութի գոյ 'ի նոսա, որք վիճակեալ են այսպիսի ցածուն իմս վիճակի ։ Ունիս դու զայլ կալուածս բայց յայսմանէ ։ Ո՛չ, պատասխանեաց Փէրրին. սակայն հնար է քեզ ունիլ

գուխրատուոր մի · և յոյս ունիմ զի թողցես ինձ մնալ աստանօր : Համեստաբարոյութիւն քո արժան է բարեգոյն եւ պարգեւատրութեան , պատասխանեաց Օսուրակեանն : Յաջողութիւն իմ մեծ եղև յառաւօտութեան · և մատուցեալ եմ զինուորին : Արդ բարեպէս վիճակեալ ես դու մերձիկ այսմ հարստութեան · պահեա զայն այսուհետև իբրև զստացուած քոյ իսկ : Ամ արդեօք յաշխարհի աստ հնար էր ունիլ զասուել զշնորհին վասն քան զոր դուդ ունիս : Փերիին և Խուետտա հեղին զարտասուս սիրոյ և շնորհակալութեան : Սիրելի որդեակք իմ, ասաց Փերիին · համբուրեցէք զձեռս բարերարին ձերոյ : Խուեստա , կայլուածս այս այժմ մեր է և մեզ պատկանի · և մերթիմք վայելել յայն առանց մտայուզութեան և անդիւրութեան : Այսպէս պարգեւատրեցաւ համեստութիւն նորա : Այնոքիկ որք կամին զպարգև , ՚ի կիր արկցեն զառաքինութիւն :

ԴԱԴ

## Ափոփանք Կրօնի :

Ճաշումք են , որք անցուցին զտի երիտասարդութեան և գեղեցկութեան · որք լքեալ թողին զըեբրէյրանս զուարձալի եղանակին այնորիկ · որք սկսին հոլովիլ ՚ի հովիտ տարերաց · Փուսեալ յողջութիւնս իւրեանց · ցածուցեալ

՚ի ծոխութիւնս իւրեանց ։ Մեկուսացեալ հե-
ռացեալ ՚ի սիրելեաց , ՚ի չուակեց ևս առա-
ւել ՚ի փորձալիա զուգորդաց իւրեանց ։
Աշխարհս այս զինչ չափիք իմն թուեան կարէ
ընծեռել նոցուն · ընծեռէ չփաւար և չահաւոր
անապատ մի , յորում ոչ ծաղի մի և ոչ ծա-
ռագայթ մխիթարութեան ։ Ամենայն պատիր
տեսարան ունափառութեան ՚ի յանգ է ելեալ ·
Երկար փորձառութիւն մարդկան՝ փորձառուի
մի կարի տարբեր յայնմանէ , զոր առատածիր
և ողորմած հոգի երախտապարտութեան յառա-
ջագոյն երազեալ էր , արարեալ է զիւրս
նոցա զրեթէ անշարժ ՚ի բարեկամութիւնս ։
Գլխաւոր պատճառք գործունէութեան յափշ-
տակեալ ՚ի բաց ելեալ ՚ի միջոյ · յորժամ
նոքա՝ յորոց սակս աշխատ լինէաք , ՚ի մէջ
՚ի բաց բարձան · նոքա՝ որք զբաղուցանէին և
քաղցրաճաշակ առնէին զամենայն աշխատանս
կենաց մերոց ։ Արդ ուրեմն զուցէ ոգին զպաշտ-
պանութիւն , եթէ ոչ ՚ի լանջս կրօնի ։ Ան-
դանօր հրաւիրի նա յայնոսիկ տեսարանս վերա-
տեսչութեան և ապագայութեան , որոց միայն
հնար է կազդուրել և մխիթարել զոգիս մար-
դոյ ։ Բանք իմ աստանօր զայնպիսեաց են ,
որք ունին զզգայութիւն մարդասիրութեան ·
զորս ձախորդութիւնն մղմացոյց · և զրեթէ
արար առաւել ևս խոհական · և ոչ զայնպիսեաց ,
որք սեփականեն զայն յիմարական անզգայութիւն ,
զոր հաճին ոմանք բարձրացուցանել անուամբ
փիլիսոփայութեան ։ Այսպէս՝ նկատել որ-

ժամն է. զի այնոքիկ փիլիսոփայք, որք ան-
կարօտ համարին զինքեանս նպաստաւորութեան
կրօնի, յօգուտ առաքինութեանց իւրեանց,
և որք ոչ զգան զկարօտութիւն մխիթարութեանց
նորին, պարտին ունիլ զխոհականութիւն առ
՚ի զմտաւ ածել զպէսպէս կացութիւնս ազգի
մարդկան. և ոչ ջանալ ՚ի զրկել զնոսա յայն-
մանէ, զոր ունակութիւնն՝ եթէ ոչ համա-
րեսցին զնա լինիլ բնութիւն, ՚ի վերջոյ կարե-
որ արար առ բարուց և երջանկութեան նոցա:
Պարտ է նկատել զի մարդասիրութիւնն ար-
գել լինիցի նոցա առ ՚ի աւերել զօթևան տա-
ռապելոց, որք այլ ոչ ևս կարեն լինիլ ա-
ռարկայ նախանձու և սրտմտութեան նոցին.
և ՚ի բաց խլել ՚ի նոցանէ զասկական մնացել
մխիթարութիւն նոցին: Բարհութիւնն այն,
որով ոք յանդգնի առ ՚ի ծանուցել զկրօնին,
հանելի լինիցի սակաւուց՝ ՚ի բաց ձգելով
զսանձահարութիւն հեշտութեանց նոցին. և
կարի ապերջանիկ արասցէ զայս՝ առնելով
զնոսա երկչոտս զայնոցիկ ճշմարտութեանց,
յորս մեծագոյնս շահեցան. այլ սակայն չկարէ
ընձեռել զճշմարիտ բարիս և զերջանկութիւն ինչ
ումեք անհատի:

ԳՐԻԳՈՐ

## Ի վերայ հարկաւորութեան կարգի ի կիրառութեան ժամանակի մերում։

Զժամանակն պարտիմք համարել իբրեւ գանձարան աւանդ իմն՝ աւանդեալ մեզ յԱյ՝ որոյ եմք զարդիս պահապանող. եւ զորմէ պարտ է մեզ համարս տալ ի վերջոյ։ Այն մասն ժամանակին, զոր Այծ փոխանակեցուցեալ է մեզ, դիտեալ է ըստ մասին վասն աշխարհային գործոց, եւ ըստ մասին վասն երկնայնոց։ Երկաքանչիւրն սոյա բաժանփակենել ի կիրառութեան ժամանակի մերում զայն ժամ, որ յատկապէս պատկանի նմա։ Մի երբէք խառնեսցին ժամք հիւրասիրութեան եւ զուարճամտութեան ընդ ժամուց կարեւոր գործոց մերոց. եւ մի՛ այնքանի՛ զորս կարեւոր գործք աւելմք, արգել լիցին ժամանակին այնմիկ, որ պատշաճեալ է բարեպաշտութեան։ Ամենայնի ժամանակ է, եւ ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից։ Եթէ յապաղիցեմք մինչ ի վաղիւ որ պարտիմք առնել այսօր, ծանրաբեռնեմք զվաղիւն բեռամբ միով, որ ոչ պատկանի նմա։ Զանրաբեռն առնեմք զմնացեալ ժամանակի. եւ խափան լինիմք նոցա ի տանելոյ զմեզ մեղմապէս։ Նա՝ որ յամենայն առաւօտու յառաջագրէ զգործս աւուր, եւ հետեւի յառաջադրութեանն այնմիկ, կատարէ զընթացս ինչ, որ առաջնորդեսցէ զնա ի լաբիւրինթոս յոգնապատատիկ կենաց։ Կանոնաւոր կարգադրութիւն ժամանակի նորա է իբրեւ ճառագայթ լուսոյ, որ շողշողէ ընդ ամենայն գործս նորին։ Իսկ ուրանոր ոչ գոյ յառա-

ճշգրտութեան գործոյ, ուրանօր բաժանումն ժա-
մանակի կարգեալ է միայն 'ի պատահական դիպ-
ուածս, ամենայն ինչ շփոթեալ մնան 'ի խառն-
ուածի իւիք. որ ոչ զկարգաւորութիւն ընծայէ
և ոչ զանեսարան: Նախ՝ պարտ է մեզ հար-
կաւորապէս զգածիլ իրաւացի զգացուածովք ար-
ժանաւորութեան ժամանակի. զի կարօղ լինիցիմք
առ 'ի անձն զկարգ 'ի կառավարութիւն և 'ի
գործադրութիւն նորա: Պարտ է մեզ զմտաւ
ածել թէ որքան հարկաւոր է ժամանակն, և
թէ որքան փութանակի անցանի: Նայեցուք 'ի
մարդկանէ յոլովինչ են այնքան ցնորական և խե-
ղաթիւր, որքան 'ի կիրառութեան ժամանակի
իւրեանց: Յորժամ խորհին զնմանէ իբրև զչափ
տևողութեան և կենցաղավարութեան նոցա յաշ-
խարհի աստ, մեծարեն զնա յոյժ յոյժ. և առա-
ւել մեծագոյն խանդաղատանօք ցանկան երկա-
րաձգել զայն: Այլ սակայն յորժամ տեսա-
նեն զնա ուրոյն ուրոյն 'ի պէսպէս մասունս
բաժանեալ, հային 'ի նա արհամարհանօք. և
ծախեն զայն անհոգունակ առատութեամբ:
Մինչ դանդաղեն նոքա թէ կարճատև է կեանք
մարդոյ, ցանկան յոլովակի զի պէսպէս պահք
և ամանակք նորա 'ի յանկ ելանիցեն: Ագահ
լինելով յայլ ամենայն ստացուածս իւրեանց՝
շռայլ են միայն 'ի կիրառութեան ժամանակի:
Թողուլ տան ամենայն պղերգի առ 'ի լինել
տէր ստացուածոյս այսորիկ. և փայփայեն զա-
մենայն սնոտի պատաղումն, որ սատարեսցէ նո-
ցա 'ի ծախել զնա. Չէ պարտ ակն ունել զի

երևեսցի կարգ կիրառութեան ժամանակի 'ի մի-
ջի նոցա, որք այսպէս անփոյթ իցեն ընմանէ։
Այլ սակայն այսու մահակիր անփութութեան որ-
քան նիւթս ստորակական և տեղղական աշխար-
հան համարեն ինքեանց։ Օ ժամանակն վայն.
զոր թողուն նոքա անցանել 'ի չփութման, դառ-
նագին սարջութիւնն յետոյ ընդ վայր. թանէ
'ի վերադարձել։ Որ ինչ անհոգութեամբ խափանե-
ցաւ 'ի կատարելոյ 'ի յառաջեալ ժամանակի
իւրում, յանոնէ 'ի լինիլ ամենչանք ապագայ ժա-
մանակի։ Սարդկութիւն նաւաստանայ ելնիլք
անհոգ պատանեկութեան։ Ծերութիւն ծընո-
ղեալ 'ի հոգոյ, որ պատկանէր նախկին ժամա-
նակի, վշտագնի ը բեռամբ միով, որ ոչ է իւր։
'Ի վախճան կենաց՝ մեռանելի մարդն տեսանէ
զաւուրս 'ի աւուրք կենաց իւրոց մերձ են զրա-
ւել. մինչ պատրաստութիւն իւր վասն յաւի-
տենականութեան սկսեալ է հազիւ հազ։
Այսպիսի են վախճանք անկարգ կիրառութե
ժամանակի. որ առոյ մարդոյ չհայիլ յիսկական
արժանաւորութիւն նորա։ Ամենայն ինչ 'ի
կեանս այսպիսեաց սխալապար է զետեղեալ։
Ոչինչ կատարի ուղղակի և վայելչութեամբ.
վասն զի ոչ կատարի 'ի պատշաճեալ ժամա-
նակի։

Այլ սակայն նա՝ որ կանոնաւոր է 'ի կիրառութ
ժամանակի իւրում, բոլոր ածէ զյատուկ իմն
եղանակէ խորհելոյ յայսոսիկ բազմապատկեալ
հարեաց։ Արդարև հնար է ասել թէ կրկնա-
կի շահի նա զժամանակն։ Պահպանելով զնա

կատարեալ կառավարութեամբ՝ երկարաձգէ զնա ։ Կեայ նա ընդ երկայն աւուրս ՚ի սակաւ ժամանակի · կենցաղավարի տուեալ ՚ի սակաւ ամս, քան այլք ՚ի բազումս ։

Ձնմր է նմա կեալ Աստուծոյ և Հոգւոյ իւրոյ իսկ · և ՚ի նմին ժամու հեռանալ ամենայն օրինաւոր շնորհաց աշխարհիս այսորիկ ։ Ձայն նա յանցեալն · և հոգայ վասն ապառնւոյն ։ Ըմբռնէ և արգելու զժամս, մինչ փախչին և թռանին ։ Պահէ զյիշատակ նոցա առ օգտակէտ բանից · և յիշատակութիւն նոցա մնայ յաւիտեան ։ Իսկ ընդ հակառակն առաջի անկանոն և շփոթամիտ անձանց ժամքս այսոքիկ իբրև զստուերք չքանան ։ Աւուրք և ամք կենաց նոցա կան են դատարկ, որոց չունի զյիշատակութի բնաւին, և կամ լի այնպիսի շփոթեալ և անկանոն տեսակաւ անաւարտ գործոց, մինչ զի թէպէտ և յիշէ ՚ի միտս իւրում թէ եր պատահել, սակայն ոչ կարէ տալ համար զգործոյն, յորմէ եր պատահեալ ։

ԲԼԷՐ

### Կասկածոտ բնութիւնն է արմատ թշուառութեան սեփականողի նորա ։

Որպէս կասկածոտ բնութիւնն է արմատ բազում յանցանաց և տառապանաց յաշխարհի աստ, այսպէս և է բորբոք պէսպէս թշուառութեանց նմա, որ ողջագուրեալ փայփայէ զնա ։ Կա-

ծելով զայլս լինիլ թշնամի և չարակամ իւր՝ անտարակոյս ուրացէ զնոսա այնպէս ։ Թէ և մեծապէս զգուշասցի ; սակայն դժնէութիւն խոկմանց իւրոց յաճախակի երեւեսցի 'ի վերայ իւր · և փոխարէն կասկածելոյ և ատելոյ , ենթակայասցի կասկածանաց և ատելութեան ։ Բայց 'ի յարտաքին չարեաց , զորս ձգէ առ ինքն՝ ծագեալ 'ի փոխադարձ բարեկամութէ , 'ի պառակտեալ մտերմութէ և 'ի յայտնի չարակնութէ ; կասկածոտ բնութիւնն բաց ինքեան է մի 'ի վտանգաւորագոյն չարեաց անտի , զոր իւրաքանչիւր ոք կարէ կրել ։ Եթէ յամենայն երկիւղի գոյ տանջանք , զինքն թշուառական եղիցի վիճակ նր · որ կելով 'ի մշտնջենական նախանձաբեկութե՝ կեայ 'ի մշտնջենական երկիւղի ։ Տեսանել ով զինքն շրջապատեալ 'ի գլխոյ , 'ի թշնամեաց և 'ի դաւադիր մարդոց՝ սպառէ հաւատոյ և յուսոյ ։ Ոչ գիտէ թէ ում՝ բացայայտեսցէ զխորհուրդս իւր ։ Պայծառացուցանէ զդէմս իւր 'ի դժկամակ ժպտանս , մինչ սիրտ իւր բաղխի 'ի ներքուստ յերկիւղից գաղտնի դաւաճանութեան ։ Յայսմանէ յառաջ գան դաժանութի և չարաբարոյութի , ատելութի աշխարհի և ամենայն ցաւագին զգայողութիւնք զայրացեալ և դառնացեալ մտաց ։ Որքան անհամար և մեծ են չարիքն՝ յարուցեալ 'ի կասկածոտ բնութենէ , մինչ զի յերկուց եզրակացութեանց աստի առաւել ընտրելի է ենթակայացուցանել զմեզ պատահական վնասու՝ խորհելով յօրէպէս

ցայլոց. քան թէ կրել զմշտաւոր թշուառութի՛ խորհելով մշտամիտ չար հնոցանէ ։ Հարի է երբեմն խաբիլ, քան ոչ երբէք յուսալ ։ Պապանձումն զնել լինի յոյժ թանգագին գնով . մինչ առ 'ի պահպանել զայն, հարկաւորիմք մշտապէս զրահաւորիլ և կեալ 'ի յարատեւ պահպանութեան ընդ համանմանից մերոց ։ Ի ն[illegible]ո կենցաղավարութեան սա զրկէ զմեզ 'ի միսիթարութենէ կենաց ։ Ողջախոհն բերկրութիւն և յանդորրութեան վայելէ 'ի կացութեն խորում, որ ինչ և իցէ ։ Խոհեմութիւն առաջնորդէ զհաղորդակցութիւն մեր ընդ աշխարհի . այլ սակայն կասկածանք ոչ որնաւ յածախեն 'ի ժամս հանգստեան նորա ։ Ունակացեալ նորա 'ի նկատել զհամբաւս մերձաւորաց խորոց բարեխոհ իմն եղանակաւ, նմանի նմա' որ բնակի 'ի մէջ այնոցիկ գեղապաճոյճ սեսարանաց' յորս աչք մարդոյ հանգչին բերկրութբ ։ Իսկ ընդ հակառակն' կասկածոտն լինել հերեակայութիւն իւր ամենայն զարշելի տեսակօք մարդկային սատարանութեան, խաբեբայութեան և դաւաճանութեան, նմանի ուղևորին յանապատի, որ ոչ տեսանէ զայլ առարկայս շուրջանակից բաց յանպիտեաց, որք' կամ արտամագին են և կամ սարսռղական . այսինքն զվիհս' որք երևին . զօձս' որք շչեն . և զյափշտակիչ գազանս' որք մռնչեն ։

ԲԼԵԸՐ

### Յուսաբեկութիւն գիտութեանց մերոց է նշան իմաստութեան ։

Հաւաստի նշան բարի մտաց է լինել անյոյս զնմանէ ։ Մեք յայնժամ և ոչ յայնժամ եղանիմք իմաստուն, յորժամ սկսիմք գիտել թէ որքան անիմաստ և աղքատ եմք յամենայնի ։ Անհնար է ումեք ունել միանգամայն զկատարելութիւն իմաստութեան ․ նա առաւել մերձենայ և հուպ լինի առ իմաստութիւն, որ խելացի իցէ ՚ի գիտել, և լինել՝ առ ՚ի խոստովան լինել զանկատարութիւն և զանիմաստութիւն իւր ։ Իմաստութիւնն յաջողապէս նստի յարաժամ ՚ի վերայ լանջաց երիտասարդաց ․ պատրուակէ զբազմութիւն սխալանաց ․ և յաճախէ զպայծառութիւն իւրաքանչիւր առաքինութեան, որ երբեմն ծածկեալ ․ կատարելութիւնք մարդոյ նմանին այնոցիկ ծաղկանց, որք գեղեցկագոյն երևին յորժամ սաղարթք նոցա ինչ իջեալ են և կափուցեալ ․ քան թէ յորժամ են գլխովին փթթեալ և բանան զբոլորսն կոկոնից իւրեանց լիապէս ։ Մանուք ՚ի մէջ սիրեն զգիտութիւն ․ և կարի փոյթ են առ ՚ի արժանապատիւս առնել զինքեանս ՚ի հրահանգութիւնս գիտութեանց ։ Այլ արդ՝ գիտութիւն մի գոյ յաշխարհի, որ արժանաւոր է քան զայլ ամենայն գիտութիւնս ․ քանզի է գիտուն բարուոք կենցաղավարելոյ ․ որ մնասցէ և տևեսցէ, յորժամ լեզուք լռեսցեն և գիտութիւնն անյայ-

տապացի ։ Յոյժ 'ի սակս նորա իմացուցանող և նոր· վարդապետութեանց , որոյք կարի արգասաւոր է գարս այս , պարտիմք գիտել զի եկեսցէ ժա· մանակ մի՝ յորժամ ոչ բերկրեսցին 'ի նմ միտք մեր · ոչ , եկեսցէ ժամանակ մի յորում մեր· ժեսցին և չքասցին գիտութիւնք այնք · և անտարակոյս 'ի մոռացօնս արկանելին միանգա· մայն , եթէ ոչ պահպանեալ լինէին յայնոսիկ գերազանց մտածմանս , որք պարունակեն զհաս· տատութիւն նոցա զօրէն մթեղաց , որք ընդ դալար դարս պահին յելեքտուաբոսնի · եթէ ոչ փութանակի փոխադրեսցին 'ի հաստատուն զանգ· ուած իւրեանց ։ Մ... սակայն հաստատուն հա· ւատ քրիստոնէութեան , և յօժարամիտ ունա· կութիւն բարեպաշտութեան օգնեսցեն և զօրա· ցուսցեն զմիտս 'ի վախճանի · և գեր քան զամենայն յայնմ նեղեալ ժամու , որ պարտի վեր· ջացուցանել և աւարտել զերկիւղ և զյոյս մեր · և իմաստութիւն՝ որ զօրէն Փրկչին մերոյ իջանէ 'ի բարձանց , ածցէ զմեզ անդանօր 'ի ձեռն շնոր· հաց նորա ։ Մ... սակայն՝ ամենայն ջանք մեր և վաստակք՝ թէ և տարբեր լինիցին՝ պարտին փա· նաքի և միջակային լինել բաղդատութեամբ մեծագոյն վախճանին այնորիկ , զընթացս աւեմ մշտնջենաւոր երջանկութեան · որ է լինել բարի 'ի մեզ և սիրտանցու յաշխարհի ։

ՍԻԴ

### Բերկրանք յաջորդեալ ՚ի վայելուչ կիրառութենէ զօրութեանց մտաց :

Երջանիկ է մարդն այն, որ անվրդով եղեալ ՚ի կանաքի հոգոց, ունէր ինքեան, ժամանակս իւրոյ և ծուլութեան՝ ծախէ զժամանակ իւր առ ՚ի առնել զինքն իմաստնագոյն. և զծախութիւն իւր՝ առ ՚ի առնել զայլս ևս առաւել զինքն երջանկագոյն. որ՝ ըստ որում կամք և իմացականութիւն են երկոքին ազնուագոյնք զօրութիւնք հոգւոյ՝ ոչ մարթանէ զինքն կատարեալ, մինչ իմացականութիւն իւր ոչ գեղազարդեսցի արժանապատուեն բարեաց գիտութեան. և կամք իւր ոչ պերճասցի ամենայն տեսակաւ առաքինութեան. որ լցուցեալ է զնա ամենայն շահեկանութեամբ, առ ՚ի զուարթացուցանել զառանձնականութիւն և ՚ի կազդուրել զզրուցաբանութիւն. որ մինչ խռովեալ՝ ոչ է տրտում. և մինչ զուարթ՝ ոչ է անհամեստօրէն խրախ. զորոյ ցանկալիութիւն չէ պարտ մեծարել առ պատիր պաղպաջոյ մեծութեան, այլ պարտ է ողջագուրել զայն վասն համեստաշարժ և ողջահայեաց պայծառութեան, իմաստութեան և բարութեան նորա : Գործաւոր պաշտօնեայն տէրութեան իւրէ չունի զառաւել գործս կատարելոյ ՚ի հրապարակական պաշտօնատորութեան քան զոր նա և անտարբերոյս ամենայն որ ունին կատարել ՚ի մեկուսացեալ և յանխօս տեսարանս կենաց : Եւս առաւել ՚ի մեն-

ւոր ընծայիցս նորա ամենայն ինչ, որ երևի՝ մա-
նկա թէ գայ անդանօր եւս մի անհրաժեշտ։ Ա-
տարեալ նորա ՚ի բնատուր փիլիսոփայութենէ՝ ընթեռնուլ զպայմանս վերծանելի տառիցն Տ՚ճոնեայ մենայն իրս, որոց հանդիսիւ պարունակ ... իւրաքանչիւր ծառոյ, որպէս Սողոմոնի ... ռեալ մորենւոյ՝ թէ և ոչ այնքան պայծառ. ... և յորժամ տեսանէ զնա, երկրպագէ զնա ... տուրին երախտագէտ որդւոյ։

Ս. Ի. Գ.

## Յուսադրութիւն ՚ի խնամս Նախախնամութեան Բարձրելոյն գովաբանեալ։

Մարդ յորժամ հայի յինքն, տեսանէ զի է կարի լքեալ և թշուառացեալ, եւս մի, ենթակայ է նա յամենայն ժամ մեծաց մեծաց տառապանաց և ձախորդութեանց։ Այսպէս առեալ պաշարի յարկածից յամենայն կողմանց, և լինելոց ապերջանիկ յանհնար պատահարաց, զորս ոչ կարէր նախատեսանել. և եթէ լեալ իցէր նախատես, ոչ կարէր խափանել զնոսա։ Ուրեմն ինչ ենթակայ եմք պատահմանց, մխիթարութիւն մեր այս է՝ զի եմք ընդ պաշտպանութեամբ այնպիսի ուրուք, որ կարգաւորէ զպատահարս. և ՚ի ձեռս նորա է կառավարութիւն իւրաքանչիւր իրի, որ կարէ խոշտանգել և վշտացուցանել զմեզ. որ գիտէ զնպաստաւորութիւնն զայն, որ պիտոյ է մեզ

կարգաւորութեան և յարմարական պատրաստ է 'ի պարս
զԱմերիկայն այնոցանոյ, որք աղաչեն զնա ։
Նշանաւոր յարգութիւնն, զոր այդպիսի արա-
րած պատրաստ այնպիսի ձեռագիր իմաստուն և
բարի եղանիլ, է հաստատուն հաւատալ հաստա-
տել 'ի նա վասն բարեաց և ողորմութեան կենաց,
և ամենաբանին յաւիտենական յոյսս 'ի նա վասն փրկա-
կութեան յաւիտենից յայտնութեան աղէտից
և տարժանմանց, որք պատահեսցին մեզ ։
Որ յարմարեալ սահմանս 'ի վերայ նոր զաւակի
խորհրդեանն, չձանին զնոյն խաւար և չարքարո-
մաղք տեսարանս մարմնոյն չարութեան. որ-
պէս նա՝ որ հեռացեալ կորսէ զմեզն յայսմ
մեծ մեծատութեանց եւս եալն այն կերպարն,
'Ի նմին կամ ժամու, յորում մտաւոր մեզ
նա զխաբէութեան և զմերութեան իւրմէ,
միւսանգամ զմեզն մտածողութեամբ այնպիսի
անպատմելին պարգեւաց, որք կայցեան են
առ անեղծանութեան և ողջութեան նորա ։
Տեսանէ՝ զհպարտութիւն, նախանձոտութեան
իւրոյ լցուցեալ ամենիմաստութեամբ նորա, որ
է ապաստան իւր ։ Նա ոչ է զխաւ զհպարտու-
թենէ կարողութեան իւրոյ, մինչ զի նա է
ամենակարողն է օգնական իւր ։ 'Ի կարծիս՝
որ ունի զհաստատուն յոյս առ եալն այն
զերագոյն և ձեռամբ, զգուշացի է 'ի զօրութե
իւրում. ինքնամամբ չիմ. ամութեան իւրում.
և երջանիկ յերջանկութեան իւրում ։ Եւ որպէս
յօգուտ ինչ յերկրպագանցն իբր անարգին ունելոյ.

և կորուսանէ զանկարութիւն իւր յառատութն անհուն կատարելութեան բարձրելոյն ։ Առ ՚ի բաղցրաճաշակ և դիւրանց առնել զկեանս մեր՝ պատուիրեալ է մեզ բարձրելոյն յուսալ յինքն․ որ տրամանակ կարող է օգնել և նպաստամատոյց լինել մեզ․ ամենայն բարերարութիւն զայսպիսի հաստ պարտականութիւն համարեալ՝ անտարակոյս թշուառական եղանէաք, եթէ արգելեալ էր նա զայն մեզ ։

՚Ի մէջ բազմազան շարժառթից՝ որք պէտս ունին պատճառաբերել զայս պարտականութիւն մեր, փոյթ կալայց միայն զայնպիսեաց՝ որք հետևեինն ։

Նախկին և հզօրագոյնն է, զի խոստացեալ է բարձրեալն թէ ոչ լքցէ և թողցէ զայնոսիկ՝ որք յուսան ՚ի նա ։ Այլ տակայն՝ թարց նկատելոյ գերբնական բանին, որ ընկերշակէ այսմիկ պարտականութեան, նկատել արժան է՝ զի ունի նա զբնաւոր դիտաւորութիւն իմն առ իւր իսկ պարգև․ կամ այսպէս՝ զի այս համատուն յոյս և յուսադրութիւն ՚ի մեծագոյն հաստիչն ամենայնի իրաց, սատարէ կարի յոյժ առ ՚ի զերծանիլ ՚ի նեղութենէ իմիք․ և կամ տանիլ այնմիկ մարդկօրէն և արիաբարութեամբ ։ Նա՝ որ դիտէ թէ ունի պնդատաւորութիւն իւր ՚ի պատրաստի, և զօրծէ առաջի վերատեսչութեն բարեկամի իւրոյ, յանձնանկի նկրտի անդր քան զկարս իւր․ և առնէ զօրանալեալ՝ զօրս չէ հնար ուստեք զաղափարել, որ

ոչ է ներշնչեալ այսպիսի յուսադրութեամբ յաջողութեան :

Յուսադրութիւնն այն, որով յուսամք 'ի նպաստաւորութիւն ամենազօր եակին, բնաւորապէս տրամադրէ զհամբերութիւն, զմխիթարութիւն և զայլ ամենայն դիտաւորութիւնս մտաց. որք թեթեւացուցանեն զտառապանս զայնոսիկ, զորս չէ հնար մեզ 'ի բացամերժել և 'ի փարատել : Ունակութիւն այսր առաքինութեան ընծեռէ մտաց մարդկան զմեծ մխիթարութիւն 'ի ժամանակս չքաւորութեան և նեղութեան. բայց գեր քան զամենայն 'ի ժամ մահու : Յորժամ հոգին սաւառնեալ թռանի 'ի յետին վայրկեանս անջատութեան խուրոյ, յորժամ մտանէ յայլ իմն տեղի կեցութեան առ 'ի հաղորդակցութիւն ունել ընդ այնպիսի տեսարանաց և տարերայից և ընկերակցաց, որք զլխովին են նոր և անծանօթ, զինչ արդեօք օգնել կարէ նմա ընդ այնպիսի երկիւղալի ահաբեկութեան, ընդ այնպիսի հոգանակութեամբ մտայուզութեան, ընդ այնպիսի արհաւրօք անճարութեն, եթէ ոչ ցեսեղելն զամենայն զհոգս իւր 'ի Նա, որ ետ զառաջինն նմա զլինելութի. որ առաջնորդեաց զնա ընդ խիչեան մի գոյութեան. և որ յարաժամ ներկայ եղիցի առ 'ի առաջնորդել և մխիթարել զնա յուղեգնացութեն նորա 'ի յաւիտենականն անդր :

ԷԴԴԻՍԸՆ

## Ճանապարհորդութիւն աւուր միոյ · որ է նկարագրութիւն իմն մարդկային կենաց ։

Օբիդայ՝ որդի Աբենսինայ եթող զիջեւանն վաղաքաջ ընդ առաւօտն · և ուղղեաց զճանապարհորդութիւն իւր ընդ դաշտս Հնդկաստանայ ։ Զուարթ և հզօրեղ էր նա հանգստեամբ · զուարճացեալ էր յուսով · ներշնչեալ էր տենչողութ · զգնայր արագապէս՝ ի վերայ հովտաց · և տեսանէր զբազմապատիկ լերինս, որք սակաւ առ սակաւ՝ ի վեր ելանէին առաջի տեսանելեաց իւրոց ։ Մինչ երթայր զճանապարհ իւր, լսէր նորա զուարճանային առաւօտեան նուագերգութ հաւուն դրախտի · սիրտ նորա զովացեալ հովանայր վերջին շարժուածովք թմփանցանց սիզի · և սրսկեալ լինէր ցօղովք՝ ի ծառոց համեմոց ։ Երբեմն մտախորհ լինէր զբարտւոյ՝ արքային լերանց · և երբեմն զգայր զքաղցր անուշահոտութիւն վարդոյ՝ երէց դստերն գարնան · ամենայն զգացուածք սրտի նորա էին շատացեալ · և ամենայն հոգունակութիւն երևէր արտաքսեալ ՝ի մտաց նորա ։

Այսպէս շարունակէր նա երթալ, մինչ արեգակն մերձեցաւ ՝ի գիծ իւր միջօրէական · և առաւելեալ տապ և ջերմութիւն աւուր մեղկացուցին զզօրութիւն մարմնոյ նորա · յայնժամ հայեցաւ շուրջանակի առ ՝ի գտանել զառաւել հաճոյական ճանապարհ մի ։ Տեսանէր ընդ աջմէ իւրմէ զմայրի մի, որոյ ստուերաց շարժ-

մուտքն երկէին հրաւիրական անցաւորաց · մտեալ
նորա 'ի մայրի անդր՝ ետես զի հովուն և դա-
լարութիւն տեղւոյն էին ախորժելի և զուար-
թացուցիչ յոյժ ։ Ո՛չ էր մնացեալ թէ ուր
արդեօք շրջափայէր · ետես զանձուկ ճանապարհ
մի՝ զարդարեալ և գեղապանծեալ ծաղկամբք ·
որոյ ընթացքն երևէին լինիլ կից ընդ ընթացից
կուռ ճանապարհին · և հաճեցեալ էր 'ի միտս
իւր մեծապէս · քանզի կարծէր զի այնու երջա-
նիկ հետախուզութեամբ զայնպիսի հնարս էր
հայթհայթեալ՝ որով մարթ էր նմա միաւորել
բերկրանս ընդ գործոյ · և շահիլ զբերկրանս
գործունէութեան առանց կրելոյ զաշխատանս
նորա ։ Նման այսորիկ շարունակեաց նա տա-
կաւին զգնալ առանց դոյզն ինչ դադարման
եռանդաւորութեան սրտի իւրոյ · բայց միայն
հրապուրեալ լինէր երբեմն սա 'ի զկայ առնուլ
'ի դայլայլկէ թռչնոց · զորս ջերմութիւն արե-
ու փուռմբեալ էր 'ի ստուերի · և երբեմն զբօ-
նոյր քաղելով զծաղիկս , որք ծածկէին զեզերս
յիւրաքանչիւր կողմանէ · և կամ զպտուղս՝ որք
կախեալ էին զստեղանց ծառոց ։ Հուսկ յետոյ
գալարազարդ ճանապարհն սկսաւ զարտուղիլ յիւր
նախնական գնացից · և փոխադրիլ 'ի լերինս և
'ի մացառս՝ զոփացեալ աղբերբք և խոխոջեալ
հոսանօք ։ Աստանօր Օբիդայ սակաւ ինչ մի զկայ
եառ · և սկսաւ մտածել թէ արդեօք առաւել
բարեգոյն և ապահովագոյն եղիցի սա 'ի թո-
ղուլ զծանուցեալ և զհասարակ ճանապարհն .

այլ սակայն տեսանելով զի ջերմութիւն արե-գական այժմ էր՝ անհնարին սաստկութեամբ առաւելեալ, և դաշտավայրն էր փոշոտ և անհաւասար յոյժ, յառաջագրեաց առ ՚ի ելթալ ընդ ճանապարհն այն՝ որում հնար էր պատճառել զսակաւ առապարս և դարուփոսս ըստ երկարաձիգ տարածութեան երկրին. և ՚ի փախչանի յանդաւորիւ ՚ի հասարակ ճանապարհի: Հանդարտեցուցեալ նորա այսանակ զմտայուզական հոգունակութիւնս իւր՝ փոխարկեաց զընթացս ճանապարհին. թէպէտ և կասկածէր թէ ոչ էր հնարաւոր առ ՚ի գտանել զհարթագոյն վայրս: Այս խռովման մտաց նորա յօժարեցոյց զնա ցբուռն ածել զիւրաքանչիւր առարկայ, և տածել ՚ի խորս սրտի իւրոյ զամենայն տեսակս ըղձացուցանող. որոց մարթ է դիւրացուցանել և զուարճացուցանել զմիտս իւր: Ունէին գիր լինէր իւրաքանչիւր արձագանգի. եւ լսանէր յամենայն լերինս վաղն նորագոյն ինչ տեսարանի. վերադառնայր առ ՚ի տեսանել զիւրաքանչիւր հոսանս ջրոյ. և զբօսնոյր նշմարելով զընթացս միգմիկ գետոյ միոյ. որ ման առեալ պարոյածէր ՚ի մէջ ծառոց. և բազմապատոյտ շրջագայութիւն առոգանէր զերկիր մի լայնագիր և երկարաձիգ: Մինչ նա յայսոսիկ զբօսանս պատաղեալ կայր՝ անհոգութեամբ անցանէին ժամք նորա. զարտուղութիւք ճանապարհացն խռովեցուցեալ էին զյիշողականութիւն նորա. և ոչ կարէր իմանալ ընդ ո՞ր արդեօք երթալ ճանապարհ: Կանգնեալ ար-

ձանձրար՝ շռնչարել և աղմկել ՚ի միտս իւր ողջոյն. երկնչէր յառաջ երթալ, քանզի կասկածէր թէ փոյթ դէպ լիցի ինքեան մոլորիլ ՚ի ճանապարհէն. այլ սակայն իրազեկ էր զի ժամանակ թափառականն շրջելոյ անցեալ էր այժմ գլխովին։ Մինչ նա յայսպիսի խոշտանգանս տարակուսանաց վարակեալ մնայր, երկինք սկսան ծածկիլ ՚ի խիտախիտ ամպոց. և փոթորիկ իմն յանկարծահաս խառնեաց շուրջ զգլխով նորին։ Մտաւորանշանակն այն վտանգաւորութեան պարթուցեալ էր զմիտս նորա յողդողական և յաւաղելի մտածողութիւն յիմարամտութեան իւրոյ. տեսանէր վշտակրութեամբ թէ չէրդ երջանկութիւն կորուսանի և անյայտանայ, յորժամ գիտութիւն ՚ի խնդիր լինի և ախորժելի դառնայ. աշխ՚ր՞ր զկանացի անհամբերութիւն զայն, որ թօ խանձեաց զնա խանդաղատանօք առ ՚ի չհետ երթալ հովանւոյն այնորիկ ՚ի յանտառի անդր. և արհամարհէր զգուշացուցեալ առարկայ հեռախուզութեան այնորիկ, որ առաջնորդէր զնա յուղինչէ յոչինչ։ Այն ինչ այսանակ մտախոհ լինէր Օբիդայ, սկսաւ առաւել ևս նսեմանալ. և շանթ իմն կայծական ընդմիջեաց զմտածողութիւն նորա։ Զարդիս յառաջադըրեաց առնել զոր ինչ տակաւին կարողոյն իւր խոստինայր. կամեցաւ յետս դառնալ յերկիրն յայն՝ ընդ որ երանգեալ. և քանզի առ ՚ի գտանել չանցօ ինչ, որով հնար լինէր ինքեան առ ՚ի հանել յանտառէն ՚ի դաշտավայր մի հարթայատակ։ Ի զուռն

խոնարհեալ նորա՝ յանձն առար զանձն իւր հեղինակին բնութեան։ Յարեաւ յուսադրութեամբ և յանդորրութեամբ. և յետ նահանջիւր 'ի տեսարանաց աւերակութեան։ Գոչմունք անապատի բռնայլին զաղաղակս իւրեանց սարսռական. և յամենայն կողմանէ լսելի լինէին խառն ձայնք կատաղութեան և երկիւղի և սոսկալութե և կորստեան։ Ամենայն արհաւիրք մթութեան և առանձնականութեան շրջապատեալ էին զնախահայրն. գոռալով հնչէին յանտառս. և հոսանք ջրոց թափէին 'ի լերանց։ Օրիգայ այսպէս լեալ և վրշտագնեալ դեգերէր յանտառին անդ. ոչ գիտէր թէ ուր երթայր. և կամ արդեօք յամենայն վայրկենին մ՛ն լինէր փրկութեան թէ կորստեան։ [illegible] ապա ոչ աշխատանք ճանապարհին, այլ երկիւղ կորստեան սկսաւ յաղթահարել զնա. շունչ նորա նուաղեցաւ. և ծունկք նորա թուլացեալ դողանէին հարկանէին. մերձ էր անկանել 'ի վերայ երկրի և զրկել 'ի կենաց իւրոց, յորժամ ետես ընդդէմ եալս զլոյս ճրագի իրք։

Մերձեցեալ նորա առ ճրագն այն՝ և տեսեալ զխրճիթ ճգնաւորի ուրուք՝ խոնարհեալ դիմեաց առ դրունս նորա և բախեաց զնոսա։ Ծերունին եդ առաջի նորա չայնպիսի ուտելիս, զորս ժողովեալ էր 'ի պէտս իւր. որով կերակրեցաւ Օրիգայ ախորժանօք և երախտագիտութ։ Զկնի կերակրոյն ճգնաւորն ասաց ցՕրիգայ. տաս ինձ թէ որպիսի դէպուածով ածուր դու աստ։ Բազում ամք են՝ յորմէ հետէ բնակեմ յանապատի

սոփ · յորում մեզ է իմանալ զմարդ մի յառաջադոյն : Յայնժամ Օբինդոյ պատմեաց նմա հանգամանս ճանապարհորդութեան իւրոյ տեանց պատրուակաւն և ծածկութեան: Որպէս է, ասաց Ճշմարտութիւն, թող զի սխալանք և յիմարութի, վնաս և մոլութիւն աշուրս այսորիկ թափանցեալ մտցեն ի սիրտ քոյ ։ Ո՜ մանուկ իմ, որդեակ իմ, զի մայր դիւցին կեանքն է ճանապարհորդ աւուր միոյ: Յանձնեմք մեր յառաւօտու երիտասարդութեան՝ լի զուարթութեամբ և պատրաստ անձնկալութեամբ · յառաջ մատչիմք հոգւով և յուսով, զուարթութեամբ և աշխատասիրութեամբ · և ախորժելի մի ուղեորեմք յուղիղ ճանապարհ քարեպաշտութեան դէպ առ օթևանս հանգստութեան · ՚ի մէջ սուղ ինչ ժամանակի մեղկացուցանեմք զջերմեռանդութիւն մեր · և քանահնար լինիմք առ ՚ի կրճատել ինչ ՚ի դիտաւորութենէ մերմէ, և դառնալ զառ աւել դիւրին միջոցս ինն սխալանելոյ զնոյն փոխան : Յայնժամ թուլացուցանեմք զզօրութիւն մեր ; և յառաջադրեմք այլ ոչ ևս ահարեկ լինիլ յանցանաց ՚ի հեռուստ. և հաստատուն յուսով հաւատամք յարատևութեան դիտաւորութեան մերում. և համարձակիմք մերձիլ յայն ինչ, զոր ոչ երբէք դիտեմք կալնուլ : Ապաքէն մտանեմք յանդաստանս հեշտութեան և հանգստանամք յզբօսանս ապահովութեան : Առ սակաւ սիրոյն մերձենայ · և զգաստութիւն ներգէ տայ · ապա յամառիմք հեռանալ լինիլ թէ արդեօք հնար իցէ առնել, զայլ ինն յառաջ · դղրդութիւն, և ՚ի նէ մաքուր իցէ երբէք դար-

ծածուցանել զաչս մեր յայգիս հեշտութեան ։ Ապա յառաջմամբ կասկածանօք և յապաղմամբ · մտանեմք ՚ի նոսա · այլ՝ ահիւ և դողալով · և մինչդեռ յուսամք անցանել ընդ նոսա առանց կորուսանելոյ զճանապարհ առաքինութեան · զոր առ ժամանակ ունիմք յանդիման աչաց մերոց · և դիտեմք հանապազ վերադառնալ առ նա ։ Այն փորձութիւն յաջորդէ զփորձութ. և կատարումն միոյ դիտաւորութեան մերոյ պարտաւորէ զմեզ առ ՚ի առնել զպատրաստութիվանն միւսոյ · ՚ի ժամանակի միում կորուսանեմք զերջանկութիւն արդարութեան · և հանդարտեցուցանեմք զխարանմունս մեր մարմնասիրական բերկրութեամբք ։ Որ սակաւ սակաւ աւերեմք զ յիշատակ նախկին դիտաւորութեան մերոյ · և խորշիմք միայն ՚ի չափաւոր առարկայէ բռնաւոր տենչողութեան ։ Շփոթեմք զմիտս մեր ՚ի պէսպէս գործառնութիւնս · ընկլուզանեմք զմեզ ՚ի խորս փափկասիրութեան · և յածիմք ընդ լաբիւրինթոս անյարատեւութեան · մինչ աղջամուղջ խաւար ծուլութեան սկսանի պատել զմեզ շուրջանակի · և հիւանդութիւն և հոգւոյն տկարութիւն խափանեն զճանապարհ մեր ։ Յայնժամ նշմարեմք զկեանս մեր արհաւրօք , տրտմութեամբ և ապաշաւութեամբ · և ըղձամք բայց կարի յոյժ ընդ վայր՝ զի չիցէր մեր թողեալ զճանապարհս առաքինութեան ։ Երջանիկ են նոքա՝ որդեակ իմ · որք ՚ի գաղափարէ բուռնմն ուսանելոյն չ ուսահատիլ բնաւին ՚ի կեանս

իւրեանց · այլ զմտաւոր անձինն , զի մեծապէս և անցեալ են աւուրք կենաց իւրեանց , և զօրութի իւրեանց սպառեալ է գլխովին , այլ սակայն հնար է տակաւին բուռն ածել զայնպիսի հնարից ; որոց ելքն իւրեանց շահեկան և օգտաւէտ · եթէ ոք վերանորոգեսցէ զսարս իւր , և սրբջասցի ՚ի մոլորանաց իւրոց , ոչ երբէք եղիցի անյոյս · և ոչ երբէք հարազատ աշխատասիրութիւնք նորա եղիցին ապարդիւն · եթէ մոլորեալն յուղղութիւն դարձցի , և հայցեսցէ զզօրութիւն և զխրախուսութիւն Բարձրելոյն , վտանգաւորութիւնք և ձախորդութիւնք համայն անցցեն ընդ առաջի նորա : Դարձիր այժմ, որդեակ իմ , ՚ի հանգիստ քո · յանձն արա զքեզ ՚ի խնամս Ամենակարողին · և յորժամ առաւօտն վերստին հրաւիրէ զքեզ յաշխատասիրել , սկսիր ՚ի նորոյ զճանապարհորդութիւն և զկեանս քո :]

ԶԱՆՍԱՐՆ

## Ագահութիւն և Շռայլութիւն :

Իբրև երբեմն յաշխարհի առա երկու զօրաւոր թագաւորք · որք յարուցեալ էին ընդդէմ միմեանց զպատերազմ անհնարին և մշտնջենական · անուն առաջնոյն էր Շռայլութիւն · և երկրորդին՝ Ագահութիւն : Շռայլութեան

ունէր ընդ իշխանութեամբ իւրով չորս զօ-
րապետս · որք մեծագոյն ծառայութիւնս
առնէին նմա · որոց անուանքն էն՝ Հեշ-
տութիւն , Խրախճանութիւն , Փառամոլութիւն և
Խենեշութիւն : Ագահութիւն ևս նոյն գու-
նակ կարի հզօր էր ՚ի զօրագլուխս իւր ՚ Հարա-
զատաբար ծառայութիւնս գտեալ ՚ի ՚ի Բողջէ
՚ի Գործունէութէ , ՚ի Հողունակութենէ և
՚ի Հակողութենէ : Ունէր նա նոյն գունակ զա-
ռանձնաւոր խրատատու մի ; որ կայր մշտապէս
յարմնկան նորա · և խօսէր ընդ ինչ ինչ յականջս
նորա · անուն առանձնաւոր խրատատուին
այսորիկ էր Զբաւորութիւն : Մինչ Ագահու-
թիւն առաջնորդէր զնա ընդ խորհրդոց Զբա-
ւորութեան , սխալեան նորա գլխովին առաջնոր-
դեալ լինէր յուսից և ՚ի խրատատուութեանց
Արատութեան · որ էր առաջին խրատատու և
գլխաւոր պաշտօնեայ տէրութեան նորա · և ձևա-
րէր չպէտպէս հայթհայթանս վասն նորա · և ոչ
երբէք հեռանայր յաչաց և ՚ի ներկայութենէ
նորա : Մինչդեռ երկոքին քաջամարտիկ ախոյ-
եանք այսորիկ այսպէս ճակատէին ընդ միմեանց
վասն թագաւորութեան , յաղթանակութիւնք
նոցա եղեն յոյժ բազմօրէն : Ռայլութիւն
կալաւ զօրս միոյ · և Ագահութիւն՝ զմիւսոյ :
Հայր զօրագլխին միոյ մշտապէս կացուցա-
նէր զանձն իւր ընդ դրօշակաւ Ագահութեան . և
որդի նորա՝ Ռայլութեան : Այրն և կինն
բազմիցս քարոզէին զինքեանց լինել ընդ երկո-

քումք տարբեր սահմանակալութեամբ. այլոցիկ բանաւորաց եւս. և երկրաբանչիւրն ՚ի նոցանէ յաւուրս երիտասարդութեան իւրում ենթակայացուցանէր զանձն իւր բանաւորի միում, և ՚ի ժամանակի ծերութեան իւրում կացուցանէր զինքն ընդ նշանաւ միւսոյն: Արդ ով և զգօնամիտ և խոհական մարդիկ նենգաղեցան յաշխարհի աստ անաարժէր կենդաղակարուն. բայց սակաւ՝ չի ոչ են բազումք Թիւք նոցա: Հուսկ յետոյ յորժամ երկոքին բանաւորքս այսոքիկ խնչեալ էին ՚ի յարուցանելոյ չանկատամարտ ՚ի վերայ միմեանց, դաշնակից եղեն առ ՚ի աանել յաւուր միում զզրուցատրութիւն ինչ, յորում ոչ ոք ՚ի խրատատուաց նոցա եղիցի առաջիկայ: Ոսկի Թէ Հաւալութիւն զենի յուցանելոյ զանխախնձան կայուեն պատերազմին, սկսաւ գրուցատրել ընդ Թշնամւոյ իւրում այնպիսի պարզութեամբ սրտի, որ բնական է նոքեան. և տուեալ Թէ անփոփոխ էր և բարեկամութիւն ՚ի ազատաւորել ունէր ՚ի մէջ իւրեանց, եԹէ ոչ որդեւլեղանէին խորհրդատրութիւնք Զգաւորութեան. այսինքն՝ Վնասակար խրատատուաճին այնորիկ, որ չարխոբարբառէր յականջս նորա. և ընդ զնա անուանի երկիւղիւ, կարկամանք և նախապաշարմամբք: Այլ միւս բանի պատասխանի տայր Ազահութիւն ասելով՝ Թէ անանէր զի Առատութիւն՝ առաջին պաշտօնեայ խորհեննին իւրոյ էր ասացել Վնասակար խրատատու քան զԶգաւորութիւն. քանզի հանապազ առաջի ունէր նախահաշուութիւնս, տարամերժէր

դամենայն զհարկաւոր հաւանականութիւնս ընդդէմ կարծեացն · եւ տուեալ խափանէր եւ յաղթյաղթական առնէր զհիմունս գայթակղութեան, յորոց վերայ կառուցեալ էր Թագաւորութիւն Ագահութեան : Յետ այսր ամենայնի սակս հաշտութեան առնելոյ ընդ միմեանս՝ համաձայնեցան նոքա ՚ի վերայ դաշնակցութեան իրիք · այսինքն՝ երկաքանչիւր ոք ՚ի նոցանէ արձակեսցէ նոյն հետայն զառանձնաւոր խորհրդատու իւր : Յորժամ վէճք նոցա ժամանեցին յայս չափ խաղաղութեան, այլ ամենայն անհամաձայնութիւնք նոցա փութով վերջացեալ տեղի ետուն ՚ի միջոյ· եւ ոչ այսչափ միայն՝ այլ եւ յառաջադրեցին այնուհետեւ վարել ընդ միմեանս իբրեւ զբարեկամս եւ զհամախոհս. եւ բաժանել ՚ի միջի իւրեանց զկապուտ կողոպուտ յաղթանակութեանց իւրեանց զուգակշիռ համահաւասարութեամբ : Վասն այսր պատճառի տեսանեմք զի Շռայլութիւն եւ Ագահութիւն կալնուն զնոյն սիրտ. եւ բաժանեն զնոյն անձն ՚ի միջի իւրեանց։ Յոր եւ գոյս միայն արժան է յաւելուլ. զի յորժամ արձակեալ տարամերժեցան երկոքին խորհրդատուքն այնոքիկ՝ Ագահութիւն ստանէր Շռայլութեան ՚ի տեղի Առատութեան. եւ Շռայլութիւնն օգնէր Ագահութեան փոխանակ Չքաւորութեան :

ՍՊԷԿՏԷՏԸՐ

## Դիւրուն և Նեղուն:

Էին երբեմն յաշխարհի երկու դերդաստանք · որք ՚ի յարարչութենէ աշխարհի այնպէս հակառակ էին միմեանց, որպէս լոյս ընդ խաւարին: Մին ՚ի նոցանէ բնակէր յերկինս · և միւսն ՚ի դժոխս: Մատաղագունից յաջորդ առաջին դերդաստանին էր Դիւրուն · որ էր դուստր Երջանկութեան · որ էր ծնունդ Առաքինութեան · որ էր սերունդ Աստուծոյ: Նախնիքն՝ որպէս ՚ի վերայ ասացի, ունէին զբնակութիւն իւրեանց յերկինս: Մատաղագունիցն հակառակ դերդաստանին էր Նեղութիւն · որ էր որդի Թշնամութեան · որ էր ծնունդ Մոլութեան · որ էր սերունդ Դժնդակ կրից: Բնակութիւն անձանց դերդաստանիս այսորիկ էր ՚ի դժոխս: Միջակային կացութիւն բնութեան ընդ մէջ երկուց հակառակ եզրակացութեանցս այսոցիկ էր երկիր · յոր բնակէին ստեղծուածք միջակ տեսակաց · որք ոչ էին այնպէս առաքինի, որպէս զմին · և ոչ այնպէս մոլի, որպէս զմիւսն · այլ հաղորդակից լինէին բարի և չար որակութեանց երկոցուն դերդաստանացս այսոցիկ: Նկատեալ Արամազդայ զի այս տեսակ ստեղծուածոյ՝ հասարակապէս կոչեալ մարդ՝ կարի առաքինի էր առ ՚ի լինել թշուառացեալ, և կարի մոլի՝ առ ՚ի լինել երանեալ, և առ ՚ի տանել զորոշումն ինչ ՚ի մէջ բարւոյ և չարի, պատուէր ետ երկոցուն մատաղագունից նախասացեալ դերդաստանաց, այսինքն՝ Դիւրուն,

որ էր դուստր Երջանկութեան . և Չարութն , որ էր որդի Թշուառութեան, առ ՚ի հանդիպիլ միմեանց ՚ի վերայ այսր մասին տիեզերաց . որ անկանի ընդ կէս ճանապարհին նոցա · խոստանալով և ՚ի նմին ժամու առ ՚ի կայացանել ընդ նոսա տէր նորուն , եթէ համաձայն երկոցին ՚ի բաժանելն զայն ՚ի միջի իւրեանց · այնպէս զի կարօղ եղիցին ՚ի բաժանել ՚ի մէջ իւրեանց զսեռա-մարդկան :

Մինչչև եկին Բարութիւն և Չարութին հանդիպել միմեանց ՚ի նորոգ բնակութեան իւրեանց , դաշնադիր եղեն ընդ միմեանս յայս վախճան · զի Բարութիւն ձեռամբ առիցէ զառաքինիս , և Չարութիւն զմոլիս այնր տեսակի , զոր յանձնեալ էր նոցա Արամազդայ : Սակայն ՚ի հանդիպել նոցա իւրաքանչիւր անհատի , որ պատկանէր երկաքանչիւրում ՚ի նոցանէ , տեսանէին զի երկաքանչիւրն ևս ունէր իրաւունս ՚ի վերայ նորա · քանզի հակառակ այնմ զոր ակնեալ էին նոքա ՚ի նախկին տեղւոջ բնակութեան իւրեանց , ոչ գոյր անդանօր անհատ մի այնպէս մոլի, որ ոչ ունէր զբարութիւն ինչ յինքեան · և ոչ այնպէս առաքինի, որ ոչ ունէր զմոլութին ինչ անփական ինքեան : Ճշմարտութն սորա այս է , զի քննեալ նոցա ընդհանրապէս՝ յառաջադրեցին զի Բարութիւն գնիցէ զպահանջմունս իւր հարիւր անգամ ՚ի վերայ առաւել մոլեգոյն մարդոյ · և յառաւել առաքինի մարդուոյ Չարութն զանցիցէ զաեղն գէթ հարիւր յիսուն անգամ :

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԵՏ

Տեսանէին զի յայտնապէս ծածկել ունէր պատերազմանն երջանկութի, եթէ ոչինչ կերպիւ չարանեիւ զխաղաղութիւն ։ Այս փոփոխման ժամանակի մի յառաջագրեցաւ ՚ի միջնորդս ․ և ՚ի վերջոյ կատարեցաւ․ այսօրինակ աղագաւ․ տեսանեմք մեք ըզ Դիւրութիւն և զՆեղութիւն լինել այսպիսի հաստատուն ընծայիցք․ քանզի կամ այց եղանին ողջք ու մեք ՚ի միասին, և կամ ոչ երբէք հեռանան ՚ի միմեանց․ եթէ Նեղութի մտանէ ի սիրտ ուրուք, փութանակի հետևի նմա Դիւրութի․ և եթէ Դիւրութիւնն մտանիցէ, կարի հաւաստի լեր զի Նեղութիւնն ոչ է հեռի ի նմանէ ։ Այլ սակայն՝ թէ և ամուսնութիւնս այս կարի հաճելի էր երկոցունց նոցա, բայց ոչ երևէր ի լրումն ածել զխնամատարութիւն Երամայեայ, որ սուրբեաց նոցա ՚ի մէջ մարդկան ։ Վասն այսորիկ առ ՚ի քեցել յինքեանց զայս գործ անպատեհութեան, դաշնակից եղեն ընդ միմեանց հաւանութեամբ երկաքանչիւր զերդասանի, զի ճեպեալ կալեալ էին սոա զկառավարութի մարդոյ առանց ինչ ու բերումն, սակայն եթէ սակական անհատաքս միաբանիցի, և լինիցի ՚ի նմա յանցանք ինչ և մեղք, պարտ է նմա առաջիկ ՚ի դժոխային երկիրս արձակագրով միով ՚ի Նեղութենէ, առ ՚ի բնակել անդանօր ընդ Թըշուառութեան, ընդ Մոլութե և ընդ Դժընդակ կրից ։ Նման ընդ հակառակն՝ եթէ ունիցի յինքեան զգործ ինչ բարութեան և առաքինութե, պարտ է նմա առաքել յերկինս արձակագրով մի-

ով 'ի Պիւրութենէ · որ 'ի բնակիլսնդ ընդ Երջանկութեան, ընդ Առաքինութեան և ընդ Աստուածոց :

ՍՊԵԿՏԵՏԸՐ

## Գթութիւն :

Հերջանիկ ժամանակի ոսկեղէն դարուն, յորժամ երկնային բնակիչք համայն էջանէին յերկիր, և ընտանաբար խօսակցէին ընդ մահկացուաց, 'ի մէջ առաւել միխիթարչաց երկնաւոր զօրուեց էին երկուորեակ սերունդք Արամազդայ՝ Սէր և Գթութիւն: Ուր ուրեք երթային նոքա, ծաղկունք բողբոջէին 'ի ներքոյ ոտից նոցա, գարնան առաւել պայծառագոյն փայլմամբ ծածանչէր, և բնութիւն համայն գեղազարդեալ երևէր ներկայութեամբ նոցին: Բայց սոքա ընկերք՝ անբաժանելի 'ի միմեանց. և անձնդրական յարգումն նոցա առաւելոյր յԱրամազդայ, որ ընծայեալ էր թէ մշտնջենական միանգութիւն մի կատարեսցի 'ի մէջ նոցա, յորժամ ժամանեսցեն յորոշումն հասակի: Այլ սակայն յայնմ ժամանակի որդիք մարդոյ մոլորեցան և շեղեցան 'ի սնոտին ընթացից արդարութեան իւրեանց. անմոլութիւն և աղախանութիւն եղծին զերկիր քայլիւք հակայից. և Աստրէա հանդերձ հեռանակօք իւրովք լքեր եթող զապականեալ գօթեան նոցա: Սէր միայն միայնակ. զոր յափշտակեալ Յունոյ՝ էած յանտառս Արկադիոյ. ուրանօր սնուցաւ 'ի մէջ խաշնարածաց : Սակայն

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆԳԷՏ

Սրամուղդ վիճակեցոյց նմա զտարբերութիւն ընկեր·
և հրամայեաց նմա ամուսնանալ ընդ Տրամուն՝
ընդ դստեր Սաեայ: Սէր կատարեաց զպատուէր
Սրամուղդայ դժկամակութեամբ · քանզի կերպա-
րանք նորա էին բիրտ և անհաճոյ, աչքն էին խոր-
ացեալ· ճակատն՝ կնճռանեալ· և զագաթակողմունքն
համայն ծածկեալ էին փնջովք ստուար բեհեզից
և ոչնդրի: Յայսմ միակցութենէ շառաւիղեաց
օրիորդ մի. որ ունէր մերձ ընդ մերձ զնմանակցու-
թիւն ծնողաց իւրոց · այլ սակայն աղջամղջին և
պճպալի կերպարանք մօր իւրոյ այնքան խառնեալ
և միաւորեալ էին ընդ քաղցրահայեաց դիմս հօր
իւրոյ · մինչ զի կերպարան նորա թէ և էր տրտ-
մալի՝ կարի յոյժ հաճոյացուցիչ էր տեսողաց:
Օրիորդք և հովիւք մերձակայ գաւառավայրացն
համախմբեցան և անուանեցին զնա Գթութի:
Թռչուն մի երևիւր բնականալ ՚ի խրճթի սնդ.
յորում ծնեալ էր նա · և յաւուրս մանկութեան
հասակի նորա աղաւնի մի վարեալ ՚ի յազգէ
միոյ՝ ապաւինեցաւ ՚ի յանջս նորա: Օրիորդս
այս ունէր զախորագին լծն սեսիլ · բայց այնպէս
մեղմ և քաղցրագին էր դէմք նորա, մինչ զ' կա-
րի յոյժ հաճելի հանդիսանայր յաչս հայեցողաց:
Ձայն նորա էր ցածագին և փհաւեալ· այլ՝ ան-
չափաբար քաղցր և ախորժելի. և սիրէր հանգ-
չիլ առ ժամս ինչ յեզերս ամայի և ուրուէս կան
հեղեղատի միոյ առ ՚ի նուագել զքնար իւր:
Ուսոյց նա մարդոց զարտասուել · քանզի բզ-
գայր յարտասուս զօտար իւն բերկրութիւն ·
և յորժամ գիւղական օրիորդքն ժողովէին յերե-

կոյսն զտառապեալս իւրեանց, բազում անգամ մատնէր նա ՚ի մէջ նոցա . և գրաւէր զսիրտս նոյն պատմութեամբք իւրովք, որք լցեալ էին ողորմելեաց ուղղիչ զգացուածովք ախորժութեան : Այր-կեալ էին շուրջ զերկնային խորհուրդ գիտնոց մի ծաղ-կանց հօր իւրոյ . զորով փոխուխեալ էին ազա-տոյ քեհեզք մօր իւրոյ :

Յաւուր միում մինչ բազմեալ էր նա առ ձորովք Հովիտանեայ, տեսանէ զբարս նորա դիպուածով իմն թափեցան ՚ի յարքունական անդր . և մինչ ցայսօր ամբիւր Սուզայն աղաղեալ է զպտղաբերն ճաշակ հեղուկ այնորիկ :

Գեղեցկութիւն դստերցն Արամազդայ ե-թող զհետ չնաշխին մօր իւրոյ յաշխարհի՝ հեշտով զառաւօտն քնքշութեան ՚ի վերայ վիզացն, զոր գորովեալ էր . և զարդարանելով սիրտս, զորս բեկեալ էր : Հրեշտակ նա մի ի բուռն լոյծ հեր-ովք, և բազմախոհն յանկէր . զգեստքն հեր-ձակեալ են ի փող, և ոտքն արհանահեղ եղեալ ՚ի բոլորակ ձանձրոյթն : Ողորմելի այս է մահ-ացու, քանզի այսպէս է և մայր նորա . և յորժամ կատարեալ իւրէ նորա դաշնաւորեալ զընթացս իւր ՚ի վերայ երեւաց երկրի, երկնագնացիւրքն վախճանեցին ՚ի միասին . և Տէր վերստին միաւորեաց ընդ Ողորմութեան . որ է ան-մահ և յաւէրժագոյն ամուսնացեալ հարսն

նորին :

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

### Ընտրութիւն Հերակլեայ:

Յորժամ Հերակլէս էր յայնմ մասին երիտասարդութեան իւրում, յորում բնական էր նմա զմտաւ ածել, թէ զինչ զիսի ընթացից կենաց պիտոյ էր նմա հետ երթալ, յաւուր միում առանձնացաւ յանապատ մի. ուրանօր լռութիւն և միայնակութիւն տեղւոյն մեծապէս նպաստամատոյց եղեն մտածողութեանց նորին: Մինչ նա մտախոհ լինէր զայժմեան կացութենէ իւրմէ, և տնկեալ մնայր 'ի վարանս առ ևս եղանակի կենցաղավարութեան իւրոյ, զոր պիտոյ էր ընտրել, ետես զերկուսին Օրիորդս որք ունէին կերպարանս մեծագոյնս քան զհասարակականսն, և մերձենային առ նա: Մին 'ի նոցանէ ունէր զազնուաշուք հայեցուածս և զախորժելի բարւոք գեղեցկութիւն նորա էր բնական և անեղծ. անձն նորա էր մաքուր և անարատ. աչք նորա յառեալ էին յերկիր հաճելի իմն պարկեշտութեամբ. շարժուածք և բարք նորա լի էին համեստութեամբ. և պատմուճան նորա էր սպիտակ իբրև զձիւն: Միւսն ունէր 'ի դէմս իւր զանհնարին առոյգութիւն և գեղեցկութիւն. զոր պճնեալ էր բազմապատիկ արուեստակեալ սպիտակագոյն և կարմրերանգ գունովք. և ջանայր երևիլ յաչս հայեցողաց առաւել գեղեցիկ և չքնաղագոյն քան զբնականն, 'ի ձեռն արուեստական յօրինուածոյ դիմաց իւրոց, և անհեթեթ շարժուածո և բարուց իւրոց: Զարմանալի իմն եղանակա յուսայր և վստահանայր 'ի գեղեցկութիւն կեր

պարանոց իւրոյ, և 'ի պէսպէս գոյնս հանդեր-
ձից իւրոց. զորս կարի փայլուն համարէր առ
'ի ձգել զզգեստ իւր 'ի հրապուրանս:
Երկանէր նա զաչս իւր 'ի վերայ անձին իւրոյ,
և ապա շրջեցուցանէր զնոսա 'ի վերայ առաջի-
կայ եղելոց, առ 'ի տեսանել թէ ոլխարդ հաճե-
ին նոքա ընդ գեղեցկութիւն դիմաց նորա. և
բազմիցս հայէր հաճութեամբ յուրուականն
յայն, զոր առնէր իւր ձևացուցանէր: Յորժամ
կարի յոյժ մերձ եղև առ Հերակլէս՝ մատեա-
յառաջ քան զմիւս տիկինն. որ յառաջ գայր կանո-
նաւոր և անխլրդով ընթացիւք. և փնցեալ առ
նա՝ խօսիլ սկսաւ հետագայ բանիւք:
Սիրելի իմ Հերակլէս, տեսց, տեսանեմ զի
միտք քո յանհնարին վարանս տրտմութեանց հա-
մակեալ մնան զճանապարհէն կենաց, զոր պարտ
է քեզ ընտրել. լեր բարեկամ իմ, և եկ զկնի իմ.
առաջնորդեցից զքեզ յթևանս հեշտութեանց,
և 'ի բաց կացուցից 'ի քէն ի տառապանաց նեղու-
թեան, և տարագրեցից 'ի քէն զամենայն զազդումն
և զանյանդորրութիւն գործառնութեանց:
Գործք պատերազմի և խաղաղութեան ոչ կա-
րասցեն վրդովեցուցանել զժամս հանգստեան քո:
Զբաղմունք քո համայն դիւրացուսցեն զկեանս
քո. և ամենայն զգայարանք սրտի քո քաղցրա-
ցին 'ի ձեռն հրճուանաց և բերկրութեանց:
Սեղանք մեծածախք և գեղեցկայարդարք՝ բու-
րաստանք ծաղկազարդք և հոտաւէտք՝ շոգիք անու-
շունք և քաղցրացուցիչք՝ դայլայլիք քաղցրանուագք
և հեշտալուրք՝ ժողովք գեղեցկատիպ և չքնաղա-

տեսիլ օրիորդաց 'ի պատրաստի էին ողջունել և ընդունիլ զքեզ պատուասիրութեամբ ։ Ե՛կ ընդիս յայս երկիր հեշտութեանց , յայս աշխարհ բերկրութեանց · և հրաժարեա՛ յաւիտեան 'ի հոգունակութենէ , 'ի նեղութենէ և 'ի գործառնութենէ ։

Հերակլէս ունկն մատուցեալ խօսակցութեան տիկնոջն այնորիկ՝ կամեցաւ գիտել զանուն նորա · առ որ պատասխանի տուեալ տիկնոջն՝ ասէ , թէ բարեկամք իմ և նոքա՝ որք բազմածանօթ են ընդ իս՝ կոչեն զիս Երջանկութիւն · այլ ատեայքն՝ թշնամիք իմ և նոքա՝ որոց դիտումն է առ 'ի վատաբանել զպատիւ համբաւոյ իմոյ՝ տուեալ են ինձ զանուն հեշտութեան ։

Յայսմ ժամու միւս տիկինն յառաջ մատեաւ . և կարի տարբեր իմն եղանակաւ խօսիլ սկսաւ ընդ պատանի դիւցազին ։

Հերակլէս, ասաց , ծանօթ եմ քեզ զանձն իմ բոլորովին . քանզի գիտեմ թէ յաջորդեալ ես յԱստուածոց · և բարեսիրութիւն և առաքինագործութիւնք քո յայսմ ժամանակի հասակի քում փայլեն զքէն , իբրև սերունդ դիւցազանց ։ Այսմիկ մարթ է ինձ ակն ունել զի ստանալոց ես վասն անձին իմոյ և քո զհամբաւ գերահռչակ և զանմահական ։ Այլ սակայն մինչ չև է իմ հրաւիրեալ զքեզ յընկերակցութիւն և 'ի բարեկամութիւն իմ , պարտ է ինձ լինել քեզ անկեղծ և հաւատարիմ բարեկամ , և զգացուցանել քեզ հարազատապէս և անկեղծաբար , զի չիք ինչ տիրապէս արժանաւոր և յարգի , զոր հնար իցէ գնել առանց նեղու-

թեանց և աշխատասիրութեանց։ Աստուածք ե-
ղեալ են գէրն ՚ի վերայ ամենայն ճշմարիտ և
ազնուական ուրախութեան։
Եթէ կամիցիս լինիլ ըստ շնորհօքն Աստուծոյ,
պարտիս վարակիլ ի վշտակրութիւնս երկնային
պաշտամանց. եթէ կամիցիս ունիլ զբարեկամութի
բարեաց, պարտիս ջանալ առ ՚ի շնորհապարտ
առնել զնոսա. եթէ կամիցիս մեծարիլ և սիրիլ
յերկրէ քումմէ, պարտիս հզօրականն զգուշա-
ւորութբ սպասահարկութի առնել նմա։ Հուսկ
ամենայնի եթէ կամիցիս յամենայն ժամ երևելի
հանդիսանալ ՚ի պատերազմի և ՚ի խաղաղութեան,
պարտիս ուշի ուշով ջանալ առ ՚ի սեփականել
զպէսպէս հրահանգութիւնս ու ուսմնականութեց
և մակացութեանց, որոց հնար է հանդիսացուցա-
նել զոք յաշխարհի այնպէս։ Այսք են սոսկական
կանոնք և գուշինք, յորոց վերայ անդրդուելի կա-
ռուցեալ զետեղեալ զհիմն երջանկութեան։
Զաստուածուհին հեշտութեան յայսմ վայրի
ընդ միջեաց զխոստակցութիւն նորա. և ասաց՝ տե-
սանես դու, Հերակլէս, զի խոստովանի նա թէ
ճանապարհ ուրախութեանց նորա է ընդ երկար
և դժուարագնաց. մինչ զի այն՝ զոր ես առաջի
առնեմ քեզ՝ է կարճ և դիւրընթաց։ Աւաղ,
ասաց միւս տիկինն հայեցուածով իմն բորբո-
քեալ խառնապգաց կրիւք ծաղու և գթութեան,
զինչ են ուրախութիւնքն այնոքիկ, զորս առաջի
առնես Հերակլեայ։ Ուտել՝ մինչչև ես քաղցեալ,
ըմպել՝ մինչչև ես ծարաւեալ. ննջել՝ մինչչև ես
վաստակեալ. ՚ի լնուլ զախորժակս՝ մինչչև է նոցա

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Ժարոյնըն․ և ՚ի յարուցանել զայնպիսի ախորժակս, զորս բնութեան ոչ է հաստատեալ ամենևին ։ Ո՛չ էլոճնի, քո բնաւին քաղցրաձայն դայլայլիկն զայն, որ է փառաբանութիւն միոյ ուրուք ․ և ոչ ես տեսեալ մինչ ցորդ զամենագեղեցիկն զայն առար-կայ , որ է իմկապէս գործ միոյ ուրուք ձեռին ։ Ուխտաւորք քո անցուցանեն զաւի երկրպագ-ութեան իւրեանց ՚ի ցնորս սխալեալ ուրախութն, մինչ անգիտաբար շտեմարանեն իւրեանց զցաւս տանջանաց , և զխայթոցս սրբջան վան ապա-գայ ծերութն ։

Իսկ քանզի զինէն խօսեցայց, բարեկամ եմ ես Աստուածոց և բարի մարդկան , հաճելի ընկեր արուեստաւորի, հոգածու մշտօնատար հարց գեր-դաստանաց , բարերար և պաշտպանիչ ծառայից , ընկերակից յամենայն ճշմարիտ և անտանձեռնա-կան բարեկամութիւնս ։ Սեղանք ուխտաւորաց իմոց ոչ են մեծածախ, այլ մշտապէս քաղցրաճա-շակ․ քանզի նոքա ոչ ուտեն և ըմպեն ՚ի նոսա , մինչև իցեն հրաւիրեալ ՚ի քաղցէ և ՚ի ծարա-ւէ ։ Նինջք նոցա են զգաստութեամբ , և արթ-նութիւնք նոցա՝ զուարթունք ։ Պատանիք իմ զուարճանան ՚ի տեսանել զինքեանս գովաբանեալ յայնցունց, որք անցեալ են զաւուրբք․ և նոքա՝ որք անցեալ են զաւուրբք՝ հրճուին ՚ի տեսանել զինքեանս պատուասիրեալ յայնցունց , որք են պատանի ։ Երջանապէս՝ հեռանայ ոք իմ նպաստամա-տոյց լինին Աստուածոց , սիրեալ ՚ի ծանօթից իւրեանց , մեծարեալ յերկրէ իւրեանց , և զկնի վախճանի աշխատանաց՝ իւրեանց յարգեալ մեծա-

րին՝ի անընդոց իւրեանց ։
Յայտ է մեզ ՚ի պատմութէ վարուց հռչակաւոր դիւցազինս այսորիկ, թէ միում յերկուց տիկնացս այսոցիկ ետ նա զսիրտ իւր · և թուի ինձ՝ զի ամենայն՝ որ ընթեռնու զայս՝ տացէ նմա արդարութիւն առ ՚ի հաւանիլ ընտրութիւն նորա ։

## ՏԱՏԼԷՐ

### Տաճար առաքինական սիրոյ ։

Աջակողման շինուածն նուիրեալ էր առաքինական սիրոյ · յոր ոչ ոք կարէր մտանել զմուտ , բայց միայն որք ընկալնուին զմատանի մի կամ զայլ իմն նշան յումմէ , որ կարգեալ էր իբրև զպահապան ՚ի դրան նորին ։ Արկեալ էր նա զգլխով իւրով զփունջս վարդից և ծաղկանց , և զուսովք իւրովք զպատմուճան մի իբրև զարքայի՝ սպիտակ և անբիծ ոզկոյն · այլ սակայն ընդջապանակ նորա դեղագործեալ էր պատկերօք երկոցունց ոսկիակազմ ադամանդեայ , որք պնդեալ էին զայն կրտցոք իւրեանց՝ յակնթոք գործեցեալ ։ Անուն նորա յորջորջիւր Հիմէն · որ նստեալ էր ՚ի մուտ տաճարին ՚ի կանաչակէտ ՚ի ծառազարդ և ՚ի զուարճացուցիչ դրախտի միում . կանանչք և ծաղկունք դրախտիս այսորիկ շրջապատեալ էին ՚ի ծառապատատ թփոց , յասամանաց և

յանթառամ տնկոց, որք էին գեղեցիկ դրածոյք և նշանք անմահութեան և զարդք դրախտին: Իսկ քանզի միայնակ էի ես և անուղեկից՝ ոչ եթող ինձ մտանել 'ի տաճարն. և այսորիկ աղագաւ՝ անծանօթ եմ միանգամայն ամենայն խորհրդոցն՝ որք կատարէին 'ի նմա: Սակայն հեռաքրքրութեամբ ջանացայ իմանալ թէ զինչ առնէին բազմախուռն խմբակքն այնոքիկ, որք մտանէին 'ի նա: Տեսանէի զի յետկոյս շինուածոյն այնորիկ էին դրունք երկու, ընդ որս ամբոխն ողջոյն արտաքս ելանէին: 'Ի միում 'ի դրանցս այսոցիկ էին երկու կանայք գեղեցկատիպարք յոյժ, թէ և դուն ինչ տարբեր էին 'ի կերպարանութիւնս դիմաց իւրեանց. անօսր միոյն էր կերպն շրջահայեաց և յանդորրական. և միւսն ունէր 'ի հայեցուածս իւր զտեսակ ինչ ժպտման և անասելի անուշութեան. անուն առաջնոյն էր Խոհեմութիւն. և երկրորդին՝ Զուարթութիւն. Ամենայն՝ որք 'ի դուրս գային յայսմ դրանէ, և արկանէին զինքեանս ընդ հովանաւորութեամբ երկուց քերցս այսոցիկ, նոյն ժամայն ածեալ լինէին 'ի ծոցանէ 'ի պարտէզս, 'ի դրախտս և 'ի մարգագետինս. որք լի էին ընտրելոյ անտառանօք և ամենայն ընչիւք, որոց մարթ էր առնել զնոսա վայելս երջանկութեան. Երկրորդ դուռն տաճարիս այսորիկ տայր արտաքս ելանել ամենայն լծակցաց, որք ամուսնացեալ էին ուրեք 'ի յերջանկութենէ. և 'ի դուրս գային կոշկանդել 'ի միասին 'ի շղթայս, զորս երախայրիքն ջանայր խորտակել, բայց 'ի զերծ ելանել ինչ ջանայինն:

Բազումք ՝ի նոցանէ ոչ էին ծանօթացեալ մի-մեանց յառաջ քան զհանդիպել նոցա ի բերդ ՝ի կուռ պորտային․ և յոլովք ևս քաջածանօթ լեալ էին միմեանց յանուանէ։ Պահապանք դրանս այսորիկ էին քոյրք երեք, որք յարակցէին ընդ ծերունացելոց այսոցիկ, և պատճառ էին զբա-զումս ՝ի ծերութեանց նոցին․ մատաղադոյնն յերից քերցս այսոցիկ ճանաչիւր անուամբ Անյարա-տեւութեան, որ արդարութեամբ օրիորդի՝ ունէր զհանդերձս և զզարդս բոզի․ անուն երկրորդին էր Հակառակարանութիւն․ որ կրէր յաջու իւր զձեռ-նոց մի յօրինեալ ՝ի մորթոյ ոզնւոյ՝ և ՝ի ձախ ձե-ռին ունէր զանկնդուկ մի, որ հաչէր և յարձակէր յամենայն ոք, որ անցանէր առ նովաւ ։ Երիցա-գոյնն ՝ի նոցանէ՝ որ թուէր ունել զամբարհա-ւաճ և զբրթահոյզ դէմ՝ յարաժամ ուղղեկեալ լի-նէր ՝ի թշնամեաց Կուպիդոսի միոյ․ որ մշտա-պէս էր ծայր զառաջեաւ նորա՝ փոքրիկ զաւազան մի ՝ի ձեռին ունելոյ իւրոյ, որոյ ծայրն յերկ լեալ էր ՝ի ձև եղջերաց այծեման․ հանդերձք նորա էին դեղնագոյն․ երեսք նորա էին դալկացեալ․ աչք նորա էին թափանցանց, այլ ունէին յին-քեանս զօտար հայեցուածս և զայն մասնաւոր հիւանդութեան ախտ, որ տայ մարդոց ախտա-ցելոց նախանձ ՝ի տեսանել զառարկայս երկատե-սակս ։ Ծանուցայ՝ զի անուն նորա էր Նախան-ձոտութիւն ։

ՏԱՏԼԷՐ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

## Տաճար Ողջախոհութեան։

Օր մի նկատելոյ իմոյ զմերոյ գրեալ տաճարն զայն և զուխտաւորս նմ, չոգայ առ այն՝ որ կանգնեալ կառուցեալ կայր ընդ ձախմէ, և կոչիւր տաճար Ողջախոհութե։ Հակառակ նորա հաստատեալ էր՝ ՚ի վերայ Անմիտութեան սեանց, և գեղապաճնեալ էր ամենայն սենեակօք գեղխագործական զարդուց, որք են ՚ի նոյն կարգի։ այլ ընդ հակառակն՝ նախատացեալ տաճարն բարձրացեալ էր՝ ՚ի վերայ Յոնիական անարատ և մաքրագին սեանց։ Աղոմանք նորա զարդարեալ էին գունակ գունակ ծաղածանակ պտկերօք այծից, թռչնոց, հեթանոսական չոծոց, այծամարդից և հրեշից յորինելոց ՚ի կէս մարդոյ և ՚ի կէս կենդանւոյ։ Արբունք նորա թափուր էին ՚ի պաշտաւանաց, և լցեալ էին առ ամենեւեան, որք ըղձային մտանել ՚ի նա։ Ի մտանել իմ ՚ի ներքս՝ տեսի զարմացմամբ զի լուսամուտքն համօրէն էին խաւարայուցեալ, և տեսակ իմն արշալուսոյ փայլէր անդանօր, որ նպաստամատոյց լինէր յերևեցուցանել բզբաղմազան տուկայի խաւար անկիւնս և զաղջամղջին սենեակս, յորս բաժանեալ էր տաճարն այն ողջոյն։ Աստանօր ահռաբեկեալ շուարեալ մնայի ՚ի խառն ձայնից բացագանչութեան և զբօսասիրութեան՝ ՚ի միոյ կողմանէ լսէի զաղաղակս նուագերգութեան և զդոփիւնս պարու, և ՚ի միւս կողմանէ ականջք իմ լնանէին ձայնիւք բանակռուութե և շաչմամբք սուսերաց և նետից՝ ՚ի կորձո՝ այնքան սակաւ ախորժելի էր աչաց իմոց

ուղխս այս ․ մինչ կամիլ խոկ և խոկ երկնել ան-
տի․ այլ սակայն անսահմանելի սխրութեամբ չև ոչ
էր հնար ինձ վերադառնալ ընդ փոսն այն,
յոր մտեալ էր իմ յառաջագոյն, և որ փակեալ
էր սաստկագին ընդդէմ ամենեցուն ՝ի ներքս եկե-
լոց երկաթեայ նգօք և անդամանդեայ փակա-
նօք․ ոչ էր հնարաւոր ՝ի դառնալ, յետս յայսմ
ու ձորէ ու ճանապարհս հեշտութեան, որք հա-
նեցին զգնացողսն անդանօր․ ամենայն որք վայե-
լեալ էին զպաշտամունս և զսրբութիւն տեղ-
ւոյն՝ արտաքս գնային ընդ երկաթեայ դուռն մի՝
որ պահպանէր ահեղատեսն և խրոխտաձայն հըս-
կայ մի՝ Պաշտաւութիւն անուն․ որ ունէր ՝ի
ձեռին իւրում զմտրակ մի՝ ներշնչեալ ՝ի կար-
ծոյ․ որով և վարէր զնոսա արտաքս յայն անցս մի-
այն ՝ի սորա ձորէ անտի ։ Այս էր ճանապարհ մի՝
այնպէս դարուփոս և ժայռաւոր՝ այնպէս դըժ-
ուարանցից և սառապար՝ յայնքանեաց փշոց և
տատասկաց խափանեալ՝ մինչ չի կարի սխրագին
և աշխարհի ի իմն տեսարան ընծայէր երկայն սե-
ռիցն, որք գնային ընդ նա․ այր մարդիկ
թէպէտ յորքանս հասակի՝ անզօր և անկարող
երևէին ծերութեամբ․ կին մարդիկ ճնշէին զձեռս
իւրեանց, և փետտէին զհերս իւրեանց․ և բա-
զումք ևս կորուսանէին զյարմարս իւրեանց, մինչ-
չև էին զերծուցեալ զանձինս իւրեանց ՝ի դժուա-
րակիր սառապարաց ճանապարհին, յորում տա-
րաադորէն էին զետեղեալ ։ Մնացեալ մասն
տեսլեանս տարրին՝ և անցքն՝ որոց դիպեցայ յեր-
կրորդ կէսն պողոտայս Փառամոլութեան և

ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

*Ապահովութն՝ եղիցին առ ուրքայ այլ իմն թղթոյ ։*

ՏԱ ՏԼԷՐ

## Տաճար Առաքինութեան ։

Բազում աշխատանօք և դժուարութեամբ անցի ընդ առաջին մասն տեղեան իմոյ · և գտի զկեդրոն անտառին, յորմէ տեսանէի զերիս կուռ պողոտայսն ։ Աստանօր ժողովք միջահասակ անձանց օկեան ուղեկցութ ընկերակից լինիլ ինձ, որք երթային յայնկոյս դրօշակին փառամոլութեան ։ Տարաձիգ ճանապարհն տարածեալ էր ուղղագիծ, և յանգաւորէր 'ի տաճարէն Առաքինուն ։ Գեղազարդեալ էր նա յիւրաքանչիւր կողմանէ հոգեխրախ դափնեօք · որք պայծառագին գեղեցկութեամբ զարդարէին զմարմարինեայ մահարձանս, զքանդակագործ սիւնս և զքերութ արձանս օրէնսդրաց, դիւցազանց, պաշտօնակալաց, իմաստասիրաց և բանաստեղծից ։ Գնացողքն 'ի ճանապարհիս յայսմիկ էին այնպիսիք՝ որք հանապազ խորհէին առնել զպէսպէս նշանաւոր ծառայութիւնս առ մարդիկ, և անձանձրոյթ աշխատասիրութեամբ բարեգործել զերկիրս իւրեանց ։ Յիւրաքանչիւր կողմանէ տարաձիգ ճանապարհիս այսորիկ էին բազում պողոտայք, որոց ընթացքն էին ուղղակի և համակից ընդ նմա ։ Բազումք 'ի նոցանէ էին ծածկեալ ճանապարհք, յորս յա-

ձախէին մարդիկ՝ ոխրօղք առանձնական առաքի-
նուն· որոց գլխաւորն էր կատարել զնոյն ընթացս
առաքինագործութեն. թէպէտ և նախադաս հա-
մարէին առ՝ի կատարել զայն յառանձնականութե
և՝ի միայնակութեան: Շինուածքն այնոքիկ՝
որք կառուցեալ էին՝ի ծայրս ձանապարհին՝ այնչ
էին ձևացուցեալ, մինչ չէր հնար տեսանել զնա-
ման Պատուոյ՝ի պատճառս տաճարին Առաքի-
նութեան, որ կառուցեալ էր զառաջեաւ նորա.
՝ի դրունս տաճարիս այսորիկ հանդիպեցաք Զա-
ուածուհւոյ նորուն, որ առաջնորդեաց զմեզ ՝ի
տաճար Պատուոյ. որ պեղպղարդ իմն յաղթանա-
կական կամարաւ կցեալ էր ընդ այլոյ իմիք կազմ-
ուածոյ, և չունէր զայլ ինչ մուտ ՝ի նա: Յայն-
ժամ Աստուածուհին ներքին շինուածոյն ընկալեալ
զմեզ աստուածայնութեամբ, եցոյց զկերպարանս
մեր զպատկեր ի միում, որ եդեալ էր ՝ի վերայ
բարձրաբերձ սեղանի միոյ. և էր դրօշագ Յա-
ւիտենականութեան:

Նստեալ էր նա ՝ի վերայ գնտոյ միոյ ընդ մէջ
ոսկեղէն Զոդիակոսի, կալեալ զկերպարան
արեուն ՝ի միում ձեռին. և զլուսնոյն՝ ՝ի միւս-
ում: գլուխ նորա էր քօղարկեալ, և ոտքն ծած-
կեալ: Անրութ մեր ջեռնուին ՝ի մեզ մինչ կանգ-
նեալ կայաք ընդ գունոյն լուսոյ, զոր պատկերս
այս տարածեալ սփռէր շուրջանակի:

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

## Տաճար Ունայնութեան։

Տեսեալ իմ զանցս՝ որք հանդիպեցան ճանապարհորդացն այնոցիկ՝ չոգայ առ այլ շեղջակոյտ մի շինուածոց. որք կանգնեալ էին ընդ մէջ տեսարանաց տաճարին Պատուոյ, և կառուցեալ էին նոյնահանգէտ ձևով. այլ սակայն ՚ի մերձենալ իմ առ նա՝ տեսի զի քարինքն եդեալ էին ՚ի վր միմեանց առանց կրոյ. և բովանդակ շինուածն կառուցեալ էր ՚ի վերայ այնպիսի անհաստատ հիման, մինչ շարժեալ լինէր յիւրաքանչիւր շնչմանէ հողմոյ։ Անուն նորա էր տաճար Ունայնութեան։ Զաստուածուհի նորա նստեալ էր ՚ի մէջ բազմապատիկ ճրագաց. որք լուցեալ և վառ էին զտիւ և զգիշեր, և պայծառացուցանէին զդէմս նորա առաւել քան զլոյս տուընջեան։ Արծեռս նորա ողջոյն պարունակիւր ՚ի ցուցանել զանձն իւր առաւել գեղեցիկ և վեհանձն, քան զոր էր իրապէս։ Ա յարբիկ աղագաշպարեալ էր նա երեսս իւր, և կրէր ՚ի կուրծս իւր զփունջ մի ծաղկանց պաճուճականաց. այլ սակայն նկատեալ իմ մանաւորապէս զբաձկոն նր՝ տեսի զի յօրինեալ էր յայգենի տարրաց խենեշութեան։ Տեղիս այս լցեալ էր կեղծաւոր և անհաստատ մարդովք, իմաստակօք և բաջաղկոտ հնարագէտ անձամբք, և այնպիսի ամբոխով միով, որք անուամբ և եթ հանդիսացուցանէին զինքեանս վէհ։ Կին ուխտաւորքն ամբոխեալ էին զտաճարին, խափանեալ էին զմուտս նորա, և առա-

ւէր էին թուով քան զաւազ առ ափն ծո-
վու ։ Սկսայ ապա վերադառնալ առ այն
մասն անտառին՝ յորմէ յառաջագոյն ելեալ էի
առ ՚ի նկատել զճանապարհսն զայնոսիկ, որոց ըն-
թացքն կից էին ընդ ընթացից ճանապարհի տա-
ճարիս այսորիկ. քանզի դէպ եղէ ես անդանօր
բազմաց բազմաց, որք սկսեալ էին զճանապար-
հութիւն իւրեանց ընդ առաջի անձանց. և սակա-
ւիկ մի ուղեկից լեալ ընդ նոցա ճանապարհոր-
դէին. այլ սակայն ՚ի ձեռն քննողութեան տեսի
զբազմապատիկ պողոտայս, որք տարածեալ էին ՚ի
մեծ ճանապարհէ անտի մինչև ՚ի կողմունս ան-
տառին. և յայնքան խոտորնակ պտոյտս և շրջանս
ձգէին, մինչ այնոցիկ՝ որք ուղևորէին ընդ նոսա՝
բազմիցս դարձուցանէին զյետոյս իւրեանց առ
տաճարն Առաքինութեան. յետ այնորիկ ան-
ցանէին ընդ ուղղագիծ պողոտայն, և երբեմն
առ ժամանակ զգնային ՚ի նա, մինչ խոտորնակ
ճանապարհն՝ յորում էին մոլորեալ՝ առաջ-
նորդէր զնոսա յանտառ անդր վերստին ։ Խորե-
կամք թափառականաց այսոցիկ ունէին զմաս-
նաւոր զարդս իւրեանց. միում ՚ի նոցանէ ոչ կարա-
ցի հասու լինիլ, լիովին, որ յիւրաքանչիւր շրջա-
նի ճանապարհին ունէր զկերպարան ուրուք. զոր
՚ի ձեռն կերպագրութեան դիմացն գիտացի լի-
նել տուրհանդակ մի, որ ցուցանէր զճանապարհն
տարածեալ մատամբ իբրև զՓայլածու ։

ՏԱՏԼԵՐ

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

### Տաճար Աղաւնութեան:

Զարդիս դարձեալ էի ըստ առաջին սովորութ իմում, և եղեալ էի ՚ի միտս իմ առ ՚ի նկատել, զամ ինչ, որ անցանէր ՚ի սահմանս Աղաւնոյն, և առ ՚ի քննել զամենայն անցս ժողովրդեան այնորիկ, որ բաղկանայր յիմ հաստակամից մարդոց: Երամք ուղևորաց այսոցիկ մինչև էին ընդ երկար գնացեալ ՚ի մեծ ճանապարհի, յանկարծ գտին զինքեանս լինել ՚ի հովտի միում, յորում ուղևորքն զբաղում աւուրս յոգնաջան աշխատանօք և դժուարութեամբ, և առանց հարկաւոր վերանորոգութեանց կերակրոյ և ըմպոյ: Ընկալան նք զառակական միթարութիւն ՚ի գետի միում, որ ընթանայր ՚ի յատակ հովտին ընդ առու մի ոսկեղէն աւազոց · յաճախակի ըմպէին նոքա ՚ի ջրոյ նորա, որ ունէր զայնպիսի որակութիւն իմն, մինչ՝ թէպէտ և վերանորոգէր զնոսա առ ժամանակ՝ սակայն առաւել սաստկացուցանէր քան թէ զովացուցանէր զծարաւ նոցա: Յիւրաքանչիւր կողմանէ լերինք էր շուր մի բլրոց՝ պատուական հանքօք պատարուն · քանզի՝ ուրանք անձրևն ողողեալ էր զերկիր, մերթ էր անսանել առատաբար զերկայնածիգ շնչելակս ոսկւոյ և քարանց, որք երևէին իբրև զմաքուր սրծաթ: Առատանօր ազդ եղև մեզ, զի Զօծվայրին այնորիկ սրցելեալ էր ուխտաւորացն իւրոց առ ՚ի պեղել զընդերս այսոցիկ լերանց, և կամ յածել զզանձս նոցա այլուր ՚ի պէտս մեր:

մացուցանելոյ զտառապանս ողորմահարութեան ։ ՚Ի ծայր հովտին կանգնեալ կայր տաճար Ագահութեան՝ կառուցեալ ըստ զաղափարի բերդակալութեան և շրջապատեալ ՚ի հալարաց հազարաց եռապատիկ շանց , որք կարգեալ մնային անդր առ ՚ի արգելուլ զաղքատս ։ ՚Ի մերձենալ մերում՝ ամենեքեան սկսան հաչել . և կարկայծ սպառնացուցանել ուժգին զմեզ , եթէ պառաւ մի՝ որ անուանեալ էր զինքն գողացեալ անուամբն Բաւականութեան՝ չիջէր մասուցեալ զանձն իւր յառաջնորդութիւն մեր ։ Երբ նա ընդ ըղգեստու իւր զաղեղն մի ոսկեղէն , զոր փնչչէ էր առեալ ՚ի ձեռն իւր՝ շունքն համայն դադարէին ՚ի հաչելոյ , և դրունքն բացեալ լինէին վասն առաջնորդութեան մերոյ ։

Անցաք ընդ երկաթեայ դրունս հարիւրաւորս , մինչ կարացաք մտանել ՚ի տաճարն ։ ՚Ի վերին ծայր նորա նստեալ էր Աստուած Ագահուն . մօրուք նորա էին պաշարեալ . և երեսք նորա էին վտիտ և դալկացեալ ։ Թէ և պարփակեալ էր ՚ի կիտուածոց և ՚ի բրդոյց զանձուց , սակայն նկրամբրկ զգողանի հարկանէր ՚ի դրանց . ընդ ալքն նորա պաշտեալ էր բարեկամ մի՝ Անիրաւունի անուն . և ընդ ձախմէ նր մանուար օիրական մի՝ որում անուանեալ էր զանուն Քուծկալուն · առաջինն էր հարկածողով իւր . և երկրորդն՝ ըմայոփոխ իւր ։ Նին անդ բազմապատիկ մետաղ և սեղանք յիւրաքանչիւր կողմանէ տաճարին · և պաշտօնատարք նորա կանգնեալ կային

յայնկոյս նորին · զամանս 'ի նոցանէ քննեցի , և տեսի զի առաջին սեղանն էր պաշտօնատան Ա-պականութեն ։ Տեսի զՀայեցող զոմն , որ կարի յոյժ յաշխատասիրութիւնս և 'ի գործառնութիս էր պարապեալ , և խօսէր ինչ ինչ ընդ իւրաքան-չիւր ումեք , որ անցանէր առ նովաւ · յառեալ զաչս իմ 'ի նա մեծաւ զգուշութեամբ , և տեսի զի յաճախակի երթայր առ ոմն , որ 'ի ձեռին իւրում ունէր զգրիչ մի · և յառաջեաւ նորա եդեալ կայր հաշուական աղիւսակ մի և տարա-կան օրացոյց մի , յորս բովանդակէր ընդ հանուր գիտութի և ուսումն նորա ։ Հայեցողն մշտա-պէս խօսէր յականջս նորա , և այլ զգրամս 'ի ձեռս նորա · որ փոխարինաբար տայր նմա զկտոր մի թղթոյ կամ մագաղաթի՝ ստորագրեալ և կըն-քեալ ըստ պատշաճի ։ Նոյն հնարագէտ և միջ-նայագործ Հայեցողիս այսոցիկ էր Կաշառա-ռութի ։ Ի միւսում սեղանի կատարիւր պաշ-տօն Յափշտակութեան · յայնկոյս նորա նստեալ էր ոմն՝ մազահիւս գլխարկ մի 'ի գլուխ իւր · որ համարէր զմեծ քանակութիւն գրամոց , և այլ բազմաց զփոքրիկ քսակս , որք զինի սուղ ինչ ճանապարհութեան վերադարձեալ բերէին առ նա փոխարինաբար զքսակս՝ լցեալս բազմապատիկ աղ-նաւագին փողովք ։ Ի նմին ժամու տեսի զոմն՝ Աղքատութի անուն , որ նստեալ էր յայնկոյս համարողին այնորիկ կերծուցանէր և անզգոյշ կշռորդովք և պակասաւոր չափովք · որոց հնարի-մաց գործունէութեամբն ժողովեալ էր զանչափ

Հարստութիւնս և ճոխութիւնս . անճառելի են անուանք բազմադիմի պաշտօնատարացն . և անգնագրելի են թիւք յոգնախուռն ուխտաւորաց տաճարին այնորիկ . էին անդանօր բազում ծերունիք՝ հաշեալ մաշեալ, և շնչասպառ եղեալ . որոց գլուխքն եդեալ էին ՚ի վերայ քարկաց դրամոց . և ոչ այսչափ միայն՝ այլ, և բազումք ՚ի նոցանէ տիրապէս մերձ էին հասանել ՚ի դրունս մահու . որոց ցաւք և վշտակրութիւնք՝ որք անպիտան առնէին նոցա զքսակս դրամոյն՝ յորդորէին զնոսա միայն առ ՚ի ունել, զնոսա պնդացոյն և ապահով : Էին անդ ոմանք , որք միով ձեռամբ հերձատէին զամենայն ինչս , նա և ըզմարմինս և զհանդերձս բ զմաց թշուառացելոց , որք կանգնեալ կային առ նոսա . և միւսովն արկանէին զաւարս անիրաւութեան առ բոզս , առ շողոքորդս և առ կաւատս . որք կանգնեալ էին զառաջեաւ նոցա : Յայնժամ յանկարծօրէն բովանդակ ժողովն սկսան զդողանի հարկանել . և ՚ի ձեռն քննողութեան տեղեկացայ , զի ՚ի ճածագիր սենեկի անդր՝ յորում մեք էաք՝ յաճախակի երևութանայր ՚ի ժամ առընչեան հոգի մի ահեղագին , որ սարսեցուցանէր և մտաթափ առնէր զնա : Ընդ մէջ զարմացման և արհաւրաց նոցա եմուտ ՚ի ներքս սենեկին հոգի մի, զոր նոյն հետայն գիտացի լինել Զքաւորութ : Իբրևակս այս ծանօթ լինելով ընդ իս՝ ոչ այնքան սաստկագին աշխացուցմամբ եկեալ յաչս իմ, որքան չար գործելի տաճարիս այսորիկ :

Թշուառական ուխտաւորք տաճարին զայլ կարծիս ունէին · մինչ անձնաւորին խրոխտամամբ երեւակն խիզախի՛ր ՚ի սենեկի անդ, ամենայն ոք զգողանի հարկանէր, և սկսէր փակել զսընդուկս իւր և կապել զքսակս անչափ երկիւղիւ և սրտաբեկութբ : Պա՛րտ է ինձ խոստովանիլ, զի համարիմ զկիրս ապերջանիկ մարդոյս այսոցիկ լինիլ բնութենակից ընդ այնց անհամար ատելութեց, որք բնածին են ոմանց · կամ լաւ ևս ասացից՝ համարիմ զնոսա տեսակ ինչ խելագարութեան՝ որ ոչ է աննման յայնմանէ՝ որ արկանէ զմարդ ՚ի ցաւս և յարհաւիրս ՚ի տեսանելն զայնպիսի պիտեան և անմիտս ինչ՝ այսինքն զջուր : Բովանդակ ժողովն զարմացեալ հիանայրն, յոր ժամ փոխանակ նախատացանելոյ իմոյ զաղօթս իմ առ ոճն այն՝ զոր ամենեքեան պաշտէին՝ տեսին չիս ուղղել զբանս իմ առ երևակն այն ըստ հետագայ օրինակի :

Ո՛վ Զբաւորութիւն, ասացի, առաջին աղաչանք իմ առ քեզ է, առ ՚ի չերևիլ ինձ ըննաւին այսուհետև · այլ սակայն եթէ ոչ հաճեսցիս կատարել զայս խնդրուած իմ, մի՛ երևեսցիս ինձ առաւել ահեղագին կերպարանօք քան այժմ : Մի՛ տար սպառնալեաց և ահացուցմանց քոց սաստկանալ յիս զայնպիսի ինչ, որ դատի զօլ անպատեհ և անարդար ։

Մի՛ տար ինձ խնուլ զախորժս իմ առ սղադակս կարօտաւորաց : Մի՛ տար ինձ բնաւին ՚ի մտացնս արկանել զնա , որ է բարերար և

բարեկամ իմ : Որ տար ինձ բնաւին ՚ի ձեռն ահաբեկութեանց և սրտադողութեանց քոց թողուլ զբարեկամս իմ, զհաւատս իմ և զպատիւ իմ ; Եթէ դեռ լիցի երբէք Հարստութեան այց ելանել ինձ , և գալ ընդ սովորական հետևակաց իւրոց ՝ ընդ Ունայնութեան և ընդ Ագահութեան , եկ ՚ի փրկութիւն իմ , ով Չքաւորութիւն · այլ ած ընդ քեզ զերկուսին քորս քոյ , յորոց ընկերակցութեան միշտ մխիթար ես դու · այսինքն՝ զԱզատութիւն և զԱրդարութիւն :

ՏԱՏԼԷՐ

## Այր Համեստութեան .

Ոչ է պիտոյ ընդ երկար ժամանակի՝ առ ՚ի նկարագրել զհամ աւ առն համեստի · քանզի բնականապէս պարզիմաց են և դիւրըմբռնելի : Նա այնպիսի ոք է՝ որ յարաժամ քայլէ ՚ի ճանապարհս բարեպաշտութեան և առաքինութեան ըստ որում պատուիրեն օրէնք Այ և ձայն խղճմտանացն որ ցուցանեն նմա զայն : Նա ոչ առաջնորդեալ լինի ՚ի սովորական ըղձանձկութեանց · որք երբեմն զմեղս և զդիւրայողդողդ համբաւն պատկերացուցանեն կերպարանաւ առաքինութեան : Արդարն առաջնորդեալ լինի ՚ի հաստատուն կրթութենէ միայն · որ յորդորէ զնա ՚ի սիրել զու-

ինչ բայց միայն զայն ամենայն՝ որք իցեն պատուա-
կան. և առնել զայն ամենայն՝ որք իցեն անարգ և
անպատեհ ՚ի բարոյական վարս: Այսորիկ աղա-
գաւ միշտ միօրինակ տեսանեմք զնա. և յամե-
նայն ժամանակս է հաւատարիմ բարեկամ, սիրա-
կամ ընտանի, արդարակշիռ այր գործառնութ,
բարեպաշտ երկրպագու և հասարակաց սիրով
փառաւոր քաղաքացի: Ինքնին ոչ պայծառացու-
ցանէ զդէմս իւր կեղծեալ հայեցուածովք.
բնաւին ոչ խնդրէ նդիմայլակ առ ՚ի ծածկել
զկերպարան իւր. քանզի արարք նորա ոչ են ըստ
կեղծաւորութեան կրից, այլ է նա արդարև որ
ինչ երևի լինիլ՝ լի ճշմարտութեամբ, բարեսր-
տութեամբ, և մարդասիրութեամբ: Յամենայն
ընթացս կենաց իւրոց ոչ գիտէ զայլ ինչ ճանա-
պարհ բայց միայն զանստերիւրն և զիրաւացին.
և առաւել յօժար է առ ՚ի զանց առնել զյաջո-
ղութեամբ քան թէ առ ՚ի ունել զայն արհամար-
հական հնարիւք: Զէ հնար նմա ցուցանել մեզ
զծիծաղական դէմս մինչ չարիս մտածէ ընդդէմ
մեզ ի խորս սրտի իւրում: Զէ հնար նմա գո-
վել զմեզ ՚ի մէջ բարեկամաց մերոց, և պարսա-
վել ՚ի մէջ թշնամեաց մերոց: Զէ հնար մեզ եր-
բէք զտանել զմի մասն համբաւոյ նորա տարա-
ձայն ընդ միւսոյն: Յամենայն բարս իւր դարձ
է և քաղցրաբարոյ. և յամենայն գործս իւր՝ ան-
պաճուճակ և միայուն:

ԲԻՒԸՐ

Հեշտութիւն ։

Արդ ժամ է սկսիլ առ 'ի որոշել զճշմարիտ հեշտութի յանցողական հեշտահոգութենէ և յանհաստատ բարեբարոյութենէ ։ Անցողական հեշտահոգութիւնն այն որ լուցուցանէ զմիտս ինչ քրիստոնէական հաւատոց․ այլ ընդ հակառակն՝ խանգարէ զամենայն երջանկութիւն և զկարգ ։ Անհաստատ հեշտահոգութիւնն այն, որ համաձայն երևի ընդ կործիս և ընդ բարս այլոց, այնքան հեռի է 'ի լինելոյ ճշմարիտ առաքինութիւն, մինչ զի ըստ ինքեան մոլութիւն է զլխովին և ծնող բազմապատիկ մոլութեանց ։ Իւրեք կործանէ զամենայն հաստատուն հիմունս ճշմարտութեան․ և պատճառէ զյանցաւոր զամբարհաւաճութիւն զայն, որ արատաւորեալ ապականէ զհամբուն ողջոյն ։ Յաժմեան ապականեալ կացութեան մարդկային բարուց՝ մշտապէս հաւանելն և կատարելն են ամենայնի գործ՝ զոր հնար է մեզ սեպհականել ։ Անհնար է 'ի պահպանել զբարութիւն և զանբծութիւն բարուց քրիստոնէութեն առանց դիմակալ լինելոյ աշխարհի 'ի ոճապէս բանս և 'ի գործս, եւ և եթէ խցեմք միայնակ և առանձին ։ Նաև այսօրինակ հեշտութին այն՝ որ պատշաճաբար՝ արժան է անուան առաքինութեան՝ պարտի ողջութեամբ որոշիլ 'ի նկուն ունակութեանց երկչոտաց և 'ի շողոմական հրապուրանաց մարդելուզաց ։ Ոչ է հնար սմա ուրա-

նալ զիրաւացի բանս 'ի պատճառս երկիւղի ։ Չէ հնար ամա անհոգանալ զճշմարտութեամբ 'ի պատճառս մարդելուզութեան ։ Հեզութիւն այս ոչ միայն հնայուն է 'ի հաստատուն միտս, այլ հարկաւորապէս պահանջէ զառնացի հոգի իմն և զանյողդողդ ճշմարտութիւն առ 'ի սրմատուցանել 'ի նա զճշմարիտ առաքինութի ։ Յայսմ և եթ երևին զերազանցութիւն և շահեկանութիւն հեզութեան ։ Դիւրինկալ լինի նա ոչ յարդանայ առաքինութեան և ճշմարտասիրութեան՝ այլ խածարարութեան և դժնդակութեն, ամբարտաւանութեան և ժպրհութեան, անիրաւութեան և եղեռնագործութեն ։ Արդարև սա է այն մասն մեծի որոշմանական առաքինութի, որ չառայ մեզ բնութին 'ի վշտացուցանել զոմն յեղբարց մերոց ։ Գթութիւն քաջալերէ զմեզ առ 'ի փարատել զվիշտս կարօտութեց նոցա ։ Բարերարութիւնն արգելու զմեզ առ 'ի փոխարինել զմնասագործութիւնս և զչարիս նոցա ։ Խոնարհութիւնն զիջուցանէ զմարդկացեալ միտս մեբարեսրտութիւնն չափաւորէ զառատական դատմունս մտաց մերոց ։ Հեզութիւնն ուղղագործէ զամենայն՝ որ անպատշաճ երևին 'ի վարս մեր․ և յորտահ ընթացիցս մարդասիրական խնամածութեամբք ջանասէր լինի 'ի թեթևացուցանել զծանրագին բեռինս ընդհանուրց թշուառացելոց ։ Աստ այսորիկ կարի մեծ է պաշտօն սորա ։ Սա ոչ կարդացեալ լինի զօրէն այլ ։ Անայն առաքինութեան 'ի ժամանակս մանաւոր հարկաւորութեն, այլ հանապազ խորհութեամբ

'ի գործ դնի · և ոչ դադարի 'ի լիրբութենէ, մանաւանդ և այորժամ զբռնաւորութիւն տանեմք ընդ մարդկան: Պա՛րտ է նմա կապել զխօսս մեր, կանոնաւորել զբարբառս մեր, և երևիլ յամենայն շարժմունս և 'ի բարս մեր: Այլ որդ՝ չէ պարտ մեզ շփոթել զայս ազնիւ իմաստութիւն՝ որ է 'ի բարձանց՝ ընդ կեղծաւորի հեշտահոգութեանն այնմիկ · զոր ուսուցանէ դպրոց աշխարհի: Ան-փոխան է սա ունայնասիրաց և դատարկակեաց անձանց · իսկ հնարագիտաց և չարամտաց երբեմն իբրև զորոգայթ · և յաճախակի 'ի գործ դնի յանդգնութ և 'ի խստասիրտ մարդոյ իբրև զծածկոյթ անարգութեան մտաց իւրեանց: Ոչ է հնար մեզ 'ի նմին իսկ ժամու զանց առնել առ 'ի նկատել զպատիւն զայն՝ զոր յայտնապէս ևս աշխարհ բռնադատի մատուցանել առաքինութեան: Առ 'ի առնել զկենցաղավարութիւն հաճելի՝ հարկ է ունել զի՛ր ինչ՝ որ գոնեայ ունիցի զերևոյթ հաճելութեան: Առաքինութիւնն է գեղեցկութիւն [illegible] հանրական: Սովորք նորա ևս սիրեալ լինին յորժամ նիւթն պակասեալ գտանի: Որինակ այսր նկարագրեալ է 'ի սրտի · և այնորիկ ամենեքեան՝ որք 'ի մերձաւոր կենցաղակցութե կամիցին շահել զսէր, և յանգուցանել յինքեանս զսիրտ այլոց, պարտին ուսանել զզրոյցս մարդասիրութեան, և ունել զհրաշալի քաղցրութե և հեշտահոգութե: Այլ ամենայն՝ հեշտութիւնն այն, որ է ցոյց բարոյ մարդոյ, զորէն այլ ամենայն առաքինութեանց ունի զնիստ իւր 'ի սըրտի · և տուր ինձ զայս ևս առնել, զի ոչինչ բայց

միայն այն՝ որ բղխի 'ի սրտէ՝ կարէ առնել զոր-
ոտքին բարս և հաճելի ։ Քանզի ոչինչ կեղ-
ծեալ բարք ծածկել կարէ յամենայն ժամանակս
զճշմարիտ համբաւն ։ Յայնմիկ ճշմարիտ քաղց-
րութեն՝ որ ծագի 'ի հեզաբնոյթ մտաց՝ գոյ գե-
ղեցկութիւն մի կարի յոյժ զօրաւորագոյն քան զամե-
նեսին կատարեալ բարս հաճոյացուցիչ անձանց ։
Ճշմարիտ հեզութիւնն հիմնեալ է յայնպիսի
միտս, որ է պարգև արարչին մերոյ. և որոյ
փոխարէն պարտական եմք ընդհանուր մեծի
հեղինակին բնութեան՝ որում ամենեքեան
եմք հաղորդակիցք ։ Մտածելով մեր զթերու-
թեանց և զկարօտաւորութեանց մերոց՝ և ար-
դարակորով հայեցուածովք նայելով 'ի պարտիս
և 'ի կացութիւնս մարդոց՝ արտադրեմք զայս
գերապանծ և պատուական առաքինութիւն ։
Սա է զգայութիւն իմն բնածին. որ զերա-
զանցեալ վսեմանայ և կատարելագործի 'ի ձեռն
կիրառութեան ։ Սա այն օրէնն է, որ հեշ-
տեաւ յողորմ շարժի. որ ցաւի վասն իւրա-
քանչիւր վնասու մարդկան. և յամր և դան-
դաղ է 'ի պատճառել ումեք զխոցուած ինչ ։
Քաղցր է սա 'ի խօսս իւր. և մեղմ՝ ընդ
ամենայն բարս իւր. միշտ պատրաստ է 'ի շնորհա-
պարտ առնել զայլս, և յայն սակս միշտ շնորհա-
պարտութիւն ընդունիլ յայլոց. շնչէ սովորաբար
զբարերարութիւն 'ի բարեկամս, զքաղցրաբարոյ-
ութիւն յօտարականս, և զերկայնմտութիւն 'ի
թշնամիս ։ Վարէ զիշխանութիւնն միջասահմա-
նութեամբ, տայ զհնազանդութիւն քաղցրութեամբ. և

ընձեռէ զառաքինութիւնս դիւրութեամբ և համօտութեամբ։ Ո՛չ է բռնաւոր ՚ի դատմունս. և ոչ անքարեխառն յեռանդեան և յղձաձկտութեան իւրում։ Ո՛չ վիճէ տարփանօք վասն չնչին իրաց. յամր է ՚ի հաչածանել. և առաւել յամր՝ առ ՚ի կշտամբել. այլ ընդ հակառակն՝ փոյթ է ՚ի շիջուցանել զտարաձայնութիւն և ՚ի վերանորոգել զխաղաղութի՛։ Նա ոչ խառնի թարց հարկաւորութեան ՚ի գործս այլոց. և ոչ հետաքրքրութբ հարցափորձէ զգաղտնիս նոցա։ Ներելի է նմա գեր քան զամենայն ինչս առ ՚ի դիւրացուցանել զներողութիւնս. և եթէ ոչ կարէ ցամաքեցուցանել զարտասուս հեղլի, փութար ջանահնար լինի ՚ի մխիթարել զթախծեալ սիրտս։ Ուրանօր ոչ կարէ գոլ պիտանի, ոչ է և բնաւ ին տարժանելի։ Յանկայ ՚ի հաճեցուցանել առաւել քան ՚ի ճաճանչել և պայծառագին փայլմամբ երևիլ. և թագուցանէ զդուշարար զկարողութիւն վեհանձնութեան և մեծութեան՝ որ մշտացուցիչ է նոցա՝ որք ընթարկեալ են նմա։ Նյամ եզրակացութեամբ ասացից՝ այս այնպիսի հոգի է, և այնպիսի եղանակ բարուց, զոր Աւետարանն Բ՟ի նկարագրէ, յորժամ պատուիրէ մեզ՝ բառնալ զբեռն իրերաց. խնդալ ընդ խնդացողս. լալ ընդ լացողս. հաճեցուցանել զմերձաւորն վասն բարութեան նորա. լինել բարերար և քաղցրագութ. լինել ողորմած և հեզահամբոյր. օգնել տկարաց և լինել համբերող առ ամենայն ոք։

ԲԼՆԸՐ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆԳԷՏ

## Մեծասքանչութիւն Բարձրելոյն :

Գեղեցկափայլ արեգակն մտանէ յարեւմուտս · գիշերային ցօղք իջանեն յերկիր · և թօթափին ողն եղանի զով և ախորժելի : Թռչունքն կափուցանեն զթունաւորեալ սաղարթս իւրեանց · և փակեն նք զինքեանս · և կախեն զգլուխս իւրեանց զընդ թին քնոյ իւրեանց : Մանունեակքն ժողովին ի թեւոց հաւու առ ՚ի հանգստանալ · հաւն ևս է ՚ի հանգստեան : Փոքրիկ թռչունք դադարեալ են ՚ի նուագերգութեանց իւրեանց · Ննջեն նոքա ՚ի վերայ ոստեղանց ծառոց · իւրաքանչիւրն դնելով զգլուխ իւր ընդ թեւով իւրով : Ոչ լսելի լինին աղաղակք մեղուաց շուրջ զծծմաւն կամ ՚ի մեղրահիւթ տանելս · կատարեալ են նոքա զգործս իւրեանց և ընկողմանին ՚ի մոմեղէն բջիջս իւրեանց · Արջառք համայն հանգչին ՚ի վերայ փափուկ զեղմանց իւրեանց · և բառաչումն նոցա այլ ոչ ևս լսելի լինի ՚ի բարձրաբերձ լերինս : Չիք այլ ևս խառնիխառն ձայնք և աղաղակք · չիք այլ ևս ձայնք երեխայական խաղարկութեանց կամ դոփմունք շարժուն և ընթացող ոտից · չիք այլ ևս խռովութիւնք և աղմուկք յազնազգաց անձանց : Կռանն դարբնի այլ ոչ ևս հանէ զձայն իւր ՚ի սալի · և ոչ լսելի լինին շաչմունքն սայրասուր ատամնաւոր սղոցաց հիւսան : Ամենեքեան ընկողմանեալ են ՚ի վերայ հանգստարանի փափուկ մահճաց իւրեանց · և երեխայքն ննջեն ՚ի վերայ լանջաց մօր իւրեանց : Ծաւալեալ է ընդ երկնիւք խաւար

մթութեան · և քող աղջամղջից ափեալ է 'ի վե-
րայ երկրի · իւրաքանչիւր ուրուք աչք կափու-
ցեալ են զարդիս · և ամենայն ուրուք ձեռինք
իւր 'ի կողմն անշարժ մնան ։ Ով խնամած է ամ-
նայն մարդկան՝ յորժամ ննջեալ են նոքա 'ի խորս
քնոյ՝ յորժամ չէ հնար նոցա պաշտպանել անձանց
իւրեանց , և տեսանել զամբշաւոր վտանգս՝ որք
պաշարելոց են զնոքօք ։ Գոյ ակն մի՝ որ ոչ եր-
բեք ննջէ · գոյ ակն մի՝ որ տեսանէ 'ի խաւար
գիշերոյ որպէս 'ի պայծառու ատուր ։ Յոր-
ժամ ոչ գոյ լոյս արեգական և ոչ լուսնի , յոր-
ժամ ոչ գոյ ճրագ ինչ 'ի տան և ոչ փոքրիկ
աստղ մի ճաճանչէ ընդ յոգնախիտ ամպս երկ-
նից, ակն այն տեսանէ զամենայն զտեղիս · և հա-
նապազ հսկէ 'ի վերայ ամ զերդաստանաց ։ Ակն
այն՝ որ քնութիւն չունի զինի՝ է Այ բարձրելոյ ·
որոյ [illegible] բազուկքն հանապազ տարածեալ
են 'ի վերայ մեր ։ Ստեղծեալ է զքուն առ 'ի
նորոգել զմեզ , յաշխատութեանց և 'ի վաս-
տակոց մերոց · տարեալ է զգիշեր՝ զի ննջեսցեմք
յանդորրութեան և 'ի խաղաղութեան ։ Որ-
պէս մայրն շրջի 'ի տան՝ եդեալ զմանուկ իւր 'ի
վերայ շրթանց իւրոց առ 'ի հանգարտեցուցանել
զամենայն ձայն խռովութեն , զի մանուկ իւր ոչ
վարանեսցի 'ի քուն իւր , և ձգէ զառագաստ
շուրջ զանկողնով նորա և արգելու զճաճանչս լու-
սոյ 'ի գողտր աչաց նորա՝ այսպէս և երկնա-
ւոր վերատեսուչն ձգէ զմէգ շուրջանակի զառա-
գաստ մթութեան · այսպէս և զամենայն ինչս

հանդարտեցուցանէ և խաղաղացուցանէ, զի մեծ գերդաստան իւր ննջեսցէ ՚ի հանգստեան։

Ո՛վ աշխատաւորք լլեալք յաշխատանաց, և մատաղաւուրց մանկունք և ամենայն փոքրիկ բզզական ժժմունք, ննջեցէք այժմ յանդորրաւոր· քանզի երկնային վերատեսուչն հսկէ ՚ի վերայ ձեր։ Ննջեցէք, վասնզի նա ոչ ննջէ բնաւին· խփեցէք զաչս ձեր յանդորրութեան, քանզի աչք նորա հանապազ անխուփ են առ ՚ի պահպանել զձեզ:

Յորժամ գիշերն զիւրն մերկանայ ՚ի բաց զծածկոյթ մթութեան, և ծառագայթք առաւօտեան արեւոյ դարձեալ ցոլանան ՚ի վերայ սրահանաց ձերոց, սկսէք զօրն բարեբանելով զԱ՟ծ· որ խնամ է տարեալ ձեզ ՚ի ժամ գիշերոյ։ Ծա՛ղկունք՝ յորժամ վերստին վթթիք, տարածեցէք զտերևս ձեր և բուրեցէք զհոտ անուշից յօրհնաբանութիւն նորա։ Թռչունք, յորժամ յառնէք վերստին, եղանակեցէք զվերերգութիւն գոհաբանութեանց ձերոց ընդ սաղարթագեղ ոստեղունս· կարդացէք առ նա՝ մինչև էք կարդացեալ կլծակս ձեր։ Բարեբանութի՛ նորա նիստ կալցի ՚ի խորս սրտից մերոց՝ յորժամ ընկողմանիմք· բարեբանութիւն նորա նստցի ՚ի վերայ շրթանց մերոց՝ յորժամ յառնեմք։

ԲԱՐԲԱԼԴ

## Մահկանացութիւն :

Որդի մահկանացուին, ո՛ հող փոշի · ընդէ՞ր են համբարձեալ դէմք քո ՝ի չոլոյ : Տեսեալ եմ զխարդն ՝ի գեղեցկութեան իւրում · տարածեալ էր նա զոստս իւր առ արփին առաւօտեան ; Դարձայ և տեսի զի թարշամեալ էր ՝ի վերայ բնի իւրոյ · գեղեցկութիւն նորա չքացեալ էր բոլորովին · զանարթագիմութիւն աներևոյթ էր եղեալ · սաղարթք նորա ցրեալ էին ՝ի վերայ երկրի , և ոչ ոք ժողովէր զնոսա վերստին :

Ծառ մի ստուարաստեղն և բարձրաբերձ աճէր ՝ի դաշտավայրի · ստեղունք նորա ծածկեալ էին համայն դալարութեամբ · բարունակք նոր տարածեալ էին բոլորձակ , և առնէին զբարեվայելիմս հովանի · բուն նորա էր իբրև զսիւն հաստատուն և անխախտելի · արմատք նորա էին իբրև մագիլք կեռացեալք : Դարձայ և տեսի զի արևելեան հողմն ապականեալ էր զդալարութիւն նորա գլխովին · ստեղունք նորա յամեալ էին փշրտեալ · որդունք բացեալ էին զուղի առ բուն նորա · որ ցամաքեալ ազազեալ իսպառ դարձեալ էր ՝ի փտութիւն և անկեալ կայր ՝ի վերայ երկրի :

Տեսեալ եմ զծծմակս , որք խաղային ՝ի լոյս առաւօտեան . և երթային զհետ ընթացից աղբերաց · թևք նոցա փողփողէին ծիրանեաւ և ոսկեփիւրիւ · մարմինք նոցա փայլէին իբրև զպայծառ կանաչագոյն զմրուխտ · այնքան բազմաթիւ էին

## ԱՆԳԻՏԱԾ ԱՆՊԷՏ

Նորա՝ մինչ չէր հնար ինձ ՚ի համար արկանել զնոսա՝ շարժուածք նոցա արագագոյն էին քան զշարժմունս աչաց իմոց ։ Դարձայ և տեսի զի ոչնչանէին նոքա ՚ի ճահճի ․ սատակէին ՚ի շնչմանէ երեկոյեան հողմոյ ․ ծիծեռն կլեալ էր զնոսա ․ ձկունք յափշտակեալ էին զնոսա ․ Թիւ նոցա ոչ էր այնքան բազում որպէս յառաջագոյն ։

Տեսեալ եմ զմարդ ՚ի յամբարհաւածութեան զօրութեան իւրում ․ այտք նորա վառեալ փողփողէին գեղեցկութ ․ բարձք նորա առատ էին կարողութ ․ ընդոստնոյր, երթայր, ընթանայր և բերկրէր ․ քանզի առաւել գերազանց էր քան զայլս ։ Դարձայ և տեսի զի անշարժ և սառներակն․կեալ կայր ՚ի վերայ մերկ երկրի ․ ոտք նորա այլ ոչ ևս շրջիլ կարէին ․ և ձեռք նորա այլ ոչ ևս կարկառել սաստկէին ․ կեանք նորա պարզեալ էր ՚ի նմանէ ․ և շունչն ելեալ էր ՚ի ռնգացն նորա ։

Այսորիկ աղաղակ լամ ես և ողբամ ․ քանզի մահ դոյ յաշխարհի ․ որ տապալանիչ է ամենայն ձեռագործացն Այ ․ ամենայն որ՝ զոր ստեղծեալ է աջ վերինոյն՝ եղծանիցի ․ ամենայն՝ որ ծնեալ է՝ մեռանիցի ․ վասն այսորիկ Թող զիս առանձին, զի ողբացից առաւել յոյժ ։

## ԲԱՐԲԱՂԴ

## Անմահութիւն ։

Տեսեալ եմ զվարդն թարշամեալ՝ ի վերայ թփի իւրոյ · և գեղունակ տաղարթք նորա համայն սփռեալ էին ի վերայ երկրի ։ Հայեցայ վերստին և տեսի զի նոր՝ի նորոյ բողբոջէր յոստուն նորա · ծածկեալ էր նորաբողբոջ կոկոնիւք · և անուշահոտ նորա լնոյր զօդն բուրմամբ ։

Տեսեալ եմ զարեգակն մտեալ յարևմուտս · և ամպերք գիշերոյ տարածեալ էին ՝ի հորիզոնն լայնածաւալ · ոչ գոյր զուարճութիւն ոչ գեղ, ոչ գեղեցկութիւն և ոչ քաղցրաձայնութիւն · խաւար և մթութիւն պատեալ էր շուրջանակի ։ Հայեցայ վերստին, և ահա արեգակն ծագեցաւ յարևելեան կուսէ · և լուսափայլ ճաճանչմամբ ոսկեգոյն առնէր զհորիզոնն և զգագաթս լերանց · ամենայն ելեալ էր յանփառունակ բունոյ իւրոյ առ ՝ի հանդիպել նմա · և ողջամուրջք մթութեան անյայտ էին եղեալ ։

Տեսեալ եմ զժամանս հասեալ ՝ի լիակատար հերգարանս իւրեանց · այլ սակայն անշօր և անհաստատ էին յաւուրս · կազմեալ էին ինքեանց շտեղի ինչ, և թագուցեալ մնային ՝ի մէջ թաւուտ տաղաւարթից · ոչ զոսա ունէին և ոչ զկարողութիւն ՝ի շրջիլ ։ Հայեցայ վերստին և ահա բացեալ էին շտեղի իւրեանց և պատարուն էին ամխուժաւթեամբ · զունաւորեալ թևովք ոսկեգոյնիւք ... անօր · և թերփրէին վասն լինելոյ իւրեանց այնպէս նորաստեղծ և մատաղ ։ Այսպէս եղիցի

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

քեզ , ծիլ մորդ . և այսպէս կեանք քո նորոգեսցի վերստին : Գեղեցկութիւն ծագեսցի 'ի մոխրոյ . և կեանք ելցէ 'ի հողոյ : Սակաւիկ մի ընկղմանեսցիս ընդ ծոց երկրի . որպէս և սերմն ընկողմանի 'ի լանջս հողոյ , այլ սակայն յարիցես վերստին և այլ ոչ ևս տեսցես զմահ բնաւին : Ո՞վ է սա՝ որ գայ 'ի բանալ զբանտարգելս դըրանս գերեզմանի , 'ի ասել մեռելոց յառնել և 'ի ժողովել ցփռեալս իւր 'ի չորից ծագաց երկրի : Իջանէ նա 'ի վերայ որոտընդոստ ամպոյ . հնչումն փողոյ կարապետ լինի նմա . հրեշտակք հազարաւորք սպասահարկու լինին ընդ աջմէ նորա : Յիսուս է սա՝ որդի Այ՝ փրկիչ մարդկան՝ բարեկամ՝ բարեաց : Գայ նա 'ի փառս հօր իւրոյ . ընկալեալ է նա զզօրութիւն յերկնից :
Ո՛վ տարամիր ուրեմն՝ որդի անմահութեան . քանզի սպականիչն՝ անագորոյն սպականիչն այն՝ որ ապականէր զձեռագործս Այ բարձրելոյ՝ յաղթահարեալ նուաճեալ 'ի պարտութիւն մատնեցաւ : Յիսուս յաղթեալ է մահու . որդի անմահութեան, այլ մի՛ ևս տարամիր :

ԲԱՐԲԱՒԴ

## Երկինք :

Բոյրք է վարդ, որ սակայն շրջապատեալ է 'ի փշոց. անուշահոտ է շուշան հովտին, սակայն բուսանի 'ի մէջ գժնկաց : Ախորժ է գարուն, սակայն փութով անցանէ. գեղեցիկ է ամառն, բայց ձմեռն եղծանէ զգեղեցկութիւն նորա : Պայծառազարդ է յոյժ ծիածան, սակայն իսկոյն անյայտանայ չքանայ. լուսն է կեանք, սակայն ձեռով կլեալ լինի 'ի մահուանէ : Գոյ տեղի մի, ուրանօր վարդք անմահ են 'ի փշոց. ուր բնաւ ծաղկունք անխառն են 'ի գժնկաց : Այնպիսի տեղւոյ պատուն է մշտնջենական. և յորում չէր է 'ի խաւարէ մթութեան. Ծառն կենաց անէ 'ի միջի նորա. զի որ երջանկութիւն են անդ. և բոլորովին անդանօր ծաղկունք՝ որք ոչ գիտեն զթառամել : Գոն անդ հազարաւոր հոգիք երանելիք արդարոց. և նուագերգական նուագարանութեամբ շրջապատեն զաթոռ Արարչին : Հրեշտակք յաւիտենին փառս խորտանց երգեն զերգս օրհնութեան մշտնջենաւորս. և քերովբէք թօթափեն հրեղէն թեւովք : Տեղիս այս է երկինք. այս տեղի այնոցիկ է արժան, որք բարի են և արդար. և յանցաւորաց չէ մարթ երբէք օթեւանիլ անդր : Ոչ թունաւոր կենդանիք փախուցեն զթռչունս ի բունոց 'ի մէջ տատանակաց. և ոչ թունաւոր տունկք աճեցին 'ի մէջ քաղցրահոտ ծաղկանց : Եւ որ գործէ զչարութիւն, ոչ կարէ մտանել 'ի տեղիս յայս բարի :

Ախորժահամեաց է երկիրս այս, վասն զի է երկիր ԱՅ ․ և լի է բազմապատիկ բերկրութեամբ իւրովք ։ Այլ ամենայն տեղին այն կարի գերազանց է քան զայս ․ անդ այլ ոչ ևս ճաշակեսցուք ըղձոյն ապականութեան ․ և ոչ զգասցուք զախտս հիւանդութեան ․ և ոչ արասցուք զգործս չարութեան ․ Ընդ անօր ցուրտ ձմերան ոչ սառնացուսցէ զանձինս մեր ․ և ոչ ջերմութիւնք ամառան տապախարշ արասցեն զմեզ ։ Յայնմ վայրի ոչ գոն հակառակութիւնք և ոչ բանակռուութիւնք ․ այլ յամենայնի կաթոգնեալ սէր և սրբութիւն առ միմեանս ։ Յորժամ ծնողք և սիրականք մեր մեռանին և զետեղին ընդ հողով երկրի, այլ ոչ ևս տեսանել կարեմք զնոսա ․ այլ սակայն գրկեսցուք զնոսա անդանօր վերստին ․ և կեցցուք ընդ նոցա և այլ ոչ ևս հրաժարեսցուք ՚ի միմեանց ։ Հանդիպելոց եմք անդանօր ամենայն բարի մարդոց ․ զորոց ունիմք զծանօթութիւն ՚ի սուրբ գիրս ։ Տեսցուք անդ զԱբրահամ՝ զհաւատացեալն ԱՅ՝ զհայր արդարոց ․ տեսցուք զՄովսէս յետ ՃԻ երկար յածելոյ նորա յանապատս Արաբացւոց ․ և զԵղիա՝ զմարգարէն ԱՅ ․ և զԴանիէլ՝ որ զերծաւ յորջոյ առիւծուց ․ և զորդի Յեսսեայ՝ զարքայն խաշնարած՝ զքաղցրաբարբառ նուագերգուն Իսրայէլի ։ Սիրեցին նոքա զԱծ յերկրի ․ բարեբանեցին զնա յերկրի ․ այլ սակայն յայնմ վայրի բարեբանեսցեն զնա բարեպէս ․ և առաւել ևս սիրեսցեն զնա ։

Տեսցուք անդ զՅս ․ որ կեցեալ է յառաջ քան զմեզ

յերջանիկն յայն վայր · և նկատեսցուք զփառս Այ բարձրելոյ : Ո՛րչափ պարտ է մեզ լինել յերկրի · սակայն մտածումն մեր միշտ եղիցի զերկնից : Երջանիկ վայրն այն է տուն մեր սեփական · սակաւիկ մի պարտիմք մնալ յերկրի աստ, այլ անդ յօրաժամ և յաւիտեանս յաւիտենից :

ԲԱՐԲԱԼԴ

## Եղանակքն :

՚Ի շարս մեծամեծ բարեաց և հրաշագործութեանց արարչութեանն դասել արժան է և զկանոնաւորութիւնս ժամանակաց և եղանակաց : Յետ ջրհեղեղին առ ժամայն բարձրեալն խոստացաւ ազգի մարդկան, զի ժամանակ սերմանելոյ և հնձելոյ, ցուրտ և ջերմ, ամառն և ձմեռն, ցերեկ և գիշեր յաջորդեսցեն զմիմեանս մինչև ՚ի վախճան ամենայն իրաց աշխարհի : Նոյն օրինակ՝ առ ՚ի հնազանդ ուխտի խոստմանն այնմիկ՝ շրջաբերութիւնն երկրի մեզ հանապազ դիտեան և հաճելի իմն փոփոխութեամբ · և ամենայն հաճոյական նորոգութիւն կենաց ելանէ ՚ի փոփոխութեցս այսոցիկ · և ոչ մեք սակաւ պարտական համարիմք զանձինս մեր վասն պէսպէս տեսողական մխիթարութեանց նոցա : Նկարիչք և բանաստեղծք յամախակի պարապեցան յաշխատասիրութիւնս առ ՚ի ցուցանել ՚ի պճնազեղ ոճս

կմաննաւոր գեղեցկութիւնս և զպայծառութի իւրաքանչիւր փոփոխութե . և այսպիսի տարանջատ զխառնուրդութեանց զբնական փոփոխութէ՝ չէ հնար լինիլ անախորժ . մինչ չի օրհնութին այն՝ զոր իւրաքանչիւր ուրուք լեզու առ, երէ ընդ այնմիկ՝ է նորոգ օրինակ իմն իմաստութեան և քաղցրութեան վերատեսչութեանն այնորիկ, որ կանոնաւորէ զշրջանս տարւոյն ։ Մարիմք ՚ի խորս սրտից մերոց՝ մինչ մտախորհ լինիմք կնոջանէ . զգամք զյօժարութի քաղցրանուլեն՝ մինչ վայելեմք ՚ի նմ ։ Ի ժամանակի սերմանելոյ է եղանակ յուսադրութեան . հաւանն՝ զոր երկրագործն արկանէ ՚ի լանջս երկրի՝ փոխարինեսցի նմա յարգիւնս աշխատասիրութեանց եօթնապատիկ առաւելութեամբ ։ Գարուն առաջի առնէ աչաց մերոց զզուարթագին տեսրան իմն անկեղծութեան ։ Այն՝ որ յառաջագոյն սերմանեցաւն՝ այժմ սկսի ՚ի ցուցանել զնշանս բարեյաջող զաւարութե ։ Հողագործն նկատէ զփոփոխութին և նախադէտ լինի ՚ի միտս իւր զհնձելոյ . խնամ տանի փոփոխութեան բնութեան . և զուարճանայ ընդ առատութիւն նորա . մտախոհ մարդն ձեռն յերեկոյին ՚ի մէջ անուշից ծաղկանց . և խոստանայ զառատութիւն և ոչ զառնայ ՚ի խուղ իւր՝ մինչ մխթութիւն խնու աչաց նորա զանտեսութեանն ։ Ապա՝ ժաման լինի հունձն . յորում մեծամեծ փափագ հողագործին լնանի . և շտեմարանք բնութեան լցեալ լինին արտոյիւք կենաց և դրզմնոք առատութեան ։ Օ՛րութէ

լեզուի անկան են առ ՚ի նկարագրութիւն այսր երջանկացուցիչ եղանակի ։ Աղդարն՝ դա է բաւրեյինդան բնութ ․ արք և սոսներ՝ հովութիւն և համգարութիւն՝ յօճարմանութի և գայլոյլք՝ սէր և երախտագիտութի՝ միանան առ ՚ի բերկրալի համդիպացուցանել զամենայն զանօաբան․ ամրոան ։ Ժամանումն լուսոյ և խաւարի է մի ՚ի բարերարագոյն գործոյ ամենակարող իմաստութեան Նարճրելոյն ։ Ցերեկ և գիշեր սան մեզ զարթօ՝ համառակս մեծանց ․ և ՚ի նմին խոկ ժամու սոսարեն մեծանց՝ ընծեռելով զնորոգ պայծառունի բերկրութեանց իրերաց ։ Ընդ մէջ պայծառութեան տուընջեան և խաւարութեան կենաց զխորդ լինիլի մեզ նշել ․ ընդ մէջ մթութ խաւարի զխորդ կարիցեմք աչխատիլ ։

Նպա ուրեմն՝ զխորդ մտացի և բարեպատեհ է վայելուչ ժամանումն եղանակաց այսոցիկ ։ Ամք լուսոյ կարգեալ են վասն վաստակոյ․ և խաւարին՝ վասն հանգստութեան ։ Մինչչև է անցեալ տուընջեան՝ աշխատանք և սխարութի բնութ մերոյ յարդարեն զմեզ ՚ի դնել ցգուխս մեր ՚ի վերայ բարձի ․ և ՚ի միաւանգամ վերադարձման առաւօտու նոյնժ է մեզ դիմել վերստին յաշխատանս բերկրամութի ։ Այս օրինակ ամենայն եղանակ ունի զգեղեցկութիւն մի յատկացեալ ինքեան ․ և իւրաքանչիւր վայրկեան ընծեռէ զնորոգութիւն ինչ շահաբեր ։

ԲԱՐԲԱՌ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆԳԷՏ

## Եղանակքն չորս :

Ո՞վ է գեղեցիկ օրիորդս այս, որ յառաջ մատչի զգեցեալ զհանդերձս կանաչագոյնս : Ունի նա ՚ի գլուխ իւր զփունջս ծաղկանց. և ուրանօր դնէ զոտն իւր՝ ծաղկունք բողբոջեալ փթթին : Ձիւնն՝ որ ծածկէր զերեսս դաշտավայրաց՝ և սառոյցն՝ որ կայր ՚ի գետորայս՝ հալեալ լուծանին՝ յորժամ շնչէ նա ՚ի վերայ նոցա : Մատաղ գառինքն ստանուն զհետ նր. և թռչունք երգանակեն ՚ի կոկորդս իւրեանց առ ՚ի ողջունել զգալուստ նորա. և յորժամ տեսանեն զնա՝ սկսին ընտրել զբնակերս իւրեանց և ՚ի կազմել զբոյնս իւրեանց : Պատասխանեցէք օրիորդք՝ տեսեալ էք երբէք զգեղեցիկ օրիորդս զայս : Եթէ տեսեալ էք զնա՝ ասացէք ինձ թէ ո՞վ է սա. և զի՞նչ է անուն սորա :

---

Ո՞վ է սա՝ որ գայ ՚ի հարաւոյ զգեցեալ զհանդերձս նրբահիւսս և գեղեցիկս : Շունչ նորա ջերմ է և ամթագին. խնդրէ նա զդիւրութիւն զովացուցիչ ստուերին. խնդրէ նա զպարզ վտակս և զականակիտ աղբիւրս առ ՚ի յագենալ ՚ի նոսա զվհատեալ բարձս իւր : Աղբիւրք և գետորայք փախչին ՚ի նմանէ և չորանան ՚ի մերձենալ նր : Թուլացուցանէ նա զզօրութիւն իւր թթուք և անխորժաճաշակ թթուաշ պտղովք, կորիզաւոր սեխիւք և թթու խնձորիւք և հիւթաւոր կեռասիւք. որք առատօրէն զեղանին շուրջ զնովաւ : Թի խա-

գոյն յարդազարդքն ողջունեն զգալուստ նորա . և անդեորդքն հոտանելով զգեղմունս հօտից իւրեանց շռնչիւն մկրատօք՝ մեծարեալ պատուհանիրէն վնա : Յորժամ գայ նա՝ ընկողմանեսցի ընդ ստուերախիտ հովանեաւ տարածեալ դեղձենւոյ · Ճեմեսցիս ընդ նմա վարդքաջ ընդ առաւօտն՝ յորժամ ցօղն տակաւին խոնաւ պահէ զխոտս դաշտավայրաց · Ճեմեսցիս ընդ նմա ՝ի մեղմ արշալուսին՝ յորժամ խաշնարածն փակէ զգոմ իւր և երեկոյեան աստղն երևութանայ : Ո՞վ է սա ՝ որ գայ ՝ի հարաւոյ : Պատասխանք և օրհներգք ՝ ասացէք ինձ՝ եթէ գիտէք՝ ո՞վ է սա . և զի՞նչ է անուն սո՛ր :

---

Ո՞վ է սա՝ որ գայ լրջամիտ ընթացիւք և յանդէտս ՝ի վերայ մեր հասանէ : Զանդերձս · նորա կարմրացեալ են արեամբ խաղողոյ · և որայք հասունացեալ ցորենոյ պատեալ են շուրջ զգազաթակողմամբք նորին : Զերք նր բարակ են՝ թխագոյն և գորշ · և սկսին թօթափիլ · Շարժէ նա զդեղին կաղնիս ծառոց : Զարկանէ զփող իւր և հրաւիրէ զորսորդս ՝ի զբօսանս իւրեանց : Զրացանն արձակէ զձայն իւր : Դողդոջուն կաքաւքն և գեղեցիկ սիրամարգքն արիւնաթաթաթաւթաւն ը օդն · և անկենդան դիաթաւալ անկանին առ ոտամբ որսորդին : Ո՞վ է սա՝ որ պսակեալ է զգլուխ իւր որայիւք ցորենոյ : Պատասխանք և օրհներգք՝ ասացէք ինձ եթէ գիտէք՝ ո՞վ է սա · և զի՞նչ է անուն նորա :

---

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Ո՞վ է սա՝ որ գայ ՚ի հիւսիսոյ զգեցեալ զսամոյրս և զաքիսէնս․ ծածկէ ուժգին զանձն իւր վերար-կուաւ իւրով: Գլուխ նր է կնտացեալ․ մօրուք նորա բաղկացեալ է ՚ի սայրասուր սառուցից: Ար-բէ նա զհուրն հրդեհալի՝, որպէս դիզեալ ՚ի խարուկի: Կապէ ոտից իւրոց զկօշիկս և անցանէ ընդ սառուցեալ լիճս: Շունչ նորա է թափան-ցանց և ցրտասառոյց․ և ՚ի ներկայութեան նորա ոչինչ դուզնաքեայ ծաղիկ համարձակի ամբառնալ զգլուխ իւր յերեսս երկրի: Յոր ինչ ձեռնամուխ լինի՝ փոխարկի ՚ի սառոյց: Եթէ հարկանէր մի անգամ զձեզ սառն ձեռամբ իւրով՝ իսկոյն անշարժ և անկենդան եղանէիք իբրև չկարող մի մարմարիոնի: Պատանիք և օրիորդք՝ տեսանէք զնա: Փոյթ ընդ փոյթ գայ նա ՚ի վերայ մեր․ և սաստ եղիցի փութանակի: Ասացէք ինձ՝ եթէ գիտէք՝ ո՞վ է սա․ և զի՞նչ է անուն սորա:

ԲԱՐԲԱԼԴ

### Ողորմութիւն:

Ողորմութին նոյն է ընդ սիրոյ և բարերարութն․ և նման է եղանակին սիրոյ միակերպ ստո-րագրեալ յԱւետարանի առ ՚ի ցուցանել զամե-նայն զբարի սիրելութին, զոր պարտիմք ունիլ առ միմեանս: Չէ հնար սմա պարունակիլ յե-րևելի խոկմունս ընդ հանրական բարեկարութն՝

որպէս յանձնախակի պարունակին 'ի նոյն խոկմունս անչօր և անպաղ : Սա ոչ է ասւզնանեալ յամբաւարդ աւրն բնութիւն այնմիկ՝ որ տայ մեզ շատանով ընդ այսու յիշին մեր 'ի չարաչնելոյ և 'ի չարիս մաղձելոյ համառուեցուցանող մերոց , ատանդ յորդորելոյ զմեչանէլ ումեք յօգնականութի ինչ : Հնարին դորմութիւնն է առաքինութիւն իրաղական : Սա ոչ է մանաւանդ որպէս առաքինութիւն մի միայնակ այլ բնութիւն իմն բնական , 'ի սրտի իբրև զաղբիւր մի՝ յորմէ բղխին ամենայն առաքինութիւնք բարերարութեան՝ բարեսրտութեան՝ հեշտաբարոյութեան՝ առատաձեռնութեան՝ գթութեան և ասպնջականութեան՝ իբրև՝ գոլ է որպէս ճանաճին փոխեց : Ընդհանրական բարեկամութեանն է առ այլս՝ տուեալ է մանաւանդ որպէս գթութիւն իւր առ այնոսիկ՝ ընդ որոց ունին քաղաքակցութիւն · և որք ուղղակի ենթարկեալ են բարեգործութեանց մերոց : Ի քաղաքէ կամ 'ի համաքաղաքութէ անտի՝ որում միձուկեալ եմք՝ իջանէ սա առ առաւել փոքրիկ ընկերակցութիւնս մերձաւորութեան՝ ընտանեաց և բարեկամութեան · և սփռէ զինքն 'ի վերայ բոլորադարձ շրջանի կենդաղական և անձնին քաղաքավարութեան · Ստանոր չէին ինձ կմբ ասել , զի առաքինութիւն այս զուգանէ զխառն զանազան ոք մի՝ որ սոյ խոհաքանչիւր ումեք ըղխառն յօժ յորջորջմ սիրոյ մերոյ : Ողորմութեն՝ եթէ զանաշնար լինիցիմք համարել զնա այնպէս՝ լինիցի ընդհանուր իմն առաքինութի . և բաղկա-

նայցէ 'ի սոսկ բանս առանց շարժելոյ զսիրտն: Ճշմարիտ ողորմութիւն ոչ ձկտի 'ի կափուցանել զաչս մեր 'ի որոշելոյ զբարիս և զչար մարդիկ, և ոչ ջերուցանել զսիրտս մեր 'ի վերայ նոցա՝ որք բարեկամ են մեզ. և 'ի վերայ նոցա՝ որք վնասեն զմեզ: Պահպանէ սա զխնամածութիւն մեր վասն բարեաց. և զքաղցրութիւն մեր՝ վասն բարեկամաց մերոց: Ներշնչէ սա 'ի մեզ վասն թշնամեաց մերոց զթողութիւն՝ զմարդասիրութիւն և զփոյթ 'ի դէտս երջանկութեան նոցա: Ընծէ զարիասրտութիւն ընդ հանրական և զազատակամութիւն մտաց: Զգացուցանէ զհեզաբարոյութիւն բնութեան. և ցուցանէ զքաղցրութիւն բարուց: Շարժէ զհամակրական կարեկցութիւն ընդ նոցա՝ որք բերկրին. և ընդ նոցա՝ որք աշխատեն: Ուսուցանէ մեզ առ 'ի չարհամարհել և չանարգել զոք: Ողորմութիւնն է մխիթարիչ վշտացելոց՝ պահպանիչ տառապելոց՝ հաշտեցուցիչ տարաձայնութեան՝ միջնորդ յանցաւորաց: Մտերմութիւն է սա 'ի բարեկամս. հռչակաւոր հոգի 'ի մազխատորսի. արդարակորովութիւն և համբերութիւն 'ի դատաւորս. խոնարհութիւն 'ի թագաւորս. և հնազանդութիւն 'ի հպատակս: Ի ծնողս է հոգաբարձութիւն և պաշտպանութիւն. 'ի մանկունս է յարգութիւն և հնազանդութիւն. 'ի կարծոյ՝ սա է արմատ կենցաղակցական կենաց: Սա է արեգակն՝ որ ջերմացուցանէ և առոյգացուցանէ զբնակալս մերոց: Նման է սա ցօղոյն Հերմոնայ՝ ասէ Սաղմո-

տողն . և իբրև զցօղ՝ որ իջանէ ՚ի լերինս Սի-
նայի . ուրանոր ԱԾ կարգեաց զվայելչութիւն և
զկեանս յաւիտենականս :

ԲԼԷՐ

## Բարեբաստութիւն կրկնապատկի բարի մարդոյ :

Բայց ՚ի բարեխառն կանոնաւոր՝ և առաքինի
անձանց ոչ ոք գիտէ վայելել զբարեբաստութի .
՚Ի ձեռն բարեբաստական մխիթարութեանց
վայելեն նոքա զառնացի բերկրութիւն անյող-
դողդ և անապականն մտաց : Ոչ կայ առնուն ՚ի վայե-
լուչ անդուոյ՝ մինչև էջէ վայելչութիւն ՚ի
տաղտկութիւն փոխել . և բերկրութիւն ՚ի նե-
ղութիւն : Օտար են նոքա զանգատանացն այ-
նոցիկ՝ որք բղխեն ՚ի մոլամաղձութէ՝ ՚ի ցնորից
և յամենայն երևակայական մտաց տպաւորեալ
մտաց : Որինչ խաղաղարար փափկասիրութիւնն
նուաղեցուցանէ զմարմին և զմիտս՝ մաքրութիւն
և առաքինութիւն բարձրացուցանեն զամենայն
զզօրութիւն մարդկային վայելչութեան :
Անզօր և մեղկ են բովանդակ բերկրութիւնքն
այնոքիկ՝ յորս սիրտն չունի հմանակցութիւն :
Անձնաւորական բաւարարութիւնք յոռեաց ան-
ձուկ են ՚ի սահմանս իւրեանց . բարեբաստութ
կրկնապատկի բարի մարդոյ՝ առատաձեռնօրէն ՚ի
կիր առնլով նորա զոյն : Ամենեքեան՝ զոր
երջանիկ առնէ նա՝ դարձուցանեն նմա զնոյնաս

բաց բարեբաստութիւն ։ Ի մերձաւորութեան տնային խանդակաթութեան, ՚ի միակցութիւն բարեկամաց, յերախտագիտութիւն հպատակաց, յարժանապատուութեան և ՚ի բարեկամութեան ամենեցուն՝ որք ճանաչեն զնա՝ տեսանէ յիւրաքանչիւր կողմանէ զբարիս բազմացեալ շուրջ զիւրև ։ Բաց այնմ՝ յորժամ ունկն լսէր զձայն իմ՝ օրհնէր զիս. և յորժամ ակն տեսանէր զիս՝ վկայութիւն տայր զինէն. քանզի ապրեցի զչքաւորս՝ որք աղաղակելով զօգնութիւն հայցէին. և հասի ՚ի թիկունս որբոց և այնոցիկ՝ որք ոչ ունէին ինքեանց զոք օգնական ։ Օրհնութիւն նորա՝ որ մերձ էր ՚ի մեռանիլ՝ եկն ՚ի վերայ իմ. և պատճառեցի սրտի այրւոյ ցնծալ բերկրութեամբ ։ Աչք էի կուրաց և ոտք կաղաց. հայր էի տկարաց. և զպատճառն՝ զոր ոչ գիտէի՝ հարցափորձէի ։ Այսպէս՝ մինչ արդարն ծաղկի իբրև զծառ՝ որ անկեալ է ՚ի գնացս ջուրց, տայ և զպտուղ իւր ՚ի պատշաճեալ ժամանակի. և զպտուղն զայն ոչ տայ վասն ինքեան միայն ։ Ծաղկի նա ոչ իբրև զծառ յառանձնաւոր ինչ անապատի՝ որ սփռէ զբողբոջս իւր առ հողմս, և ոչ պտուղ ընծայէ կենդանւոյ իմիք և ոչ զըսառէր՝ այլ իբրև զծառ ՚ի մարդաբնակ քաղաքի. ոմանց ընծայէ զբարեկամական հովանի. և ոմանց շնորհէ զպտուղ ախորժելի՝ յոր ոչ ըքանչանան ամենեքեան վասն գեղեցկութեան նորա. այլ ճանապարհորդք օրհնեն զնա վասն հովանաւորութեան նորա. և քաղցեալք գովեն զնա վասն ուտելեացն, զորս ընծայէ ։

ԲԼԷԸՐ

## Գերութիւն մոլութեան :

Ի մոլութենէ սպառնացեալ գերութիւնն երևի յենթակայութեան, ընդ որով ածէ զյանցաւորն առ սպարապետս արտաքին ծոխութեան : Ոչ ՚ի ներքին համբաւոյ ազատութեան է անկախութիւն, զոր նոյն պարզէ : Նա՝ որ ճշմարտապէս ազատ է՝ առաւել է քան զամենայն ծառայականութիւն և զնկուն ենթարկութիւնս : Հնար է նմա կախիլ զինքենէ. և մինչ մեծարէ զվեհս իւր վայելուչ հպատակութեամբ, ոչ ցածուցանէ զանձն իւր խոնարհելով նոցա. և ոչ հարկադրի ՚ի գնել զշընորհ նշ ՚ի ձեռն անարգ հնարից : Այլ տակայն՝ յանցաւորն գերի է յամենայն տեսակէ սոյնասորա ազատութեան : Կիրք և սովորութիւնք նր առնեն զնա բոլորովին կախեալ յաշխարհէ և դշնորհաց աշխարհի, յանհաստատ բարեաց բաղդի և զակար բնութեանց մարդկան : Նա՝ զի միշտ նա այսոքիւք կենցաղավարի և ՚ի մէջ սոյոցիկ խնդրէ ցերջանկութ իւր. ըստ որում կիրք նորա տան նմա երթալ զհետ բերկրութեց՝ ճոխութեց և պատուաւորութե : Չունելով յինքեան չզանձարան վայելչութեան՝ դիմէ միայն յիրս արտաքինս : Յուսադրութիւք և երկիւղք նորա բոլորովին կախին զաշխարհէ : Մասնակից լինի նա ամ փոփոխականութեց նորա. և չարժի յիւրաքանչիւր հողմոյ բաղդի : Այսպիսին՝ ՚ի ճիշտ միտս առեալ՝ գերի է աշխարհի :

Կրօն և առաքինութիւն 'ի միւս կողմանէ ընծայեն մտաց զկրթութիւնս ազնիւ անկախութեան : Արդարն բաւարարեալ շատանայ յինքենէ : Ո՛չ արհամարհէ զշահս բաղդի . սակայն ոչ զետեղէ զերջանկութիւն իւր 'ի մէջ նոցա : Զափաւոր մասամբ իմն 'ի նոցանէ հնար է նմա տուարորել . և բաւարարութիւնն է երջանկութիւն : Երջանիկ է 'ի համեստութեան իւրում . և իբր ևս զարժանապատուութէ բարեաց . դնելով զհաստատուն յոյս իւր 'ի նախախնամութեան և 'ի խոստմունս Այ՝ ազատ է յամենայն ծառայական կախմանէ զայլ իմն իրաց : Հնար է նմա պատել զանձն իւր 'ի բարի խղճմտանս . և անճրկելագաբար հայիլ 'ի փոփոխութիւնս աշխարհի : Ամենայն ինչք աշխարհի փոփոխեսցին զնովաւ՝ որպէս և կամին . այլ սակայն՝ հաւատայ նա զի մերատեսչութիւն երկնայնոյն կարգեալ է զայնոսիկ 'ի բարութիւն իւր :

Աստ այսորիկ բազում հայցեալ յԱյ՝ և սակաւ երկուցեալ յաշխարհէ՝ հնար է նմա դիւրանալ յամենայն վիճակի : Դա՝ որ սեփականէ ինքեան զայսպիսի հաստատութի մտաց , արժան է կոչիլ ճշմարտապէս ազատ : Այլ արդ՝ անկ է կոչել զմարդն զայն ազատ՝ որ չունի զոչինչ սեփական ինքեան . և տէր է ոչինչ ստացուածոց . որոյ սիրտն և ոչ է ինքեան սեփական . այլ է յաւելուածն արտաքին իրաց և խաղալիկ բաղդի : Այսպիսի անձն արժան է կոչիլ ազատ՝ թէպէտ և արտաքին երևոյթ նորա զծառայ երևեսցի

ոյժ՝ զոր ժպիրհ կիրք նորա կալանաւորեն 'ի հրաւէրս խորեանց . 'ի բաց ուղարկեն զնա յ հաճոյից խուլեանց առ 'ի ծառայել և աշխատել և հայցել զմիայնակ վայելչութիւն իւր 'ի դիպւածոց աշխարհի : Այսպիսին արժան է կոչել ազատ՝ որ պարտ է մարդելուզական ստայս. դութը կենցաղավարել առ 'ի յաջողել յանկնալութիւնս իւր . որ պարտի տանել այս իմիք ցնորից և այն իմիք ծաղու . որ պարտի խոստովանել զծարբնկամութիւն՝ ուրանոր է ատելութիւն . և ցուցանել զմեծարոյութիւն՝ ուրանոր գոյ արհամարհութիւն . որ ոչ համարձակի յերկնել 'ի կերպարանս իւր իսկ, և սուել չանկեղծ կարծիս իւր . որ ոչ վստահանայ լինել համեստ՝ զի գուցէ երևեսցի նկուն : Հաւատալ արժան է՝ զի ոչինչ շղթայք են այնպէս ծանր և անդադրին՝ որպէս այնք՝ որք կաշկանդեալ կապեն զապականեալ սիրտն ընդ դաւադիր աշխարհի այսորիկ . ոչինչ անհնարութիւն է այնպէս արհամարհ՝ որպէս այն՝ յոր ընկղմին զեղխասէրք՝ ագահք՝ և փառամոլք՝ առ 'ի գտանել զհեշտութիւն և զօգուտ և զերկրութիւն : Այլ սակայն՝ այս է նուազն ազատութիւնն՝ զոր խոստանայ մոլութիւն՝ իբր՝ զպարգև ազատելոյ զմեզ յապահով արգելմանց առաքինութեան :

ԲՆԿԵՐ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

## ՚Ի վերայ գեղեցկութեանց Սաղմոսաց ։

Մեծութիւնն ոչ տայ զազատութի ։ ՚Ի հոգունակութեանց և ՚ի կարեաց կենաց՝ մասնակցութի նորա ընդ նոսա պատճառէ նմա զախրագին իմն տեսարան։ Փորձեաց զփորձ սորա արքայն Իսրայելացւոց․ խնդրէր նա ՚ի բարեպաշտութեան զխաղաղութին զայն՝ զոր ոչ կարէր գտանել ՚ի թագաւորութեն իւրում․ և զիջուցանէր զխռովութիւ աւերութեան իւրոյ ածպաշտական ներկրթութեք ։ Անգին սաղմոսքն ընձեռեն այլոց զայնպիսի մխիթարութիւնս՝ զորս ընձեռնէին նմա ։

Յօրինեալ են նոքա վասն մասնաւոր առարկայից․ սակայն դիտեալ են վասն կիրառութեան հասարակաց․ թէ և աւանդեալ են իբրև զպարտականութի Իսրայէլացւոց ընդ օրինօք, սակայն պատրաստեալ են մեծապէս վասն պարագայից Քրիստոնէից առ Աւետարանաւ․ ընծայեցուցանեն նոքա աչաց մերոց զՍիօն ամենաչքնաղ իմն հանդերձիւ․ զեկուցանեն նոքա զճշմարտութիւս, զորս փիլիսոփայութիւնն ոչ երբէք քննել կարէր յայնպիսի ոճ մի՝ որում տողաչափութիւնն բնաւին ոչ կարէ հաւասարիլ․ մինչ պատմութիւն եղեալ է կարգ մարգարէութեան, և արբշութի տայ զամենայն զգեղս իւր առ ՚ի նկարագրել զերկրութիւնս փրկագործութեն ։ Յօրինեալ նոքա ՚ի շահեցուցանել և ՚ի հաճեցուցանել՝ հոգևոր առնեն զխմացականութին, բարձրացուցանեն զխանդակաթութիւ և զբոսեցուցանեն զերևակայութիւն ։ Յօրի-

նեալ ընդ զօրութեամբ Նորա՝ որում յայտնի են ամենեցուն սիրտք, և ամենայն դիտումնք՝ նախածանօթ՝ բերկրեցուցանէն զմարդիկ ընդ ամենայն տեսակս վիճակաց. քանզի են խորք զմանանայն՝ որ էջն ՚ի վերուստ. և պատշաճեցու իւրաքանչիւր ուրուք քմաց ։

Ծաւալել գեղատեսիլ արտադրութիւնք մարդկային իմաստութեան զկնի բանի մի վերծանութենց իբրև համաժողովածաղկունս թարգմանին ՚ի գլուխս մեր և կորուսանեն զանուշահոտութիւնս իւրեանց. սակայն անթարշամ դրախտային տունկք այսոքիկ եղանին՝ որպէս սովորական են մեզ՝ առաւել ևս գեղատեսիլ. բողբոջք նոցա երևին օր ըստ օրէ զարգացեալ. նորանոր անուշահոտութիւնք բուրին և նորանոր քաղցրութիւնք ելանեն ՚ի նոցանէ ։

Որ մի անգամ ճաշակեալ իցէ զքերթողանցութիւնս նոցա, ցանկալով կամեսցի տա ՚ի առնուլ զճաշակ նոցա վերստին. և որ առնու զճաշակ նոցա առաւել յաճախակի, քաղցրացուսցէ զնոսա առաւել քարեպէս ։ Իսկ արդ՝ եթէ հեղինակ նոցա փաղաքշէր զանձն իւր՝ զի թէ ոք յընթեռնուլն զբանս իւր ճաշակեալ էր զկէտն քաղցրութեանն այնորիկ՝ զոր ճաշակեաց նա ՚ի գրելն զայնոսիկ՝ ոչ աշխարէր զկորուստ վաստակոյ իւրոյ ։ Պարապումն այն հրաժարեցոյց զնա ՚ի խռովութենէ և ՚ի յաղմկոյ կենաց. յաղալակէ քաղաքաքաղաքավարութեան և ՚ի ձայնէ յիմարութեան ։ Անձայնութիւն և մտատանջութիւն աներևոյթ եղեն ՚ի ժամանակս ինչ.

և հոգունակութիւն և անյանդորրութիւն ոչ մնա-ծեցան յօժարան նմ : Ի միտոց նա ՝ի գործ իւր զուարթադէմ իբրև զառաւօտ . հանդարտութի գիշերոյ հրաւիրեաց զնա հեշտալից նմա . և նա կարէ իրաւամբ ասել , զի կերակուր և հանգս-տութիւն ոչ էին յաչս նորա գերեզմանց քան զայն : Ուրուքանչիւր Սաղմոս անչափաբար կատարելագործեցաւ ՝ի նմանէ . և ոչ մի ՝ի նոցանէ պատճառեաց նմա զանդիւրութի բայց միայն մերձին . քանզի տրտում էր նա յանժամ զի լռացուցեալ էր զգործ իւր : Ոչ երբէք ակն ունի նա առ ՝ի տեսանել յայսմ յաշխարհի զեր-ջանկագոյն ժամն զայնոսիկ՝ որք անցին ՝ի մտածո-ղութիւնս երգոյն Սիոնի : Կարի քաղցրաբար ան-ցին նոքա . անցանէին նոքա յանդորրու և տրա-փաչէս . քանզի մինչ այսանակ պարապեալ կայր ոչ համարէր զանցումն ժամանակի : Թէ և ան-ցին նոքա՝ սակայն թողին ՝ի միտս զքաղցրութի և զանուշահոտութիւն . և յիշատակութիւն նոցա է քաղցր :

ՀԱՐՆ

Երկինք և երկիր քարոզեն զփառս և զիմաս-տութիւն Արարչի իւրեանց : Երկիրն գեղեցկա-պէս սահմանեալ է մարդկային բնութեան :

Պարտ է մեզ համարիլ՝ զօրէնքն իւր և զպաշտօն զայն՝ յորում Աճումն ապրեսցէ ինքեան զիմա-

կարան. և զերկիրն՝ իբրև զմի 'ի յապարանից նորա: 'Ի սմա ամենայն ցածագոյն տեսակք շնչաւորեալ էակաց հնազանդին նմա զծառայք. և պատրաստ են 'ի կատարել զպատուէրս նորա առանց ինչ անսաստանութեն: Մարդն միայն կամակոր երևեցաւ. սա միայն է՝ որ ունի զկարողութիւն առ 'ի ընդդիմամարտ լինել պատուիրանաց նորա: Ա̃ծութիւնն համեցաւ վեհագոյն զօրուք իւրով ստեղծանել զնա վեհագոյն էակ. էակ մի՝ որ ունի զընտրութիւն 'ի մէջ բարւոյ և չարի. և ըստ իմիք նմանին գործակից է գիտաւորութեանն: Վասն այսորիկ արժան է մարդոյ համարիլ իբրև զէակ մի սահմանաւոր և առլցեալ նոյնահանգէտ կարողութեամբք զօրութեանցն Ա̃յ: Ա̃ծութիւնն զետեղեաց զնա յաշխարհ մի՝ որ կարօտի ձեռնտուութեան նորա. և ետ նմա զկարողութի̃ առ 'ի կազմել զխնձոյս կենցաղակցութեան յանկատար իմն աներևակութենէ:

Սակս այսորիկ եթէ համարիցիմք զերկիրն սահմանեալ վասն բնակութեան մերոյ՝ տեսանելոց եմք զի բազում իրք պարգևեցան մեզ 'ի վայելչութիւն. և բազում ինչք սահման մեզ 'ի օգտագործութիւն. բազում իրաւունք զոն մեզ առ 'ի երախտագիտութիւն առնել. և բազում պատճառս ունիմք առ 'ի գործունէութեան աշխատասիրել: Յայնոսիկ միծագիր սահմանս արարչագործուն՝ առ որս չէ հնար արուեստի հասանել՝ և որաց մեծագոյն ջանք մեր ոչ կարեն պատճառել զներգործութիւն, Ա̃ծութիւնն արարեալ է ինքնին

ամենայն ինչ զարմանահրաշ ճշմարտութեամբ և հիանալի գեղեցկութեամբ: Հայր մեր բազմօգուտ համարեալ է յայտնուիլ մասունս արարչագործութեն իբրև յառաջուցեալ՝ մասնաւոր պատկերս ստեղծական նորա. և իբրև զմասունս՝ զորս ոչ ոք գիտէ և կարող է ուղղագործել. վասն որոյ՝ և արարեալ է զնոսա անփոփոխ և կանոնաւոր յոյժ: Երկինք և հաստատութիւն ցուցանեն զիմաստութի և զփառս Արարչագործին: Աստղաբաշխք որք կարի հմուտ են ՚ի կարգս աստեղաց՝ ոչ կարեն գտանել և զոչինչ՝ զոր հնար իցէ առաւել գեղեցկացուցանել և բարձրացուցանել: Անութիւնն արարեալ է զնոսա կատարելագործեալ. քանզի ոչինչ ստորակայ եակի հնար էր ուղղել զթերութիւնս նոցա:

Դմին իրի՝ յորժամ յայսմ մասին նկատեմք զարարչագործութիւնն՝ չէ հնար մեզ տեսանել ինչ առաւել փառաւորդ՝ առաւել կատարելագործեալ և կամ առաւել ազնուելի: Տեսանեմք անդանօր զԱստուածութիւն մի բնակեալ ՚ի տիեզերս՝ անհնութեամբ տարածեալ յիւրաքանչիւր կողմանէ՝ կենդանութիւն պատճառեալ ամենայնի՝ և զուարթացուցեալ զզատաքութիւն տիեզերաց ներկայութեամբ իւրով: Ահաւասիկ՝ տեսանեմք զանհուն և զանկերպարան նիւթեղէն կերպարանեալ մի՝ որ բաժանեալ է ամենակարող զօրութեամբ նորա ՚ի պէսպէս աշխարհս. և յայնպիսի տեղիս է տարածեալ՝ յորս չէ հնար երևակայութեան

տանել զուղղութիւն ։ Յայսմիկ մեծագիր թատրոնի փառաց Նորին հազարաւոր արեգակունք զորէն որբեւական մորոյ զուարթացուցանեն զյառկացեալ շրջանակս իւրեանց . երեւեալ և աներայթ եղեալ ըստ ճծայլին հրամանի նորա ։ Տեսանեմք զպայծառափայլ լուսաւոր մեր մեծ . որ հաստատեալ ՚ի կեդրոն շրջանակի իւրոյ՝ շրջեցուցանէ զմոլորակս ըստ ժամանակի հեռաւորութեան նոցա . և պայծառագոյն ըղձառագայթիւք բաշխէ զլոյս և զջերմութիւն և զներգործութիւն ։ Երկիրս ևս յայտնի երեւի մեզ ըստ երկպատիկ շարժման իւրոյ . միով պատճառել զփոփոխութիւն եղանակաց . և միւսով՝ զբերկրման յեղափոխութիւ տունջեան և գիշերոյ ։ Ո՜ ինչպիսի աննմանելի և լրիվ մեծագործութեամբ կատարեալ են այսոքիկ ամենեքեան ՚ի ձեռաց բարձրելոյն . ինչպիսի դիւրութեամբ և աննմնջութեամբ յաշխատանաց ՚ի լրումն է ածեալ այս ամենայն ։ Ո՜ որուն արուեստական հնարից բազմիցս ընդ միջեալ խափանի . և հաւասար ընթացք նոցա ցուցանեն զարգելմունս՝ որոց հանդիպին . այլ սակայն երկիրն անխոս և անյողդողդ շրջաբերութեամբ հետըն հետէ յանդիման կացուցանէ արեգական զիւրաքանչիւր մասն զանազանածոյ իւրոյ . և միանգամայն ընդունի զսնունդ և զլոյս յայնմիկ ծնողէ դալարութեան և պտղաբերութեան ։

Սա սակայն՝ ոչ միայն՝ այս օրինակ ընդունի երկիր զդարմանս լուսոյ և ջերմութեան՝ այլ հա-

մայն երեսքն ծածկեալ, են անօսր մթնոլորտիւ․ որ շրջի ընդ շրջաբերութեան նորա և պահպանէ զնա յարտաքին վնասակար ուժենէ։ Խստագոյնք սրնգական այսանակ փոխագրին 'ի ջերմութիւն ննդական․ և մինչ երեք երկրի այսպիսի ծածկութիւն պահպանին՝ բարեխառն ջերմութիւն իւր գոյանայ յընդերս նորա․ որ սատարէ առ 'ի ծածկել զնա գալարութեամբ։ Զուրք և մատակարարել լինին բարեխառն առատութեամբ առ 'ի պահպանել զկեանս, և կենդանի պահել զգալարութիւն։ Երկինք եղանեն առ 'ի պայծառել զուսաւորսն և առ 'ի պատճառել զփոփոխս սղբերաց։ Զուլք տարածին 'ի միոյ աշխարհէ մինչ 'ի միւս աշխարհ․ և պատրաստեն ամենայն տեսակաց կենդանեաց․ որոց հնար է լուծանել զպէտս կենաց մարդկան, և նաւացուցանել զերկիր մեր բաւական իւր գոլորշեաւ։ Հողմք հնչեն ընդ երեսս երկրի առ 'ի պատճառել զառողջ․ [illegible] և զգալարութիւն։ Համլութիւն երեկոյի հրաւիրէ զարարածս 'ի խնձոյս հանգստեան․ և յետ արթնութիւն առաւօտու վերանորոգէ զնոսա վասն աշխատութեան գործոյ։

Այսպիսի են բերկրութիւնք բնակութեան այնորիկ՝ որ վիճակեցաւ մարդոյ․ առանց միոյ յայացանէ թշուառական և ապերջանիկ եղանակս․ և զոչ մի 'ի սոցանէ գործունէութիւն նորա յօրինել կարէր։ Սակայն՝ մինչ 'ի միոյ կողմանէ բազումք 'ի կարօտութենէ նորա այս օրինակ լնանին՝ 'ի միւս կողմանէ բազում անհնարութիւնք եղա-

նեն առ ՚ի զարթուցանել զգործունէութիւն նորա: Ընտանութիւն այս՝ թէպէտ առատ է ամ քաղցրութք օդոյ՝ գալարութեան և ջրոյ, սակայն ամայի անապատ իսկ է առանց արդարութեան մարդոյ: Ցածագոյն կենդանին գտանէ յանապատս բնութեան դիւրութիւնս առաւել քան զնա՝ որ պարծի զանձանէ թէ լինել տէր նոցա: Փոխարինէ՝ ջեռուցեալ և ամենայն բարութիւնք օդոյ մասնաւորապէս ահաւոր և սարսափելի են յաչս մարդոյ. որ գիտէ զելս նոցա և ՚ի հեռաւոր զանգիտէ ՚ի ժամանակէ նոցա: Երկիրն ևս ուրանոր ոչ է հասեալ ձեռն մարդոյ՝ արկանէ զիւրև զմարախախ և զահաւոր հայեցուածս: Անտառք նսեմացեալ են և ստորերախիտ եղեն. մարգագետինք ծածկեալ են գառնահոտ տնկովք. և վտակք անցանեն առանց հաստատուն ինչ առուի: Անութիւնն՝ որ նպաստամատոյց եղև ամենայն ստորին կարգի էակաց՝ զանց արարեալ անհոգացեալ է զմարդով. վայրենի և անկիրթ մարդոյն երկիրն երկրի բնակարան աներակութեն. ուրանօր ոչ բաւէ կարողութիւն նորա առ ՚ի պաշտպանել անձին իւրում. և յայն սակս կերակուր նոր է առկախեալ:

Աշխարհ մի այս օրինակ լցեալ բարեօք ՚ի միոյ կողմանէ, և անդիւրութեամբք ՚ի միւս կողմանէ, է վայելուչ բնակարան բանականութեն և յարմարագոյն տեղի առ ՚ի վարել զգործունէութիւն ազատ և մասնաւոր ստեղծուածոյ: Անդիւրութիւնքս այսոքիկ՝ զորս արուեստի

հնա՛ր է փարատել, և նախատեսութեան՝ ընդդիմակաց լինել. են քաջայարմար պատճառ գործադրութեան զօրութեանց մտաց նորուն. և սաստիկն առաւել ևս տա ՝ի նմանողից առնել զնա Ստեղծչի նորա: Ծնութիւնն երկրութեամբ սեռանէ զստեղծեալն զիւր եալ ՝ի փոխադրել զթշուառութիւն բնական վիճակի նորա ՝ի թատրոն մի բերկրաշնորհ ուրախութեան, յածել զամենայն զդաժանաբարոյ զազգս արարածոց ՝ի հնազանդութիւն կամաց նորա, և ՝ի պատճառել նոյն բարեձևութիւն և զկարգաւորութիւն ՝ի վերայ երկրի՝ ուր պայծառ գաղափարն է կազմուած իւր երկնային:

ԳՕԼԴՍՄԻԹ

Եօթն իմաստասէրքն Յունաստանու. որ է առակ իմն ՝ի գերմանացւոյ Լիննայոսէ. և թարգմանեալ ՝ի Լատինական լեզուէ:

՝Ի ժամանակի միում դէպ եղեւ մի անգամ յԱթէնս եօթն իմաստասէրքն Յունաստանու. և յառաջադրեցին զի իւրաքանչիւրն ՝ի նոցանէ ասիցէ թէ զինչ է առաւել հրաշալի ՝ի մէջ մեծամեծ գործոցն Ածութեան: Առաւել իմաստնագոյնն ՝ի նոցանէ առաջի սրբոյ նոցա զկարծիս ոմանց յաստղաբաշխից վասն հաստա-

սուն ատեղաց · զորս համարէին լինիլ պէսպէս արեգականք · որք ունէին զմայրուակս՝ շրջաբերոլս զնոքիմբք · և առատ էին ամենայն տնկովք և կենդանեօք զորէն այսր երկրի մերոյ ։ Նորոգեալ նոցա յայսմ մտածութեան՝ համաձայնեցան առ ՚ի աղաչել զԱրամազդ զի թողուցու նց գէթ առնել զճանապարհորդութիւն մի դէպ առ լուսինն · և մնալ անդանօր ցերիս աւուրս առ ՚ի նկատել զհրաշագործութիւնս տեղւոյն այնորիկ · և տալ զպատմութիւն ինչ զնոցանէ ՚ի միաբանութեն իւրեանց ։ Հաճելի երևեցաւ աղաչանք նց Արամազդայ · որ պատուիրեաց նոցա առ ՚ի ժողովել ՚ի բարձրագոյն լեռան մի · ուրանօր պատրաստ եղիցի ամպ մի առ ՚ի ածել զնոսա ՚ի տեղին յայն, զոր ցանկային տեսանել։ Առին նոքա ընդ իւրեանց զոմանս գրչաւոր ընկերակիցս առ ՚ի օգնական լինիլ նոցա ՚ի ցուցանելն և ՚ի նկարելն զառարկայս՝ որոց հնար էր պատահիլ։ Հասեալ ապա՝ ժամանեցին նոքա ՚ի լուսինն · և գտին անդանօր զպտղատ մի՝ բարեպէս վայելչացեալ վս ասպնջականութեան իւրեանց ։ Ի միւսում աւուր կարի յոյժ աշխատեալ և խոնջեալ նոցա ՚ի ճանապարհորդութեան իւրեանց՝ ննջեցին յանդորրու առտնին մինչև յերեկոյ · և տակաւին անզուարթ եղեալ ՚ի վաստակոյ՝ նորոգեցին զինքեանս կարի քաղցրագին իմն կերակրով · որ այնքան դիւրամարսանն և ախորժահամ էր՝ մինչ զի միանգամայն նուաճեաց զհեստաքրքրութիւն նոցա ։ Այսօր տեսին ՚ի լուսամաքն միայն

զզուարճալի տեղին զայն, որ այծնազարդեալ էր գեղեցիկ ծաղկամբք և շուշանօք, և յորժամ փողփողէին ձևառագայթք արեգական մանուկք իմն պայծառութեամբ. և լուսն շնորհազեղութի քաղցրաբարբառ թռչնոց՝ մինչ երեկոյացաւ։ Ի միասնամաւոր վաղբոյ ընդ սառնաւուտն կանխեցին առ՚ի սկսանիլ զդիտողութիւն իւրեանց. սակայն ոմանք ՚ի գեղեցկատիպ օրիորդաց քաղաքին եկեալ յայցելութի նոցա՝ խորհրդոյ տեսոյն զնոսա չասպրին նորոգել զզօրութիւնս իւրեանց մինչչև էին տեսեալ զանձինս իւրեանց տարժանակիր գործոյն այնմիկ զոր պատէին յանձն առնուլ։ Ժամադրակ կերակրոց՝ սխորժաճաշակ գինիք և գեղեցկութիւնք օրիորդաց այտոցին բռնացան ՚ի վերայ յառաջադրութեան տարրախանաց այսոցիկ։ Գեղեցիկ դայլայլիկ իմն երաժշտութեան ածին ՚ի ներքս. պատանիքն սկսան պարել. և ամենայն ինչ փոխադրեցաւ յուրախութիւն. այնպէս զի բովանդակ օրն այն եանց ՚ի զուարճութեան. մինչ ոմանք յընթերակայ ընկալցաց նախանձաբեկ եղեալ ընդ ուրախութի նոցա՝ մտին ՚ի ներքս սատերոք։ Երիտասարդքն ՚ի բազմահանգ անտի ջանային խաղաղացուցանել զփոքրկտղայն՝ խոստանալով զի յաւուր երկրորդում անտարակոյս ածցեն զխորհուրդ բուն ՚ի գատաստան։ Եւ յա օր եւ եանց. և յերկրորդում աւուր վէճ նոյնգեալ յեւ իեւ և օրն այն ամբողջ պարապեցաւ ՚ի չարախօսութիւ, ՚ի փառասիրութիւնս և յընդդիմաբանութիս. յորում և վերջացաւ պայմանադրութիւն Համադդայ։ Ի վերադառնալ նոցա ՚ի Յունաստան՝ քա-

# ԱՆԴԻՏԱՑ ԱՆՊԷՏ

ղաքն ողջոյն դիմեցին առ նոսա առ ՚ի լսել ըզ-
հրաշս լուսնի · սակայն ամ՝ զոր կարէին պա-
մել՝ այս էր՝ քանզի զայս և ելթ գիտէին՝ զի եր-
կիրն ծածկեալ էր պէսպէս դալարութեամբք և
ծաղկամբք · և թռչունքն եղանակէին ՚ի ստեղունս
ծառոց · սակայն բոլորովին անտեղեակ էին թէ
զինչպիսի ծաղկունս տեսին և կամ զինչպիսի
թռչնոց լուան յեղանակել : Յոյր սակս զարհա-
մարհանս կրէին յինքեանս յամենայն ուրեք :
Եթէ պատշաճեցուցանիցեմք զսակս զայս մար-
դոյ այժմեան դարու՝ կարի ուղղագոյն իմն նմա-
նութիւն յանդիման լինիցի աչաց մերոց : Երեքին
տուրքս այսոքիւք տուեալն նշանակէ զերիս հա-
սակս մարդոյ : Նախ՝ զպատանեկութիւն իւր՝ յոր-
ում կարի անկար եմք ըստ ամենայն մասին հայ-
իլ ՚ի գործս Արարչին · եղանակս այս անցանէ
ողջոյն ՚ի հեշտութեան՝ ՚ի փափկասիրութեան և
՚ի խրախճանութեան : Երկրորդ՝ զմտերմութիւն
տեմ՝ յորում մարդիկ պարապին առ ՚ի ընտրել
զեղանակ իւր կենցաղավարութեան՝ յամուս-
նանալ՝ զուսումն տալ մանկանց իւրեանց՝ ՚ի
ժողովել զճոխութիւն վասն նոցա և ՚ի կացու-
ցանել զպերճապատան մի : Երրորդ՝ զծերութիւն
իւր՝ յորում յետ ժողովելոյ զգանձս և զճոխու-
թիւնս՝ խնդրին յամբաստանութեանց և յօրինա-
կանացն ՚ի պատճառս ստացուածոց իւրեանց :
Այսպէս յաճախ դէպ լինի զի մարդիկ ոչ երբէք
զմտաւ ածեն եթէ յինչ վախճան են սահմանեալ
և էր վասն եկեալ յաշխարհ :

ԲՈՆՆԵԼ ԹԱՐՆՏԸՆ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

## Առաքինութիւն և բարեպաշտութիւն են մեծագոյն օգուտ մարդոյ։

Տեսանեմ զիս լինել 'ի փոքրիկ տեղւոջ միում. որ շրջապատեալ է յամենայն կողմանց յանհուն յանյայտ տարածութեամբ երկրի։ Ո՞ւր եմ ես։ Յի՞նչպիսի տեղւոջ բնակիմ։ Յօրինեալ է այն ըստ ամենայն մասին վասն հաճութեան իմոյ։ Չի՞ք ինչ մնալ ցրտոյ կամ շոգոյ 'ի նեղացուցանել զիս։ Ո՞չ երբէք վշտացնիմ 'ի կենդանեաց՝ թէ 'ի բանականաց և թէ յանբանից։ Ամենայն ինչ ենթակայ են ինձ՝ որպէս թէ կարգեալ էր իմ ընդ նոսա վեհիմ։ Ի՞նչ. ո՞չ է այսպէս. անհնար է այսպէս լինել։ Ուրեմն աշխարհս ո՛չ երբէք նախապէս արարեալ վասն հաճութեան իմոյ միայն. ո՛չ. ո՛չ երբէք։ Այլ սակայն՝ չէ՞ հնար յօրինել զայն այնպէս 'ի ձեռն յատկական գործունէութեան իմոյ։ Եթէ անդր է քան զկար իմ յօրինել զմարդ և զգազան՝ զերկին և զերկիր՝ ուրեմն չէ՞ հնար ինձ այնպէս առնել։ Ապա ուրեմն զի՞նչ զհետ գայ. կամ զի՞նչ այլ հետևումն կարէ լինել քան զայս։ Եթէ խնդրիցեմ զշահ մի՝ կցեալ ընդ շահուց այլոց՝ խնդրեմ զշահ մի պատրողական և դիւրաշեղծ։

Օ՛մարդ ուրեմն պարտ է ինձ կամիլ։ Զունիմ ես շահ ինչ բնաւին։ Եթէ չունիմ, ուրեմն մի՛ ո՛չ իրիք է զետեղեալ իմ սէր։ Նայց ընդէ՞ր չունիմ զշահ։ Չէ՞ հնար ինձ շահաւոր լինել ընդ ոչինչ՝ բայց միայն ընդ անջատ և անկից շահ մի.

այնքան անպատշաճ՞ կենակցական շահն՝ կցեալ ընդ շահուց այլոց՝ մինչև անարժան լինել ընդունելոյ: Արեղուն՝ բէշին և երամք ընկերակցական կենդանեաց բաւական են 'ի շփացուցանել ինձ թէ սակաւիկ մի հնարաւոր էր ունիլ ստուգաւոր զշահ Որբեան հաստատեալ դիտեմ զի ոչ է՞ հնար առնել զայս հաստատուն զմարդոյ: Ջանանի՞ այսմիկ. և զինչ է հետևումն: Եթէ այսպէս՝ ուրեմն պատիւ և արդարութիւն են շահ իմ. ուրեմն բովանդակ ժողով բարոյական առաքինութեանց են շահ իմ. առանց դուզնաքեայ իմն մասնակցութեան ընդ սոցա՝ աւազակաց ևս չէ հնար ունիլ զկենակցութիւն:

Սակայն առաւել ևս ասացից. ոչ զկայ առնում ստուգաւոր. շարունակեցից զկենակցական շահս զայս որսան մերթ է ինձ հետևել պէսպէս տարընչութեանց իմոց: Ննցից յազգասահմն իմն՝ 'ի մերձաւորաց իմոց և յազգէ իմմէ առ բովանդակ ազգ մարդկան, որք սփռեալ են յոլորտս աշխարհի: Զունիմ ես բնաւին զառընչութիւն ընդ նոսա փոխադարձ օգնականութեամբք առևտրութեան, ընդ հանրական մասնակցութեամբ արհեստից և գրոց, և այնու հասարակական բնութեամբ՝ որում ամենեքեան եմ բաժանորդ:

Կարծեալ պիտոյ են ինձ կերակուր և հանդերձք. առանց վայելուչ սննդական ջերմութեան իսկ և իսկ սպառեցայց: Զունիմ ես յայսմիկ դիտաւորութեան իմում զմասնակցութիւն ընդ երկրի՝ ընդ տարակաց արեգակն՝ յորոյ ճառագայ-

թից ընդունիմ զգօրութիւն՝ և ընդ այն զար-
մանահրաշ ընթացից և կարգի անհուն աստե-
ղաց երկնից, 'ի ձեռն որոց ժամանակք և եղա-
նակք մշտապէս միակերպ անցանեն։ Եթէ կարգս
այս մի անգամ շփոթիւր, ոչ կարէի արդ ըստ զկեր-
կեան մի և եւթ կենդանի մնալ · այսքան հարկա-
ւորաբար կախեալ կամ ընդհանուր երջանկութն
այսորիկ։ Զինչ ուրեմն ունիմ առնել, եթէ ոչ
'ի մեծացուցանել զբարեպաշտութիւն և զառա-
քինութիւն։ Ոչ միայն պատիւ և արդարութի՝
զորս պարտիմք առ գի մարդկան՝ է շահիմ՝ այլ և
երախտագիտութիւն՝ հանգստութիւն՝ խոնար-
հութիւն՝ փառաբանութիւն և ամենայն՝ զորս
պարտիմք այսմ մեծի աշխարհի և մեծի կառա-
վարողի նորա՝ ընդհանուր ծնողին մերոյ։

ՀԱՐՐԻՍ

## Յաղագս թողութեան։

Արք պարզ և բնական խոկմունք արդարութեն
համաձայնին ընդ երկնային կարողութեան առ 'ի
զօրացուցանել զպարտականութիւն թողութեան։
Նա՝ որ բնաւ ոչ է օխալեալ յընթացս կենաց
իւրոց՝ ընկալցի զիրաւունս աններող մնալոյ։
Այլ ծակոյն նոքա՝ որք իրագէտ են զսխալուց

և զյանցանաց՝ համարձակեսցեն զթողութիւնն իւրեանց զպարտս՝ զոր պարտիմք այլոց ։ Հասարակ սխալութիւնքն են հզօրեղ դասք փոխադարձ հեշտարութեան ։ Եթէ առաքինութիւնս այս անծանօթ լինէր ազգի մարդկան՝ կարգ և միաբանութիւն՝ խաղաղութիւն և հանգստութիւն օտար լինէին մարդկայինս կենաց ։ Անաստուածութիւնք փոխարարեալք ՚ի առատագին չափու՝ զոր կիրքն նկարագրէ՝ շարժէին փոխարինաբար զտրտմութիւն բարկութեան ։ Անսանձեալ անձինն լինէր վնասատոյց . և այսպէս սխալութիւնք՝ փոխադարձունք և նորա վնասակրութիւնք շղջղջէին յանդգնութեամբ . մինչ աշխարհ եղանիւր դաշտավայր արեան ։ Յաւէնայն կերպ ուր բանի մանեն ՚ի սիրտ մարդկան՝ վրէժխնդրութիւնն է [illegible] ։ Յորժամ թոյլ տամք նմա բռնանալ ՚ի վերայ մեր ըստ լիակատար զօրութեան իւրում՝ անդր քան զչափն գրգռեսցէ զնա առ ՚ի թիւնաւորել զքանի մի բերկրութիւն՝ զորս վայելէ մարդ յարդեան կացութեան իւրում ։ Մարդ որքան կրեսցէ զվնաս անիրաւութեան՝ այնքան առաւել ՚ի վտանգի է առ ՚ի կրել զշարիս միւելոյ զվրէժխնդրութիւն ։ Անիրաւութիւնն է թշնամւոյ ոչ կարէ պատճառել զշարիս զայնոսիկ՝ որք հասանեն վշտակրութեան այնմիկ՝ զոր ստեղծանէ անձին իւրում ՚ի ձեռն դժնդակ և կատաղի կրից՝ զորս թողու բառնալ ՚ի խորս սրտի իւրում ։ Եղեռնագործ հոգիքն այնոքիկ՝ որք բնակին յերկիր թշնամութեան՝ ապացուցեալ լինին իւ-

րեւ բերկրելոյ ՚ի վրէժխնդրութեան և ՚ի դժնդակութե : Այլ սակայն ամենայն՝ որ մեծ և բարի է ՚ի տիեզերս՝ է ՚ի կողմն գթութեան և ողորմութեան : Ամենակարող կառավարիչն աշխարհի՝ թէպէտ ընդ բազում դարս սրտմտեցաւ յանօրէնութենէ և արհամարհեցաւ յանբարեպաշտութենէ մարդկան՝ է երկայնամիտ և յամր ՚ի բարկութիւն : Որդի նորա՝ յորժամ երևեցաւ ՚ի բնութեան մերում՝ եցոյց ՚ի կեանս և ՚ի մահ իւր զամենապայծառ զաղափար թողութեան՝ զոր երբեք տեսեալ էր աշխարհի : Եթէ մի անգամ հայիցեմք ՚ի պատմութիւնս մարդկան՝ տեսանելոց եմք զի յամենայն ժամանակին՝ որք մեծարեալ լինէին իբրև զարժանաւորս կամ պանծացեալ իբրև մեծ՝ որոշեալ էին վասն այսորիկ առաքինութեան : Վրէժխնդրութիւն մնայ ի միտս փոքունց և ցածուց : Ազնուական և մեծաշուք հոգին յարաժամ ի վեր է քան զայն : Այս հոգի ոչ կրէ ՚ի վնասուց մարդկան պատասխանի վրիժու զայնոսիկ զորս առ ինքն գան : Ծողովեալ նորա ինքն լինիցեան՝ անշարժ արձանանայ ՚ի զօրութեան յարձակմանց նոցին . և առատասիրտ ողորմութեամբ առաւել քան բարկութիւն հայի յանարժան վարմունս : Իմա՛ է ասացեալն ՚ի վաղնջուց՝ չի մեծագոյն մարդ ՚ի վերայ երկրի ոչ կարէ առնել զինչ ինչ փութանակի՝ քան թէ բարի մարդ մի կարէ առնել ինքն մեծագոյն՝ ներողամիտ լինելով վնասուն այնմիկ :

ԲԱՆԲԸ

Շարժառիթք առ կիրառումն հեզաբարութեան։

Առ 'ի յառաջացուցանել զառաքինութիւն հեզաբարութեան` պարտիմք հայիլ 'ի հանգամանս մեր անաչառութեամբ և ուսանիլ 'ի սխալութեանց մերոց առ 'ի հատուցանել զշնորհն զայն` զոր պահանջեմք յայլոց։ Հպարտութիւն է` որ լնու զաշխարհս այսքան ժանտութեամբ և սաստկութեամբ։ Յորժամ կենցաղիմք ինքնահաւանութեամբ` մոռանամք զշնորհ լինելն մեր։ Պահանջեմք զմեծարանս` որոց չեմք արժանի։ Սխալ և անհամբեր եմք առ արհամարհութիւնս` որպէս թէ երբեք ոչ էր մեր արհամարհեցեալ. դիմակաց լինիմք նեղութեանց` որք թէ ոչ գիտէաք թէ զինչ էր 'ի կրել զայն։ Յաւուրցիկ փառակի փայլից հպարտութեան և յիմարութեան իջցուք 'ի դաշտավայր մեր վայելուչ։ Նկատեսցուք զբնական համահաւասարութիւն` յոր ոչ կերպայ նախախնամութիւն երկնային եդեալ է զմարդ ընդ մարդոյ. և մտախոհ լիցուք զսխալութեանց` որք հասարակ են առ ամենեսեան։ Եթէ զբնական համահաւասարութենէ մտախոհութիւն` և զփոխադարձ արհամարհութեանց խոհմունքն անբաւական իցեն 'ի յորդորել զմեզ 'ի մարդասիրութիւն, խուն ինչ մտածեսցուք թէ զինչ երևիցիմք յաչս Արարչին մերոյ։ Չունիմք մեք զոչինչ յայնմիկ հեզաբարութեան առ 'ի մատուցանել միմեանց` զոր այսքան ջերմեռանդութեամբ խնդրեմք յԱյ. Տնմիր է մեզ ակն ունել ողորմութեան կամ քաղցրութեան 'ի դա-

տաւորէ մարմն՝ յորժամ այսքան հեռի եմք ՚ի ցուցանելոյ զայն եղծոր մարում իսկ : Քննականութիւք նա և ՚ի մտախոհ լինիլ զդուզնաքեայ արժանաւորութենէ իւրոյն այնոցիկ՝ որք են տեղորական զրգռիչք անօրէնութեան և հակառակութեան : Ի շփոթեալ և ՚ի բարկացեալ ժամու տեսանեմք զամենայն հոգեցունծս պատիր իմն երդուեալ : Ամենաչնչին վախճան շահու կամ առաւելոյ փոխադրի յառաջակայ իմն ծանրագին․ և ամենափոքր յարձակումն երևի մեծագոյն վերջում : Նոյնպէս յորժամ բարկութիւն կամ հպարտութիւն տեղի տայ՝ ընդունայն հայիմք յորինուածս մեր զգաւոր չարեացն՝ յորոց երկնչիմք : Երկուութեն այն՝ զոր խառնեալ երկուղածութեան մեր տեղծեալ էր չքացեալ անյայտ լինի մեծագունայն : Նոյնպէս թէ և պատճառ հակառակութեան չքնաղ եւս ՚ի րամեան տակաւին : Ստորացուցեալ եմք զպարծանս մի․ զառանձնացուցեալ եմք զձեռնամի մի․ տերմանեալ եմք զօրհնութիւն սպասողյ կեղծաւորութեն՝ չարաչանութեան և կամ տկարութեան : Յառաջնեալքս զբարկութիւն մեր տկարն մի՝ յորժամ առ իւր տարաձայնութեան հանդիպին : Նախանձն երկցոյց զայնր ժամանակէ հանդարտութեն՝ որ իւրնին ժամանեցէ վաղվաղակի : Ո՜ որքան անձունք թէ գլխոյ տակաւ ունիմք չահի՝ ՚ի կատարի հակառակութեան, և թէ որքան յերջանկութենէ կենաց մերոց ՚ի բաց ձգել : Յամենափոքր ծակէ և դիւրաւ բղխին զառանցայ ջուրք՝ հակառակութեն՝ առաջին չէ հնար նախապէս տեսանել | գրիթոց

նոցա . և նա հազիւ երբեք սխալի 'ի հրելոյ զքաղցումն 'ի լթինաւոր ներգործութենէ նոցա՝ որ զառաջինն եթող չնոսա 'ի բղխել :

ԲԼԷԸՐ

## Մեծութիւն առաքինութեան 'ի մէջ ապա-կանեալ դաշտավայրաց :

Գերազանցագոյն և պատուականագոյն համբաւն՝ զոր հնար է ստանալ զմարդ և զքրիստո-նեայ՝ առաւելու լինել ընդդիմամարտ լինելով չարաչարաց մոլութեան և հետևելով Այ և առաքինութեան ընդդէմ ապականեալ և մեղ-ապարտ անձանց : Խորհելով 'ի հասարակի տե-սանելոյ եմք՝ զի որք յինչ կեիցէ մեծագին վի-ճակի կենաց մարդկանց երևելի են հանդիսա-ցեալ գիտնականս վասն խորին մտածողութբ և ազգայնագոյն խոհականութեամբ գործելոյ՝ որ համարձակեալ են զչարիս ժողովրդեան և հրա-պարակաւ են 'ի ծանրագոյն աշխարհի : Յոչ-ինչ իմիք այս երևի առաւել պիտանի և հար-կաւոր վասն պատմոյ՝ եթէ ոչ որ կրօն և բարոյականութիւն յարակցեալ են ընդ միմեանց : 'Ի ժամանակս բռնական բղջախո-հութեան զառաքինութիւնն և զհամեստութիւն անպարտ և անտարակոյս պահպանելով՝ յառան-ձին կամ 'ի հասարակական վիճակի սրբութեամբ

և արդարութեամբ հաստատուն մնալով՝ յընդդիմամարտութեանց և յուսաբեկութեանց միջի զանուէզի արհամարհանս և զնախատինս առելով՝ զկատարումն հասարակաց գործոց մոլեկանաց և ապօրինաւորաց արհամարհելով՝ և ոչ երբէք ամաչելով 'ի գեղեցկասարաս հատուցմանէ իւրաքանչիւր պարտականութեան մերոյ առ Ած և առ մարդիկ՝ ծնանի ճշմարիտ գերապանծ հեզահոգիութիւնն այն՝ ընդ որ զարմացեալ ափշեսցին ևս և անձինք խաժամուժք: Որքա՜ն հարկադրեսցին 'ի խղճէ մտաց իւրեանց 'ի խոստովանիլ՝ թէ այս այն մեծահոգի անձն է՝ զոր ոչ կարացաք հակեցուցանել յանարգ խոնարհմունս: Տեսանեմք զի ընդունայն է 'ի փաղաքշել և կամ սպառնալ նմա. հանգչի նա 'ի ներքս 'ի վերայ այնպիսի հաւատոյ միոյ՝ զոր չէ հնար մեզ շարժել բնաւին: Այսպիսի մարդոյ յինչ և իցէ պատահմունս պարտիմք յանձն առնել զխրատունս մեր: Անհնար է սմա մտանել 'ի յոյս իւր կամ լքանել զբարեկամ իւր և կամ թողուլ զհաւատ իւր: Այլն իրի անհիւրին առաքինութիւնս այս՝ որ է մեծապայական յորդութիւն իմն առ կրօնն՝ անդր է քան զայլ ամենայն սովորութիւնս և ընկերձիս. բանզի մասնաւորապէս նշանաւոր հանդիսացոյց զհամբաւս այնոցիկ որք ընդ ժամանակս ժամանակս փայլեցան յաշխարհի ազնուազգին պայծառութեամբ և նուաճեցին զյիշողութիւն իւրեանց ամենայն ապագայ սերնդոց: Այս էր՝ որ

եւ սեփականէ, նախնւոյն Ենովքայ զամենեւին-
անլուծական զ՚ի վերուստ պատուէասիրութեանն
նշանակ ։ Շարունակեացնա զգնալ ընդ Այ՝ յոր-
ժամ՝ աշխարհս ամենայն ապստամբեալ էր ՚ի նմա-
նէ ։ Սիրեցնա զԱծ · եւ սիրեցաւ ՚ի նմանէ · այն-
պէս զի՝ կելով նր ՚ի մէջ մեղաւորաց՝ փոխադրե-
ցաւ հրաշքանչ իմն եղանակաւ յերկինս առանց
տեսանելոյ զմահ ։ Արդարեւ փութանակի փոխե-
ցաւ նա յայսմ վայրէ · զի մի՛ անօրէնութիւնն փո-
փոխեսցէ զիմացականութիւն նորա կամ խաւ եշայ-
ութիւնն խարդախէր զհոգի նր ։ Յորժամ Սո-
դոմ ոչ կարէր հանել զատան արդարոյ ու ՚ի փըր-
կել զինքն. Ղովտ անարատ մնաց յանօրէնութեան
մէջի ։ Երկեացնա իբրեւ զհրեշտակ ՚ի մէջ նեեմա-
ցել հոգւոց · եւ ծախիչ ապականիչ հուրն իջ սխա-
մարակին՝ մինչ արդարն այն կոչեցաւ յերկնայ-
կն հրեշտակէ ու ՚ի ժողով մրաքոց իւր չարա-
գործ ։ Յորժամ մարդիկ ապականէ, էին զճանա-
պարհ իւրեանց յերկրի՝ արդարացաւ Նոյ՝ այր ար-
դար եւ քարոզիչ արդարութեան ։ Երկեաց նա մի-
այնակ · եւ ծաղր լինէր ՚ի այլոց նախատեաց ։ Այլ
ահային ամենեքին նորա իսպառ ալուր ընջեալ
ունայնացան ՚ի ջրհեղեղէ՝ մինչ նախախնամութի
երկնայնոյն պարգեւեաց նմա զպատիւ լինելոյ վե-
րանորոգիչ մարդկային եւ հայր նորոգ աշխար-
հի ։ Այսպիսի զարդարանք եւ այսպիսի պատիւք
պարգեւեալք Այ Նոյա՝ որք ընդդիմացան բազ-
մութեն չարագործաց՝ պարտին յարաժամ լինիլ ՚ի
միտս մեր ։ Ընդդիմացութք նոցա վասն նկուն եւ

տպաւորեալ գաղափարաց՝ զորս առնանեմք շուրջ զմեօք. և յորժամ 'ի վտանգի լինիմք յիշելով յայսպիսեաց՝ ամրացուցումք զառաքինութիւն մեր մտախոհ լինելով զայնոցունց՝ որք յառաջին ժամանակս փայլեցին իբրև զպայծառափայլ աստեղս 'ի մէջ շրջապատեալ խաւարի. և փայլին այժմ 'ի Թագաւորութեան երկնից իբրև զպայծառութիւն հաստատութեան երկնից մինչև 'ի յաւիտենս յաւիտենից :

ԲԼԷՐ

## Նեղութիւնք մոլութեան մեծագոյն են քան զառաքինութեան :

Թէպէտ ոչինչ կացութիւն մարդկային կենաց զերծ է յանդիւրութենէ՝ սակայն պարտ է խոստովանիլ զի առ 'ի յանցաւոր գնացից պատճառեալ անդիւրութիւնն կարի մեծագոյն է քան զոր յառաջ գայ 'ի բարեգործութենէ : Եթէ խնդրեալ իցեմք յաշխատանաց առաքինութեան՝ պարտիմք հաւատալ առնել զմեզ զի յորժամ ձկտիցիմք փոխանակել զնա՝ աշխարհ դնելոց է 'ի վերայ մեր զբեռն մի Թեթևագին յոյժ : Արտաքին երևոյթ բղջախոհ կենցաղավարուն միայն է զուարթագին և բերկրագուարձ : Այլ սակայն՝ 'ի ներքս Թագուցեալ ունի զվաստակս՝ զնեղութիւնս և զտրտմութիւնս մահաբերս : Քանզի մոլութիւն

Թիւնաւորէ զերջանկութիւնն 'ի սկզբան՝ ներա-
ծելով զառողջութիւն 'ի միրտն: Ոգիրոն՝ զորս
գգուեալ փայփայէ՝ տանէ անկատար յագեցուցմք
միայն. և այնու զօրացուցանէ զնոսա առ 'ի բըռ-
նանալ 'ի լերինս 'ի վերայ ապերջանիկ զոհից իւ-
րոց: Ահա սխալումն իմն է կարծել՝ զի միշտ
ինքնուրացութեան արգելեալ են առաքինութիւնք:
Նա՝ որ երթայ զհետ աշխարհի՝ և տաւել նա՝
որ հեռացեալ է 'ի Տեառնէ՝ պարտի բառնալ զխաչ նորա.
և նմա՝ անտարակոյս երևեսցի այն բեռն մի տար-
ժանելի: Սովորութիւնն ժողովոյ ամենայն կրից
մերոց շրջել սանձարձակ. և յորժամ իւրաքան-
չիւրն 'ի նոցանէ պահանջէ զիրաւունս վեհապետն
լինելոյ՝ անհնար լինի յագեցուցանել զամենե-
սին: Բնաւոր ցանկութիւն բերկրելոյ կարէ միայն
'ի վճառութեան և 'ի յաղթահարութենէ ախոյենին
իւրոյ: Մինչ վշտակրութիւնք՝ զորս առաքի-
նութիւնն պահանջէ՝ են տեւական ստոտիկքան
զայնոսիկ՝ զորս փառամոլութիւն դնէ 'ի սէր դիւ-
րութեան. հպարտութիւն 'ի սէր յարգաւորութեան.
և ագահութիւնն՝ յախտ ունայնասիրութեան:
Վասն որոյ՝ ինքնուրացութիւն պատկանի 'ի հա-
սարակի մոլութեան և առաքինութեան. այլ սա-
կայն գոյ 'ի միջի նոցա նշանաւոր տարբերութիւն
մի. այսինքն՝ զի կիրքն՝ զորս առաքինութիւն խնդրէ 'ի
մէնջ մեռուցանել՝ առ որս 'ի նուաճեցուցանել.
այլ ընդ հակառակն՝ զայնոսիկ կիրս՝ զորս մոլութիւն
պարտաւորէ զմեզ ուրանալ՝ օժանդակէ 'ի զօրա-
ցուցանել: Սին նուազեցուցանէ զվիշտ ինքնու-

բացութեն՝ բարեխառնելով զպահանջմունս կրից. միւսն առաւելու զնոսա՝ առնելով զպահանջմունս զայնոսիկ սաստիկս և զօրաւոր: Օ՜ ինչ և իցէ տառապանք՝ որք պատահին 'ի խաղաղ կեանս առաքինութեան՝ մի՛թէ բաղդատի՞լ ընդ տառապանացն այնոցիկ՝ զ'որս անդիւրութիւն խղճմտանաց պատճառէ անօրինաց. ընդ սաստիկ ամօթահարութեանցն այնոցիկ՝ որք յառաջ գան 'ի յանցաւորութեանց և 'ի ձախողութեանց և խոնարհեցուցանեն զանիրաւս ՚ի հողով երկրի. ընդ այնոցիկ ուժգին մտայուզութեանց ամօթոյ և անյաջողութեան՝ որք երբեմն վարեն զնոսա յառաւել փոխանցաւոր սահմանս, և տան նոցա ատել զկենդանութիւն իւրեանց: Որքան յաճախակի անիծեալ են նոքա զհրապուրողութիւնս մոլութեան 'ի մէջ աղէտաւոր կացութեցս այնոցիկ՝ յորս յանցանք նոցա ածեալ են զնոսա. և գտան արտմութեամբ հային յօրն յայն՝ յորում զառաջինն թողին զճանապարհ անմեղութեան:

ԲԼԷՐ

---

Միջասահմանութիւն ցանկութեանց մերոց գովաբանեալ:

Գործաւոր միտք մարդոյ հազիւ երբէք կամ ոչ երբէք շատանայ ընդ այժմանդ վիճակ իւր՝ որքան բարեբաստ և իցէ: Ստեղծեալ նորա նախապէս վասն առաւել լայնատարած կարգի էակաց՝ վասն

առաւել բարձրագոյն տեղւոյ փայլչութեանց՝ տեսանէ զինքն յամենայն կացութե բաղդի անձկացեալ և արգելեալ։ Ծանուցեալ նորա զանկատարութենէ կացութե իւրոյ՝ մշտապէս բաղձայ անենչայ ցանկայ իմիք՝ զոր ոչ վայելէ առ այժմ։ Յայսմանէ յառաջ գայ անհանդարտութիւնն այն՝ որ հասարակօրէն բռնանայ 'ի մէջ մարդկան։ Յայսմանէ յառաջ գայ այն տաղտկութի բերկրութեանց՝ զորս 'ի կիր առնուն մարդիկ. յայսմանէ յառաջ գայ այն կիրքն նորութեան՝ այն փառասիրութիւնն համաստանալոյ յաստիճան իւիք մեծուն կամ երջանկութեան՝ զորոց ձևացուցեալ են իւնքեանց զմիթին իմն կարծիս։ Զայսոսիկ ամենայն ապացոյց է համարիլ իբրև զնշանս կորնածին և նախնական մեծութեան 'ի մարդկային հոգւոջ, որ ամբառնձեալ է անդր քան զսահմանս այժմեան կացութեան իւրոյ և ցուցանէ զբարձրագոյն առարկայս՝ որոց վասն եղև ստեղծեալ։ Երանի թէ այսոքիւք անյայտ ծանուցեալք այժմեան կացութեան մերոյ սպառահարկու լինէին յուղղել զցանկութիս մեր առ վայելուչ սահմանադրութիւնս նոցա. և յառաջնորդել զմեզ 'ի ճանապարհ ճշմարիտ երջանկութեան։

Սակայն յայսմ աղջամղջին և շփոթեալ կացութե ցանկական յօժարութի բնութեան մերոյ տարաբաղդօրէն զհակառակ իմն կալնու զշաւիղ, և դարմանէ կարի զստերիւր իմն փառամոլութի։ Փաղաքշական հայեցուածքն այնոքիկ՝ որք սաս յանդիման լինին մտաց՝ վեհութիւնքն՝ զորս բաղդն

նուիրէ՝ օգուտք և բերկրութիւնք այնոցիկ՝ զորս աշխարհի է պարգևել՝ ըստ չվճէլին ցանկութե բազմաց ։ Այսոքիկ են առտրկայքն՝ որք զա զափարեն ցառանձնաւոր խոկմունս նոցա, և շարժեն զգործունեայ զաշխատասիրութիւնս նոցա · քերմացուցանեն զմիտս երիտասարդաց · զուարթացուցանեն զծերութիւն միջահասակաց · և յաճախակի կենդանի պահեն զկիրս ծերոց մինչև 'ի վախճան կենաց ։

Արդարև չիք ինչ ազդրինաւոր 'ի ցանկալն մեր քան 'ի զգաստիլ յանպիտեաց՝ որք ոչ են բարեպատեհ և հաճելի · և 'ի սեփականել զառաւել կատարեալ վայելչութիւն կենաց ։ Սակայն՝ յորժամ յանկութիւնքս այսոքիկ ոչ բարեխառնին 'ի բանականութենէ, 'ի վտանգի լինին առ 'ի գահավէժ առնել զմեզ յառաւելագոյն շռայլութիւն և 'ի յիմարութիւն ։ Յանկութիւնք և բաղձանք են նախնական և սկզբնատիպ՝ ողբալիցս գործոյ ։ Յորժամ սաստկանան որքին՝ արտաքսորի անտարակոյս համակ համբամարդոյ ։ Եթէ տայցեմք երևակայութեան մերոյ սահմանել ինքեան զաշխարհս ցնորական երջանկութեան՝ խռովելոց եմք զխաղաղութի և զկարդմտաց մերոց և ձարակելոց եմք զպէտպէս վնասից կիրս ։ Ապա ուրեմն սկսեսցի միջասահմանութին թագաւորել՝ անձեռն յիրաւացի սահմանս ցցանկութեն մեր ։ Մինչև իցէ նոցա չափաւոր եղեալ՝ սասանեսցուք նոցա վայելչութ մտածողութեամբք զպատրողական զառաւելոյն այնոցիկ՝ զորս աշ-

խարհ երևեցուցանէ առ 'ի համոզել զցանկութիւն ։ Ողորմելի էք դուք՝ բարեկամք իմ 'ի ճանապարհէ անտի՝ որ առաջնորդէ զձեզ յերջանկութիւն․ անարգել էք չքնատուր մեծութիւն հոգւոյ ձերոյ՝ թողլով ցանկութեանց ձերոց առ 'ի յանգել յաշխարհային մտածմունս մեծութեան և երջանկութե ։ Երևակայութի ձեր յածի յերկիր ցնորական ։ Ամբողջական երևոյթք խաբեն զձեզ ։ Այդ չէ այլ ինչ՝ եթէ ոչ երևոյթ իմն երջանկութե՝ որ հրապուրէ և սխալեցուցանէ զձեզ․ և ոչ այսչափ միայն՝ այլ և է երևոյթ իմն երջանկութեան՝ որ բազում անգամ ծածկէ զբազմապատիկ զիսկական թշուառութիւնս ։

Կարծէք թէ երջանիկ են ամենեքեան՝ որք հասեալ են 'ի գագաթն մեծութե․ առ որ համբառնան ցանկութիւնք և իղձք ձեր ։ Աւաղ՝ որքան յաճախ ցուցեալ է փորձառութի՝ թէ ուրանօր վարդք երևեցին բողբոջիլ՝ ոչինչ բայց տատասկք և փուշք աճեցան ։ Համբաւ՝ գեղեցկութիւն՝ փարթամութիւն և մեծութիւն՝ այլ և ինքնին իսկ իմաստութիւն բազում անգամ ու բախտութեամբ փոխանակեալ լինին 'ի սոսցողաց իւրեանց ընդ այդպիսի առաւել յանդորր և խոնարհ կացութե՝ ընդ որ այժմ ոչ էք դուք շատացեալ ։ Օրէն է զի ը ամենայն ինչ՝ որ պայծառափայլ է և փառազարդ՝ խառնեսցին բազմապատիկ խորին սաստէք ցաւոց և տառապանաց ։ Ի բարձրաբերձ կացութիւնս բաղդի յաճախակի ատահին անհնարին թշուառութիւնք կենաց ։ Ան-

ջանից մրրկին զանհղասառան իւր ոչինչ չամե-ռեալ · և անդադար լինի ի բնութեան անհողդողդ · մինչ առաջնոյ և անփոյթ ման սորա բնակիչք հովարին ։ Արդ շիջուցանք ու բնիմ ի յուղին ննջոյ և մահացուցիչ մարդոյ թշնամեաց չարափառանց գան-կութեան ։ Հաստատեցէք զանձինս ձեր այնմիկ՝ որ էջն բանական և անփոփոխն ։ Զգուշացէք միշտ ձեր առ միջասահման հայեցուածս մտաբղխային փայլեցուցանելոյն և ի ջանկութեան ։ Եղիցէք և զարմացուցէք ընդ խաստութիւն արքայահասութեան Ագրայ՝ որ առաւ ։ Հեռացո՛ յինէն զունայնասի-րութիւն և յստութիւն ։ Մի՛ տար ինձ զաղքա-տութիւն և ոչ զհարստութիւն ։ Կերակրեա զիս անհրաժեշտ կերակրով՝ որ պատշաճաւոր իցէ ինձ · զի մի՛ զոյց՝ ձախ եղեց և ուրացայց զքեզ · և ա-սացից թէ ո՞վ է Տէր · կամ զի մի՛ գողացայց անանկ եղից և գողացայց · և առից զանուն Աստ-ւծոյ 'ի սնոտիս ։

ԱՄԷՆ

Մեծութիւն և փարթամութիւն ոչ տան զերջանիկս
նախանձողացն ։

Յամենայն դարս տեսանեմք նախանձաւորս 'ի մէջ մարդկան՝ վեհութեան և աստիճանաց և փար-թամութեան է կարի յոյժ հանապազ ։ Յայսմանէ յառաջ գայ շարժմունք այն՝ զոր չկարեմք հաս-րակաւորք ունին առ փարթամս · որպէս թէ մա-

տուցանէին ինքեանց զամենայն մխիթարութիւն կենաց ։ Յայսմանէ յառաջ գայ չարակնութիւն այն՝ որով մարդիկ ցածագոյն վիճակի քննեն զայնոսիկ՝ որք են աստիճանաւորք և բարեպատեհ վիճակին հանդիպեալ ․ և եթէ ժամանիցեն նոցա յայն վիճակ՝ նախանձ նոցա զբաւ որ լինիցի առ այնպիսիս՝ որք միով և եթ աստիճանաւ ՚ի վեր են քան զնոսա ։ Աւաղ՝ բարեկամք իմ՝ այս ամենայն նախանձաւոր խռովութիւնք՝ որ խռովէ զաշխարհ, յառնէ ՚ի պատիր իմն երևութէ՝ որ երևի ՚ի տեսանելիս հասարակութեան ։ Այնք՝ որք երևին՝ են ցոյցք պիտակք և անինչք ․ ճշմարիտ կացութիւն մարդոյ չէ այն՝ որ երևի լինիլ ։ Կարգ կենցաղականութեան պահանջէ լինիլ որոշումն վիճակաց ․ սակայն յերջանկութեան ամենայն մարդիկ առաւել մերձ լինին առ ՚ի համահաւասարիլ միմեանց՝ քան թէ կարծիք է հասարակաց ․ և պարագայքն՝ որք ձևացուցանեն զնիւթաւոր տարբերութիւն ինչ երջանկութեան ՚ի միջի նոցա՝ ոչ են այնպիսիք՝ որք պատճառեն զանզի նախանձաւորութեան ։ Չքաւորքն՝ իրաւ է՝ չունին զոմանս ՚ի վայելչութեանց և ՚ի բերկրութեանց փարթամաց ․ սակայն փոխարինաբար զերծ են ՚ի պէսպէս նեղութեանց և տառապանաց՝ որոց ենթակայ են նոքա ։ Ի ձեռն պարզութեան և միակերպութեան կենաց խարեանց զերծանին ՚ի բազմապատկեալ հոգոց անտի՝ որք մշտագնեն զայնոսիկ՝ որք ունին զբազում բանս ՚ի կառավարել, զխառնիխուռն զառաջադրութիւ

՚ի կատարել ; և գուցէ թէ չբաւական թշնամիս ՚ի պատահել յընթացս իւրեանց : ՚Ի խոյսդառնութե փոքրիկ բնակարանի և ազգատոհմի իւրեանց վայելեն զ յանդորրութիւն մի՝ որ յամենայնի անծանօթ են ՚ի պալատս մեծամեծաց : Ունին ըն-լիակատար ուրախութիւնս բնութեան . որք են կարի բաւարարիչ . և եթէ օտար են կիրթ բերկրութեանցն փարթամաց՝ անծանօթ են և ցանկութեանց նոցա . և յայն սակս ոչ զգան զկարիս թշուառութեան : Պարզ կերակուր նոցա յիու-ցախորժակ նոցա այնպիսի համեղութեամբ՝ որ իրաւի ՚ի վեր է քան զխնամակուրս հարստաց . որք նստին ՚ի սեղանս խորտկանց փափկացողաց : Մինչ նոցա է առաւել կառավարել . առողջութիւն նոցա՝ առաւել հաստատուն . չգիտեն նոքա թէ զինչ են մեղսականութիւն՝ նուաղութիւն և անզգուշութիւն : Սովորական պատրաստութիւնք աշխատասիրութեանց նոցա ոչ են այնպէս վշտագնող ինքեանց՝ որպէս աշխատանք գնայուն ՚ի պալատս և առ մեծս՝ աշխատանք զզենլոյ զհանգերձս պճնազարդս՝ վաստակք զբօսասիրութեանց և նոյն իսկ ծանրութիւն պղերգութեան են հարստաց : ՚Ի նմին ժամու ամենայն գեղեցկութիւնք երեսաց բնութեան՝ ամենայն վայելչութիւնք ուրախին կենակցութեան՝ ամենայն զուարթութիւն և բերկրութիւն անխառն մնայ՝ այնպէս բաց են նմ՝ որք բարձրագոյն վիճակաւորաց : Պայծառութիւն հեռաւորաց՝ հնչումն պատուաւոր յորջորջմանց՝ հայեցուածք բարձրա-

պատուհութեն որդւոց մխիթարիչ են սակաւիկ մի հարստաց ։ Սակայն յորժամ սովորական եղանին նոցա՝ փութանակի 'ի մոռացօնս արկանին ։ Սովորութիւն աւերէ զազդուութեն նոցա ։ Ընկղմին նոքա 'ի կարգս այնպիսի սովորական իրաց՝ որք յոլովակի պատահին առանց անանցելոյ դոյզն ինչ զգացուած ուրախութեն ։ Պատարեցուք ուրեմն 'ի հայելոյ տժգոհութեամբ և նախանձու յայնոսիկ՝ զորս ծնունդ կամ բաղդ արարեալ է անդրքան զմեզ ։ Աշխեցուք գեղջօրէն զեշիս երջանկութեն ։ Յորժամ մտածեմք զվայելչութիւն՝ որոց կարօտիմք՝ մտածեսցուք զիշխանս՝ յորոց եմք ազատ ։ Եթէ համեմատեմք զարժանաւորութիւնս վայելչութեանց ընդ մխիթարութեանցն՝ զորս սեփականեմք՝ գտցուք զբանականութիւն շատացեալ ընդ միջասահման՝ թէ և ոչ ընդ չափ և փառաւոր կացութիւն բաղդի ։ Եթէ ծանօթ լինէաք գաղտնեացն ամենայնի՝ յաճախ յօժարէաք գթալ 'ի վերայ կացութեանց նոցա՝ ընդ որս այժմ նախանձիմք ։

ԲԼԷՐ

Համբերութիւնն է մտադրութեամբք է շահ մեր և առաւել պարտականութիւն ։

Յանկածեալ գունս մարդկային կենակցութեն տարբերի յանգրաւ բազմապատկաւէ հարբաւոց

բնուեց և կրից : Միակերպութիւն ոչ է ամենեւին ընութեն աշխարհի : Իւրաքանչիւր մարդ նշանաւոր է վասն յատկութե իւրեք՝ որ բացորոշէ զնա յայլոց. և ոչ ուրեք հնար է երկու անհատից գտանել՝ որք ուղղապէս համանման իցեն միմեանց յամենայնի : Ուրանոր գոյ այսքան տարբերութ՝ ոչ է մարթ մարդկան ՝ի դրուցատրութեան իւրեանց ընդ միմեանց առ ՝ի փաստացուցանել՝ խառնեցուցանել և տարածայնս առնել զբնութիւ իւրեանց : Յայտմանէ յառաջ եկանեն պատճառք դրդուիչք խառնութեան յամենայն վիճակս կենաց. այսինքն՝ թէ ՝ի բարձրագոյնս և թէ ՝ի ցածագոյնս, թէ ՝ի հռչակաւորս թէ ՝ի ռամկականս և թէ ՝ի տնայինս : Գրգռիմք երբեմն ՝ի յիմարութէ և յունայնամտութենէ այլոցին՝ ընդ որոց առնիմք գմբռնաւորութի . դրդրիմք երբեմն յանզգաշութենէ և յանհոգութենէ նոցա, յանքաղաքավարութէ բարեկամի, յամբարհաւաճութենէ մեծահագունի և կամ ՝ի ժպիրհ վարուց այնոցիկ՝ որ է ՝ի ցածագոյն վիճակի : Հազիւ երբեք անցանէ օր մի թերց այս ինչ կամ այն ինչ պատահելոյ, որ ստիպէ յաղմկել և ՝ի խառնեցուցանել զմարդ անհամբեր :

Սայսպիսի ազ ՝ի հարկէ կեայ մշտապէս ՝ի տեւողական ծփանս : Ջգիտէ թէ զինչ է վայելել զընթացս բարի բնութե : Նստայք՝ միրձաւորք բարեկամք՝ ամուսին և մանկունք ամենեքեան ՝ի ձեռն անսանձ դժնդակութեան բնութեան նորա եղանին արժանաւորք խառնակութեան և մտատանջութեն

նորա ։ Ունայն է նմա ճոխութիւն . ունայն են առողջութիւն և յաջողութիւն ։ Փոքրագոյն առիթ ինչ բաւական է ՚ի խռովել զմիտս նորա և ՚ի թխնաւորել զուրախութիւնս նորա ։ Զբօսախրութիւնք նորա և խնամն են ընդ խառնած և ցաւամահանութեան ։ Աղաչեմ զապաշխարիս . որք առ ՚ի մահն, թէ որքան ապաշաւեալ են մտադրգութեմբն այնոքիկ զորս առաւել և կամ զրկեալ է համարի ՚ի աստանալ . սակայն որքան ընդ երկար տայ նոցա անել առ ՚ի զրկել, զնա ՚ի կառավարութեանձին իւրոյ ։ Աղաչեմ զնա առ ՚ի տեսել զմտաւ թէ որքան ՚ի բաց ձգէ ժամս զբօսանիւթեան՝ զորս սակաւ ինչ համբերութիւնն թողոյր նմա ՚ի վայելել, և որքան կարողացուցանէ զատակաւան անձինս առ ՚ի առնել, զնա թշուառացեալ ։ Ակայն մի կարէ անձնունի՝ լսեմք նմա ասել՝ առ ՚ի սեփականել զանձայութիւն քորի ։ Զարդհնար է մարդկայինս բնութեան համբերել այսքանեաց յաճախական մտադրութեանց ։ Եղբայր իմ՝ պատուախանեմ՝ եթէ ոչ կարես տանիլ բանից անխոհական բարուց՝ առանձնացիր յաշխարհէ ։ Այլ ոչ ևս յարմար ես ՚ի կենդաղակարիլ ՚ի նմա . թող զդառնացուցանել մարդկան ։ Առանձնացիր ՚ի լերինս և յանապատս . կամ թացիր ՚ի յայրս ։ Քանզի ասա ՚ի կենակցուտրամութիւնք պարտին է յանել ։ Յորժամ տեսանեմք զոգն՝ խայտաղ . և զերկինս՝ պայծառ , պարտիք բանեանցի, զի ոչինչ ամպք յառնիցեն և ոչինչ հողմք շնչիցեն . իբրու զի՝ կեանք մեր ընդ

երկար տեւեցեն թալից տեսանելոյ զմաապր-գութիւնս 'ի մարդկային տկարութենէ ։ Ընդ-գդոյշք և անխոհականք՝ ժանտք և թեթեւամիտք ապերախտք և շահասէրք՝ դեռ լինին մեզ յա-մենայն ուրեք ։ Այսպ են տատասկք և փուշք՝ որք տնկեալ են 'ի ճանապարհս մարդկային կե-նաց ։ Նա միայն՝ որ կարէ կառավարել զինքն 'ի մէջ նոցա համբերութեամբ և հանդար-տութեամբ, նա միայն՝ որ պատրաստ է 'ի տա-նել որոց ոչ կն ունիցի պատահել, արժան է ար-դարև անուան մարդոյ ։ Եթէ սակաւիկ մի հան-դարտեցուցանէաք զմեզ, իմանայաք զխանդաքուռն բազմաց 'ի մտադրութեանցն այնոցիկ՝ զորս այսպէս բարձրապէս մեծացուցանեմք ։ Յորժամ քանի մի արեգակունք են հոլովեալ 'ի վերայ գլխոց մերոց, մրրիկն ինքնին տեղի տայր ։ պատճառ արգեան անհամբերութեան և խռո-վութեան մերոյ միանգամայն անկանէր 'ի խորս մոռացականութեան ։ Ո՞չ կարեմք ուրեմն նախա-պէս լինել յայնմիկ ժամէ հանդարտութեան, և սկսել 'ի վայելել զյանդորրութիւնն զայն՝ զոր նոյն անշուշտ ունի պատճառել ։ Եթէ այլք ան-պատշաճաբար վարեցան ընդ մեզ, թողցուք զնոս 'ի յիմարութեան նոցա առանց լինելոյ զոհ ցնորից նոցա և թարց պատուհասելոյ զմեզ վն նոցա ։ Չէ հնար ամենեցուն ունել զհամբերու-թիւն՝ որք կամին զի կեանք իւրեանց բղխեսցեն մեղմ հեղեղօք ։ Այդ է իրաւունք մարդոյ՝ սա 'ի դիմ-կալ լինել կրից երեխայից ։ Այդ է վայ-

Եղչութիւն խաղաղութեան՝ առ ՚ի դիմակալ լինիլ աղմկի և խռովութեան ։

ԲԼԻԸՐ

---

Քրիստոնէութիւնն ընձեռէ զբարեգոյն մխիթարութիւն ընդ չարեաց աշխարհի ։

Կարի հարկաւոր է ՚ի համարել զքրիստոնէական կրօնն իբրև զարմատ մխիթարութեան և իբրև զօգնական և զպաշտպան մեր ՚ի թշուառութիւնս կենաց մերոց ։ Աստանօր կրօն մեր անընդդիմաբար յաղթական հանդիսանայ . և եւջանկացուցիչ ներգործութիւնք նորա ընձեռեն զօգնական զօրութիւնս ամենայն բարեգութ մտաց , առ ՚ի ցանկալ զի նոքա առաւել եւս տարածեսցին ՚ի վերայ երկրի ։ Քանզի տառանց հաւատոյ և յուսոյ մատուցելոյ յերկնային Յայտնութենէ՝ կացութիւնք մարդոյ լքեալ և թշուառացեալ են գլխովին ։ Տեսանէ նա զի օտարական է ՚ի լայնատարած ալեւերս , և կարի անկատարագէս գիտէ զզօրութիւնս և ըզներգործութիւնս բնութեան . զսկզբունս և զելս իրաց տեսանէ ՚ի խորին մթութեան . և ոչ կարէ հաստատեաւ իմանալ թէ ո՞ւստի է եկեալ , կամ յո՞ր տակս երթեալ է յաշխարհ կեցութեան . արդեօք նախախնամիչ իւր քաղցր է թէ բարկացող . զի՞նչպիսի կարծիս պարտ է ունել զհանձոյից նախախնամութեան բարձրե-

լոյն • և զի՛նչ եղիցի վիճակ նորա՝ յորժամ մեկնեսցէ յաշխարհէ աստի ։ Ո՜րդ տաժերջանիկ է կացութիւն մտախոյզ և հաստաքերթ մտաց ։ Որքան առաքինութիւնս ունիցի՝ այնքան միտք նորա ձնշեսցին ընդ ծանրութեամբք այսոցիկ տարժամանաւոր վաւածմանց ։ Նա և՝ եթէ ոք կարէր մերժել ՚ի մտաց իւրոց զամենայն զխառովարար խոհմունս և լնուլ զմաւա կենաց իւրոց յարատև զբօսաղրութեամբք՝ այնպիսւոյն կեանք երևելոց էր անհնշան և տաղտկալի ։ Այլ սակայն՝ այսոքիկ ամենայն հեռի են ՚ի լինելոյ պատճառք՝ որոց վասն մարդ սահեղծաւ յաշխարհի ։ Գիտէ նա զի հաւն իւր անստուգ է և անզօր • տեսանէ զինքն շրջապատեալ ՚ի պէսպէս վտանգաց և ենթակայ բազմապատիկ տրտմագին երկիւղի ՚ի չարեացն որոց հնար է հանդիպիլ՝ մինչև իցէ նորա ժամանեալ ՚ի վախճան կենաց ։ Յայսպիսի տառապեալ կացութեան զգացուցանել զայնսանիկ ծանօթութիւնս գերագոյն Էութեան, որպէս քրիստոնէական կրօնն մատուցանէ, է զգացուցանել նմա զհայր մի և զօրական, է արձակել զճառագայթ մի ամենազօրաւոր լուսոյ ՚ի մթութիւն մարդկային կացութեան ։ Նա՝ որ որ էր յառաջագոյն և անտերունջ և դեգերեալ աստանդէր յանհիւրասէր յանապատի, զարդիս ստանայ է պաշտպանումն ՚ի դառնագին և յանողորմ աւերակութեանէ ։ Գիտէ զարդիս առ ո՛ աղօթել, և յո՛ յուսալ, ո՛ւմ բանալ զվէրս սրտի իւրոյ, և յո՛ւմէ ձեռամբ խնդրել զօգնականութիւն ։

Բացայայտ է՝ զի յորժամ սիրոն ընդհանրու-թեան լինի ՛ի վերայ նորոգելոյ ձախորդութեն, ոչինչ կարէ առնել ներգործութեամբ ապաքինել զնա՝ եթէ ոչ մխիթարութիւն կրօնին։ Սա զայնպիսի կարողութիւն ունի՝ մինչ լուսաւորէ զաղջամղջին ժամս և զիջուցանէ զաստակագին ցաւս հաւատովք երկնային բարերարութեան և հայեցուածովք երանելոյ անմահութեան։ Յայ-պիսի յուսադրութիւնս միայն հանգչի զուարճութեամբ․ և յորժամ զրկի յերկրաւոր սիրակա-նաց իւրոց՝ մխիթարէ զինքն մտածութեամբ սիրականի միոյ՝ որ ոչ երբէք թողցէ զնա։ Ան-խառն առաքինութիւնք զբնութենէ մարդկային կացութեան՝ և փորձառութիւն՝ զոր իմաստասի-րութիւնն ուսուցանէ մեզ առնել յիւրաքան-չիւր դիպուածի՝ զգուշացուցանիցեն զմիտս՝ յոր-ժամ ի յանդորրութեան իցէ․ կամ քուցէ սատա-րիցեն ՛ի մխիթարել զնա՝ յորժամ չգայցեալ իցէ դոյզն ինչ տարտամութ․ սակայն երբ ճնշեալ տա-ռապի դժնդակ վշտակրութեամբ՝ անզօր են սո-քա արդարեւ և անօգուտ առ արդար խոստմամբն ՛ի յօրէ ողորմութեանց։ Սա է խարիսխ հոգւոյ՝ պինդ և ապահով։ Մխիթարեալ է սա և պաշտ-պանեալ զսիրողս բազմաց առաքինի անձանց այն-պիսի ժամանակի միում՝ յորում կարի զօրաւոր առաքինութիւնք անօգուտ եղանէին։

՛Ի մերձենալ մահու՝ յորժամ բազում երկիւղի մտա-յուզութիւն նոցա վասն ապագայ կացութեան նոցա՝ զօրութիւն մխիթարութեան կրօնի կարէ

ուժգնութեամբ զգացեալ լինի ։ Յայնժամ երկրին առաւել փայլուն հայեցուածովք՝ ծանօթացեալ բարձրագոյն արժանաւորութեանց Աւետարանին՝ որ ոչ միայն զանմահութի յուշ առնէ՝ այլ զմիջնորդ մի ընդ հօր ցուցանէ ․ սովաւ ողորմութիւն քարոզի թերութեանց ապաշխարողին և սխալութեանց խոնարհին ․ սովաւ խոստանայ Ած առ ՚ի ուղեկից լինիլ նոցա՝ յորժամ անցանեն ընդ հովիտ խաւարին մահու՝ առ ՚ի անվտանգ հանել զնոսա յանծանօթ բնակարանս հանգստութեան և երջանկութեան ։ Աստանօր տեղի ունին նոքա առ ՚ի թողուլ զաշխարհ մխիթարութեամբ և յանդորրամտութեամբ ։ Սակայն յայսմ դառնագին և փորձական ժամանակի՝ յայսմ տարժանակիր մահու բնութեան՝ չիք որդ ապերջանիկ մարդն այն պաշտպան եղէ անձին իւրոյ՝ որ ոչ հաւատայ բանից կրօնի ։ Որզեկ եղեալ նորա զանխլաբար զի ոչ է կատարեալ զկատարելութիւն իւր որպէս վայել էր կատարել՝ յանցանք անցեալ կենաց իւրոյ յառնեն առաջի իւր ՚ի տրտմագին յիշողութեան ։ Յանկայ կեալ զհին մահու՝ սակայն երկնչի յայնմ կացութենէ ։ Առաջարկիչ աշխարհի անծանօթ է նմա ։ Ոչ կարէ ասել թէ ջանք իւր առ ՚ի շահիլ զողորմութի նորա՝ ոչ եղեցին ընդ ունայն ։ Ամենայն ինչ ահաւոր մթութիւն է շուրջ զնովաւ ․ և ՚ի մէջ անվախճան երկրայութեանց և մտատանջութեանց՝ դողդոջուն և դժկամակ հոգին արտաքսանման լինի ՚ի մարմնոյ ։ Ով ձախորդութե

կենաց կարի վնասացուցիչ են այսպիսի մարդոյ՝ այսպէս և գանձն է վախճան նորա ։ Որդեգոյն նորա մնան ՚ի մթին ամպոյ ․ և փչէր մաքրու-պատէ զխղճուկ նորա աննման թշուառութիւն ։

ԲԼԷԸՐ

## Բարի և չար մարդն բաղդատեալ ՚ի ժամանակի ձախորդութեան ։

Կրօնն յարդարէ զմիտս առ ՚ի արիասրտութիւն համբերելի ցաւոց ձախորդութեան ․ իսկ ընդ հակառակն մոլութիւնն ՚ի ձեռն բնածին կարողութեան իւրոյ ՚ի վերայ մարդկային բնութեան՝ սաստկէ ՚ի պատճառել զվհատութիւն ընդ ամենայն ճնշին փորձանօք ։ Մինչ աշխարհասէրք մեծացուցանեն զաջողուածս իւրեանց և բազմացուցանեն զապաստանս իւրեանց՝ կարծեն թէ ամրացուցանեն զանձինս իւրեանց ընդդէմ ամենայն հնարաւոր յեղափոխութեանց այսր կենցաղոյս ։ Ասեն նոքա ՚ի միտս իւրեանց՝ թէ լերինք մեր կան յաստատունս ․ և մեք ոչ երբէք շարժեսցուք ։ Սոյնպէս այնքան մահաբեր է պատրողութիւն մտաց նոցա՝ մինչ զի փոխանակ զօրացուցանելոյ՝ նուաղեցուցանեն նոցա զայն՝ որում միայն հնար է պաշտպան լինել նոցա ՚ի ժամանակի հանդիպման յեղափոխութեանցն այսոցիկ ։ Միտք նոցա է՝ որ յայնժամ պիտոյ է պաշտպանել նոցա ․ և միտք

նոցա հեշտասիրութեամբք և զեղխասիրութիւնք նոցա ազատկանի և անզգամնոյ : Հետևեալ նոցա անշարախառն սեռանութեամբ սրտի պէսպէս հեշտութեանց աշխարհի՝ պատահին ազգի ազգի մեծամեծ և հաւասարի չարեաց և ձախորդութեանց · Հրաժարին նոքա յամենայնէ՝ բայց միայն յաշխարհէ · և առաւել զգան զհարուած ամենայն ձախորդութեանց՝ որ եկանեն յաշխարհէ անտի : Նոքա ոչ զկրթութիւնս ունին և ոչ զայնպիսի բնութիւն՝ որ ընդդիմամարտ լինիցի յարձակմանց նեղութեան : Զունին նոքա զայնպիսի կրթութիւնս՝ որք տայցեն նոցա հայիլ անդր քան զամպորական շրջաբերութիւն դիպուածոց · վասն որոյ և յորժամ տարաբաղդութեանց հանդիպին՝ ատեարան կաչութեան նոցա անմխիթար և ապերջանիկ եղիցի յամենայն կողմանէ : Ջանանք նոցա կուրացուցեալ են զաչս նոցա առ ՚ի հայիլ յուսով յօգնականութիւն առաւել բարձրագոյն կարողութեան՝ քան զիտութեան իւրեանց · կամ առ ՚ի խնդրել զտուեալ բարեգոյն առաջնորդ՝ քան զիմաստութիւն իւրեանց : Եւ որպէս չէ հնար նոցա ընդունել զպաշտպանութիւն ինչ ՚ի կրթութեանց՝ այսպէս և ոչ կարեն գտանել զօգնականութիւն ինչ ՚ի բնութեան միում՝ ապականելոյ յաջողութեամբք : Կորուսեալ են նոքա զայն բարեխառնութի մտաց՝ որ տայ խոհական մարդոյ առ ՚ի յարմարացուցանել զանձն իւր կացութեան իւրում : Արարեալ նոցա ընդերկար ՚ի պատիր և յունայն յուսադրութեանց՝

զայրացումն և խայթիւն յիւրաքանչիւր ձախորդութենէ : Մինելով նոցա փափկասէր և կնաբարոյ՝ ոչ կարեն տանիլ անդիւրութեան : Մինելով ամբարտաւան և յանդուգն՝ ոչ կարեն հանդուրժել ընդդիմութեան իմիք : Տանելով նոցա զանձկալի բնութիւնս՝ որք խառն ինչ յարմար են այսմիկ անհաստատ աշխարհի՝ հեղեալ են զիրենպատկեալ բաժին դառնութեան ՚ի բաժակ նեղութ. սրբեալ ենք զայր սրոյն այնորիկ՝ որ ամբարձեալ է առ ՚ի հարկանել զնոսա : Ոմանք միանգամայն ամենայն բարեխառն բաւարարութեանց բարի և մաքուր մտաց՝ ոմանք ամենայն ուրախութեանց՝ բայց միայն այնմիկ՝ որ բարդիր ցեալ յինէր ՚ի մայութենէ և յանձնապահութենէ՝ ձախորդութիք նոցա անփորատելի են բոլորովին և իսպառ ապուռ զուրկ ՚ի ազնուական միխիթարութեան : Նախանձութիւն և փառաւորութիւն էին երկրքին սիւնքն այնք՝ յորոց վերայ արձանացեալ կանգնէին : Հարժեալ զմի ՚ի սոցանէ, և բովանդակ կործանեալ յուսոյ և մխիթարութեանց նոցա ապաստան յերկիր կործանի :

Թողեալ և լքեալ և անտերունջ մնան ՚ի մէջ երկրի. և պարտաւորին յարանցել ընդ Աստուծմայ ՚ի նկուն և յանդոդ յողդողութեան նոր՝ յորում առէ : Ցափշտակեցին յինէն զաստուածս իմ, զորս շահեցայ. և զինչ գոյ ինձ աւելի : Առաքինի են պատճառքն՝ յորս արժան է վերաբերել զերեալ հոգիս՝ զմխիթարութիւնս և զանհամեմատ կիրս՝ որք յաճախակի հեծեծին

անզօր հասակաց կամ յետադարձ փարթամութեանց մտի մարդոյ ։

Այլ ամենայն որքան տարբեր է կացութիւն ճշմարտապէս բարի մարդոյ յայտնի է փորձական կացութիւնս կենաց ։ Երբեմն սակաւ առ սակաւ յորդորեալ է զմիտս նորա վասն ամենայն դիպուածոց այսր անհաստատ աշխարհի ։ Ունակացուցեալ է զնա ի բնութեան ճշմարիտ երջանկութե ։ Զգուշացուցեալ է զնա վտանգից յանպատեհ սիրոյ աշխարհի՝ ցուցանելով նմա զունայնութիւն նորա և ընդայեցուցանելով աչաց նր զբարձրայարգ տեսարանս ։ Նեղութիւնք և տառապանք ոչ յարձակին ի վերայ նր զարմացուցմամբ ․ ուսաւի և ոչ նուաճեն զքաջութիւն նորա ։ Յարմարեցան նմա միրքն՝ որպէս և հանդարտութեան յայտնիք կեղակարծ ծաւարկութե կենաց ։ Գիտէ նա ի ծնեալ է յաշխարհի ենթակայ այսպիսի դիպուածոց, զի ոչ կարէ հանապազ ունելով զվայելչութիւն այնորիկ՝ զոր սիրէրն ․ վասն որոյ և հոգի նորա ոչ յաղթահարի ի ձախորդութե ; երբ նա՝ որ մահացու է՝ մեռանի, երբ նա՝ որ փոփոխական է՝ փոփոխիլ սկսանի, և երբ այն՝ զոր գիտէր լինել անցողական՝ անցանէ :

Ամենայն կրթութիւնքն այնորիկ՝ զորս կրօնն ուսուցանէ, և ամ ունակութիւնքն այնք՝ զորս նմա է ձևացուցանել՝ նպաստամատոյց լինին կարողութե մտաց ։ Արժան է գիտել՝ զի որ ինչ մաքրացուցանէ զսիրտն՝ ամրացուցանէ զնա ևս ։ Ընթացս արդարութեամբ՝ լուսաւորութեամբ և բարեպաշտութե կենցաղավարելոյ՝ բարի մարդն սա-

նայ զանյողդողդ և զբարեկարգ հոգի։ Քա-
ջալերեալ նորա յերկնային շնորհաց՝ վայելէ
բարեխառնորէն զբարիս աշխարհի · ոչ փքացեալ
յաջողութեամբ և ոչ ընկճեալ ձախողագործութեամբ՝
հանդիպի փոփոխութեանց վիճակի իւրոյ առանց
վատասիրտ վհատութեան։ Հրահանգեալ է նա ՚ի
բարեխառնութեան և յազատութեան։ Ուսեալ
է զքաջասրտութիւն և զինքնիշխանութիւն։
Սովոր է նա հայիլ ՚ի գերագոյն նախախնամութիւն
յայն՝ որ հանդերձէ զգործս մարդկան ոչ միայն
յորդութեամբ՝ այլ հաւատով և յուսով։
Ժամանակ յաջողութեան ոչ միայն էր եղանակ
սնոտի ուրախութեան՝ այլ արտահանող բազմապա-
տիկ պիտանացու յառաջադիմութեանց։ Զար-
գացուցեալ է նա զմիտս իւր։ Ամբարեալ է ՚ի նմա
զպիտանի գիտութիւնս՝ զբարեյարմար կրթութիւն
և զառաքինական ունակութիւն։ Ի յոքնիկ ամե-
նայն անապական միտն յաւուրս նեղութեան և
ձախորդութեան նորա։ Յարակցին ընդ նմա ՚ի
հիւանդութեան՝ որպէս յառողջութեան, յաղքա-
տութեան՝ որպէս ՚ի փարթամութեան, յաղջամղ-
ջին և յառանձնաւոր ժամս նորա՝ որպէս յորժամ
պարառեալ մնայ ՚ի սիրականաց և ՚ի զուարթա-
պատճառ կենցաղակցութենէ։ Ի պայծառում
յաջողութեան հնար է նմա առանց ինչ վհատու-
սրտի առանձնանալ ՚ի ստուեր ձախողութեան։
Հրաժարեալ նորա ՚ի բազմադիմի բարեաց աշխար-
հի՝ պարտաւորեսցի մեկուսանալ ՚ի տեղի մի
անձկագոյն · սակայն յայնմ տեղւոջ գտցէ զխա-

ղում մխիթարութիւնս անձին իւրում : Գոլխաւոր բերկրութիւնք նորա էին հանապազ հանդարտ՝ անմեղ և բարեխառն · և փոփոխականութիւնք աշխարհի դոյն ինչ պատճառել կարէն նմա զներգործութիւնս կարգաւորութեանց իւրեանց : Միտք նորա թագաւորութի է նմա · և տակաւին հնար է նմա զանձն իւր երջանիկ տեսանել ՚ի նմա : Աշխարհս ոչ ետ նմա զամենայն վայելչութիւն-նց · սաստի և ոչ կարէ ամենագառն յարձակմամբք իւրովք ՚ի բաց բառնալ ՚ի նմանէ զայնոսիկ :

ԲԼԷՐ

## Նկարագրութիւն բարեսրտութեան :

Ճշմարիտ բարեսրտութիւն միանգամայն տարբեր է յայնմիկ անմիտս և անխտիր բարքաւոյ և յայնմիկ ունայն բարեբարոյութենէ՝ որոց այսքան յաճախակի հանդիպիմք ՚ի մէջ մարդկան աշխարհի : Կարի յաճախ քաղցրաբարբառ և մեղմ են բանք այնոցիկ՝ որք ներքնապէս կարի պատրաստ են խորհել զչարիս զայլոց : Բարեսրտութին այն՝ որ է առաքինութի քրիստոնէական՝ ոչ պարունակի ՚ի գեղեցկութեան բարբառոյ՝ այլ ՚ի գեղեցկութեան սրտի : ՚Ի բաց մերժէ նա զարտաքին քաղցրաբարբառութի · այլ լինի ձայնի նորա մարդասիրական և ողորմածական մտածողութիւնք : Բարք նորա են անդաւիր · բարբառք նորա հա-

ւստարքիմ և անկեղծ ։ Ողջամտ լինելով ՚ի միոյ կողմանէ յողջամտիցն նախանձաւորութենէ՝ ոչ կարէ ազատելոց է ՚ի միւս կողմանէ յայնմիկ հաւանական դիւրահաւատութենէ՝ որ պատրեալ լինի յամենայն նախանձաւոր կեղծմանէ ։ Ողջընթաց է նա համարձակապէս ընդ բազմապիսի գիտուն աշխարհի ․ և ընդ պատեհաւոր զգուշութե նապահովութեն միոյ ․ Յայնմիկ բազմապատիկ խօսակցութեան՝ որ պէտք ուրեք տանել ընդ անձինս բազմահամբաւս՝ համակածուցն ընդ իմիք մասին ապահարան իմն է հարկաւոր ։ Յայնժամ փափագողի նա ՚ի մտօլութի՝ յորժամ միայն անգանէ անդորրին զչափս խաղաղական դրուշաւորութն ։ ՚Ի մէջ անորոշ դիւրահաւանութեան և ընդհանրական նախանձոտութեան՝ գոյ միջոց իմն պարեյարմար՝ զոր ուշիմ իմացականութին ճանաչէ և բարեսիրտն ջանայ պահպանել ։

Ճշմարիտ նա զիմաստութիւն չարի և բարւոյ՝ զոր հնար է զտանել յամենայն համբաւ մարդոյ ։ Ո՛չ համօրէն զոր լինել անաղարտ, և ոչ յօժարիլ ՚ի հաւատալ զի հնար է ուժեղ լինել առանց զողական իւրոյ բարութեանց ։ ՚Ի մէջ յոգնագիմի պակասութեանց կարէ արտայայտել զառաքինութիւնս ։ Ընդ բռնութեամբ անձնական սրտմտութեան կարէ արդարակշիռ լինել արժանաւորութեան թշնամւոյ ։ Ո՛չ ունին մասնակցանէ այնոցիկ համբաւացեղծ լրոց և ոհմաձնական տուութեց՝ որք ընդ խաւարս պարսաւս դիտաց այնքան երագընթացութեամբ սրշաւեն , և այնքան պատրաստա-

կան ընդունակութեան պատասխին : Չէ շուտափոյթ ՚ի դատմունս, և խնդրէ զհաւաստումն լիակատար՝ մինչև է դատապարտեալ զօք : Որքան հնար է վերաբերել զվէճ մի ՚ի պէսպէս պատճառս՝ ոչ երբէք երևեցուցանէ զդոյզն նշան իմն փոխարկելոյ զայն ՚ի չար ինչ : Յորժամ գոյ իրաւացի պատճառ երկբայութեան՝ ոչ վճռէ ՚ի դատմունս իւր . և յերկբայութեան ժամանակի յուզէ զողորմագին եղանակ վճռի : Յորժամ տխուր է դատապարտել զոք՝ դատապարտէ տրտմութեամբ, և առանց մտագրգռութեանցն այնոցիկ՝ զորս վատութիւն այլոց փոխէ ՚ի մեզ : Հեզաբարոյութեամբ ունկն դիր լինի զղջուն յանցաւորին . և յօժարական հաւանի զամենայն զիջողական բան՝ զոր արդարութեան հնար է ընդգայեցուցանել : Որքան և արհամարհիցէ զկործիս ազգի կամ ցեղի միոյ՝ ոչ կշտամբէ պարսաւանօք զամենեսին՝ որք պատկանին ազգին կամ ցեղին այնմիկ : Ոչ կշտամբէ զնոսա այնպիսի բանիւք կարծեաց նոցա՝ զորս ուրանան և ՚ի բաց հերքեն : Ի միոյ աւերիւր կարծեաց ոչ հետևեցուցանէ զեղծումն ամենայն ճշմարիտ կարծեաց . և ոչ ՚ի միոյ անօրէնի գործոյ ասէ թէ ամենայն իրաւունք խղճմտանաց են աղարտեալ : Յորժամ տեսանէ զշիւղն յական յեղբօր իւրում՝ մոռանէ զգերանն՝ որ կայ յիւրում ական : Գթայ ՚ի վերայ մարդկային տկարութե . զայնպիսի կարծիս և զդատմունս ունի զայլոց՝ զորս իրաւացի համարի եթէ այլք ունիցին զինքենէ :

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Կամ միանգամայն ասացից՝ տեսանէ նա զմարդիկ և զգործս նոցա յանաղօտ պայծառութեան ողորմութեան և բարերարութեան. և ոչ յաղջամղջին և ՚ի խաւարամած ստուերին յայնմիկ զոր նախանձոտութիւն և անհաստատութիւն ընուն արկանեն ՚ի վերայ ամենայն համբաւոյ:

ԲԼԷՐ

## Աշնիէ գաղափար իմն ճշմարիտ արիութեան:

Ամենայն՝ որք որոշեցան իբրև զծառայս Այ կամ իբրև զբարերարս մարդկան, ամենայն՝ որք ՚ի վտանգաւոր կացութիւնս կատարեցին զգործս իւրեանց այնպիսի պատուով՝ որում հնար է պայծառացուցանել զանուանս նոցա ՚ի յապագայ ժամանակս, նշանաւոր եղեն վասն արիութեան մտաց: Յայսմանէ ունիմք զօրինակ մի պայծառափայլ յառաքեալն Պօղոս. յորոյ հաշտեկաւոր դիպուածս կենաց կարի շահաւոր եղիցի մեզ յակնարկել մտադրութեամբ: Ձկնի ընդ երկար լինելոյ նորա առաքելայ հեթանոսաց՝ առաքելութիւն նորա կոչեաց զնա յերթալ յԵրուսաղէմ. ուրանօր գիտէր չի համդիպելոց էր դժնդակ անօրէնութեանց թշնամեաց իւրոց: Մինչ-չև էր նորա եկեալ ՚ի նաւ՝ կոչեաց ՚ի միասին զերէցս սիրատենչ եկեղեցւոյ իւրոյ յՄիլետոս և բարեացուցական բանիւ՝ որ չմեծ յարգու-

թիւն տայ համբաւոյ նորա՝ եւ ո՛չ զհրաժարականն զողջոյն : Ժողովն ողջոյն գիտելով զպէսպէս վտանգս՝ որոց մատնէր նա զանձն իւր՝ տագնապեցան ՝ի հոգի և ՝ի միտ տագնապաւ մեծաւ և փղձկեցան ՝ի հեղեղս արտասուաց : Այնպէս էր տեսարան խուճապացն՝ մինչ զի մարթ էր վհատեցուցանել զյամառեալ միտս և միանգամայն պարտասեցուցանել զանյօրս : Լացին ամենեքեան դառնագին , և անկան զպարանոցաւ Պօղոսի և համբուրեցին զնա. կարի յոյժ տրտմելով վասն բանիցն՝ զոր խօսեցաւ՝ թէ այլ ոչ եւս յաւելուցեն տեսանել զերեսս նորա : Օ՛ ինչպիսի էին տպա մտածմունք և բորբոքումն մեծ և բարի առնս այսորիկ : Լուարուք զբանս՝ զորս խօսեցաւ անյողդողդ և աներկեան միտք նորա : Եւ արդ ահաւասիկ՝ ես կապեալ հոգւով երթամ յԵրուսաղէմ. և որ ինչ անդ ընդ իս անցանելոց է՝ չգիտեմ : Բայց զի Հոգին սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց վկայէ ինձ և ասէ՝ եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ : Այլ և ոչ ինչ համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս զի կատարեցից զընթացս իմ ուրախութեամբ՝ և զպաշտօնն զոր առի ՝ի Տէ Յէ վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ : Բարբառեցաւ անդր ձայն՝ և շնչեցաւ շունչ արիասիրտ և առաքինի առն միոյ : Այսպիսի անձն ոչ գիտէ թէ զինչ է զանգիտել ՝ի վտանգէ՝ յորժամ խղճմտանքն ցուցանէ զճանապարհ նորա : Դնէ նա ՝ի միտս իւր երթալ զճանապարհն զայն. եղիցին ելք նորա զինչ և հնար է լինել:

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՁԻՑ

Սոն էր մեծահոգի վարք մածի առաքելոյն այ-նորիկ յորժամ ունէր առաջի աչաց իւրոց զհա-լածանս և զնեղութիս : Հայեցէք զարդիս 'ի մա-ծապուրթիւնս զերադանց առնս այսորիկ՝ յորժամ էին 'ի վերայ նորա ժողովեալ վերջին վտանգու-թեան. և նկատեցէք զվեհանձնութիւն և զյան-դուգնութիւն զորս՝ որովք հայեցաւ 'ի կեր-պարան մահու : Պատրաստ եմ այժմ նուանդել զհոգի իմ, և հասեալ է ժամ հրաժարելոյ իմոյ յաշխարհէ : Որպէս ես զմարտ բարի : Կա-տարեցի զընթացս կենաց իմոց : Պահպանեցի զհաւատս իմ : Այսուհետև մնայ ինձ պսակ արդարութեան : Զորքան ամր կենացպաշտպանու-թեան որ ապահովէ այսպիսի վայելեան մեռա-նելոյ : Ո՞վ ոչ ընտրել ի երկրայի էլանել այս-օրինակ յաշխարհէ առտի երթելով զայսպիսի երջ-անկութեան, քան թէ բազմանալ, աւուրս կենաց իւրոց մինչև 'ի թշուառական ծերութիւն՝ արտասուօքեալ յանցանօք և ամօթով :

ԲԼԷՅՐ

Մխիթարութիւն բարի մարդոյ 'ի նեղութեան :

Կրօն Ք.Ի ոչ միայն սպառազինէ զմեզ արիու-թեամբ ընդդէմ ժամանման չարեաց՝ այլ գի-տելով զի անկցին 'ի վերայ մեր չարիք կարի մատչելութեամբ՝ թեթեւացուցանէ զխաչն բաց-

մապատին մխիթարութեամբք՝ որոց անծանօթ են սիրտք այլոց: Մինչ չար մարդիկ խնդրեն ՚ի տառապեցուցիչ ներգութիւնս իւրեանց զխաղուկ բարկացեալ թագաւորի՝ քրիստոնեայք ուսեալ են համարիլ զանձինս իբրև դրաբերեկյել պատուհասս յողորմած Հօրէ միոյ: Լսեն նոքա ՚ի միջի այնոցիկ զբաղցրաբարբառն զայն ձայն՝ զոր բարի իշխմանքն ածէ ՚ի լսելիս նոցա. այսինքն՝ մի՛ երկնչիք, զի ընդ ձեզ եմ. մի՛ զարհուրիք, զի Աստուած ձեր եմ: Մատուցանեն նոքա անձանց իւրեանց զմխիթարական խոստումնսն զայնոսիկ, որովք պատարուն է Աւետարանն: Համբերութիւնն կատարեսցէ զմեծ և զբարի գործառնութիւնս իւր: Ի նմին ժամանակի բարեպաշտութիւնն բանայ նոցա զօրհնել և զօրհնեալ քաւարան իւր. զքաւարանն զայն՝ յորում վերաւորեալ սիրտն ապաքինի. և խնդրեա, միտքն հանգստանայ. ուրանօր հոգք աշխարհի անկանին ՚ի խորս մոռացականութեան. ուրանօր խռովութիւնք նոցա շիջանին, և թշուառութիւնք նոցա տեղի տան. ուրանօր առաջի լինին աչաց նոցա մեծագոյն առարկայք՝ քան զոր աշխարհ երևելի կացուցանէ. և ուրանօր առաւել պարզ երկին մի ճաճանչէ և առաւել քաղցր և խաղաղ լոյս մի ցոլանայ ՚ի սիրտ վշտացնելոց: Յայսոսիկ ժամս բարեպաշտութեան՝ բարեպաշտն առաջի արարեալ ամենակարող ապաստանարանի միոյ զկարիս և զտրտմութիւնս իւր՝ իմանայ զի ոչ է լքեալ իբրև զանապաւէն, և թողեալ անտէ-

բունք 'ի հալիտ թշուառութեան : Այս է ընդ նմա · Քս և Հոգին մի են ընդ նմա · և թէպէտ զրկեսցի նա յերկրի աստ յամենայն օժտականէ՝ կարէ գտանել զուրախական մի յերկինս՝ որ ոչ երբէք թողցէ զնա :

ԲԼԷՐԸ

## Ախտան կենաց :

Յորժամ զմտաւ ածեմք զախտն կենաց՝ զաւորս անհնարութեանց և դժուարութեանց մարդոյ՝ զբաւութիւն 'ի միջի նոցա՝ որք երբեմն այնպէս փորձադրաղ էին և զուարթերն՝ զհարկ կարեմք խորհիլ յաճախ՝ յաջողոր և կարեկցական զգացմանց : Ոչինչ պիտի սէր այս ոչ փառս թորբոքման մարդասիրութեն : Յորս այս ոչ ժողվին արտասուք 'ի մասանց լինելն զկնմկէ անցուար և բնակակենցաղ մարդոյ :

Ահաւասիկ թշուառական մարդն այն՝ որ 'ի վերջոյ 'ի բաց ձգէ յինքենէ զբերան նողկալի կենաց իւրոց : Սակս ոչ եւ տանջեսցի նա ընդ խաղտանգանօք չքաւորութեան և աշխատութեան : Սակս ոչ եւս լսելոց է դժպհիրհ կոչմունս տեառն իւրոյ յորմէ ընդունէր զվարձ իւր դուզնաքեայ : Սակս ոչ եւս զարթուցեալ լինի 'ի հարկաւոր ննջմանէ 'ի վերայ յարդաշէն անկողնոյ իւրոյ , և ոչ

չտապեցի յանփափուկ կերակրոյ խորոյ առ 'ի կրել զթաղմադիմի աշխատանս տունջեան : Մինչ ցածագոյն գերեզման նորա պատրաստի , և քանի մի տապալեալ մերձաւորք ածեն զնա անդր , բարի եղիցի մեզ խոկալ զի մարդս այս ևս էր եղբայրակից մեր · զի մասն նորա պատուեալ կին նորա և կարատաւոր մանկունք նորա այժմ յողբս վարակեալ կան · զի թէ և աշխարհի զանց էր արարեալ զնովաւ՝ սակայն ունէր նա զկատարեալ իմացականութիւն մի և զգիրս մի բարի , և ահա ածեալ էինի 'ի հրեշտակաց առ 'ի հանգստանալ 'ի ծոցս Աբրահամու : Ո՛չ կարի հեռի 'ի նմանէ բացեալ է գերեզմանն առ 'ի ընդունիլ ըզփտրթամս և զամբարտաւանս : Քանզի գրեալ է 'ի յառակի թէ մեռաւ մեծատունն և թաղեցաւ : Այո ևս մեռաւ : Ճոխութիւնք նորա ո՛չ ետուն նմա վրիժակցիք լինել ընդ տապալեալսն այսոմիկ · այլ գուցէ թէ 'ի ձեռն փափկասիրութեն փութացուցին զվախճան նորա : Այսպ արդարև շքեղ լալականք ընդ փողոցս · և մինչ ամենափայլել գեղեցկութեամբ և հանդիսիւ տխրականութեան պատրաստեալ յարդարի յուղարկաւորութիւն նորա , ժառանգք նորա՝ անհամբերք 'ի քննել զկտակագիր նորա՝ հային 'ի միմեանս աչօք նախանձաբեկութե , և սկսին կռուիլ ընդ միմեանց վասն ստացուածոցն : Յաւուր միում ածեմք 'ի դրունս գերեզմանի շքադագոյ նորա բաղձակ այս՝ որ նորոգ սկսեալ էր բողբոջել 'ի հայեցուածս ձնողին . և 'ի միւսում աւուր սեւա-

ծեմք զպատանի կամ զպատանուհի մի գեղաբող-բոջ և քաջառողջ՝ պարփակեալ ՚ի տարաժամ գերեզմանի: Մինչ յուղարկաւորութիւնն հեռացեալ լինի ՚ի բազմամթին անթախիծ մարդոց՝ որք խօսակցին ընդ միմեանս զկորոյս աւուր կամ զսովորական գործառնութեանց աշխարհի՝ ուղղեսցուք զնկատմունս մեր ՚ի տուն սգոյ, և տեսցուք թէ զինչ անցանէ անդանօր: Տեսանեմք անդր զգերդաստան մի տրտմագնեաց և անմխիթար՝ բազմեալ լռին տրտմութեամբ և խորհեալ զաղէտալի պատահմանէ սնոտի՝ որ պատահեցաւ ՚ի փոքրիկ կենցաղակցութեան իւրեանց. և արտասուաթոր աչօք յանկանեալ ՚ի սենեակն՝ որ այժմ անբնակման և դատարկացեալ, և յամենայն ինչ՝ որ այ ո յիշատակութիւն բաժանեալ սիրականին իւրեանց: Նոյնպէս զգածութեամբ տառապանաց այլոց՝ անձնասէր խստութիւն սրտից մերոց տակաւ առ տակաւ շիջցի՝ մեղմասցի և ՚ի մարդասիրութիւն փոխադրեսցի:

՚Ի միւս աւուր միում ածեմք զոմն ՚ի գերեզման՝ որ ՚ի հասակի ծերութեան և զկնի ընդերկար կենդաղովարութեան ընկողմանեցաւ ՚ի վերջոյ առ ՚ի հանգստանալ: Մինչ երթամք ՚ի գերեզմանատունն՝ պիտոյ է մեզ ՚ի խորհիլ և ՚ի խօսակցիլ զամենայն զփոփոխութեանց և զդիպուածոց աշխարհիս՝ զորս տեսեալ է նա յընթացս կենդաղովարութեան իւրոյ: Հաւանական է թէ անցեալ է նա ընդ փոփոխումն բաղդի. Օգտեալ է զնաշակ յաջողութեան

և զնախանձոտութեան ։ Տեսեալ է զգերդաստանս և զազգականս բողոքիլ և ծառայիլ ։ Տեսեալ է զանդորրութիւն և զպատերազմ 'ի յաջորդել զմիմեանս 'ի շրջանս իւրեանց ․ տեսեալ է զե-լեալս երկրի իւրոյ 'ի կրել ըստ կամս փոփոխութիւնս , և դէպուածս նոյն՝ յորում բնակերն՝ Նորայնոյն իմն եղանիլ աչաց նորա ։ Յետ ամենայնի տեսեալ է զի աչք իւր այժմ կափուցան յաւիտեան ։ Օտար երկի նա 'ի միջի Նորածին մարդկան ․ ազգ մի՝ որ ոչ ճանաչէ զնա՝ եղեալ է 'ի նոյն երկրի ։ Այսպէս անցանէ աշխարհ ։ Իւր ամենայն մեծութիւնս և կայցութիւնս ազգ երթայ և ազգ գայ , և մեծագիր իշխանս այս 'ի ձեռն շինչանաց դատարկանայ և նմանի ազգ 'ի յաջորդական ուղեգնացից ։ Ով ունայն և վաղանցիկ աշխարհ ։ Ով անցաւոր և փախստական կեանք ։ Երբ արդեօք որդիք մարդկան ուսցին խորհիլ զքեն որպէս արժան է նոցա խորհիլ ։ Երբ արդեօք ուսցին զմարդասիրութիւն 'ի վշտակրութեանց եղբայրակցաց իւրեանց , կամ ըզբարեխառնութիւն և զխաղաղութիւն 'ի գիտութենէ անցողական վիճակի իւրեանց ։

Գերակայ ընկերակցութիւն և նորոգութիւն առաքինական որ ընչութեանց են երկա-քին արմատք ազգային երջանկութեան ։

Բայց միայն առ 'ի կատարեալ սիրոյ բղխեալ ի ջանքութենէն՝ զոր երկու ինչք՝ որք մասնաւորապէս յանձինն զերանութիւն այնոցիկ բաղձալի մարդոց՝ որք կանգնին զառաջեաւ Աթոռոյն ։ Այսոքիկ են մասունք գերակայ ընկերակցութիւն, և նորոգութիւն գործավարի առընչութեանց ։ Առաջին յուցանի 'ի սուրբ գրոց՝ յորմանցելոյ ընդ անհամար բազմութեան հրեշտակաց և ընդ համայն ժողովոյ և եկեղեցւոյ նախնեաց, և սատեալ ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակոբու 'ի թագաւորութեան երկնից ։ այս է խոստումն մի՝ որ ընծայեցաւ յանէ աչաց զհայեցուածս պարծանաց Շնորհէ սա բարի անձանց առ 'ի ունել այն յոյս՝ որ անջատ լինելով յամենայն գործոց մարդկային զանգուածոց և յայնմ խառնակութեան և աղմկալեալ ամբոխէ՝ յորոց միջի այժմ բնակեմք՝ մարթացուցէ զնոսա առ 'ի խառնիլ 'ի ժողովս մարգարէից, նահապետաց և առաքելոց և այնոցիկ մեծամեծ և նշանաւոր հոգւոյ, որք փայլեցան 'ի ժամանակս յառաջինս իբրև կծառայս Այլ կամ իբրև զառաջնորդս մարդկան ։ կորոյ զգործս առնէ է մեզ տօնախմբել ։ որոց ընթացից հետևիմք այժմ 'ի հեռուստ ։ և զորոց զանուանս որպիսեանն մեծարութեամբ ։

## ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Երանեալքն յարակցեալ ընդ գերակայ ժողովոյս այսմիկ՝ նորոգեն զայսօրիկ նախնական առընչութիւն ընդ առաքինի սիրելեաց իւրեանց՝ որք ննջեցան 'ի մահուանէ : Հայեցուած ժողովոյն զարթուցանէ 'ի սրտի զամենաքաղցր և զախորժագոյն մտածութիւն՝ յոր հնար է ունիլ 'ի մահացու աշխարհիս յայսմիկ : Քանզի յամենայն տրամութեանց անտի՝ զորս պարտիմք կրել՝ ոչինչ է այնպէս դառնագին և վշտացուցիչ՝ որպէս այն՝ որ պատճառի 'ի մահականի հարուածոց · որք բաժանեն զմեզ յաւիտեան 'ի նոցանէ՝ ընդ որոց բնութիւնն կամ բարեկամութիւնն միակցեալ է զօրիւրս մեր սեանութեամբ : Յիշողութիւն ժամանակէ 'ի ժամանակ նորոգէ զցաւս, բանայ զվէրս, որ երբեմն լի՛ էր պատառեալ · և վերակոչելով զուրախութիւն՝ որք անցին և տեղի ետուն՝ շարժէ զամենայն աղբիւր ցաւագին զգացուածոց : Յայսոսիկ վշտացուցիչ ժամու զիարդ դիւրիչ և մխիթարիչ է մտածել՝ զի բաժանումն այն միայն ժամանակական է և ոչ յաւիտենական , զի եղիցի ժամանակ՝ յորում յարակցեսցուք վերստին ընդ նոցա՝ ընդ որս երջանկագոյն աւուրք մեր անցին · որոց ուրախութիւնք և տխրութիւնք երբեմն էին մեզ սեփական · որոց բարեպաշտութիւն և առաքինութիւն երբեմն զուարթացոյց և սրտապնդեաց զմեզ · և յորժամ իջևանեսցուք 'ի խաղաղական վայրն յայն՝ յորում օթևանին նոքա՝ ոչինչ փոփոխութիւնք բնութեան երբէք կարող են անջատել զմեզ վերստին 'ի նոցանէ : Այսպէս է

ընկերակցութիւն երանելեացն ՚ի բարձունս : Եւ յայսպիսի ընկերակցութենէ է բաղկացեալ բազմութիւնն այն՝ որք կանգնին առաջի Աթոռոյն:

## ԲԼԻԸՐ

### Պաշտպանութիւն սուրբ գրոց :

Աստուածպաշտութիւն է ՚ի հաւատս այծառայել ճշմարտութեանց Աստուածայնոյն կատարեալ և անյողդողդ հաւատով : Զանձամ յայտնի է սնոտիապաշտութեան : Որ երբէք փոխանակեսցի զայն ընդ հազարաւոր աշխարհաց Եւ ընդունելի յինքն ընդ նմա՝ որ ունի զայն ՚ի սեփականութեան իւրում. քանզի ընդ մէջ ամենայն յեղափոխութեանց և թշնամութեանց աշխարհիս այսորիկ վայելէ նա զանխռովաբար մտօք մխիթարութեան և սփոփանաց՝ յորոց բաղդն չունի երբէք զկարողութիւն ՚ի հրաժարեցուցանել, զնա :

Ոչ իք ՚ի վերայ երկրի նմանեալ մի այնպէս մեծարող բարձրագոյն սիրոյ և սիրելութեան՝ կամ այնպէս ատեցող ատելութեան և թշնամութեան՝ բռնաւորութեան՝ եղեռնագործութեան և անօրէնութեան և կամ ամենայն տեսակաց չարակնութեան՝ որպէս Աստուածն : Ոչինչ արտաշնչէ նա՝ բայց միայն զողորմութիւն՝ զբարերարութիւն և զխաղաղութիւն :

Ցաղաչափութիւն է վսեմափայլ՝ յորժամ յարուցանէ 'ի մտի կամ եւ զբարի ակրինչ· այսինքն՝ զերբեպաշտութիւն եւ զհայրենասիրութիւն ։ Սա է մի 'ի յազնուագոյն ներգործութեանց արուեստի ։ Սաղմոսքն նշանաւոր են յոյժ անդր քան զայլ ամենայն գրուածս վասն կարող լինելոյ նոյա 'ի յարուցանել զերբեպաշտական մտածողութիւնս ։ Սակայն ոչ են միայն վասն այսորիկ բարձրագայատիճ եւ նշանաւոր ։ Պարունակեն յինքեանս զառաւել պայծառակերպ նկարագրութիւնս զերկնային բնութենէ՝ զորս մարդկային հոգւոյ հնար է ըմբռնել ։ Հայիր եւ զորոց Սաղմոսն մանաւորապէս ցուցանէ զամենակարողութիւն եւ զամենաբարութիւն նախախնամութեան բարձրելոյն յարաշրջագործել եւ 'ի պահպանել զաշխարհ եւ զբազմազան 'ի սեռակս կենդանեաց 'ի նմա այնպիսի վեհանձնական արագաձեռնութբ եւ կատարելագործութեամբ՝ մինչ զի ընդունայն է որոնել զսյն 'ի շարագրութիւնս գրածոյ ուրուք ։

Անդի վարդապետութիւնք Աւետարանին՝ որք դիւրըմբռնելի են մարդկայինս մտաց՝ քաջայարմար երևին մաքրագոյն ճշմարտութեան եւ անսաերիր բարոյականութեան ։ Ամենայն զխոութիւն եւ իմաստութիւն Պիւթագորայ՝ Սոկրատայ եւ Արիստոտելի ոչ երբէք կարացին պատճառել զայսպիսի լիպ կլթութիւ ուղղագոյն գործոց եւ զայնպիսի իմաստասպատում ծանութի զնախախնամութենէ բարձրելոյն եւ զմարդոյ՝

զորս հնար է գտանել 'ի նոր Կտակարանի ։ Բաղդատել ընդ սմա այլ ամենայն բարոյական և համաբնական իմաստութեան՝ արդարև չնչին նանրութիւն և ունայնութիւն երևի ։

ԲԷԱԹԹԻ

---

## Հարկաւորութիւն բարի ուսման ։

Համարիմ ես զառ 'ի յուսմանէ թափուր մարդկային հոգին իբրև զմարմարիոն 'ի քարահանս ․ որ ոչ ցուցանէ և ոչ մի 'ի սեփական գեղեցկութեանց իւրոց՝ մինչ գիտութիւն արծնողին արտադրէ զգոյնս նորա, փողփողեցուցանէ զերեսս նր, և գտանէ զամենայն պճնողական զծիծ՝ զարատ և զընդերս , որք են 'ի զանգուածի նորա ։ Ուսումն ըստ սմին օրինակի յորժամ ուղխատ լինի յազնուական միտս՝ առաջի կացուցանէ աչաց զամենայն զանյայտ առաքինութիւն և զկատարելութի ․ որք առանց այսպիսի նպաստից՝ ոչ կարեն բնաւին գալ 'ի յայտնութի ։

Եթէ ընթերցող իմ թոյլ տայցէ ինձ վերաբերել ինձ և իւր զբանս իմ 'ի նա՝ 'ի կիր առից զնոյն եղանակ բացայայտելոյ զներգործութիւն ուսման՝ որով Արիստոտէլ բացատրէ զմարմնաւոր էակացն զիւր վարդապետութի՝ յորժամ ասէ՝ թէ անդրի մի թագեալ կայ 'ի զանգուած մարմա-

բիոնի , և անդրիգործութեն արհեստի միայն է հնար զաւելորդ նիւթս 'ի բաց ձգել և զանպիտանս խոտեալ տարամերժել ։ Պատկերն ծածկեալ մնայ 'ի քարի , և քանդակագործի և եթ մարթ է 'ի յայտ ածել զայն ։ Որ ինչ քանդակագործութիւն է զանգուածոյ մարմարիոնի՝ ուսումն է մարդկային հոգւոյ ։ Փիլիսոփայն՝ սուրբն կամ դիւցազն՝ իմաստունն՝ բարեպաշտօնն կամ մեծագործն բազում անգամ ծածկեալ թագուցեալ մնայ 'ի ռամկի ․ զոր վայելուչ ուսման մարթ էր արտահանել և 'ի լոյս ընծայել ։ Վասն այսորիկ կարի յոյժ զուարճանամ յընթեռնուլ զանցս բարբարոս ազանց և 'ի մտախոհ լինել զայնոցիկ առաքինութեանց՝ որք են անհրահանգ և անկիրթ ․ 'ի տեսանել զքաջարտուն փայլեալ 'ի վայրագութեան , զկամառութիւն 'ի խստամբակութեան, զիմաստութիւն 'ի խորագիտութեան , զհամբերութիւն 'ի տխրութեան և 'ի յուսահատութեան ։

Երբ մարդոյ ունին զտարբեր ներգործութիւնս , և երևին 'ի պէսպէս տեսակս գործոց՝ ըստ ուրումառուել կամ նուաճ ուղղեալ և կառավարեալ լինին 'ի բանականութենէ ։ Յորժամ դքլոէ զխափշկաց՝ որք 'ի մոռանիլ սեարց իւրեանց և կամ 'ի փոխել զծառայութիւնս իւրեանց՝ կախեն զինքեանս զծառոց՝ որպէս երբեմն դէպ լինի Ամերիկեան գաղթականաց մերոց՝ զմարդ կարէ հանդուրժել 'ի զարմանալոյ ընդ հաւատարմութիւն նոցա՝ որ թէ և այդպիսի տհա-

ւոր եղանակաւ երևի: Այդ խուժադուժ մեծութիւն հոգւոյ՝ որ ընդ ամենայն տոհմս երևի յողորմելի թշուառականս յայսոսիկ՝ յինչ արգեօք ոչ ամբառնայր՝ եթէ ուղղապէս կատարելագործիւր: Իւ զինչ տեսակ ներողամտութեան կարէ լինել վասն արհամարհանացն՝ որովք բերիմք ընդ այսմ մասին տեսակակցաց մերոյ, զի ոչ զետեղիցեմք զնոսա առ հասարակ չափու մարդասիրութե, զի գտիցեմք զաննշան տուգանս ինչ ՚ի վերայ նորա՝ որ խողխողէ զնոսա. և ոչ այսչափ միայն՝ այլ և որքան կար մեր խոստանայ՝ արգելուցումք զնոսա ՚ի հայեցուածոյ երջանկութեան ՚ի միւսում աշխարհի և ստուել յաշխարհի աստ, և ՚ի բաց բառնայցեմք ՚ի նոցանէ զայն՝ զոր համարիմք իբրև զվայելուչ գործի սեփականելոյ զերջանկութեն զայն: Վասն այնորիկ անճառելի երանութիւն իմն է ծնանիլ յայնոսիկ մասունս աշխարհի՝ ուր ծաղկին իմաստութիւն և գիտութիւն. թեպէտ խոստովանիլ պարտ է՝ զի գոն յայսոսիկ մասունս և բազում անապաւէն անհրահանգ մարդիկ՝ որք սակաւ ինչ ՚ի վեր են քան զբնակիչս այնոցիկ ազգաց՝ զորոց տատանըր խօսեցայ. մինչ զի նոքա՝ որք սեփականեալ են զօգուտս առաւել աշխատական ուսման՝ անցանեն դանցանեն զմիմեամբք բազմապատիկ աստիճանօք կատարելութե: Բանզի ՚ի դառնալ մեր վերստին յանդրի զանգուածոյ մարմարինի՝ տեսանեմք զնա երբեմն ՚ի սկզբան հատման՝ երբեմն բիրտ կոփեալ և եր-

բեմն մերձ ընդ մերձ ածեալ 'ի մարդկային կերպարան · երբեմն տեսանեմք զմարդ յերկիւ որոշակի յամենայն անդամս և 'ի հայելեացն իւր · երբեմն տեսանեմք զպատկերն մեծացեալ 'ի գերազանցեալ · այլ հազիւ դիտիցեմք ումեք՝ որում ձեռն Փիդեայ կամ Պրաքսիտեղեայ միոյ ոչ կարէր տալ զպէսպէս գեղեցիկ կոփածս և զկատարելութիւնս :

ԷԴԴԻՍԸՆ

## 'Ի վերայ բաւարարութեան :

Բաւարարութիւնն պատճառէ մասնաւորապէս զամենայն զներգործութիւնս զայնոսիկ՝ զորս քիմիագործն սովորաբար յարմարեցուցանէ այն միոյ՝ զոր քար փիլիսոփայի անուանէ · և եթէ այն ոչ տայցէ զհարստութիւն՝ առնէ զնոյն գործ՝ մերժելով 'ի բաց զցանկութիւն նորա : Եթէ ոչ կարէ փարատել զվարանմունս յարուցեալս 'ի մտաց մարդոյ կամ 'ի մարմնոյ նորա և կամ 'ի բաղդէ՝ դիւրացուցանէ զնա ընդ նոքիմբք : Ունի այն արդարև զքաղցր իմն զօրութիւն 'ի վերայ հոգւոյ մարդոյ 'ի սակս ամենայն էակի՝ ընդ որ ունի զհաղորդակցութիւն : Ոչնչացուցանէ զամենայն տրտնջմունս՝ զտժգոհութիւն և զապերախտութիւն առ էութիւն այն՝ որ վիճակեալ է նմա զվիճակ իւր յաշխարհի աստ : Եղծանէ զամենայն զանկարգ փառամոլութիւն և զամենայն յօժարութի

ապականութեան 'ի սակս հասարակութեն՝ յորում է զետեղեալ : Պատճառէ խոսակցութեան նորա զքաղցրութիւն և ամենայն մտածողութեց նորա զյարատև զպայծառութիւն : 'Ի մէջ բազմապատիկ եղանակաց՝ զորս հնար է 'ի կիր առնուլ առ 'ի ստանալ զառաքինութիւնս զայս՝ յիշեցից միայն զերկուսին հետագայս : Նախ քան զամենայն պարտ է մարդոյ մտածել ՝ թէ ստացուած իւր որքան առաւել է քան զկարօտութիւն իւր . և երկրորդ՝ որքան առաւել ապերջանիկ լինիցի՝ քան թէ է իսկապէս :

Նախ՝ պարտ է մարդոյ մտածել թէ ստացուած իւր որքան առաւել է քան զկարօտութիւն իւր: Կարի զարմացմամբ հաճեցեալ եմ ընդ պատասխանին՝ զոր արար Արիստիպպոս միում՝ որ սփոփէր զնա 'ի կորուսանելն զմի 'ի կալուածոց իւրոց: Ընդէ՞ր, ասաց նա . ունիմ ես տակաւին զերիս կալուածս, այլ դու զմի միայն . առաւել պարտ է ինձ ցաւիլ վ՛քո, քան թէ քեզ՝ վասն իմ: Իսկ ընդ հակառակն յիմարամիտք փոյթ են 'ի մտածել՝ թէ զինչ են կորուսեալ՝ քան թէ զինչ ունին, և 'ի յառել զաչս իւրեանց յայնոսիկ որք առաւել փարթամագոյն են քան զինքեանս՝ քան թէ յայնոսիկ՝ որք են ընդ մեծամեծ նեղութք : Ամենայն ճշմարիտ բերկրութիւնք և զուարճութիւնք կենաց պարփակեալ են յանձուկ վայրի միում . սակայն բնութիւն մարդոյ ձգտի յառաջ հայիլ յարաժամ, և հետևիլ միում՝ որ ունի զսկսուածս նորա 'ի հարստութեան և 'ի

յարգութեան : Վասն այսր պատճառի՝ որովհետև նոքա ոչ կարեն տիրապէս կոչիլ փարթամ՝ որք չունին առաւել քան զոր ցանկան՝ քանի մի փարթամք գոն յառաւել քաղաքական ազգս բայց միայն 'ի մէջ միջակ ժողովրդեան . որք պահեն զցանկութիւնս իւրեանց ընդ հարստութիւնս իւրեանց, և ունին զառաւել հարստութիւն՝ քան թէ գիտեն զիարդ վայելել զայն : Մարդիկ մեծահարուստք կենցաղավարին 'ի տեսակ իմն պայծառաւէտ աղքատութեան . և յարաժամ կարօտ են . քանզի փոխանակ հանգչելոյ 'ի մնայուն բերկրութիւնս կենաց՝ ջանահնար լինին անցանել զանցանել զմիմեամբք 'ի ստուերս և 'ի հայեցուածս : Անձինք մտացիք յամենայն ժամանակի տեսեալ են կարի առաւել բերկրութիւնս զայս յիմարական խաղն՝ որ խաղայ 'ի վերայ գլխոց նոցա . և կարծեցուցանելով զցանկութիւնս իւրեանց՝ վայելեն զայն ամենայն զաղտնի բաւարարութիւն՝ որոց այլք 'ի խնդիր լինին յարաժամ : Արդարև արժան է խոստովանիլ՝ զի չէ հնար ըստ բաւականին ակներև կացուցանել զծաղրական մղումն զայս զհետ երևակայական բերկրութեանց . վասն զի է գլխաւոր արմատ չարեացն այնոցիկ՝ որք հասարակապէս աւերեն զազգ մի : Մտացուածք առն միոյ լիցի որ ինչ էն, չքաւոր է նա , եթէ ոչ կեայ 'ի նոսա . և բնականաբար վաճառէ զանձն իւր նմա՝ որում հնար է վճարել զգին նորա : Յորժամ Պիստակոսի՝ զկնի մահուան եղբօր իւրոյ՝ որ թողեալ էր նմա զմեծ զստացուած մի՝

արքայն Լիդիոյ մատոյց զմեծ գումար մի դրամոյ՝ գոհացաւ նա զբարերարութենէ նորա · սակայն ասաց՝ թէ ունէր կիսով չափ առաւել քան զոր գիտէր զիարդ վայելել : Ի կարծոյ՝ բաւարարութիւնն համահաւասար է հարստութեան . և փափկանկութիւնն՝ չքաւորութեան · կամ առ ՚ի տալ խոկմամբ զառաւել իմն հաճոյական շրջան՝ բաւարարութիւնն է բնական հարստութիւն առ Սոկրատէս · յոր և զայս յաւելոյր՝ փափկասիրութիւն է արուեստական չքաւորութիւն : Այսն որոյ մատուցին մերձանութեան այնոցիկ՝ որք յարաժամ ցանկան վայելել յառաւաւորն և յերկայնայտեան վայելչութիւնս և ոչ աշխատ լինին ՚ի կարճացուցանել զցանկութիւնս իւրեանց՝ զմի ՚ի զերազանց առից Բիոս փիլիսոփային · այսինքն՝ թէ ոչ ոք ունի գայնքան հոգ՝ որպէս որ երթայ զհետ առաւելագոյն երջանկութեան :

Յորդորդ՝ իւրաքանչիւր ոք պարտ է մտածել՝ թէ որքան առաւել աներջանիկ լինիցի՝ քան թէ է իսկապէս: Նախկին բանն պատշաճեցաւ այնոցիկ ամենեցուն՝ որք ըստ բաւականին կարօղ են դիւրացուցանել զանձինս իւրեանց · այս բան վերաբերի յայնպիսիս՝ որք տիրապէս են ընդ նեղութեամբ կամ ձախողութեամբ իւիք : Այնոքիկ ստացեն զմեծ մխիթարութիւն յայնպիսի բաղդատութեան՝ զոր աներջանիկ ոմն առնիցէ ՚ի մէջ իւր և այլոց , կամ ՚ի մէջ ձախողութեն՝ զոր կրէ նա՝ և ՚ի մէջ մեծագոյն ձախողութեանց՝ որոց հնար էր պատահիլ նմա :

Թողցրէ ինձ պատմութիւն Փոլանտացւոյ մի-ոյ՝ որ 'ի բեկանիլ բարձի իւրոյ անկանելով 'ի մի-ջին կայմն նաւու՝ տեսաց որոց կանգնել էին շուր-ջանակի՝ թէ մեծ ողորմութիւն եղեւ զի վիզ իւր ոչ բեկաւ։ Յոր՝ մինչ առնեմ զքաղուածս բա-նից՝ տուր ինձ հրաման յաւելուլ զպատմութիւն նախնի փիլիսոփայի ուրումն․ որ յորժամ հրա-ւիրեալ յոմանս 'ի բարեկամաց իւրոց 'ի ճաշել ընդ իւրեանս՝ աղմկեցուցանէ որ՝ մտեալ 'ի ներքս բարկութեամբ՝ կործանէ [illegible] եղեալ սեղանն։ Ամենայն որ՝ տես՝ ունի զտա-ռապանս իւր․ և երջանիկ է նա՝ որ չունի մեծա-գոյնս քան զայս։ Տեսանելք մեք զբան մի 'ի վե-րայ նորին սարկաւագի 'ի վերայ Հէմմընդ վարդա-պետին գրեալ 'ի Փիլեսոփիկոպոսէ։ Որովհետե-ւ բարի այրս այս չարչարիւր 'ի բազում պատիկ խառնուածոց հիւանդութեանց՝ յորժամ ունէր չզօրութիւն՝ զոհանայր զԱյ զի ոչ էր այն խնձացաւուն․ և յորժամ ընկալու զխնձացաւութ՝ զոհանայր զի ոչ ընկալաւ չերկուսին հիւանդութիւ-ցայնոսիկ 'ի միասին։

Ո՛չ կարեմ աւարտ տալ գրուածոյս այսմիկ տա-ռանց խոստովան լինելոյ՝ թէ ոչ գոյ բնաւին հրահանգ ինչ բայց 'ի հրահանգէ քրիստոնէութ՝ որ մարթանայր ներգործաբար պատճառել 'ի միտս մարդոյ զառաքինութիւն զայն՝ զոր ինչ մինչ ցարդ խօսեցայ։ Նա 'ի շառագուցանել զմեզ 'ի միջնակի մերում՝ բազում յարգի փիլիսոփայից ասեն մեզ՝ թէ աժգոհութիւն մեր վնասէ զմեզ միայն

առանց կարող լինելոյ առնել զփոփոխումն ինչ 'ի կացութիւնս մեր . այլք ասեն՝ թէ որ ինչ չարիք հասանեն 'ի վերայ մեր՝ պատճառեալ լինին մեզ 'ի մահականք նեղութենէ իմիք՝ ընդ որով մեծագոյն եւս ենթարկեալ կան . մինչ-դեռ այլք կարի մեկն խոստովանին՝ զի որ թշուառական է՝ պիտոյ է նմա այնպէս լինել առ 'ի պահել զհամաձայնութիւն տիեզերաց . եւ յառաջադրութիւն նախախնամութեան բարձրելոյն խառ-վիւր եւ եղծանիւր՝ եթէ նա ոչ լինէր այնպէս : Այսոքիկ եւ սոցին նման բանք՝ առաւել լռեցուցանեն քան բաւարարեն զմարդիկ : Սոյն հնար է զգացուցանել նոցա թէ ամփոփութիւն նոցա է անպատշաճ՝ սակայն չէ հնար ինչ կերպիւ փարատել զայն : Սոքա առաւել զյուսահատութիւն պատճառեն՝ քան զմխիթարութիւն : Իմ լաւ եւս ասացից՝ պարտ է մարդոյ պատասխանել միում 'ի մխիթարչացս այսոցիկ՝ որ Օգոստոս պատասխանեաց բարեկամի իւրում՝ որ խրատէր զնա ոչ տրտմիլ վասն մահուան անձին միոյ սիրականի . քանզի տրտմութիւն նորա ոչ կարէր յետս ածել զնա : Վասն այսր պատճառի է՝ ասաց կայսրն՝ տրտմութիւն իմ : Ընդ հակառակն՝ կրօնն առաւել եւս քաղցրութեամբ խնամ տանի մարդկայինս բնութեան : Ցուցանէ ամենայն թշուառականի զհնարս լարեգործելոյ զվիճակ իւր՝ եւ ոչ այսչափ միայն՝ այլ եւ ցուցանէ նմա զի տանիլն նեղութեանց՝ որպէս հարկ 'ի վերայ իւր կայ՝ բնականապէս յանգեսցի 'ի փառ-

րատեղն զնա : Դիւրացուցանէ զնա աստանօր. քանզի երջանիկ կարէ առնել զնա այսուհետեւ :

ԷԴԴԻՍԸՆ

### Ջանասիրութիւնք մարդկան առ ՚ի զերծանիլ ՚ի բեռանց իւրեանց :

Այս է մի ՚ի դրուատելի խոկմանց Սոկրատայ- այօրինքն՝ եթէ ամենայն թշուառութիւնք աշխարհի ՚ի մի ընդ հանուր գումար ժողովէին առ ՚ի հաւասարապէս բաժանիլ ՚ի մէջ բովանդակ մարդոց՝ նոքա՝ որք այժմ համարին զինքեանս յամենայնի ապերջանիկս՝ գերազանցագոյն առացեն զսեփական բաժին իւրեանց քան զայն՝ որ վիճակեսցի նոցա այնպիսի բաժանմամբ : Հորէս կարի գեղեցկապէս գովաբանէ զայս խոկումն ասելով՝ թէ նեղութիւնք և տառապանք՝ ընդ որովք եմք ենթարկեալ՝ առաւել դիւրին են մեզ քան այլոց ումեք կարէին լինիլ, եթէ փոխիցեմք զկացութիւնս մեր ընդ նորայն :

Այն ինչ մտախորհ լինէի զերկուց բանիցս այսոցիկ՝ բազմեալ ՚ի վերայ բազկաթոռ աթոռոյ իմոյ՝ յանկարծակի անկայ ՚ի դիրկս քնոյ․ յայնժամ յեղակարծ կարծէի՝ թէ Արամազդ տարեալ էր զյայտարարութիւն մի՝ զի իւրաքանչիւր մահկանացու ածցէ զտառապանս և զթախծանս իւր և արկցէ զայնոսիկ ՚ի միա-

ռին ՚ի շրջակայս մի: Լայնադիր դաշտա-
վայր մի կացուցեալ էր վասն այսր առարկայի:
Կանգնեցաւ եւ ՚ի կեդրոնի նորա և սեւանէր
զուարճութեամբ՝ զի ռոմանդան մարդիկ եր-
թային մի զինի միոյ և արկանէին ՚ի վայր ըզ-
բազմատեսակ բեռինս իւրեանց՝ որք փութա-
նակի եղեն լեառն մի հիահրաշ՝ որ երևէր ե-
լանել ՚ի վեր քան զամպս:
Գոյր անդ տնկին մի նրբահայեաց կերպարանա-
որ կարի քաջաջան էր յայսմ հանդիսորու-
թեան: Ունէր նա ՚ի միում ձեռին զխաշորա-
ցոյց մի. և զգեցեալ էր կարի խենեշօրէն ըզ-
հանդերձս երկրաքաշս և պճնազարդեալս ազգի
ազգի պատկերօք դիւաց և հոգւոց. որք ցուցանէ-
ին զինքեանս ՚ի հասարակութ ցնորական կերպա-
րանս՝ մինչ հանդերձք նորա շարժէին ՚ի շնչմանէ
հողմոյ: Զայեցուածք նորա սակաւին մի էին
անհեթեթ և այլանդակ: Անուն նորա էր Երե-
ւակայութիւն: Յառաջնորդէր նա զամենայն մահ-
կանացու ՚ի սահմանադրեալ տեղին. յայն՝ զինի
կարի պատրաստաբար սատարելոյ նմա ՚ի կազ-
մել զկապոց նորա և ՚ի դնել զայն ՚ի վերայ
ուսոյ նորա: Սիրտ իմ զալարէր ՚ի ներքս ՚ի
փորն իմում ՚ի տեսանել զտեսակակիցս իմ տան-
ջիլ ընդ յաղկեցեալ բեռամբք իւրեանց. և ՚ի զմը-
տաւ ածել զայնմիկ զահեղահրաշ շրջակուտն
մարդկայինս տառապանաց՝ որք անկեալ կային
զառաջեաւ իմոյ: Այլ սակայն՝ էին անդանօր
դէպէս անձինք՝ որք մեծագոյնս զբօսեցուցին զիս

՚ի վերայ այսր դիպուածոյ ։ Նկատէի զի մի ոմն անէր ՚ի ներքս զկապոց մի՝ կարի զգուշութեամբ՝ թաքուցեալ ընդ հնոտի զարդս բուն վերարկուաւ իւրք · զոր յարկանել նէ ՚ի շեղջակոյտ անդր՝ գիտացի լինել Աղքատութիւն ։ Միւս ոմն՝ յետ ընդ երկար ուսուցման՝ ՚ի վայր եարկ զբեռն իւր · զոր ՚ի ձեռն քննութեան իմացայ լինել կին նորա ։

Իբրև անդանօր բազմութիւնք մխրահարաց՝ բեռնաւորեալ կարի ցնորականութեամբք՝ որք յերիւրեալ էին ՚ի նեանց և ՚ի հրդեհից · սակայն զարմանալին այն է՝ զի թէպէտ հառաչէին նոքա որպէս թէ մխրուք նոցա վհատէին ընդ այսոքիկ բեռամբք աստապանաց՝ սակայն ոչ կամէին արկանել զայնոսիկ ՚ի շեղջակոյտ անդր՝ յորժամ մերձենային առա · այլ չէին քանի մի մեղկ ջանասիրութեանց շարժէին զգլուխս իւրեանց և յետ դառնային ծանրաբեռնեալ որպէս եկինն ։ Տեսանէի զի բազմութիւնք պառաւանց ՚ի վայր ձգէին զկնճռանս դիմաց իւրեանց · և բարձուն մանկամարդ օրիորդք ՚ի բաց մերկանային յինքեանց զդեղնագոյն մորթս իւրեանց ։ Իբրև անդանօր դիպագեղ կոյտք կարմրագոյն քթաց՝ մեծագէր շրթանց և աղտեղի ատամանց ։ Արդարև արժան է զճըշմարիտն խոստովանիլ՝ զի զարմացեալ էի յոյժ ՚ի տեսանել զմեծագոյն մասն լերին բաղկացեալ ՚ի մարմնական տգեղութեանց ։ Նկատէի՝ զի այլ ոմն մերձենայր առ շեղջակոյտն այն՝ ունելով ՚ի վերայ ուսոց իւրոց զբեռն մի մեծագոյն քան

զսովորականն . և յորժամ առաւել հուպ եղև՝ տեսի զի էր այր մի սապատողն 'ի յնէ . որ 'ի բաց եարկ զվշտացուցիչ բեռն իւր բազմաւ ուրախութեամբ սրտի 'ի մէջ այսր ժողովոյ մարդկայինս թշուառութեանց : Էին անդանօր նոյնգունակ ամենայն տեսակք հիւանդութեանց . թէ և ոչ կարէի նկատել թէ կային անդր առաւել երևակայական քան իսկական հիւանդութիւնք : Ի ձեռս յագամաթիւ բարի մարդոյ էր կապոց մի փոքրիկ . որ էր խառնուած ամենայն ցաւոց՝ պատահական սա դիպելոյս բնութեան , և կոչիւր մելամաղձութիւն : Եւ այս առաւել զարմանալի երևի ինձ այս՝ զի բնաւին ոչ մի միայն մոլութիւն կամ յիմարութիւն արկեալ լինէր 'ի շեղջ-կոյտն յայն . Ընդ որ կարի յոյժ զարմացուցեալ էի տեսելով զանձն իմ՝ թէ ամենայն որք պակաս է ունիլ կդիպողութիւն զերծանելոյ 'ի կրից և 'ի նախապաշարմանց և 'ի տկարութեանց իւրոց :

Նշմարէի ես մանաւորապէս զանառակագործ այն՝ որ եկեալ էր անդր ծանրաբեռնեալ մեղօք՝ և որում ոչ յաջողեցաւ վերահասու լինել այլ սակայն յորոնելն իմ զկապոց նորա՝ տեսի զի փոխանակ 'ի բաց ձգելոյ յինքենէ զմեղս իւր՝ 'ի վայր եդեալ էր միայն զյիշողութիւն իւր : Օ՜ հետ նորա եկն անարգ աւազակ մի՝ որ փոխանակ ազնուութեան իւրոյ 'ի վայր եարկ ըն-համեստութիւն իւր :

Յորժամ բովանդակ ազգք մարդկան այսօրի-

Նակ արկեալ էին ՚ի բաց զքեռինս իւրեանց՝ Մերձեցաւ առ իս երեւակն այն՝ որ կայր յայժ պարապեալ էր յայս գործ՝ տեսանելով զիս լինիլ անզգաղ և սաստ նկատող անցաւորաց անտի: Հոգի իմ խռովեալ անկեալ կայր ՚ի վարանմունս ՚ի ներկայութեան նորա. յորժամ յանկարծակի կալաւ նա զպաշտօնացոյց իւր հանդէպ աչաց իմոց: Մինչև էր իմ տեսեալ զկերպարան իմ ՚ի նա՝ սարսափեցաւ անձն իմ ի կարծուէ նք որ այժմ երեւեցաւ ինձ կայր վասն որոյ այն: Զափազանց լայնութեն դիմային կայր յայժ այլայլեցուցերես իմ. յորոյ սակս ՚ի բաց ձգեցի զայն իբրև զդիմայլակ ինչ: Պէպ եղև կայր բարեբաղդօրէն՝ զի մի ոմն՝ որ կանգնեալ էր առընթեր իմ՝ արկեալ էր ՚ի բաց զդէմս իւր երկայնաձիգ: Դէմք նորա տարածեալ էր ՚ի կարի ծաղրալի երկայնութիւն. կարծեմ թէ ծնոտ նորա էր՝ համեմատաբար խօսելով՝ երկայն իբրև զերեսս իմ ողջոյն: Մեք երկոքեան ունէաք զդիպողութեն ուղղելոյ զմեզ. և ամենայն ինչքն զոր դիտէ ՚ի ներքս ածեալ՝ իւրաքանչիւրոք արձակ էր առ ՚ի փոխակել զնմանութիւն իւր ընդ թշուառութեան այլոյ անձին: Եւ քանզի՝ բազում նոյնպէս դպրանք պատահեցան ՚ի մխացուած սեսլեան իւր՝ պահեցից զնոսա վն առարկայի այլ իմն թղթոյ:

Նոյն առարկայն շարունակեալ:

Ի նախընթաց թղթի իմում առաջի արարի

ընթերցողաց իմոց զառասպելս սնոտին լինին թշուառութեանց՝ որ բաղկացեալ էր յայնոցիկ յազնատեսակ վշտացուցիչ տառապանաց մարդկան։ Տեսանէի անպատմելի զուարճամտութե զարմանալի մարդիկ այսօրինակ փրկեալ զերծեալ ՚ի կարեաց իւրեանց․ թէպէտ և ՚ի նմին իսկ ժամու՝ մինչ կանգնեալ կային շուրջ զշեղջակուտին և նկատէաք զզէտղէս նիւթ՝ յորոց էր բաղկացեալ՝ հազիւ հազ դիւր մանկանացու մի յայսմիկ լայնատարած բազմութեան՝ որ ոչ էր իմացեալ թէ զինչ արդեօք էին բերկրութիւնք կենաց․ և զարմացեալ մնայաք՝ թէ զիարդ տեարք նոցա հայէին ՚ի նոսա իբրև ՚ի բեռինս և ՚ի տրտմութիւնս։

Այն ինչ կարի մտադրութեամբ հասու լինէաք այսմիկ խռովութեան թշուառութեանց՝ այսմիկ խառնիճաղանջ տառապանաց՝ Երամագարար վերստին զյայտարարութիւն մի՝ թէ ամենայն որ այժմ արժանի է ՚ի փոխանակել զնեղութիւ իւր և վերադառնալ ՚ի բնակութիւն իւր այնպիսի այլ իմն կարգաւ՝ որ տացի նմա։ Իրականայութիւն ապա սկսաւ փոյթ ընդ փոյթ ՚ի կարգոբաժանել զբովանդակ շեղջակոյտն թշուառանաց զարմանալի իմն գործունէութեամբ, և տալ իւրաքանչիւր ումեք զյատկացեալն իւր կարգ։ Աղմուկն և խռովութիւնն յայսմ ժամու է անպատմելի։ Քննութիւնքն՝ զորս արարի ՚ի վերայ այսր դիպուածոյ՝ արժանի են վերծանման հասարակաց։ Մեծարոյ Հինաւուրց ամս՝ որ ՚ի

վայր ձգեալ էր անդանօր զփոքրացեալ իւր՝ և տե-
սանէր զի խնդրէր զժամանակ մի ստացուածոց լու-
րոց՝ ՝ի բաց էառ անտի զորդի մի խաշամբակ՝ որ
արկանէր՝ ի շեղջակոյտ անդր ՝ի նեղասարտեալ հօ-
րէ ումեմնէ : Պատանին լքեալ՝ նուաղ քան զքա-
ւորդ մի ժամու քարշէր զմօրուս ծերունին սե-
պուհոյն այնորիկ, և կամէր հանել զծուծ՝ ի գըլ-
խոյ նորա, մինչ հանդիպեալ նորա ճշմարիտ հօր
որդւոյն այնորիկ՝ որ կալեալ էր զոխս փոխացա-
ութեան՝ աղաչեաց զնա ունիլ զորդի իւր վերա-
ախին, և յետս դարձուցանել նմա վերստին զփոր-
ացեալ իւր · սակայն ՝ի բազմութիւն մարդոց ան-
տի ոչ ոք կարէր դառնալ վերստին յայնմ ընտ-
ութենէ՝ զոր ապարեալ էր : Ողորմելի գերի մի
նաւուն՝ որ ՝ի բաց ձգեալ զշղթայս իւր՝ առեալ
էր անտի փոխանակ նորա զգողութիւն՝ այնպէս
ախորահոյեաց երևիւր և ապաշաւեալ՝ մինչ զի
հնար էր դիւրաւ իմանալ զի ոչ էր շահեալ նա
շահ ինչ այնուիկ փոխանակութեամբ : Կարի
զուարճալի իմն էր տեսանել անդանօր զփոխանա-
կութիւնս՝ զորս առնէին· այսինքն՝ զհիւանդութ
ընդ չքաւորութեան, զքաղց ընդ ծարաւութեն
ախորժակի, և զհոգունակութիւն ընդ ցաւոյ :
Ամբոխ կանանց կարի յոյժ պատաղեալ էին ՝ի
փոխանակութիւնս կերպարանաց · մին փոխանա-
կէր զգէս մի զորշ հերաց ընդ ակամ միոյ պատ-
ուականի· միւսն տայր զկարճ մէջ մի փոխանակ
երկուց բոլորակ ուսոց· և այլ ումն փոխանակէր
զտգեղ երեսս իւր ընդ կատարուն համբաւոյ

միոյ . առկայն 'ի վերայ այսր ամենայնի ոչ գոյր անձնաւոր 'ի նոցանէ և ոչ մի՝ որ ոչ համարէր զնորոգ արատաւորութիւնն՝ մինչչև էր սեփականեալ նորա զայն՝ առաւել գործագոյն քան զառաջինն : Այսօրինակ նկատէի ես զամենայն զայլ թշուառութիւնս և զտառապանս , զորս իւրաքանչիւր ոք 'ի ժողովին անդր աւբերէր 'ի վերայ ուսոց իւրոց փոխարէն այնորիկ՝ ընդ որ էր փոխանակեալ զայն . ոչ կարեմ աստանօր բացորոշաբար խոստովանիլ՝ թէ արդեօք ամենայն չարիք՝ որք հանդիպին մեզ՝ ըստ մասին ինչ յարմարեալ և չափաւորեալ են կարողութեան մերում , և կամ թէ արդեօք հնար է մեզ տանիլ և հանդուրժել ամենայն չարի 'ի ձեռն սովորութեան մեր ընդ նոյն : Սիրտ իմ ոչ կարէ դադարել 'ի գթալոյ 'ի վերայ ողորմելի տառապողն սեպուհոյն՝ յիշատակեալն 'ի նախկին թղթի իմում . որ գնայր անտի կարի բարեձևութեամբ վայելչացեալ՝ հանդերձ խնդրով միով 'ի փամփուշտ իւր . կմ՝ յողորմելոյ բարեձև անձինն այնորիկ՝ որ արարեալ էր զայս փոխանակութիւն ընդ նմա , և կաղալով երթայր ընդ բազմախուռն ժողով մի տիկնաց հանդերձ երկոքումբք ուսովք երևութացեալ 'ի վերայ գլխոյ նորա . ընդ որս կարի զարմանաքանչ իմն ներքինն հայէին տիկնայքն :
Չէ պարտ ինձ զանց առնել զանցիւք իմովք իսկ : Բարեկամ իմ երկայնադէմ՝ մինչչև էր առնել յինէն զկարծ երեսս իմ՝ այնպիսի ծաղրական իմն կերպիւ պատկերացաւ՝ մինչ զի 'ի հայելին իմ 'ի

նա ոչ կարէի զօդել զիս ՚ի ծիծաղելոյ . և այսպէս այլայլեցաւ տեսիլ դիմաց իմոց : Տառապել սեպուհն այն այնպէս քաջածանօթ էր ծաղրածութեանն այնմիկ՝ մինչ զի յամօթի հարկանէր յայնմանէ՝ զոր արարեալ էր . այլ սակայն տեսանէի զի ես ևս չունէի վառաւել իրաւունս առ ՚ի յաղթական հանդիսանալ . քանզի մինչ կամէի շարժել զձականս իմ՝ սխալէի և դնէի զձեռն իմ ՚ի վերայ վերին շրթանց իմոյ : Այլ և՝ քանզի քիթ իմ կարի արտաքս էր ցցուեալ՝ հարի զնա երկիցս կամ երիցս սխալաբար՝ մինչ խաղայի ձեռամբս ընդ երեսս իմ՝ և գիտէի յայլ ինչ մասն նորա : Տեսանէի առ ընթեր իմ զերկուս կայլ սեպուհս՝ որք էին ՚ի նոյնպիսի ծաղածանակ կացութիւնս : Սոքա արարեալ էին շարժմանական փոխանորդութիւն մի ընդ մէջ երկուց սառնար թիւրսաթեք բարձից և երկուց երկայնաձիգ սրունից՝ որք չունէին զմկանունս ՚ի վերայ իւրեանց : Սին ՚ի սոյանէ երևէր գնալ ի ձեռն գաւազանաց . և այնքան ամբարձեալ էր յոգն ՚ի վեր քան զհասարակ բարձրութիւն իւր՝ մինչ ի գլուխ նորա էր թեքեալ և կորացեալ մինչ միւս յորժամ կամէր երթալ՝ այնպիսի անհեթեթ եղանակաւ թեքելէ եքէր զանձն իւր՝ մինչ զի հաչիւ երբեք դիտէր յառաջ երթալ ՚ի ձեռն նորոգ նեցկաց իւրոց : Տեսեալ իմ զնա յինքն ընկեր մի զուարձարար՝ յեցի զգաւազան իմ յերկիր և սասցի՝ թէ տաց նմա զարուակ մի գինւոյ՝ եթէ ՚ի քառորդ ժամու միոյ ոչ էկեսցէ ՚ի գին մի՝ զոր ձգեցի վասն նորա :

Զուսկ յետոյ շրջակայատն ողջոյն բաժանեցաւ 'ի մէջ երկուց ձեռւոցն՝ որք այն ինչ վէր 'ի վայր թափառէին ընդ տարածանման յոգնատեսակ բեռանց իւրեանց՝ զողորմելի իմն տեսարան ընծայեցուցանէին տեսանելեաց դիտողաց ։ Պաշտավայրն ողջոյն լցեալ էր տրտնջանօք և փնփնտանօք՝ աղաղակօք և աղերսութեամբք ։ Արամազդ 'ի վերջոյ յողորմ շարժելով 'ի վերայ տառապեալ մահկանացուաց՝ հրամայեաց նոցա վերստին զի 'ի վայր ձգեսցեն զբեռինս իւրեանց՝ և իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ առցէ զուսկին զբեռն իւր դարձեալ ։

Յաղագս պատկի զուարճամտութեամբ 'ի վայր ձգէին նոքա զբեռինս իւրեանց․ զկնի որոյ երևակն այն՝ որ արկեալ էր զնոսա յայսպիսի այլանդակ տարբողութիւն՝ պատուհասեցաւ աներևութանալ ։ Փոխան նորա առաքեցաւ անդանօր աճուհի մի՝ կարի տարբեր կերպարանաւ․ շարժուածք նորա էին անփոփոխ և խաղաղական․ և տեսիլ նորա էր ծանրահայեաց՝ այլ զուարթագին ։ Արդ և ապա արկանէր նա զաչս իւր դէպ երկինս, և յաւէր զնոսա 'ի վերայ Արամազդայ․ անուն նորա էր Համբերութիւն ։ Մինչչև էր նորա ժաման եղեալ 'ի լեառն թշուառութեանց՝ կարի նշանաւոր իմն էր զի շրջակայատն ողջոյն այնքան ցածացաւ՝ մինչ ոչ երևիլ երրորդ մասին առաջին մեծութեան նորա ։ Դարձոյց նա այնուհետև իւրաքանչիւր ումեք զյատկացեալ առասպանս նորա․ և ուսոյց նմա զկարգ հանգուրժել

Նոցա ամենավայել իմն եղանակաւ․ որ յետոյ սկսաւ բերկրութեամբ վերադառնալ անտի՝ կարի յոյժ հաճեցեալ զի ոչ թելադրեցաւ լինիլ ըզհետ ընտրողութեան իւրոյ․ այսինքն՝ հետևիլ շարեացն այնոցիկ՝ որք միծակեալ էին նմա ։

Բայց 'ի բազմապատիկ հատուածոց բարոյականութեան՝ արտահանելոց յայսմիկ առակէնէ, ուսայ ես 'ի նմանէ ոչ երբէք տրտնջալ զթշուառութեանց իմոց, և կամ նախանձիլ ընդ երջանկութիւն այլոց․ քան զի անհնար է ումեք ձևացուցանել զիրաւացի դատմունս զերկրութեանց մերձաւորին իւրոյ․ որոյ վասն դարձեալ 'ի մտի եդի ոչ երբէք մտախորհ լինիլ անհոգաբար զգանձատանց այլոց՝ այլ խնամ տանիլ տրտմութեանց համաստեղծուածոց իմոց՝ մտածութեամբք մարդասիրութեան և գթութեան ։ ❋

ԷԴԴԻՍԸՆ

❋ Ջանսըն վարդապետն կարի արժանաւորապէս ասէր՝ թէ Էդդիսընեան քերթուածս այս 'ի վերայ մարդկային թշուառութեանց, էր կարի գեղեցկահիւս և կատարեալ՝ զոր երբեք ընթերցեալ էր նա 'ի կեանս իւր ։

Քարոզ Սկիւթացի հրեշտակաց առ Աղեքսանդրոս, 'ի պատրաստել նորա առ 'ի յարձակել 'ի վերայ նոցա:

Եթէ անձն քո այնքան մեծ լինէր՝ որքան մեծ են ցանկութիւնք քո՝ աշխարհս ոչ կարէր պարունակել զքեզ: Աջ քո ունէր հասանել յարևելս և ձախ քո՝ յարևմուտս: Յեւրոպիոյ ժամանես յԱսիա, յԱսիոյ տիրապետեալ ես մինչ յԵւրոպիա: Իսկ եթէ դէպ լինի՛ր քեզ 'ի պարտուց ածել զամենայն ազգ մարդկան՝ թուի թէ մարտնչիլ ունէիր ընդ անտառս և ընդ ձիւնս՝ ընդ գետորայս և ընդ վայրենի անասունս, և ջանացար լինէիր առ 'ի զընութիւնն իսկ 'ի պարտութիւն ածել: Այլ սակայն մոռացեալ է քո երբեք զառակական զընթացս իրաց. մոռացեալ ես երբէք զի մեծամեծ ծառք ընդ բազում ամս աճին և բարձրանան՝ և 'ի միում ժամու յատեալ տապաստ յերկիր անկանին: Յիմարութիւն է 'ի խորհիլ զպտուղ միայն առանց խորհելոյ զբարձրութենէն՝ ընդ որ պէտս է քեզ ելանել և ժամանել առ այն: Զգոյշ լեր՝ զի մի՛ գուցէ մինչ նկրտիս ժամանել ի գագաթն՝ յերկիր գլորիցիս հանդերձ ոստեղամբքն՝ զորս ունիս 'ի ձեռս քոյ:

Ապաքէն՝ զինչ գոյ քեզ առնել ընդ Սկիւթացիս. և Սկիւթացւոց՝ ընդ քեզ: Ոչ երբէք պաշարեալ է մեր զՄակեդոնն. Եր վասն պաշարիցես դու զՍկիւթիա: Պանծաս յանձնէ քումմէ լի-

նիլ պատժող աւազակաց . և դու ինքն ընդհանրական աւազակ ես ազգի մարդկան : Լուեալ ես զԼիդիա . կալեալ ես զԱսորեստան . տիրապետեալ ես Պարսկաստանու . յաղթեալ ես Բակտրիացւոց և յարձակեալ ես ՚ի վերայ Հնդկաստանու . այսուքիկ ամենայն ոչ կարեն բաւական լինել քեզ՝ մինչև ընչաքաղց և անյագ ձեռօք քովք ձեռնամուխ լինիցիս ՚ի հօտս և յանդեայս մեր : Զիարդ անխոհեմ է վարք քո . ունիս դու զհարստութիւն, որոյ սեփականութիւն առաւելու չախորժակ ագահութեան քոյ : Յաւելուս զքաղցդ քո որով հնար է պատճառել զյագուրդ . վասն որոյ՝ որքան առաւել սեփականես՝ այնքան առաւել ցանկաս : Սակայն ոչ յիշես թէ որքան յապաղեաց զքեզ յաղթութիւն Բակտրիացւոց : Մինչ նուաճէիր զնոսա՝ Սոգդիացիք յապստամբութիւն համարձակեցան : Յաղթութիւնք քո ոչ ինչ առնեն քեզ՝ եթէ ոչ պատճառելով զնոր պատերազմունս՝ զանձեն վասն քո զնոր պատերազմունս . քանզի գործ յաղթանակութեան կրկին է . այսինքն ՚ի յաղթել և ՚ի պահպանել : Թէպէտ և մեծագոյն համբաւ ունիցիս ՚ի մէջ մարդկանց՝ սակայն պարտիս անձնուիրել՝ զի ոգին՝ չէր ՚ի զօրութիւն նոցա՝ ջանասցեն ՚ի բաց թօթափել մինչև ցողն այս պետութեանց փոխարկես . վասն զի ոչինչ ժողովուրդ կամիցի լինել ընդ իշխանութեամբ այլազգեաց :

Եթէ անցցես ընդ Տանաիս՝ ուղևորեալ ընդ Սկիւթիա և նկատեսցես թէ զիարդ լայնածաւալ

է սահման բնականութեան մերոյ · սակայն առ 'ի յաղթահարել զայն՝ է գործ հարկի այլատարազ : Ունիս տեսանել, զմեզ երբեմն հարկի քաջ 'ի պնտել զինչ որ · և երբեմն յորժամ կարծես թէ հեռացեալ ես 'ի քէն՝ տեսցես զմեզ պաշարել ըզքեզ 'ի բանակին քում. քանզի Սկեւթացիք չէ ներունագ բաջութք պաշարեն՝ քան թէ 'ի փախուստ դառնան : Վասն այսորիկ խոհեմութիւն երկիցի քեզ առ 'ի ճռադիր զգուշաւորութեամբ տանհղէնէ, զոր ինչ շահեալ է քո · առաւել ձեռնամուխ լինելով յայս՝ հոռոսանիցես զօրս ոսնիսդ : Եղաւ մի զոյ մեզ 'ի Սկիւթիա՝ թէ բաղդն ջուսի զօտս · և ունի միայն զձեռս առ 'ի բառնել զգնոտակեան բարիս իւր, և զթևս՝ առ 'ի փախչել 'ի ձեռաց նոցա՝ որոց առեալ է զբարիս : Ճարտարես դու զանձնէ քումմէ լինել ատողած՝ որպէս Երամազդայ Աստնոյ · մեծէ է Համասոյ ասատածոյ առ 'ի պարզևել մարդկան ոսկերս, և ոչ յափշտակել 'ի նոցանէ զոր ինչ ունին : Այսպես թէ չես աստուած՝ մնախոնարհ լեր զգեղակարծ կարգութենէ մարդասիրութեան : Լաւէս առնելով առաւել խոհական երևեցիս՝ քան թէ յամառելով յառարկայս յանդուգնս՝ որք բարեկամացուցեալ են զամբարհաւանեալ քո, և պատճառեալ են քեզ մնանալ զանձն քո :

Խոհեցայց թէ մեծարդ սակաւ ունիս շահիլ ժանապարհ, հանելով 'ի պարտութիւն մատնել զՍկիւթիա : Եթէ հաճոյ է քեզ, եկ ընդ մեզ զմիաբա·

նուիրին : Իշխանութիւն մեր տարածի 'ի սահմանս Իտալիոյ և Ասիոյ : Զմէ ինչ 'ի միջի մեր և Բակտրիոյ` բայց միայն գետն Տօնաւիս · և սահմանք կառավարութեան մերոյ տարածին մինչև 'ի Եփրատէս · որ` որպէս լուեալ է մեր` սահմանակից է Պարթևաց : Եթէ անհաճոյ է քեզ յարձակել 'ի վերայ մեր պատերազմական զինուորութիւն մեր : Ասաք` որք ոչ երբէք մղեալ են պատերազմ` կանգնեալ կան 'ի վերայ իրաւանցն հիման · սակայն Է վայր է` եթէ հաւատարմութեան ընծայեսցի յաղթահարեալ ազգի : Զի հնար լինիլ անվրէպ սիրելութիւն 'ի մէջ վշտացուցչաց և վշտացելոց · 'ի խաղաղութեան վերջինն իրաւունս համարի անձին իւրում մղել պատերազմ ընդդէմ սաստկոյն : Դաշնակից եղիցուք` եթէ բարի համարեսցիս` Է քեզ բարեկամութեամբ մերում · որ ոչ է ստորագրելով` կնքելով և զաստուածս 'ի վկայութիւն կոչելով` այլ առնելով զճշմարիտ ծառայութիւն : Սկիւթացիք ոչ են սովոր 'ի խոստանալ` այլ 'ի կատարել առանց խոստանալոյ : Իսկ աւելորդ համարին բողոքել զաստուածս · քանզի նոքա` որք շուրջին լինին և զօր առ մարդիկ` ոչ յապաղեսցին 'ի բարկացուցանել զաստուածս երդմնազանցութեամբ : Ասա որոյ խորհեսցես 'ի սրտի քում` թէ արդեօք հաճեսցիս ունիլ քեզ յարեկամ թէ թշնամի զժողովուրդ մի այնպէս մեծահամբաւ և այնպէս հաստատեալ` մինչ կարող լինիլ կամ

Ճառայութիւն առնել քեզ և կամ նեղել զքեզ՝ ըստ որում փարեսցիս ընդ նոցա ։

## ԿՈԽԻՆԴԻՈՍ ԿՈՐԴԻՈՍ

*Բարոզ Յունիոսի Բրուտոսի 'ի վերայ անկենդան մարմնոյն Լուկրետիայ . որ անձնասպան երևեցաւ սակս բռնաբարութեն Տարկուինոսի ։*

Այո՛ տիկին դու ազնուական՝ երդնում ես յարիւնս յայս՝ որ երբեմն էր կարի մաքուր , և զոր ոչինչ բայց միայն 'ի բռնաբարութե արքայի պղծել կարէր՝ զի ոխանեցից հրով և սրով զհետ ամբարտաւան Լուկկիոսի Տարկուինոսի՝ անօրէն կնոջ նորա և զաւակաց նոցա . և ոչ տաց ումեք յայսմ գերդաստանէ իշխել թագաւոր Հռովմայ . 'ով աստուածք՝ 'ի վկայութիւն կոչեմ զձեզ երդմանս այսորիկ ։

Հռովմայեցիք՝ դարձուցէք զաչս ձեր 'ի զորավաղէտն յայն տեսարան՝ 'ի դուստր Լուկրետիոսի՝ 'ի կին Կողղատինոսի . վճարեաց նա զկեանս իւր ձեռամբ իւրով ։ Տեսէք զախիկին մի ազնուական՝ զոր պագշոտութիւն Տարկուինոսի միոյ պարտաւորեաց լինել սպանող անձին իւրոյ առ 'ի ցուցանել զանմեղութիւն իւր ։ Սեքստոս կոչնականն ուխտագրում՝ քաղցրութեամբ պատուէալ 'ի նմանէ իբրև զընտանի առ նորա՝ եղև լկտիչ նորա գազանաբարոյ ։ Անարատ և անմեղն Լուկ-

բեմին ոչ կարաց հանդուրժել անձգօնութեան
այնմիկ: Տիկին պայծառափառ՝ այլ զամ մի զան-
պատշաճութիւնս ընկալեալ՝ ոչ կարաց առաւել
ունել զկեանս իւր : Լուկրեսիա՝ կին մի արհա-
մարհեաց զկեանս՝ որ կախեալ կայր զկամաց բռնա-
ւորի միոյ . և մեք զայսպիսի իմն փաղփիւր առա-
ջի մեր ունելով՝ յապաղեսցո՞ւք զպատեհ մի մի-
այնակ՝ առ 'ի սեպհականել զայսպատուն մեր : Ո՛չ .
Հռովմայեցիք՝ ահաւասիկ է ժամ . բարեպատ-
ճառ ժամանակն՝ որում այսքան ընդ երկար սպա-
սէաք՝ ահա՛ մերձեալ է և ժամանեալ : Տարկուի-
նոս ոչ է 'ի Հռովմ . ազնուականքն համայն ըզա-
տոգով են յառաջնորդութեանս այսմիկ . և քա-
ղաքն լիովին առատ է մարդովք՝ զինուք և ամե-
նայն կարևոր ընչիւք : Ուրինչ իմիք կարօտիմք
առ 'ի սկսանիլ յեղյայնողութեան՝ եթէ քա-
ջասրտութիւն մեր ոչ թողցէ զմեզ : Եւ ախոյ-
եանքն այնոքիկ՝ որք միշտ քաջ և ալխոյժ ե-
ղեն 'ի ժամանակս նուաճելոյ զայլազգս և շնամբս
և յաղթութիւն առնելոյ առ 'ի յագեցուցանել
զփառամոլութիւն և զագահութիւն Տարկուի-
նոսի՝ եղիցին երբեք և վաստակիցեն 'ի ժամա-
նակի ազատելոյ զանձինս իւրեանց ի ճշտոյ գե-
րութեան : Մանկունք 'ի ձեռն դուցե զանգիտեն
և յերկիւղ են 'ի սպառազինացն՝ որք են ընդ
իշխանութեամբ Տարկուինոսի . նոքա՝ զորս
զօրականս կարծէք՝ արասցեն զգործս սպարապե-
տաց նոցա : Ի բաց մերժեցէք զայսպիսի անտեղի
իմն ահ . սէր ազատութեան բնական է ամենայն

մարդկան : Բազմաբայլք ձեր 'ի բանակին անդր զգան զխստութիւն վշտագնութեան՝ որպէս զգայք դուք 'ի Հռովմ· նոքա կարի ըղձակաթութեամբ կայցին զպատեհ ազատելոյ զանձինս իւրեանց 'ի լծոյ ծառայութեան : Ո՛չ յլ սակայն՝ անկ է մեզ մտածել՝ զի եղիցին 'ի մէջ նոցա ամենք՝ որք 'ի ձեռն երկչոտութեան և վատասրտութեան կամ յոյժ հրահանգութեան փոյթ լիցին առ 'ի ջատագով լինիլ բռնաւորին այնմիկ· ամենայն լինիցի Թիւ այսպիսեաց· և ունիմք մեք 'ի ձեռս մեր զհնարս բաւականս առ 'ի ածել զնոսա 'ի ճանապարհ բանականութեան : Թողեալ է նոցա առ մեզ պատանդս՝ առաւել սիրելիս քան զկեանս իւրեանց· կանայք՝ մանկունք՝ հարք և մարք նոցա են աստ 'ի Հռովմ քաղաքի : Քաջալերեցարուք՝ Հռովմայեցիք՝ զի աստուածք ընդ մեզ են· փայլունիկ սուսեր զաստուածոյ զորոց զտաճարս և զսեղանս պղծեալ է անբարեպաշտն Տարկուինիոս պատուաբազօք և զոհիւք՝ մատուցելովք անմաքուր ձեռամբք, և ապականեալ է զօրեամբ և անհամար անիրաւելի յանցանօք՝ զօծեցելովք 'ի հպատակաց իւրոց :

Ո՛վ աստուածք՝ որք պաշտպանեալ էք զնախահարս մեր, ո՛վ հոգիք՝ որք հոլիք վան պահպանութեան և փառաւորութեան Հռովմայ, ներշնչեցէք 'ի հոգի մեր զքաջութիւն և զմիաբանութիւն յայսմ փառաւոր առակայի· և մեք մինչև 'ի վերջին շունչս մեր

պահպանեսցուք զպաշտամունս ձեր յամենայն պղծութենէ և անմաքրութենէ ։

ՍԱԼԼՈՒՍՏ

Քարոզ Ադհերբաղայ առ Հռովմէական սինկ-ղիտոսն՝ հայցելով զպաշտպանութիւն նց ընդդէմ Յուգուրթայ ։

Հա՛րք,

Քաջայայտ է ձեզ՝ զի արքայն Միկիպսոս՝ հայր իմ՝ ՚ի մեռանիլ իւրում եթող ընդ խնամածութ Յուգուրթայ՝ որդեգրին իւրոյ տարաբաղդին եղբայր իմ՝ զՀիեմփսալ և զիս և զմանկունս երանաց իւրոց և զհառաջարութիւն թագաւորութեան Նումիդիոյ՝ պատուիրելով մեզ ՚ի համարիլ զսինկղիտոսական ժողովուրդ Հռովմայ իբրև զհառաւճարիչս նորա ։ Պատուիրեալ է մեզ ՚ի կիր առնուլ զբազմաշխատ ջանս մեր ՚ի ծառայութիւն Հռովմէական հասարակապետութեան , համարեցուցանելով զմեզ՝ զի պաշտպանութիւն ձեր ախոյեան էր լինելոց ընդդէմ ամենայն թշնամեաց , և փոխանակ զինուց՝ բերդակազմութիւնք և գանձք ։

Մինչ եղբայր իմ և ես զոչինչ խորհէաք բայց միայն զնարդ յարմարել զմեզ պատուիրանաց հանգուցելոյ հօր մերում՝ Յուգուրթա՝ ամենաչարն ՚ի մէջ մարդկան՝ խորտակելով զամենայն զխա-

պանս երախտագիտութեան և հասարակ մարդասիրութեան և ոտնակոխ առնելով զիշխանութի Հռովմէական հասարակապետութեան՝ պատճառեաց զխողխողումն զքաջազգիկ եղբօր իմոյ. և արտահալած է արարեալ զիս 'ի գահէ և 'ի բնածին երկրէ իմմէ. թէ և գիտէ՝ զի ունիմ ես 'ի հաւէ իմոյ՝ Մասինիսսայ և 'ի հօրէ իմմէ՝ Միկիպսայ զսիրելութիւն և զմիաբանութիւն Հռովմայեցւոց:

Մեծ է նեղութիւն արքային միում՝ որ իցէ նման ինձ տառապեալ և վշտագնեալ. սակայն տառապանք իմ առաւելուն՝ յորժամ զմտաւ ածեմ՝ զի պարտաւոր եմ հայցել զօգնականութի ձեր՝ ով Հարք՝ վասն ծառայութեանցն արարելոց ձեզ 'ի նախահարց իմոց, և ոչ վասն ծառայութեան ինչ արարելոյ յինէն: Յուգուրթա անարժան է կացուցեալ զանձն իմ ընդունիլ զբարերարութիւն ինչ 'ի ձէնջ. և պարտաւորեալ է զիս լինել ձեզ ծանրութե՝ մինչև հնար էր ինձ երևիլ ձեզ պիտանի: Այլ սակայն եթէ չունիցի զիրաւունս ինչ բայց միայն զթշուառութիւն իմ տարապայման՝ երբեմն եղեալ արքայորդի մի հզօր՝ իջեալ 'ի տոհմէ պայծառաշուք արքայից և այժմ առանց ինչ յանցանաց յինէն արարելոց թափուր եղեալ յամենայն օգնականութենէ և պարտաւորեալ 'ի հայցել զձեռնտուութիւն այլոյ ընդդէմ թշնամւոյ միոյ՝ որ յափշտակեալ է զաթոռ և զտէրութիւն իմ, եթէ անշուշտական թշուառութիւնք

իմ լինէին ամենայն իրաւունք իմ, մինչ ու թէ լինէր Հռովմէական հասարակապետութեան 'ի պաշտպանել զառաքեալն և 'ի նուաճել զբռնութիւն ժպիրհ անիրաւութեան 'ի վերայ անպաշտպան անմեղութեան: Սակայն Յուգուրթա առ 'ի առնել կորզել զսրտմտութիւն բարկութեան ձերոյ՝ սրտահալած է աքսորեալ զիս 'ի սահմանացն յայնոցիկ՝ զորս սինկղիտոսք Հռովմայ շնորհեալ են նախահարց իմոց. և յորոց հաւ իմ և հայր իմ 'ի ձեռն օգնականութեան սուսերի ձերոյ արտաքսման են արարեալ զՍիփաքս և զԿարկեդոնացիս: Այսօրինակ՝ ով Հարք՝ բարերարութիւն ձեր առ ազգատոհմ իմ տանակոխ եղեալ խայտառակի. և Յուգուրթա՝ առ 'ի վնասել զանձն իմ՝ արկանէ զձեօք հանարգութի և զարհամարհութիւն: Ո՜վ արքայդ ապերջանիկ. ո՜վ անողորմ փոփոխութիւն բաղդի. ո՜վ Հայր Միկիպսա, այս է վախճան առատաբարութեան քո. նա՝ զոր բարերարութիւն քո հաւասարեալ էր ընդ մանկանց քոց՝ լինիցի խողխողիչ մանկանց քոց: Այս ուրեմն արքայական պատուան Նումիդիոյ մշտապէս եղիցի տեսարան աւերակաց և ճապաղեաց արեան: Մինչև էր Կարկեդոնայ ընդ պարտութեամբ անկեալ՝ կրեաք յանձինս մեր որպէս և ընդունէաք զամենայն տեսակս խռովութեան և վշտագնութեան 'ի պատերազմական յարձակմանց. թշնամի մեր՝ մերձ. սիրելի մեր՝ զօրաւոր. Հռովմէական հասարակապետութիւն՝ հեռի: Յորժամ 'ի բաց բարձաւ 'ի մէջոյ դժն-

դակութեն այն Սփրինկայ՝ ըմբռնեաք ՚ի հոգիս մեր ահն ունելով խոյելել զանյողդողդ իմն խաղաղութիւն : Սակայն փոխանակ խաղաղութեան՝ ահա աներութիւն Կոսմիկիոյ յուծայեալ լինի որբերականս արեան ձապաղեցք . և միայնակ կենդանի որդի հանգուցեալ Թագաւորի նորա փոխչի ՚ի յորդէգիր մարդասպանէն . և հայց՝ ՚ի սահմանս օտարաց զապահովութիւնն զայն՝ զոր ոչ կարէ ունել ՚ի քաղաքի իւրում :

Ո՛ւր , ո՛հ , ո՛ւր փախայց : Եթէ դառնայցեմ յարքունի պալատ նախահարց իմոց՝ գա՛լով հօր իմոյ յափշտակեալ տեսանեմ ՚ի սպանողէ եղբօր իմոյ : Ո՛ր ինչ իմիք հնար է ինձ ակն ունել անդանոր՝ բայց զի Յուգորթա փութասցէ թաթաւել յարեան իմ զայնուիկ ձեռաւ՝ որք այժմ շաղաղեալ կան յարեան եղբօր իմոյ : Եթէ դիմեցի առ այլ աներութիւն վասն ապաշտպանութեան և օգնականութեան՝ յինչ Թագաւորէ ընդունիլ կարէի զպաշտպանութիւն եթէ Հռովմէական հասարակապետութեն խնայէր զայն ինձ : Յազգայնոց և ՚ի սիրելեաց իմոց ոչ զան ինձ ակնկալութիւնք : Հայր իմ արքայափառ մեռեալ է զարդիս : Հեռի է նա ՚ի ժամանմանէ անօրէնութեն և ՚ի լսելոյ զաղաղակս ապերջանիկ որդւոյ իւրոյ : Եթէ եղբայր իմ կենդանի լինէր՝ փոխադարձ ցաւակցութիւնք մեր սուղ ինչ մխիթարութիւն լինէին մեզ : Սակայն զրկեալ է ՚ի կենաց իւրոց ՚ի ծաղկափթիթ պատանեկութեան իւրում յայնմիկ ձեռանէ՝ որ կարէ լինիլ

վերջինն առ 'ի չարիս հասուցանելու մեք յարքայական տոհմէն Պոմպիլիոյ : Արիւնահեղն Յուգուրթա խողխողեալ է զամենայն՝ զորոց կասկածէր լինել աջակից իւր: Ոմանք զրաւեցան 'ի դառնալէտ փշտակրութեանց խաչի : Ոմանք եղեն կերակուր վայրագ գազանաց. և յաւէք նոցա արար զխառ մարդկան առաւել անագորոյն՝ քան զգաժանագոյն գազանաց : Եթէ լիցեն ոմանք տակաւին կենդանի՝ փակեալ կան 'ի վիրապս՝ առ 'ի անցուցանել անդանօր զկեանս առաւել տարաժանակիրս քան զմահ :

Հայեցէք՝ պայծառաշուք սինկղիտոսդ Հռովմայ՝ յայնմիկ բարձրութենէ իշխանութեան յոր ամբարձեալ է ձեր՝ յանգուգական տառապանս արքայորդւոյ միոյ՝ որ յանօրէնութէ անագորոյն բռնաւորի միոյ բազմերժ է եղեալ յամենայն ազգէ մարդկան: Մի երբէք հնարագէտ հրապուրողութիւնք նորա՝ որ դարձուցանէ զձապաղիս արեան փոխանակ որդեգրութեան՝ նախապաշարեսցեն զգաստմունս սրբութեան ձերոյ : Մի լինիք ունկնդիր անօրինին այնմիկ՝ որ խողխողեալ է զորդի և զազգականս արքային այնորիկ՝ որ առեալ էր նմա զիշխանութի բազմելոյ յաթոռ իւր ընդ որդւոց իւրոց : Գիտեմ զի աշխատ լինի նա 'ի ձեռն դեսպանաց իւրոց առ 'ի արգելուլ զձեզ յառնելոյ ինչ ընդդէմ նորա՝ կեղծելով զի ես յաճախիցեմ զնեղութիւն իմ և 'ի սակս նորա Մայցեմ զխաղաղութեամբ 'ի թագաւորութեն իմում :

## ԱՆԴԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Սակայն յորժամ հասանէ ժամանակն այն՝ յոր-
ում արժանավայել պատուհասն ՚ի վերուստ ե-
կեսցէ ՚ի վերայ նորա՝ կեղծել ունի յայնժամ
զօրէն իմ։ Յայնժամ նա՝ որ այժմ յամառեալ
յանօրէնութեան միջի՝ ոտնակոխ առնէ զայ-
նոսիկ՝ զորս նկուն է արարեալ անօրէնութիւն
իւր՝ կրեսցէ փոխարէն զտառապանս և տանջեա-
ցի վասն անողորմ ապերախտութեան իւրոյ առ
հայր իմ, և վասն արիւնահեղ դժնդակութեն
իւրոյ առ եղբայր իմ։ Ո՛վ սպանեալ և խող-
խողեալ եղբայր։ Ո՛վ սիրականդ սրտի իմոյ․
ահա՛ հեռացեալ ես յաչաց իմոց յաւիտեան․
այլ ե՛ր վասն աշխարեցից ես զմահ ն՛ո՛ր։ Զըր-
կեալ է նա արդարև յերջանիկ լուսոյ երկնից՝
կենաց և արքայութեան միանգամայն ՚ի նմանէ՝
որում պա՛րտ էր առաջինն լինել ՚ի վանգել
զկեանս իւր առ ՚ի պաշտպանել զոմն յազգա-
կանաց Միխիթայ։ Սակայն ըստ որում կարգ
իրայն պահանջէ՝ եղբայր իմ ո՛չ է այնքան զըր-
կեալ յայսոցիկ մխիթարութեանց՝ որքան զեր-
ծեալ է ՚ի փախստենէ և յաքսորմանէ և ի՛մ յան-
չըրաւ շեղջէ թշուառութեանց՝ որք առնեն ըզ-
կեանս զայս բեռն մի տաժանակիր։ Ընկող-
մանի նա միանգամայն անզօր՝ հարուածեալ
վիրօք և ապականեալ յարեան իւրում։ Սա-
կայն ընկողմանի խաղաղութեամբ։ Ո՛չ զգայ
և ո՛չ մի ՚ի ցաւոցն՝ որք պատառեն զսիրտ
իմ ցաւօք և մտատանջութեամբ՝ մինչ հանդխա-
ցեալ եմ առաջի ամենայն մարդկան տեսարան

անհաստատութեան մարդկայնոց գործոց: Այսքան անկարող լինելով իմ 'ի պատմապատուել ըզխողխողիչ նորա՝ ոչ կարեմ ճանապարհաւ իւիք ապահով առնել զկեանս իմ: Այսքան անատակ լինելով իմ 'ի պահպանել զտէրութիւն իմ յանօրէնութենէ բռնաւորին՝ պարտաւոր իմ հայցել զպաշտպանութիւն այլոյ վասն անձին իմոյ: Հարք՝ ծերակոյտք Հռովմայ՝ դատաւորք ազգաց՝ 'ի ձեզ զանձն իմ առնեմ ապաստան՝ 'ի մարդախոշոշ կատաղութենէ Յուգուրթայ: Վասն սիրոյ մանկանց ձերոց՝ վն սիրոյ քաղաքի ձերոյ՝ վասն սիրոյ առաքինութեանց ձերոց՝ վասն մեծափառութեան Հռովմէական հասարակապետութեան՝ վն ամենայնի՝ որ սուրբ և սիրելի է ձեզ՝ փրկեցէք զերծէք ազատեցէք յանքսոյորդի մի զտարաջանիկ յանկայել և յանգրգիռ եղեռնաւորութենէ. ազատեցէք զտէրութի՛ Նումիդիոյ՝ որ է ստացուած ձեր իսկ՝ առ 'ի կերակուր լինելոյ անօրէնութեան՝ բռնակալութեան և անիրաւութեն:

ՍԱՂՈՒՍՏ

Քարոզ Միկիպսայ առ Յուգուրթա:

Յայտնի է քեզ՝ Յուգուրթա՝ զի մինչ մանուկ էիր անտէրունջ և անապաւէն՝ ընկալայ զքեզ ընդ խնամածութեամբ և պաշտպանութեամբ իմով: Ամբարձի զքեզ 'ի գերակայ յարգութիւնս 'ի

թագաւորութեն իմում. հաստատ լինելով կա-
րի յոյժ որ երախտագէտ էիր լինելոց վասն բա-
րերարութեանն՝ զոր քեզ արարի. և եթէ դէպ լի-
նէր ինձ ունել զխնկական որդիս՝ ջանայոց էիր
փոխարէնել նոցա զոր ինչ պարտիս ինձ: Որինչ
ցարդ ոչ գոյ ինձ տեղի ապաշաւելոյ ՚ի բարերա-
րութենէդ՝ զոր քեզ արարի: Բայց յամե-
նայն յառաջին վաւերական գործոց քոց՝ քաջու-
քո ՚ի Պղումնտեան պատերազմի հեղեալ է ի
վերայ իմ և ՚ի վերայ թագաւորութեան իմոյ
մեծարողանօք և զօրացեալ իմն փառաւորդուն:
Արդ արդեա՛, եւ արհամարհութեամբ քով զՀռովմէ-
ական Հասարակապետութիւն՝ որ յառաջագոյն կա-
րի ջատագովէր մեզ՝ առաւել յոյժ սիրայիր և
միաբան ընդ մեզ: ՚Ի Սպանիա բարձրացուցեալ
ես զսպառիչ անուան և թագի իմոյ: Իսկ յաղ-
թեալ ես մեծագոյն իմն դժուարութեն՝ շիջու-
ցանելով ՚ի ձեռն առդեանց քոց զհեռս նախան-
ձու: Որահ իմ աչա՛ երեւի փոյթ ընդ փոյթ
մերձի, առիս: Զան որոյ ապաշէլով երդմնե-
ցուցանել զքեզ՝ սիրելի իմ Յուգուրթա՝ յայս ազ
ձեռն իմ ՚ի մտածութիւն անցեալ բարերարու-
թեան իմոյ առ քեզ՝ ՚ի յարգութիւն արքայութե
իմոյ և ՚ի մեհութե աստուածոց առ ՚ի քաղց-
րութեա բերի, ընդ երկուց որդւոց իմոց՝ զորս
բարերարութիւն իմ առ քեզ արարեալ է եղբարս
քոյ, և ոչ եղաք համախոհ լինիլ ընդ այլոց առ
՚ի հաստատանել զչարիս մերձաւորաց և աղքատկա-
նաց՝ քոյ: Ոչ զինուք և ոչ գանձուք ապահով

Մնայ արքայութիւն մի՛ այլ բարեմիտ հպատակօք և բարեկամօք : Եւ հաւատարիմ և կարևոր ծառայութեամբ պահպանի բարեկամութի՝ զոր ոչ ոսկին գնեսցէ և ոչ զէնք յափշտակեսցեն : Այլ սակայն՝ զի՞նչպիսի բարեկամութի առաւել կարևոր է քան զայն՝ զոր եղբարք պարտին ունիլ առ միմեանս : Ո՛րքան հնար է գտանել զհաւատարմութիւն 'ի մէջ օտարականաց՝ եթէ չիցէ հնար գտանել զայն 'ի մէջ մերձաւորաց : Տէրութիւնն՝ զոր շնորհեմ քեզ՝ է 'ի բարեգոյն կացութեան եթէ կառավարեսցես զայն վայելչապէս . իսկ եթէ այլազգ կառավարեսցես՝ անզօր է և անպատսպար : Քանզի միաբանութեամբ փոքրիկ տէրութիւն մի բարձրանայ . և անմիաբանութեամբ մեծ տէրութի մի ցածանայ և կործանի : Հարկ գոյ 'ի վերայ քո՝ Յուգուրթա՝ որ առաւել հասակաւոր ես քան զեղբարս քո՝ ջանալ զի մի՛ անպատեհութիւն ինչ զանպատեհ զելս պատճառեսցէ : Եւ եթէ տարաձայնութի ինչ ծագեսցի 'ի մէջ քո և եղբարց քոց՝ զոր աստուածք մի՛ արասցեն՝ ամենեքեան կշտամբեսցեն զքեզ իբրև զյանցաւոր ո՛ք՝ թէպէտ մեծ իցէ անմեղութիւն քո . քանզի ամք հասակի քոյ և գիտութիւնք քոյ առաւել համարեսցին զքեզ 'ի յանցաւորութեան : Այլ ես հաստատապէս հաւատամ անձամբ իմ, զի վարելոց ես դու ընդ նոցա քաղցրութեամբ . և նք սիրեսցեն և պատուեսցեն զքեզ ըստ որում որոշեալ առաքինութի քո պահանջէ :

ՍԱԼԼՈՒՍՏ

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

## Քարոզ առ Պատանիս:

Պատանիք կամ է ինձ յուշ առնել ձեզ՝ թէ որքան պիտոյ է ջանալ առ 'ի ուղղել զբարս ձեր: 'Ի հասունանալ ժամուց ձերոց պարտիք գիտել՝ զի գոն 'ի գործս մարդկան ուղղութի և սխալութիւն: Տեսէք զի նոքա՝ որք ծնեալ են ընդ նոյնատեսակ չարեօք բաղդի՝ ոչ են համահաւասարապէս աջողակ յընթացս կենաց իւրեանց: Այլ ոմանք 'ի նոցանէ 'ի ձեռն խոհականն և բարեպատեհ վարուց երևելի են հանդիսացեալ 'ի վերայ աշխարհի, և անցուցանեն զաւուրս իւրեանց 'ի միխիթարութեան և 'ի յարգութեն, այլք 'ի նոյնահանգէտ աստիճանէ ծննդեան 'ի ձեռն անարգ և մոլեկան բարուց որ'ին 'ի բարեաց ծննդեան իւրեանց, անկանին յանհնարին ցաւս և 'ի թշուառութիւնս և զրաւին 'ի կենաց իւրեանց՝ լինելով առիթ սիրելեաց իւրեանց և ծանրութիւն կենցաղակցութեան: Վասն որոյ պարտ է ձեզ վաղագոյն գիտել՝ զի ոչ զարտաքին կացութենէ՝ յորում կայք՝ այլ զայնմանէ զոր ունիք առնել՝ կախի երջանկութիւն կամ ապերջանկութիւն ձեր և կամ բարեհամբաւութի և վատահամբաւութիւն ձեր: Արդ՝ 'ի սկսանել ձեր 'ի կենցաղավարել 'ի վերայ երկրի՝ զի՞նչ առաւել օգտակար և բարեգոյն լինիցի ձեզ՝ եթէ ոչ յամենայնի ջանալ առ 'ի սեպհականել զվայելուչ և զանհրաժեշտ բարս՝ մինչև գործեալ իցէ ձեր զմահացուցիչ և զանհորդելի յանցանս:

# ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Եթէ փոխանակ ջանալոյ և նկրտելոյ առ 'ի
ունել զայսպիսի վարս՝ անցուցանիցէք զժամա-
նակս ձեր պղերգութեամբ և հեշտասիրութեամբ ,
եթէ ոչ կամիցիք ունկնդիր լինել խրատուց ու-
րուք բայց միայն մոլեկան անձանց, կամ ոչ հետա-
մուտ լինիլ իմիք բայց միայն հեշտասիրութեան ,
եթէ թողուցուք զձեզ ծածանիլ սանձարձակ և
անզգոյշ յերեսս հեղեղաց ժամանակի , և փոյթ
իցէք 'ի հետևիլ անպատեհ սովորութեանց, չինչ
արդեօք ակն ունիք ընդունիլ յայսպիսի սկզբանց :
Եւ քանզի բազում առաջի աչաց ձերոց կրեն
զաղէտալի ելս այսպիսի անխոհեմութեան՝ ապա
ուրեմն զիարդ անխոհեմութիւն ձեր ոչ տայցէ
ձեզ ճաշակել զդառնագին զելս իւր : Ընկալջիք
զյաջողութիւն առանց այնր զգուշաւորութեան՝ և
խորշեսջիք 'ի վտանգաց առանց այնր նախազգու-
շութեան՝ որք պահանջին յայլոց : Երջանկութիւն եկես-
ցէ առ դրունս ձեր ըստ համոյից իւրոց , և աղա-
չեսցէ զի ընկալջիք զնա՝ մինչ զի առ ամ մարդիկ
է պտուղ բարեգործութեան և արդիւնք աշխա-
տութեանց և զգուշութեան : Մի՛ խաբէք զանձինս
ձեր սնոտեպատիր ակնկալութեամբքս այսոքիւք :
Յորում կացութեան և իցէք՝ նախախնամութիւն
բարձրելոյն ոչ 'ի տակս ձեր ընդդէմ գործեսցէ
պայմանագրեալ կարգի իւրում : Հեղինակ էու-
թեանց ձերոց խրատեալ է զձեզ առ 'ի զգու-
շանալ յընթացից ձերոց, առ 'ի խորհել զգնացս
ոտից ձերոց , առ 'ի յիշել զԱրարիչ ձեր
յաւուրս մանկութեան ձերում: Սահմանեալ է
նորա զի նոքա միայն՝ որք խնդրեն զիմաստու-

Թիւն՝ փոյթն զնա․ յիմարք տառապեցին վասն յանդգնութեանց իւրեանց․ և որ ոչ ունայն խրատուդ՝ ապականեցէ զհոգի իւր ։ Ընդելուզիր լինելով ձեր յանդիմանութեանց և խրատուցս այսորիկ՝ և բանախօսելով զամփա- ծութիւն, պարտականութեան ձերոյ բարեպատեհ մտածութեամբ՝ զայցք զմխիթարութիւն յամենայն ընթացս կենաց ձերոց․ այլ ամենայն հնազանդութ լինելով ունայնամտութեան և մոլեկան բաղձանաց՝ արկանէք ՚ի սիրտ ձեր ըն- հիմն անփոփոխ տառապանաց և թշուառութեանց ։ Յօրժամ հոյլք յայնորիկ ընթացս կենաց՝ զորս կամ կարութիւնք ձեր յուշ առնեն համ բերելովք ձեր յառաջադրեն՝ ոչ յապաղեցիք առնել, զի առ ՚ի բարեպ․ երթալ զնա նորա՝ պէտոն է նախապէս կ թութին ինչ ։ Հաւատալի լերուք՝ զի զինչ և իցեն գործք ձեր՝ ոչինչ կամութիւն պիտոյ է վասն յաջողութեան ձերոյ՝ եթէ ոչ սուրբ առաքինական ունակութեան ։ Այս է ը հանրական պարտաւորութիւն ամենայն ուրուք համբաւոյ և ամենայն վիճակի կենաց ։ Սէր և յոյժ է աշխարհ սակայն միշտ պատիւ մատուցանի առաքինութեան ։ Ի սովորական ընթացս մարդկային գործոց յայտնապէս երևի՝ զի ը ճշմարիտ արժանաւորութիւն զուգակցեալ պարզ խոնարհութեան առաւել զօրաւոր է յաջողութեան՝ քան զբարձրագոյն իրս առանց համեստութեան և պատուոյ ։ Եթէ դիտաւորութիւն ձեր իցէ առ ՚ի ունիլ զգիտու-

թիւն՝ զգործառնութի և զհաջակաւոր կեանս՝ սովորականին պահանջէ զմիտս և խնդրէ զգլխաւոր տեղի յայտուրիկ մեծամեծ մասունս կենցաղավարութեան ։ Այլ է սա ընդ սմանայն ազնուութեան յամենայն պատուական արհեստի՝ ընդ բարեհամբաւութեան յամենայն գեղեցիկ և պիտանի գործառնութն և ընդ մեծութե՝ յամենայն հոչակաւոր վիճակի ։ Զօրութին զոր սա ընծեռէ մտաց՝ յորդութիւնն զոր սա համաբառոյ՝ քաղցրահամ խոկմունքն զորս շնչէ՝ աներկիւղ հոգին՝ զոր ներշնչէ՝ եռանդն գործունէութեան՝ զոր կենդանացուցանէ՝ ազատութին՝ զոր շնորհէ ՚ի փառաւոր և յանարգ արկածից՝ են հիմունք սմանայնի՝ որ կոչի պատուական է և մեծապէս ցանկալի ՚ի մէջ մարդկան ։

Զօր ինչ պանծալի և գեղեցկաշուք զարդս սեփականէք՝ պիտոյ է ձեզ առաքինութիւն առ ՚ի փողփողեցուցանել զնոսա վայելուչ իմն պայծառութեամբ ։ Սուտն և անզօր են հրապուրանք գեղեցկատեսիլ դիմաց, եթէ հոգին չիցէ զարդարեալ ներքին գեղեցկութեամբ ։ Անցողական են յաղթանակութիւնք իմաստութե՝ եթէ իցեն կառք չարակնութեան ։ Եթէ կամիցիք մեծարանս ընդունիլ նախապէս զինչ և իցէ եղանակաւ՝ հնար է ձեզ միայն ունիլ ըզպատիւ և զփառս այլոց ՚ի ձեռն բարեյարմար սովորութեանց և կատարելութեանց մտաց ։ Այնոքիկ են միայն՝ որոց զօրութիւնն մնացէ յաւիտեան՝ յորժամ պայծառութիք ամենայնի՝

որք մի անգամ փորփորեցան և փայլեցան՝ չքանային և անյայտ լինիցին :

Ապա ուրեմն մի՛ թողուք բնաւին զեղանակ պատանեկութեան առ ՚ի ամուլ և անպտուղ մնալ ՚ի բարեգործութեանց՝ որք այսքան հարկաւոր և պիտանացու են ապագայ երջանկութեան և յարգութեան ձերոյ : Արդ է ժամանակ սերմանելոյ կենցաղավարութեան . և զոր ինչ սերմանեսջիք՝ զնոյն ունիք հնձել : Ի ձեռս ձեր է այժմ համբաւ ձեր օգնականութեամբ բարձրելոյն . վիճակ ձեր ՚ի ձեռս ձեր է ըստ մասին ինչ : Բնութիւն ձեր տակաւին կակուղ է և դիւրաթեք : Սովորութիւնք ոչ են բռնացեալ ի վերայ ձեր : Նախապաշարմունք ոչ են նախաբնակ լեալ յիմացականութեան ձերում : Աշխարհ մինչ ցարդ ոչ է կարեալ զպատեհ առ ՚ի ցածուցանել և նկուն առնել զբաղձանս ձեր : Կարողութիւնք ձեր համայն են առաւել զօրաւոր՝ անվրդով և անարգել՝ քան թէ յապագայս հնար է նոցա լինել : Զոր ինչ ընթացս ընձեռնեսջիք այժմ ախորժակաց և կրից ձերոց՝ նոյն ընթացք տևել ունին յարաժամ : Յօրինեսցեն նոքա զառու մի՛ յորում պարտ է կենաց ձերոց անցանել . և ոչ այսչափ միայն՝ այլ և հաստատեսցեն զմշտնջենական դէր նորա : Ապա ուրեմն համարեսջիք զգործադրութիւն օգտաւէտ այսր ժամանակի իբրև զգերայարգ աւանդ մի՛ զոր երբէք հնար է ձեզ սեփականել , իբրև զարտադրող երջանկութեան ձերոյ

յայսմ յանցողական աշխարհի և յանանց յաւիտենականութեան: Արդեօք ի յաջորդութիւնս եղանակաց իւրաքանչիւրն անյեղլի օրինօք բնութ հայի յորդիւնս նորա՝ որ ունի հետևիլ նմա՝ այսպէս և ՚ի մարդկային կեանս իւրաքանչիւր եղանակ հասակի մերոյ ըստ որում բարեպէս կամ յոռեպէս իցէ անցեալ՝ հայի յերջանկութիւն նորա՝ որ հետևելոց է ինքեան: Մանկական պատանեկութիւն տակաւ առ տակաւ յառաջացուցանէ զկատարեալ և զծաղկեալ մարդկութի. և այսպիսի մարդկութեան փոխադրի ինքնին առանց իւիք անդիւրութեն ՚ի պատուաւոր և յանխռով ծերութիւն: Սակայն յորժամ բնութիւն զարթուցի և շեղի ՚ի կանոնաւոր ընթացից իւրոց՝ հիւանդութիւն գոյանայ ՚ի փարս որպէս և դէպ լինի ՚ի կանաչեղէնս: Եթէ զարունն ոչ բողբոջեսցի յայտ է զի յամառան պտղեցկութի ինչ ոչ լինիցի. և յաշնան պտուղ ինչ ոչ երևեսցի. այսպէս և եթէ պատանեկութիւն անցցե առանց բարութեան և առաքինական գործոց՝ անտառական մարդկութիւնն եղիցի արհամարհելի և բազմաշխատ, և ծերութիւնն՝ ապերջանիկ և թշուառացեալ: Եթէ սկզբունք կենաց եղեն ունայնութիւն՝ վերջին կացութիւն նորա հազիւ երբեք կարէ լինել այլ ինչ՝ եթէ ոչ խռովութիւն հոգւոյ: Արդ տաց բանից իմոց յորդորելով զձեզ՝ կի յուսայցիք յայն խնամածութիւն բարձրելոյն՝ զոր յամենայն քանս ձեր պարտիք հանապազ պահպանել: Հա-

տարուկ է պատանեկաց՝ որք յորժամ ՚ի մի գնեն երթալ զճանապարհ առաքինութեան և պատուոյ՝ երթալ յանդգնաբար և յուսադիր լինելով յինքեանս : Յուսալով նոցա ՚ի գիտութիւնս իւրեանց առ ՚ի յաջողապէս անցուցանել զկեանս իւրեանց՝ անփոյթ են գիտել առ Այ կամ ընդունել զնպաստ ինչ յայնմանէ՝ զոր փոյթ են հաւանիլ իբրև զաղքամղջին փորձառութիւն կրօնի : Աւաղ՝ որքան սակաւ իրազեկ են նոքա զվտանգացն՝ որք դարանակալ լինին նոցա : Ո՛չ մարդկային իմաստութիւն և ո՛չ մարդկային առաքինութիւն առանց օգնականութեան կրօնի կարօղ են ախոյեան հանդիսանալ ընդդէմ փորձութեան սատանայի՛ն . քանզի անգամ դիտաւորութիւնք առաքինեաց ՚ի չարութիւն փոխադրեցան : Ընդ տառապանօք ձախորդութեան որքան ընկղմեցաւ մեծագոյն յարատևութիւն բարեգործութե : Ամենայն տուրք բարի և ամենայն պարգևք կատարեալ ՚ի վերուստ են իջեալ : Իմաստութիւն և առաքինութիւն՝ որպէս և ճոխութիւն և պատիւ իջանին յԱյ : Թափուր գոլով ձեր ՚ի բարերարութենէ նորա՝ ոչինչ էք հանդերձ ամենայն գիտութեամբք ձերովք՝ եթէ ոչ անտերունջ որպէս լքեալք յանապատէն յանապատ՝ ոչ ունելով զառաջնորդ որ առ ՚ի առաջնորդել զձեզ, կամ զծածկոյթ ինչ առ ՚ի ծածկել զձեզ ՚ի մրրկածուփ փոթորկէ կենցաղոյս : Ուղղեցէք ուրեմն զայս վատթարագոյն յանդգնութի

պատանեկութեան ։ Մի՛ բնաւ մոռանէք զի երջանկութիւն ձեր անկախ է զնմանէ՝ որ արար զձեզ ։ Հաւատով և ապաշխարութեամբ դիմեցէք առ Փրկիչն աշխարհի ։ Բարեպաշտութեամբ և աղօթիւք հայցեցէք զնախախնամութն Այ վերնոյն ։ Ընքեմ զքանս իմ ազգողական բանիւքն այնոքիւք՝ որովք մեծաշուք արքայ մի իբրաւէսօ գործի իւր ՚ի ժամ մահուան իւրոյ. զայնպիսի ստէն բանս՝ զորս իւրաքանչիւր պատանի պարտի համարիլ իբրև ընքեան ասացեալ, և ուժգնակի արձանագրել ՚ի վերայ սրտի իւրոյ ։ Սողոմոն՝ որդի իմ՝ ծանիր զԱծ հարցն քոց . և ծառայեա նմա կատարեալ սրտիւ և մտօք կամաց քոց ։ Վասն զի քննէ Տէր զամենայն սիրտս . և զամենայն խորհուրդս ճանաչէ ։ Եթէ խնդրեսցես զնա՝ գտցի քեզ . և եթէ թողցես զնա՝ լքցէ զքեզ իսպառ ։

ԲԼԵԸՐ

Յառաջադրութիւնք կենաց յոլովակի պատրաղական ։

Օմար՝ որդի Հասանայ անցուցեալ էր զեօթանասուն և զհինգ ամս ՚ի յարգութեան և ՚ի յաջողութն ։ Ընդ որս երից յաջորդական Խալիֆայից լցեալ էր զտուն նորա ոսկւով և արծաթով . և յորժամ երևութանայր, որհնաբա-

նութիւնք ժողովրդեան հնչէին 'ի շուրջ նր̃ : Երկրային երջանկութին է սակաւատեւ : Պայծառութիւն բոցոյ ծախէ զլուցիկ նորին · անուշահոտ ծաղիկն թօռշամի յանուշահոտութե իւր : Զօրութիւն Օմարայ սկսաւ նուաղել · զանգուածք գեղեցկութեան թափեցան 'ի գլխոյ նորին · պարզեցաւ 'ի ձեռաց նորա զօրութի՛ և յոտից նորա գործունէութիւն : Վերադարձոյց նա Սալֆային զբանալիս աւանդապահութե և զկնիքս ծածկութե · և ոչ խնդրէր զայլ ինչ բերկրութիւն առ Միացորդաց կենաց, եթէ ոչ զզրուցաբանութիւն իմաստնոց և զերախտագիտութիւն բարեաց :

Զօրութիւնք մտաց նր̃ էին տակաւին անեղծ : Սենեակ նորին լնանիւր յայցելուաց · որք փոյթ էին 'ի ըմբռնել զպատգամս փորձառութե, և պատրաստ 'ի ընձեռել զարբիտուր արժանապատուութե: Վալեդ՝ որդի բդեշխին Եգիպտոսի մտանէր յամենայն աւուր կանխագոյն, և դառնայր անագան : Գեղեցիկ էր նա և զուարճախօս : Օմար ուրախանայր ընդ իմաստութիւն նորա · և սիրէր զուսումնասիրութիւն նորին : Տաց ինձ , ասէ Վալեդ՝ դու՝ որոյ ձայնիդ անսացին ազգք , և որոյ իմաստութիւնդ քո յայտ է 'ի սահմանս Ա̃իոյ, ասա ինձ թէ զիարդ նմանիցիմ Օմարայ խոհեմին : Զոհեաքն՝ որովք շահէյար զգիտութիւն և պահպանեցեր , այլ ոչ ես ընդ քեզ կարևոր և պիտան · բայց ինձ զգաղանիս վարուց քոյ՝ և ասա զառաջադրութին զայն՝ յոյր վր̃

իմաստութիւն քո հաստատեաց զճոխութիւնս քոյ : Պատանի՝ ասէ Օմար, սակաւ օգուտ է առնել զառաջադրութիւն կենաց : Յորժամ կալայ զառաջին հայեցուած աշխարհի ՚ի քսաներորդի ամի իմում՝ մտածեալ զպէսպէս կացութեանց մարդկան ՚ի ժամ մեկուսութեան, և յեցեալ ընդ նոճենի մի՝ որ սփռեալ էր զճիւղս իւր ՚ի վերայ գլխոյ իմոյ՝ ասացի ցիս այսպէս : Եօթանասուն ամք տուան մարդոյ · ունիմ տակաւին զյիսուն մնացեալ : Զտասն ամս վիճակեցուցից ստացման գիտութեան · և զտասն անցուցից յօտարոտի յերկիրս · եղէց ես ուսեալ՝ և յայն սակս եղէց պատուեցեալ · ամենայն քաղաք խնդասցէ ընդ ժամանումն իմ · և ամենայն համբակ անձկասցէ բարեկամութեան իմում : Քսան ամք այսպէս անցեալ՝ համբարեսցեն զմիտս իմ պատկերօք՝ ընդ որս եղէց պարապեալ ընդ ամենայն կեանս իմ ՚ի յօդել և ի բաղդատել զնս: Զբօսեցայց յանսպառելի կուտակութիւնս իմաստնական գանձուց · գտից նոր բերկրանս յիւրաքանչիւր վայրկենի · և այլ ոչ եւս յափրացայց յանձնէ իմմէ : Այլ և ոչ զարտուղեցայց կարի հեռաւոր ՚ի նշանաւորեալ շաւղէն կենաց՝ այլ ջանացայց իմանալ թէ զինչ գտանիցի յիգական փափկութենէ : Ամուսնացայց ընդ կնոջ միում՝ որ լիցէ գեղեցիկ իբրև Հուրիս · և իմաստուն իբրև Զօբիդէ · կեցից ընդ նմա զքսան ամս ՚ի սահմանս Պաղտատի ընդ ամ բերկրանս՝ զոր փարթամութիւն կարէ գնել և երևակայութիւն հնարել : Առանձնացայց

այս յանապատային օթևան մի · անցուցից զա-ւուրս իմ ՚ի թաքստեան և ՚ի մտախորհութ · և ըն-կողմանեցից ՚ի մահճի մահու լռելեայն : Ի կեանս իմ այս երկրի հաստատեալ յառաջադրութիւն իմ , զի ոչ կախեցայց բնաւին զքաղցրութենէ արքայ-ից ՚ և ոչ մտանեցայց ՚ի հայթհայթանս ատե-նից · ոչ խառնեցայց առ հրապարակական պա-տուոյ · և ոչ խռովեցից զհանգիստ իմ գործովք պետութեան : Այսպիսի էր յառաջադրութիւն կենաց իմոց , զոր անխախտաբար փորագրեցի ՚ի յիշողութեան իմում :

Առաջին մասն յաջորդական ժամանակի իմոյ , պարտէր ծախիլ ՚ի յուզմունս գիտութեանց · և ոչ ակնեմ թէ զինչ հաճոյանայր ՚ի պիտանաւոր-ութենէ իմմէ : Զունէի զերևելի խելք և խուլթս յառաջաքսատ ՚ և ոչ զանսանձանելի կիրս ՚ի ներ-քուստ : Մեծարէի զգիտութիւնն իբրև զամե-նայարգ պատիւ և զյոգնապատագ բերկրութի · սակայն որ անց զաւուրբք ՚ և ամիս էանց զամօք՝ մինչ դտի զեօթն ամս առաջին տասն ամաց ան-ցեալ և զոչինչ գինի թողեալ : Մտափանեցի այժմ զտառապեալ ուղևորութեան իմոյ · քանզի էր վն գնացից արտաքս՝ մինչ զայսքան ունիմ ուսանիլ ՚ի տան : Առանձնացայց զչորս ամիսս՝ և ուսայց զօրէնս տէրութեան : Համբաւ հանճարոյ իմոյ եհասանէր յականջս դատաւորաց · կալող գտանէի խօ-սիլ զերկրայական հարցմանց · և պատուիրեալ լի-նէի կանգնիլ առ պատուանդանաւ Մալփոյ-րին : Նուեալ լինէի մտալքութեամբ · խորհր-

դարձեալ լինէի ուսադրութեամբ, և սէր զովուն սեղմեցաւ ՚ի սիրտ իմ :

Տակաւին անձուկ ունէի տեսանել, զհետակայ քաղաքս՝ բերկրութիւն ունկնդիր լինէի պատմութեանց ուղևորաց. և յառաջադրեցի երբեմն խնդրել, զարձակութիւն իմ՝ զի զուարճացուցից զհոգի իմ նորութեամբ. բայց ներկայութիւն իմ հանապազ կարևոր գտանիւր. և ընթացք գործոց յապաղեաց զիս ընդ երկար: Երբեմն երկնչէի զի մի՛ գուցէ ապերախտ գտանիցիմ. բայց տակաւին յառաջադրեցի ուղևորել. և այն սակս ոչ խափանէի զիս ամուսնութեամբ :

Ի յիսուն երրորդի ամի իմոյ սկսայ կասկածել՝ թէ ժամանակ ուղևորութեան էր անցեալ: և բարեգոյն համարեցայ դրամամբ՛ առնել զերջանկութիւն զայն՝ զոր տակաւին կար իմ խոստանայր. և դիւրացուցանել զիս ՚ի սնայլին բերկրութիւն: Բայց ՚ի յիսուն ամի ոչ ոք դիւրաւ գտանէ զկին մի զեղեցիկ իբրև Հօմբիթ և իմաստուն իբրև Օբրիդէ :
Խնդրեցի և խստան գտի. խորհուրդ սրտի. և զմտաւ ածի. մինչ վճարումն և երկու երկրորդ ամի զամօթի հարկանէր զիս ՚ի ցանկալոյ ամուսնանալ:
Ձունէի այժմ զոչինչ թողեալ, բայց ՚ի մեկուսութենէ. և մեկուսութեան ես ոչ գտի երբէք զժամանակ՝ մինչ հիւանդութիւնն բանադատեաց զիս խորշել ՚ի հրապարակական գործոց ::

Մխիթար էր յառաջադրութիւն իմ՝ և այսպէս եղև վախճան նորին: Մնայ զուրդ ծարաւոյ ագիտութեան՝ անցուցի վայրապար զամս շահէկա-

նութեան. անդադրում փափագմամբ ածայանելոյ զՀռուակեայ քաղաքս՝ կեցի համագայ ՚ի նմին խօլ քաղաքի. անմնադարձէր անձնիշխութեան ակնածնական երջանկութեան՝ մնացի անսամանայեալ. և անփոփոխ յառաջադիմութեամբք մտախորհրդական մեկուսութե՝ երկրամասն Թռանիլընդ պորտուգա-Լիսաբոնի:

ՔԱՆՍԸՆ

# ԱՒԱՐՏ

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ԱՆՁՆԱԳՐՈՒԹԵԱՆ

## ՀԵՂԻՆԱԿԱՑ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒԱԾՈՑ

## ՊԱՐՈՒՆԱԿԵԼՈՑ ՅԱՅՍՄԻԿ

## ՄԱՏԵՆԻ։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՆՁՆԱԳՐՈՒԹԵԱՆ ։

Բարեմիտ ընթերցող դու՛ն յետ մատչիր մերձա-նութեան գեղեցկահիւս բարբառական բանից ը՛ղ մէջ բովանդակ մատենիս պարունակելոց ըղձաձկ-տաքար հետազօտելով փոփոխեցին իմանալ թէ որոյ է կամ յումմէ է յղինեալ այս ինչ կամ այն ինչ գրուած , և կամ ո՛յք և որպիսիք էին որք այսպիսեաց հեղինակ եղեն գրուածոց · զմին լը և մեզ հարկաւորապար ըղձալի երևեալ ոչ զան-գաղել 'ի յուցանելոյ չափաւոր նոցա՝ յաւուր իւրաքանչիւր գրուածոյ յարմար զուեցաք երկա-թագրով յիշատակել զանուն հեղինակին կամ գրոյն՝ յորմէ որոտահանեցաք զնոյն, և 'ի վախճան տպագրութեան մատենիս զետեղել ։ Յաւե-լուած ինչ Անձնագրութեն հեղինակիցն համայ-նից՝ աւանդելով կարի համառօտ ի գլխաւոր պարագայս վարուց նոցա՝ որք հետևին ։

ԹՈՄԱՍ Գ․ Ա․ Լ․ է Անգղիացի մին հեղի-նակ բազմահանճար՝ և զգօնամիտ և յօրինող սգգի ազգի խորանական և հովեզերական բանից ։

ԲԻԱԹԹԻ Յակոբոս ծնեալ էր ի Սկովտիա յամի 1735 · և էր իմաստասէր և պաշտօնեայ ։ Յետ նախակրթական հրահանգութեանց գնաց 'ի նորին Էպէրդին · և 'ի համալսարանի նորա ընկալաւ զվարդապետութեան ուսուցչական կրթութիւնս ։ Յօրինեալ է սա զպէսպէս ոտանաւոր և ընդար-ձակ գիրս ։ Յառաջնումն կալաւ զպաշտօն դա-սատուութեն 'ի քերթողական դպրոցին · ․․ կայն

արդիւնք գիտութեանց նորա այնքան գերազանց հանդիսացուցին զնա՝ մինչև դատաւորք Իբեր-դինայ ընտրեցին զնա վարժապետ բարոյական իմաստասիրութեան և տրամաբանութեան ՚ի համալսարանի իւրեանց : Զհիւանդութիւն իմն անկարողացոյց զնա առ ՚ի կատարել զպաշտօն իւր փոքր ժամանակաւ յառաջ քան զմահ իւր · որ պատահեցաւ յամի 1803 · ՚ի 68 երրորդի ամաց հասակի նորա : Իմաստասէրս այս էր այր բարեպաշտօն և ածոյին հանճարով շարադրեալ : Թէպէտ սակաւ են տաղաչափական գործք նորա՝ սակայն կան յառաջագոյն եթող նա շլեառն Ո խնկոտի ձայն լերին Սիոնի :

ԲԼԷՐ Սիւհէմ էր եպիսկոպոս Լընդընայ՝ այր հանճարեղ բազմահմուտ և յօրինող պէսպէս քերթողական գրոց և տեսակաց :

ԲԼԷՐ Հիւ ծնեալ էր յԷդինբըրգ քաղաքի յամի Տն 1718 : Ուսանի քերականական ներկրթութեանց մինչ ՚ի համալսարան Էդինբըրգայ · և ՚ի մէջ թատրոն ամաց ընթացս անդանօր դպրոցական և մանկական կրթութիւնս : Յայս ՚ի պէսպէս եկեղեցական պաշտամանց՝ համալսարանն արքայն Անդրէի յամի 1757 · կարգեաց զնա վարդապետ ճարտասանութեան · որ յայնմ ժամանակի նոր հաստատեալ էր ՚ի Սկովտիա : Յամի 1762 · արքայն Անգլիոյ կարգեաց զնա յԷդինբըրգեան համալսարանի արքունական ուսուցիչ գրոցն Բէլյա ։ Զանտորական և Բէլեան գրոց բարոյք նր ղմուտեցան գոյ աերացան-

ցածրոյն յոյժ: Յամի 1748. ամուսնացաւ ընդ կնոջ ուրումն համեստի: Ծնանէր 'ի նմանէ զմի ուստր և զմի դուստր. առաջինն մեռաւ 'ի տիօջ տղայութեան, և վերջինն՝ 'ի քսան և մի երրորդ ամաց հասակի: Երկու ամօք յառաջ քան զմահ իւր կորոյս զկողակից իւր: Յաւուր 1800. ամի կատարեաց զերկրաւոր կեանս իւր: Արժանապատուութիւն առնս այսորիկ յիւրոց հինգ հատոր քարոզական գրոց յայտնի ցուցանի. որք թարգմանեցան յամենայն բարբառս Եւրոպացւոց. և յորոց վերջինն գրեցաւ 'ի վերջին ամաւն նորա: Քաղուածքն՝ զորս արարաք 'ի նմանէ՝ ներշնչեն զէջս մատենիս այսորիկ անցուցական հոգւով:

ԳՐԻԳՈՐ Յովհաննէս ծնեալ էր յԱպէրդին ամի 1724. և էր վարդապետ բժշկութեան: Ընկալաւ կատարեալ հրահանգութիւն մակացութեանց: Յամի 1752. ամուսնացաւ ը Եղիսաբեթի՝ ը դստեր Վիլիմ Ֆորբսի. որ էր օրիորդ մանկամարդ՝ և ընդ արտաքին գեղեցկութեն դիմաց և քաղցրութեան բարուց կցեալ էր զգօնութեն և զուշիմութիւն գերազանց յոյժ: Յընթացս կենակցութեան իւրոյ՝ որ էր ինն ամք և եթ՝ վայելեաց զբարձրագոյն բաժին անձային երջանկութեան: Զկնի մահուան ամուսնոյ իւրոյ՝ որպէս նա ինքն ասէ սակս զբօսանաց առանձնաւոր կենաց՝ պարապեցաւ 'ի շարադրութիւն այնր գերազանց գրոյն՝ որ կոչի Հրահանգ հօր ուրումն առ դստերս իւր. յոր մեծարոյ աթոռա-

կալ մեր՝ վաղամեռիկ Պարոն Մ. Յ. Աղա-նուրեանց յեղաշրջեալ է 'ի մեր բարբառ. և զար-գիօ է 'ի տպագրութեան: Բայց 'ի գրոյս յայս-մանէ յօրինեալ է զայլ երկուս մատեանս: Պատ-մական այրս այս վախճանեցաւ յանկարծակի յամի 1773:

ԳՈԼՏՍՄԻԹ Օլիվէր ծնեալ էր յԻռլանդիա յամի 1731. և էր գերահռչակ-եալ Անգղիացի հեղինակ: Որդի էր նա քահա-նայի ուրումն. որ եւս նմա նպրուտրական ու-սումն. և 'ի կանուխ ժամանակի առաքեաց զնա 'ի ճեմարան Դուբլինայ: Այլ ուսանելոյ զար-հեստ բժշկութեան՝ մուծաւ յԷդինբուրգեան համալսարանն. ուրանօր մնաց երկիս ամս: Յոչ կարել նորա հատուցանել զպարտս ինչ՝ թագուն եթող զԷդինբուրգ. սակայն կալեալ եղև 'ի Սընդերլեա, և 'ի ձեռն նպաստից ոմանց բարե-կամաց զերծաւ 'ի բանտարկութենէ: Անդ այս-պիսի կացութեամբ եկն նա յաշխարհ. և 'ի պատ-ճառս աղքատութեն իւրոյ՝ յառաջագրեաց ուղե-որել յԵւրոպիա: Հանապարհորդեաց զչորս ամս շուրջ զբազմօք աշխարհօք Եւրոպիոյ. և 'ի դառնալ նորա վերստին յԱնգղիա՝ սկսաւ պա-րապել 'ի շարադրութիւնս ոտանաւոր և ընդար-ձակ բանից. առաջինն կարի ցանկալի և գովելի եղեւեցաւ գրաւորական աշխարհի. և վերջինն ցոյց զախորժակս նորաւէրժ հ. մ. ակաց՝ հմտացու-ցանելով զնոսա ընդ պատմութիւնս Հռովմայ՝ Անգղիոյ՝ Յունաստանի և այլոց: 'Ի յետին

ժամանակի կենաց նորա անհարթութեանց զնա յուսա-հատ ունէր մտաց · Ը որովք վախճանեցաւ յամի 1774:

ԴՈԴ Ուիլիէմ ծնեալ էր ի Լինկօնշայեր յամի 1729. և էր քահանայ Անգղիական Եկեղեցւոյ: Էր սա գերահռչակ և գերա-պանծ քարոզիչ ի Մայրաքաղաքին. ուստի և նշանաւոր երևեցաւ վասն կառուցման անկելանո-ցին Մագդաղինեայ: Էր սա հանճարեղ և գովելի աշակերտ գրոց: Գրաւորական գործք նորա են բազում՝ ոչ բարւոք գրեալ՝ այլ ի փութանակի պէտս կարգեալ: Շռայլութիւնն՝ զորս ստացաւ՝ արարին զնա ունայնասէր . և ունայնա-սիրութիւն նորա արկ զնա յայնպիսի ծախս՝ որ-ում բազմահարուստ փարթամութիւնն անբաւ-գոյ խոստովանէր: Ընկաւ ի պարտս անհա-տուցանելիս . և ի վերջոյ փորձեցաւ ի շահեն-ու ի անուանել գողութեան · որով և վճարեաց ըզ-կեանս իւր: Դատապարտեալ եղև՝ ածաւ ի դա-տաստան՝ դատեցաւ և կախեցաւ ի Տիբուռն յամի 1777:

ԷԴԻՍԸՆ Յովսէփ ծնեալ էր յամի 1672 · և էր մի ի գերահռչակ Անգղիացի գրագիտաց: Յետ ընդունելոյ զնախակրթութիւն իւ-րոյ ուսմանց ի պէսպէս դպրոցս մտաւ ի թա-գուհեան ճեմարան Օքսֆորդայ: Յամի 1693· ընկալաւ զաստիճան արհեստականն վարդապետի և կարի գեղապանծ էր վասն Լատին տաղաչա-փութեան իւրոյ: Յամի 1699 · ընկալաւ ի Ուիլիէմ արքայէն թոշակեան հոգ 300· ստեր-

լինաց առ ՚ի կարող լինիլ ՚ի ճանապարհորդել : Ուղևորեաց ընդ Փռանսա և Իտալիա մեծաւ զգուշաւորութեամբ և զուարճամտութեամբ : Յամի 1716 · ամուսնացաւ ընդ այրի կոմսուհւոյն Ուարվիկայ : Յամի 1717 · ամբարձաւ ՚ի գերագոյն աստիճան գործակալութեան Պետոր-գեայ Նախարարի : Հիւանդութիւն շնչարգելութեան ժամանակ վշտացոյց զնա և զրկեցոյց ՚ի ջրդողութեան : Մեռաւ յամի 1719 · ՚ի 48 ամօք հասակի : ՚Ի մերձենալ օրհասին նորա՝ յղեաց զոմն առ ՚ի կոչել զպատանին կոմսն Ուարվիկեայ · և կալեալ զձեռանէ նորա՝ ասաց գա-մային հիմն հեռացիր թէ՝ տես յինչպիսի խաղաղութեան հնար է քրիստոնէին մեռանիլ : Ամենա զմեծ մասն ՚ի Տատլէր և ՚ի Սփէկթէյ-տոր [illegible] : Գրուածք Ադդիսոնի են բատ մեծի մասին ոտանաւոր՝ քերթողական և բարոյական : Իսկ և զատաղաչափ՝ արժան է բանի յարգութեան՝ թէ և ոչ բարձրագունի : Նմանպէս ընդարձակ գրուածք նորա ըստ լեզուելոյ Լանդոնի՝ են գերազանցագոյն գաղափար Անգղիական ոճոյ :

ԱԿԻՆ, Մարկոս էր վարդապետ բժշկութեան · այլ սակայն առաւել գեղաճաշակ էր իբրև ըն-բանաստեղծ : Ծնաւ յամի 1721 · և վախճանեցաւ յամի 1770 : ՚Ի բան երեք երգոց ամանց հասակի խորում յօրինեաց զմատեան մի գերազանցագոյն՝ բաղդատութեամբ ամկամնաւոր հասակի խորոյ :

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԹԱՐՆՕՏՐԻՆ. Յովնէլ էր բանաստեղծ հանճարայեղց՝ և հեղինակ բազմապատիկ հատու-կիր գրուածոց. և թարգմանիչ Պլուտարքոսի: Ծնաւ ի Լոնդոն յամի 1724 . և վախճանե-ցաւ յամի 1768 :

ԿԻՄՍ Մալիմէր Անգղիացի հեղինակ և ազնուական. և քաջապէս ներհմտեալ յարհեստ հռետորութեան :

ԿԻԹ. Յակոբոս էր քաջազօր և անպարտելի սպարապետ ի ծառայութեան արքային Պրուսի-ոյ. ծնաւ ի Սկովտիա յամի 1696 . և նշանա-ւոր է հանդիսացուցեալ յաշխարհի զանուն իւր ի յիշատակելեան արժանի պատերազմունս ար-քային այնորիկ: Վախճանեցաւ սպանեալ ի սա-րտուագրին գործառնութեան Հոկկերշինայ յամի 1758 :

ԿԻԿԻՐՈՆ. Մարկոս Տուղղիոս էր դերա-հռչակ Հռովմայեցի հռետոր և փիլիսոփայ՝ ծնեալ 105 ամօք յառաջ քան զՔ. ծննդեան թիւն : Իբրև հռետոր՝ իբրև քաղաքացի իբրև իմաս-տասէր երևի ոչ լինել մի ի մեծագոյն հնագի-տաց սոսկնոյ : Յետ անձնուէրաբար պաշտպանու-թեան առնելոյ երկրի նր՝ խռովխռովեցաւ պատ-ուէրանօք Անտոնիոսի՝ մահապարտ թշնամեացն : Հանճար և գգօնութիւն նորա նշանաւոր կացու-ցանէն զնա յայժ. ի մէջ որոց յօրինեաց չպէտս գեղեցկապատում գիրս : Ունէր նա չբաղձմա-ռափինութիւնս. սակայն սոսա երևէին նորա ի պատճառս չափազանց ունայնափառութեանց ;

զորս հնար է ախորժացուցանել ամենայն ինչ ՚ի ձեռն փորձոյ և սովորութեանց ժամանակին նր։
**ԿՂՈՒԴԻԱՆՈՍ** Կղոդիոս էր հեղինակ Լատին պատմութեան մեծին Աղեքսանդրի. որ միանգամայն անմահացուցեալ է զդիւցազն զայն և զպատմագիրն։ Գրագէտք ՚ի տարակուսանս են զժամանակէ և զբազդէ նր։ Լենգլետ և Գրոնովիոս ասեն զնմանէ լինել առ մեծ Թէոդոսիւ իբրև յամի Տեառն 380։ Գերմանացն Լատին ոչ նորա վկայէ զնմանէ լինել Հռովմայեցի։
**ՀՈՐՆ** Գէորգ էր եպիսկոպոս Նարվիճայ, ծնեալ ՚ի Կենտ յամի 1730. և վախճանեալ յամի 1792։ Առաքինութիւն նորա ունէր զմաքրութիւն և զքաղցրութիւն բարուց և զարմանալի ձիրս երկնային իմաստութեան։ Յօրինեալ է սա զչորս հատոր քարոզական գիրս. և զմի հատոր մեկնութեան սաղմոսաց. որք են գործք գերազանցագոյնք և գովանելիք։
**ՀԱՐՐԻՍ** Յակոբոս էր Անգղիացի հեղինակ բազմապիսի կենցաղօգուտ և գեղեցկաբան գրոց և ճառենից. ծնեալ ՚ի Սալզբըրի յամի 1709. և վախճանեցաւ յամի 1780։
**ՄԻՒՐԷՅ** Ուիլեմ էր կոմս Մենսֆիլտի ծնեալ ՚ի Փերթ յամի 1705։ Էր սա օրէնսգէտ հանճարեղ և բանիբուն. և յամի 1756. կարգեցաւ ՚ի պաշտօն գերագոյն դատաւորի. զոր կատարեաց յամս երեսուն անաչառ համբաւով և շքով։ Հեղինակ է սա ոչ սակաւ իմաստնական գրոց։ Վախճանեցաւ յամի 1793։

**ՊԷՐՍԻՎԱԼ.** Թոմաս էր բժիշկ գերահռչակ և քիմիագէտ գերագոյն : Ծնաւ ի Լէնկինշայեր յամի 1740. ի 29 Սեպտեմբերի. և վախճանեցաւ ի Մանձեստէր յՕգոստոսի 30 յամի 1804 : Հեղինակ է սա պէսպէս գրոց բժշկութեան և այլի ազգի իմաստասիրական և խրատական ճառից :

**ՋՈՆՍԸՆ** Սամուէլ ծնեալ էր ՝ի Լիչֆիլդ յամի 1709 . ուրանօր հայր նորա էր հռչակաւոր գրավաճառ : Ուսեալ ՝ի ճեմարան Պեմբրոքեան՝ որ ՝ի յՕքսֆորդ՝ յամի 1723 . ՝ի 31 Հոկտեմբերի . սակայն եթող զճեմարան առանց ընդունելոյ զաստիճան ինչ : Յամի 1737 . յամսեանն Մարտի եկն ՝ի Լոնդոն . ուրանօր թուի թէ պատահեալ է ձախողութն . որ անհաճելի կացոյց յայս նորա զքաղաքն զայն . քանզի յՕգոստոս ամսի վերադարձաւ ՝ի բնիկ քաղաքն իւր և կամէր լինել վարժապետ դպրոցին Ստաֆշայերոյ : Սակայն հանգամանք դպրոցին խնդրէին զոք իբրև զվարդապետ արհեստից . յայն սակս ՝ի դերև ել ակնկալութիւն նորա : Հռչակաւորական գործք նորա են բազում և գրեթէ անհամեմատ . յորոց միջին են խաղս հանդիսական բառ . ժամանակեայ արժանաւոր բառարան նոյ, և գեղեցկահիւս բարոյական պատմութի Հռասելասյ՝ արքայորդւոյն Եթովպիոյ : Նա թէ կամք էր նմա յաւելուլ ՝ի պատմութիւնն յայն զմիւս մասն մի ևս . սակայն օրհասն նորա նահանջեաց զկատարումն փափագանաց նորա . որ պատա-

հեցաւ 'ի 13. Դեկտեմբերի յամի 1784:

ՈՍԿԻՆ Շառլեզ էր Գաղղիացի հանճա- րեղ՝ հմուտ և քաջհմուտ Գծելեան գործոց: Ծնաւ 'ի Փարէզ յամի 1661. և վախճանե- ցաւ յամի 1741: Գլխաւոր գործք նորա են քննութիւնք Գծելեան գրոց և պատմութի՛ նախնի Եգիպտացւոց. որք արժանացան մեծի հաւա- նութեան և 'ի բազում լեզուս թարգմանեցան:

ՍԱՂՈՒՍՏ Կայիոս Կրիսպոս էր գերա- հռչակ Հռոմայեցի պատմաբան՝ ծնեալ յա- մի հիմնարկութեան Հռովմայ 669. և 80 ամօք յառաջ քան զՔս: Իւսեբիոս ասէ թէ ամուսնացաւ նա ընդ Տերենտեա՝ ը արձակեալ կնոջ Կիկերոնի. և վախճանեցաւ յամի 719: 'Ի բազմաթիւ գրուածոց նորա ոչինչ մնայ մեզ՝ բայց միայն Կատալինայեան և Յուգուր- թեան պատերազմաց պատմութիւնքն. ևս և քա- նի մի հատուածոյ ճառք և քարոզք:

ՍԻԳ Եբրեմիայ էր Անգղիացի քահանայ և վարդապետ աստուածաբանութեան՝ ծնեալ 'ի Կլիֆ- տըն 'ի նահանգին Կըմբըրլենդայ, և վախճան- եալ յամի 1747:

ՍՓԵԿՏԵՏԸՐ է անուն բազմահատոր և գեղեցկագոյն լրագրի միոյ՝ Հրատարակելոյ առ Ադդիսընիւ 'ի Լոնտըն մայրաքաղաքի:

ՍՈՒԻՖՏ ըստ Անգղիացւոց ուղղախօս թարգ- մանի. և է ստորագրութի՛ ամանց գրուածոց հրա- տարակելոց 'ի Գեւարջիէն անուն լր թղթին Լոնտընայ:

**ՏԱՏԼԸՐ** է անուն բազմահատոր և գեղեցկահիւս լրաթըղթոյ միոյ՝ հրատարակելոյ առ Ստիլըիւ ՝ի Լընտըն մայրաքաղաքի :

**ՖՕՔՍ** Յովհաննէս էր Անգղիացի քահանայ և եկեղեցական պատմագիր՝ ծնեալ ՝ի Բոստոն ՝ի Լինկոնշայր նահանգի յամի 1517 · յորում Լութեր սկսաւ ընդդիմամարտ լինել սխալանաց Փափին : Յօրինեալ է սա զազգի ազգի կենդանաօգուտ մատեանս : Վախճանեցաւ յամի 1587 :

**ՖՐԷՆԿԼԻՆ** Բենիամին ծնեալ էր ՝ի Բոստոն յԱմերիկա յամի 1706 : Հօրն նորա զարդարեալ էր ՝ի բնէ հանճարով և իմաստասիրական ձիրիւք : Մինչչև էր նորա անցեալ զմանկական հասակաւ իւրով՝ հանդիսացաւ յաշխարհի երբ՝ իմաստասէր առանց իբրաջէկ լինելոյ իւրոյ զայնմանէ : Անձանձիր գրաւորական աշխատութիւնք նր դասեցին զնա ՝ի շարս Նիւտընի Սողոնի և Լիկուրգոսի : Կալեալ էր նա զպաշտօն տպագրութե · որ ոչ սակաւ եբերէ ի հանդիսացոյց զնա յաշխարհի : Իբրև ցհեղինակ ոչ է յօրինեալ նորա գիրս ինչ մեծագիր կամ երկայնաշուն : Գրաւորական աշխատանք նորա պարփակին ՝ի սեպհականս և ՝ի պէսպէս թուղթս · որք են հաւաստի նշանք քաղցրալուր իմաստասիրութեան նորա : Յամենայն անհաշան դիպուածոյ արտահանէր զանհնարին խրատ : Օկնի մեծագործութեամբ մեծամեծ գործառնութիւնս առնելոյ քաղաքի իւրում՝ յառաջնորդեաց երթալ յԱնգղիա · և

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հաղորդակցութիւն պահել ընդ Գաղղիացւոց և ընդ այլոց տէրութեանց յօգուտ երկրի իւրում: Վախճանեցաւ 'ի 17 · Ապրիլի յամի 1790: Քանի ամօք յառաջ քան զմահ իւր յօրինեաց զտապանագիր իւր · որ է հետագայդ :

ՄԱՐՄԻՆ
Բենիամինի Փրէնկլինի տպագրի՝
իբրև զկազմ հնաւոր գրոյ՝
զուրկ 'ի ցուցակէ՝
և թափուր յոսկեզօծ զարդուց՝
ընկողմանի աստ կերակուր որդանց ·
սակայն ոչ է հնար գրոյն կորնչել .
այլ՝ որպէս կարծէր՝ մարթ է նմա երևիլ
'ի նորոգ և 'ի գեղեցկագոյն տպագրութեան ·
ուղղեալ և սրբագրեալ

'Ի ՀԵՂԻՆԱԿԷՆ:

## ՎԵՐՋ

# ՑՈՒՑԱԿ:

Ագահութիւն և Շռայլութիւն : երես 135
Ազատական միտքն ոչ տրտնջայ զօգտից՝ զորս այլք վայելեն : 101
Ազնիւ բարք Շիպիոնի : 19
Ազնիւ գաղափար իմն Ճշմարիտ արիութեան : 240
Ամբարհաւաճ փառք Է տարեկաց արհամարհեալ : 89
Այր համեստութեան : 164
Անիրաւութիւն առ ժժմունս կշտամբեալ : 98
Անմահութիւն : 176
Առաքինութիւն ի խոնարհ կենս : 107
Առաքինութիւն մինչ ուժգին և իմաստացեալ՝ ոչ է ենթակայ զօրութեանց բաղդի : 87
Առաքինութիւն և բարեպաշտութիւն են մեծագոյն օգուտ մարդոյ : 205
Արակնէ և Մեղիսսա · կամ երջանկութիւն տածելոյ զբարի բնութիւն: 65
Արարչագործութիւն : 104
Արդարութիւն և առատասրտութիւն : 106
Բարեբաստութիւն կրկնապատկի բարի մարդոյ : 188
Բարի և չար մարդն բաղդատեալ ՝ի ժամանակի ձախորդութեան : 232
Բերկրանք յաջորդեալ ի վայելուչ կիրառութենէ զօրութեանց մերոց : 123
Գերազանցութիւն սուրբ գրոց : 250
Գերակայ ընկերակցութիւն և Նորոգումն առաքինական առընչութեանց են երկոքին արմատք ապագայ երջանկութեան : 248

Գերութիւն մոլութեան ; երես 190
Գթութիւն . 142
Դիւրահաւանութիւնն բարեբնոյթ : 13
Դիւրութիւն և նեղութիւն ։ 139
Եղանակքն ։ 180
Եղանակքն չորս : 183
Եղբարք պատրինկեալ ընդ միմեանս միաբանութեամբ : 84
Եղծանեմք մեք զհեշտութիւն կարի ջղձակալ լինելով զհետ նորա : 32
Երկինք : 178
Երկինք և երկիր քարոզեն զփառս և զիմաստութիւն Արարչի իւրեանց ։
Երկիրն գեղեցկագէս սահմանեալ է մարդկային բնութեան ։ 195
Երջանկութի գտանի յուղղութեն բարուց : 103
Եօթն իմաստասէրքն Յունաստանու . որ է առակ իմ ՚ի գերահռչակ Լինեոյոսէ . և թարգմանեալ ՚ի Լատինական լեզուէ ։ 201
Զամբիւղաշէնն ագնոռական : 33
Ընտրութիւն Օրիորդի : 94
Ընտրութիւն Հերակլեայ: 145
Ի վերայ բարերարութեան : 285
Ի վերայ գեղեցկութեանց սաղմոսաց : 193
Ի վերայ հարկաւորութեան կարգի ՚ի կիրառութեան ժամանակի մրուն : 115
Լեառն գիտութեան : 24
Խայթոցք չքաւորութեան , հիւանդութե՛ն , և փառաց , նոճաք սուր են քան զխայթոտ յոնցասոր կրից ։ 69

Ողջունելն ընկերոյ միշտ շատացեալ ։ երես 36
Պակասութիւնն է արմատ թշուառութեան
  անփոփոխականութեան նորա ։ 118
Պատարինէ՝ կայսերուհին Ռուսիոյ ։ 74
Ջամանն, կամ Թշուառութիւն Հայաստանի ։ 9
Ջամբու մեծի պատանողին Քրիստոնէութեան ։ 61
Ջամբու Քրիստոսի ։ 71
Ջամբերութիւնն ընդ մտադրութեամբ
  է շատ մեր ևս առաւել պարտականութի ։ 224
Ջարկաւորութիւն բարի ուսման ։ 252
Ջերմութիւն ։ 166
Ճանապարհորդութիւն առոք միոյ · որ է
  նկարագրութի իմն մարդկային կենաց ։ 128
Սահմանադրութիւն ։ 174
Սարսափական ազնուութիւնքն ոչ են առար-
  կայ կատարման ։ 106
Սնոտութիւն առաքինութիւն ՚ի մէջ աշա-
  կանաց գաղափարաց ։ 212
Սնոտութիւն և փարթամութիւն ոչ տան
  զանձինս խաղաղութեան ։ 221
Սիրահամութիւն ցանկութեանց մերոց
  գաւառացնեայ ։ 217
Սխիթարութի բարի մարդոյ ՚ի նեղութ ։ 242
Յաղագս անպարտութեան ։ 10
Յաղագս երախտագիտութեան ։ 12
Յաղագս թաղութեան ։ 207
Յառաջադրութիւնք կենաց յոլովակի պատ-
  րաստական ։ 295
Յարգոյց համեստաբարոյութեան ։ 121

ՊԵՏ. ԱՆՐԱՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА

Յուսադրեկութիւն գիտութեանց միոյ է նշան իմաստութեան: երես 16
Յուսադրութիւն ՚ի խնամս նախախնամութեան բարձրելոյն գովաբանեալ: 124
Նեղութիւնք մոլութեան մեծագոյն են քան զառաքինութեան: 215
Նկարագրութիւն բարեսրտութեան: 18
Շարժառիթք առ կիրառութիւն հեզաբարոյութեան: 237
Ողորմութիւն: 210
Ոչ ինչ վիճակ կամ ստացուածք կարեն զանյանդորր միտս առնել երջանիկ: 8
Որդիքն բարեպաշտք: 21
Ջանասիրութիւնք մարդկան առ ՚ի զերծանիլ ՚ի բեռանց իւրեանց: 261
Սէր և պատիւ արժան է յաշակերտաց առ ուսուցիչս իւրեանց: 92
Սոկրատէս և Լէյանդրոս. կամ չէ պարտ երբէք անարգել զծնօղս: 81
Սրինգն: 63
Սփոփանք կրօնի: 112
Սահման կենաց: 244
Սայրապար տրամութիւն արհամարհեալ: 100
Սոստակ: 70
Վերատեսչութիւն բարձրելոյն: 171
Տաճար ագահութեան: 159
Տաճար առաքինութեան: 155
Տաճար առաքինական սիրոյ: 150
Տաճար բղջախոհութեան: 153

Տաճար ունայնութեան : երես 157
Տեսիլ Թէոդորեայ՝ ճգնաւորին Տե- ներիֆֆայ՝ գտեալ յայրի նորա : 37
Փոփոխութիւն արտաքին վիճակի հակա- կայ է առաքինութեան : 30
Քարոզ Ադհերբալայ առ Հռովմէական սենկղիտոսն՝ հայցելով զպաշտպանութիւն նոցա ընդդէմ Յուգուրթայ : 279
Քարոզ առ պատանիս : 288
Քարոզ Միկիպսայ առ Յուգուրթա : 285
Քարոզ Յունիոսի Բրուտոսի ի վերայ անկենդան մարմնոյն Լուկրետիայ . որ անձնասպան եղեւ սակս բռնաբա- րութեան Տարկուինոսի : 276
Քարոզ Սկիւթացի հրեշտակաց առ Աղեք- սանդրոս, ՚ի պատրաստել նորա առ ՚ի յարձակել ՚ի վերայ նոցա : 272
Քարոզ Ֆաբրիկոսի՝ դեսպանի Հռովմայ- եցւոց առ արքայն Պիրրոս որ կամէր կա- շառել զնա վասն [illegible] օգնից իւրոց մատուցանելով մեծ քանակութիւն դրամոյ : 11
Քրիստոնէութիւնն ընձեռէ մեզ բուն մխիթարութիւն ընդ չարեաց աշխարհի : 228
Քրմապետեան : 23
Որտոգրուլ, կամ ունայնութիւն հարստութեան : 4

# ՍԽԱԼԱՆՔ։

| երես · | տող · | Սխալ։ | Ուղիղ։ |
|---|---|---|---|
| 2 · | 4 · | ընկալ | ընկալաւ |
| 2 · | 1 · | արմատաքի | արմատախիլ |
| 4 · | 26 · | գրգանաց · | ՚ի գրգանաց |
| 12 · | 22 · | ընկերշունի | ընկերշնչէ |
| 16 · | 11 · | կողոպատել | կողոպտել |
| 22 · | 9 · | յարկածակէ | յանկարծակի |
| 32 · | 8 · | գտակաւ | պճնարկաւ |
| 52 · | 26 · | որոց | որոյ |
| 59 · | 1 · | առ որս | առ ո՞ |
| 68 · | 6 · | Ճեմեմ նմա | Ճեմեմ է նմա |
| 68 · | 19 · | խորեանց | խորոց |
| 74 · | 4 · | զորջամուն | զորջմուն |
| 75 · | 19 · | հնգետասասանամեայ | հնգետասանամեայ |
| 79 · | 1 · | զորմ | անողորմ |
| 86 · | 25 · | առ ՚ի իջևանիլ | առ ՚ի իջանել |
| 129 · | 4 · | մռացեալ | մոռացեալ |
| 138 · | 1 · | հազուանկոյն | հոգունակուն |
| 141 · | 22 · | քո | ոք |